

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԶԱՍՑԵ՛ ք. ԿՎԴՊԱՆ, ՇԱՀՈՒՅԱՆ 20/32
2003 թ. ԳԵՆԱԽՈՒՄ՝ (0285) 5 25 63
ՎԿԵՏԱԲԵՐԻ ԿԻՑ (091) 45 90 47
(077) 06 28 02

ԳԻՄՆԱԳԻՐ ԵՎ ԳՐԱՏԱՐՎԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ԱԲՏՈՒՄԵՆ
ՊԱՏԱՆԱԽԱՅՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ
000231: Թերթը տպագրվում է
«Տիգրան Մեծ» հրատարակչության
տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան,

Արշակունյաց 2: Ծավալը՝
26 տպագրական մասով:
Տպաքանակը՝ 2000, գինը՝
500 դրամ: Ստորագրված է
տպագրության 31.03.2014թ.:

ԵՐԵՎԱՆԻ
8 ԱՊՐԻԼԻ
2014Թ
• № 6 (314)


Մայրամուս, Մասյաց գազաթին
Խարույկի վառած մեղմեի,
Արեից, հողից, հողմերից,
Կարոսու առած մեղմեի:
Իմ վերջին հառաչի միջից
Գոհության ճիշտ բողբոջեր,
Մրերու, արերու վարած,
Պարսերու մարած մեղմեի:



Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Համո Սահյանը
իր 100-ամյակին էլ մեզ հետ է



Ահա ընթերցողի սեղանին է «Այունյաց երկրի» հատուկ համարը՝ նվիրված հայ մեծ քնարերգու Համո Սահյանին, որը նախեստառաջ այլոց նեցիկներիս խոնարհումի հերթական տուրքն է առ բանաստեղծ՝ ծննդյան 100-ամյակի կապակցությամբ:

Մեծ երկյուղածությամբ եւ պատասխանատվության զգացումով դեռ եւս տարիներ առաջ մտանք Համո Սահյանի բանաստեղծական տաճար եւ կամեցանք նրա արվեստը լրագրային չափանիշներով ներկայացնել ընթերցողին: Դա տասը տարի առաջ էր՝ 2004 թվականին, բայց, կարծեք, չստացվեց ցանկալի ձեւով: Եվ ձգտեցինք նորից ու նորովի անել այդ գործը: Ու արեցինք: Իսկ թե որքանով ստացվեց՝ ընթերցողը կարող է դատել:

Մի ուշագրավ իրողության ակնհայտ եղանք համարը նախապատրաստելիս: Բոլորը, ուն դիմեցինք, գրականության, գրականագիտության ներկայացուցիչներից մինչեւ բանաստեղծի ժամանակակիցներ, հաճույթով ու կամեցողությամբ արձագանքեցին մեզ: Առաջին հայացքից սովորական ու բնական թվացող այդ երեւոյթը, սակայն, յուրովի ցույց տվեց, որ Համո Սահյանը շարունակում է վայելել մեր ժողովրդի մաքրամաքուր սերը, որ Համո Սահյանն իր 100-ամյակին էլ մեզ հետ է, որ նա դժվարին այս օրերին եւս մեր երթի առջեւում է:

Ո՞վ է Համո Սահյանը մեզ համար, ի՞նչ առաքելությամբ էր աշխարհ եկել, ո՞րն է նրա գրական ժառանգության տեղը հայոց արժեհամակարգում:

ՇՆՈՐՀԱՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 9

...Եթե նկատի ունեմ
դասմական Սյունիք,
ադա նա միակ եւ
հիմնական ակունքն է,
ինձ համար աշխարհն
ու ճիշդեք ճեսնելու
ամենաբարձր եւ հուսալի
դիտակեք: Նաեւ այն
հավելյալ իրականությունը,
որ դահդանել է իմ
ինքնությունը այս խառն ու
խրթին աշխարհում:



Ու ես եկա

Արդեն չգալ չէի կարող,
Ինչ էլ լինէր, պիտի գայի:
Ու ես եկա... Ասում են թե
Թ-ների շուրթին ուշաթափվեց
Խորհրած շողքը լուսնյակի,
Լուսաբացի մի պարտադիր
Երդիկն ի վար թրթռալով
Ընկավ մորս հոգևած բարձի

**Համո Սահյանի հայրական
տունը Լորում (վերանորոգվել է
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի
Նախաձեռնությամբ)**

Կենսագրության էջեր

Հատված Դավիթ Գասպարյանի «Համո Սահյան. կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրությունից

Համո Սահյանի կյանքն առանձնապես հարուստ չէ դեպքերով ու իրադարձություններով: Նրանք ավելի շատ ոչ թե կենսագրական կամ ինքնակենսագրական թվերն են, այլ հոգու պատմությունը՝ ապրած ու վերապրած բանաստեղծությունների մեջ: Համո Սահյանը (Հմայակ Գրիգորյան) ծնվել է 1914թ. ապրիլի 14-ին Սիսիանի շրջանի Լոր գյուղում: Ինչպես հայրը՝ Սահակ Անտոնի Գրիգորյանը (1880, Լոր-1966, Լոր), որտեղից էլ նրա Սահյան ազգանունը, այնպես էլ մայրը՝ Գայանե Լալազարի Լալազարյանը (1890, Շենաթաղ-1935, Լոր), եղել են բնաշխարհիկ պարզ, արդար, աշխատավոր մարդիկ՝ լծված իրենց տան հոգսին եւ շարունակվող կյանքի ուրախությանը: Հ. Սահյանից բացի, նրանք ունեցել են չորս երեխա՝ Հասմիկ (ծնվ. 1923թ.), Հայկանուշ (1925-1993), Համլետ (1927-1977), Ելենա (ծնվ. 1929թ.): Գայանեի մահից հետո Սահակն ամուսնացել է ծագումով Գորիսի Շինուհայր գյուղից, բայց Աշխաբադում ծնված Լիզա Իվանի Գրիգորյանի (1895-1953) հետ, որից ունեցել է երկու դուստր՝ Պայծառ (ծնվ. 1937թ.) եւ Սեդա (ծնվ. 1942թ.): Հ. Սահյանի հոր եւ մոր զվարճվելու կամուրջն էին պապն ու տատը, իսկ հեռվից նրանց էր ուղեկցում Խաչի պապի (Խաչիպապ) հիշատակը: Նրան շրջապատում էր մի ամբողջ նահապետական գերդաստան՝ իր վարք ու բարքով, իր ամենօրյա աշխատանքային կենցաղով: Լորը լեռնային գյուղ էր, նույնն է նաեւ այսօր՝ կենտրոններից կտրված, ինքն իր մեջ ծորում փակված, մրգատու այգիների մեջ թաղված: Ժողովրդի ապրուստը՝ անասնապահություն, այգեգործություն:


«Նա տանձ ու խնձորի, բալ ու կեռասի փարթած այգիներ ուներ, որ բռնում էր Լորագետի ամբողջ հովիտը...»⁽¹⁾, - գրում է Հ. Սահյանը: 1908-1911թթ. գործել է ծխական դպրոց, որը գործուներությունը շարունակել է հետագա տարիներին: Լորի դպրոցում, որտեղ 1915-1916 ուսումնական տարում աշխատել էր Ա. Բակունցը, Հ. Սահյանն ստանում է տարրական կրթություն: Բայց այս տարիները նրա համար կարելի էր ենթադրել որ ծառայության ժամանակ, որքան, որպես գյուղի տղա, հոտն ու նախիրն առաջն արած, սար ու ձոր չափչփելու, ծառ ու ծաղիկ ճանաչելու եւ բնության այրուբեցն ու գյուղի աշխատավորական կենցաղը կենսաբանորեն ապրելու առումով: Հետո՝ միայն պիտի իմաստավորվեին այս տարիների տպավորություններն ու կուսակույրները: Ահա այս տարիների հիշողությամբ գրեց. «Հիշում եմ, մանուկ օրերիս հայրս ինձ վեր էր կացնում մութ ու լուսին, ինքը նստում էր էջի վրա, խուրջինը տալիս էր շալակս, ու գնում էինք, որ մինչեւ լույսը բացվի՝ հասնենք մեր արտատեղը՝ գործը չմնա: - Այս ի՞նչ դաժան մարդ է հայրս, - մտածում էի, - թող թողնի մի քիչ էլ ես նստեմ էջին կամ էլ խուրջինն ուսիցս առնի: Բայց՝ երբեք: Մենք գնում էինք այդպես ամեն օր, նա նստած, ու ես ոտքով՝ բեռը շալակիս: Եվ հիմա, որ կյանքիս ճանապարհներին շատ դժվար արահետներ են անցել, թվում է, հորս օրհնությունն էր վրաս, որ դիմացել եմ»⁽²⁾: Դժվարություն, հացի ամենօրյա կռիվ հող ու ջրի հետ եւ այդ պայմաններում

րում մեծացող բանաստեղծական հոգի: Մանկական տարիների այս տպավորությունները հետագայում բազմիցս արթնացել ու վրձնել են պահը, վիճակը, կյանքի դրվածքն ու ոգու հայտնությունը՝ «Լույսը բացվեց»:
*Լույսը բացվեց... Ի՞նչ փակեմ դաշտը:
Տանն ի՞նչ ունենք, որ ինչ փակեմ, -
Նոր նախապիս, պապի խրատը,
Մոր ձեռքի հոտը, հոգս ու համբավ:
Մթնեց... Ի՞նչ եմ բերում դաշտից, -
Կանաչ կանչեր, արեւ ու ամպ...
Մուգ-մախառիս, ծոցիս, սրտիս
Եվ սքեքրիս արարողությամբ:*
Մանկության տարիներին նա անդրադարձել է հաճախակի: Իսկ գյուղի մանկան ու պատանուն կերակրող ոչ միայն տան հացն էր, այլև հանդի բարիքը: Մի առիթով հիշում է, որ դաշտերում կակաչի կոկոններ են կերել, որին «պուտածիծ» են ասել. «Այդպես հողը մոր պես մեզ ծիծ էր տալիս...»⁽⁴⁾: Եվ հետևում է եզրակացությունը. «Հիմներ այդ դժվար եւ դժվարությամբ մեջ երջանիկ մանկությունը, հնարավոր է, որ ես բանաստեղծ չդառնայի: Հնարավոր է, որ արդեն հասուն տարիքում չգրեի. Գևան միտնվեմ խորքերն անտառի, Մոլորվեմ մեռնող տրեխների մեջ, Գրուիս դեմքն մամուռ մի բարի Մոռանում ամեն աղաղակ ու վեճ: Բույն փամ սրտիս մեջ բույն ինտրոդ հավթին,
*Լուսն անտառի սկանչը դառնամ,
Շնչառությունը լսեմ մեղմազին
Տերևների փակ խոր քնած գարնան»*⁽⁵⁾:
Համո Սահյանի մանկության տարիներին «գյուղն այնպիսին էր, ինչպիսին եղել էր երկար ու երկար հարյուրամյակների ընթացքում»⁽⁶⁾:
Միջանկյալ մտաբերեմք, որ «Սամվել»-ը գրելու դժվարությունների կապակցությամբ նույնն էր ասում նաեւ Բաֆֆին. «Եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենոփոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար առաջ նկարագրած ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ էջ 5

Եվ իմ անհոգ բախրի վրա:
Երդիկն ի վեր թրթռալով
Իմ ստացին ձիւղ թռավ
Եվ ստացին ծիծեռնակի
Ծիւլ-ծիւլի հեպ
Քիվից կախվեց բակի վրա:
Իրարանցում եղավ հեպո
Խաչիպապեց իհն հոդսպում...
Պապս սասց. - Տեր երկնային,
Քո փառքը շար, իմ սքըր լույս,
Տանս մի սյուն,
Մի գեղան էլ ավելացավ:
Խաչակերեց իր երեսին
Ու մրմնջաց փայտ մի բուռ.
- Անխիդն սարված, այս ի՞նչ արիք,
Խեղձ ու կրակ սուտիս վրա
Մի ավերորդ գոյա բռնող,
Մի բերան էլ ավելացավ:
Ինքն իրենից ամաչելով
Տարս անցավ սյունի ետեւ,
Մրեց թրթիթի իր ճակարի
Եվ սքեքրի սրտերը փաթ
Ու երեսի մորթում սասց.
- Արդ ու կարում ցավիս ընկեր
Գութան բռող ու կամ բռող
Մի ճիպտը էլ ավելացավ...
Առան-փվին, փվին-սոռն,
Ու ոչ մեկը գլխի չքնկավ,
Որ աշխարհի կանաչ-կարմիր
Երագների ետեւ ընկած
Երկու ուր էլ ավելացավ:
Երագներից բարե ծաղիկ
Եվ բարեղեն հեթիաթ հյուսող
Երկու ձեռք էլ ավելացավ:
Ու բեկուզ այս մեղքերը շար,
Վերբերը շար աշխարհի մեջ
Մի կոր մեղք էլ,
Մի կոր վեղք էլ ավելացավ,
Բայց նրա մեծ համերգներում
Մեր աշխարհի համ ու հորով
Մի կոր երգ էլ ավելացավ:

Վերադարձ

Քանդակագործ, Երեւանի զեղարվեստի ակադեմիայի քանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գեորգի Բաղդասարյանը եղել է Համո Սահյանի մտերիմը: 1978 թվականից տարբեր շփումներ է ունեցել, Համո Սահյանն էլ այցելել է քանդակագործի արվեստանոց: Չանգեզուրի դարպասները քանդակելիս Սահյանն այնտեղ էր լինում: Շփումներ եւ տարբեր գրույցներ էին ունենում: Արվեստագետի կինը Համո Սահյանի կնոջ՝ Ավետայի ընկերուհին էր, այդպես էլ կայացել է ծանոթությունը: «Երբ բուհն ավարտում ես, շուրջդ ոնց որ դատարկություն է ստեղծվում, կողքդ ոնց որ մարդ չլինի: Հարցեր կային, որոնց պատասխաններն իմանալու համար Համո Սահյանին էի դիմում: Արվեստը մի նպատակ ունի. որը խոսքով, որը ծավալով, որը հնչյուններով, բայց նույն խնդիրն է լուծում: Հայրաբար ինձ շատ լավ խորհուրդներ էր տալիս, քանզի պոեզիայի երկար ծանապարհ էր անցել: Գիտեի՝ իրեն դուր էր գալիս, որ այդ հարցերը տալիս եմ, այսինքն՝ այդ դժվարությունների ու բարդությունների միջով ինքն էլ էր անցել: Իրեն ասող չի եղել, ինքն այդ ծանապարհն ինքնուրույն է անցել»:



Գ Ե Մ Ի Կ Բ Ե Ղ Դ Ա Ս Ա Ր Կ Ա Ն Ը Համո Սահյանի մի քանի փորձաօձակներ է արել: Կավից պատրաստած

մի քանդակ պոետի ծննդյան 70-ամյակի առիթով նվիրել է նրա ընտանիքին: Իսկ տուֆից քանդակած դիմաքանդակը հուշատախտակի հետ փակցված է բանաստեղծի ապրած տան (Երեւան, Կասյան-3) պատին: Սակայն իր լավագույն գործերից է համարում բանաստեղծի հուշարձանը, որ տասը տարի առաջ տեղադրվեց Սիսիանի քաղաքապետարանի առջեւի հրապարակում:

Արվեստագետի համար հարազատ



Բանաստեղծի քույրը՝ փրկին Հասմիկը ելույթ է ունենում Համո Սահյանի հուշակոթողի մոտ

ու սրտամոտ այս գործի քանդակումը եւ տեղադրումը, սակայն, երկար ողիսական ունեցան («Այունյաց երկիր», 10 հուլիսի 2004թ., «Սահյանի հուշարձանի համար տե՞ղ չկա»): ՀՀ վաստակավոր նկարիչ Գեորգի Բաղդասարյանին խնդրեցինք պատմել իր լավագույն ստեղծագործություններից մեկի կերտման մտահղացման ու դրդապատճառի մասին. «Վաղուց ցանկանում էի Համո Սահյանի քանդակն անել, բայց չէր ստացվում: Բաներ կան,

որ պիտի հասունանան, որ կարողանաս քանդակել: 1980-ի ծնունդն իրենց տանն էի, Մոսկվայից հաղորդում էին ցուցադրում նրա մասին: Տուրտ էր: Վերադառնալով նստած հաղորդումն էր դիտում. հենցիկ էր թախտին, մյուս ձեռքն էլ դրել էր ծնկանը: Ստածեցի, որ պիտի օգտագործեմ այդ կոմպոզիցիան: Պահն իրեն շատ բնորոշ էր՝ մի ձեռքով հենվել էր իրեն, մյուսով հենված էր բնությանը (այդպես ընկալեցի թախտին հենվելու

հանգամանքը): Եվ ծնվեց մտահղացումը: Համո Սահյանին էլ դուր էր եկել արվեստագետի նման ընկալումը: Այդ կոմպոզիցիայով ստեղծեցի մի գործ, բետոնից պատրաստեցի, ցուցադրվեց Երեւանում, Մոսկվայում, այլ քաղաքներում, նկարը տպագրվեց «Творчество» ամսագրում: Այդ քանդակն այժմ գտնվում է Ազգային պատկերասրահում»:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 90

Հավերժացվեց բանաստեղծի հիշատակը

«2004»

թ. ապրիլի 17-ին Սիսիանում՝ քաղաքապետարանի առջեւի հրապարակում տեղադրվեց 20-րդ դարի հայ քնարերգության երախտավորի հուշարձանը: Տեղի ունեցավ մի իրադարձություն, որին սիսիանցիներն տասը տարի էր սպասել:

Մեծ բանաստեղծի հիշատակին իրենց հարգանքի տուրքը մատուցելու էին եկել պետական բարձրաստիճան այրեր, գրողներ ու գրականագետներ, ուսուցիչներ ու աշակերտներ, տարբեր զբաղմունքի եւ տարիքի մարդիկ: Գարնանային օրը, թեպետ ոչ այնքան բարեկամ, Սահյանով էր շնչում: Հնչում էին նրա բանաստեղծական տողերը, որոնք ավելին էին, քան պատգամ ու խորհուրդ:

Սիսիանի քաղաքապետ Լավրենտի Սարգսյանը բանաստեղծի 90-ամյակի եւ հուշարձանակի բացման առիթով ողջունեց հյուրերին եւ երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ում ջանքերով ցանկալին իրականություն դարձավ՝ Համո Սահյանի քարեղեն կերպարով: Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն իր ելույթում ներկայացրեց սահյանական պոեզիայի իր ընկալումը, նաեւ հայտնեց, որ հուշարձանակի բացումը միակ տուրքը չէ Սիսիան աշխարհի երեւելի գավալի հիշատակին.



17 ապրիլի 2004թ., Սիսիան, Համո Սահյանի հուշարձանի բացման ժամանակ խոսք է ասում Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը

Նրա անունով է կոչվելու այսուհետեւ հրապարակը, որտեղ տեղադրվել է քանդակը, նաեւ Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

Այունիքի հոգեւոր առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Սկրտչյանն օրվա խորհուրդը ներկայացրեց այսպես. «Մեր լեռների մեծանուն գավակներից մեկը վերադարձել է այստեղ՝ որպես հավերժություն, իր հայացքի ներքո հավաքելու, առաջնորդելու եւ ուղղություն ցույց տալու մեզ բոլորիս, հետագա սերունդներին»:

Բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը հավելեց, որ ժողովուրդը շատ երկար կպահպանի Համոյի երգն ու բանաստեղծությունը, քանզի դրանք իրենց մեջ ունեն նույն այդ ժողովրդի ոգին, սիրտը, գոյությունը: Արվեստագետ Գեորգի Բաղդասարյանն իր խոսքում խոստովանեց, որ ինքը... չի սիրում Սահյանին: Այլ պաշտում է: Ներկաներիս համար պարզ էր՝ այդ պաշտամունքից է արարվել տարիների տքնանքով ստեղծված նրա հուշարձանը: Եվ այսպես, հերթով խոսափողին մոտեցան եւ իրենց սրտի խոսքն ասացին սահյանագետ Շչորս Դավոյանը, գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, բանաստեղծներ Հրաչյա Սարուխանը, Հովիկ Հովեյանը, մանկավարժ Վարդուհի Իվանյանը, Համո Սահյանի քույր Հասմիկ Գրիգորյանը:

Օրն իմաստավորվեց Սահյանով, եւ սա դեռ ամենը չէր. բանաստեղծի ծննդյան օրը, ապրիլի 14-ին, հիմնադրվել է «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
«Այունյաց երկիր»,
N13, 2004թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՈՒՂԵՐԱԸ**

ՀԱՍՄԻԿ ԴՊՐՈՍՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարար



Միրելի ընթերցող

Շուրջ քսան տարի է բաժանում այն օրից, ինչ մեզ հետ չէ հայ պոեզիայի ակամավոր դեմքերից մեկը՝ Համո Սահյանը, ում 100-ամյակը նշում ենք ազգովի:

Ազնվագույն մարդ, քաղաքացի ու քնարերգու - սրանք բառեր են, որոնք բնութագրում են Սյունյաց աշխարհից սերված, Որոտանի եզերքին ծնված մեծ բանաստեղծին:

Համո Սահյանն իր բեղուն գրչով խնկարկուն ու փառաբանում էր իր ծննդավայրը, մայրենի հողն ու Հայաստան աշխարհը:

Նա իր մեջ միաձուլեց ազգային գրական հարուստ ավանդույթներն ու համամարդկային հոգեւոր արժեքները՝ դառնալով մեր կյանքի ու առօրյայի մշտական ուղեկիցը: Եվ քանի դեռ կան մարդն ու իր հույզերը, քանի դեռ կա բնությունը լայն ու խորը ճանաչելու, նրան միաձուլվելու մարդկային ձգտումը՝ մեզ այդքան հոգեհարազատ սահյանական պոեզիան միշտ կմնա սպասված ու մեր կյանքի, առօրյայի հարատև ուղեկիցը:

Ծնունդի շնորհավոր, Վարպետ:

Մեր երազաշապ ապրումների թարգմանը

ԱՐԱՍԻ ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ

ՄԻՍԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Համո Սահյանի զարմանահրաշ բանաստեղծական աշխարհով ոգեշնչվել են դեռևս դադարակալ սարիներին, երբ մի փոքրիկ շղեկ անթափույց սեր ու զորով էր զգում նրա՝ բնությանը նվիրված ստեղծագործություններն ընթերցելիս, սերելիս ու երբեմն-երբեմն փորձում զգացածու համեմատել, համադրել հայրենի գյուղի բնաշխարհին՝ ընթերցելով «աղոտաղոտ, հորոսմորոս» մանկության, դարձության, թարմության, մաքրության հոսք:

Զգիտես ինչու, սկսել էի անասելի սիրով ունկնդրել առվի կարկաչը, գետի շառաչը ու մտորել՝ ինչքան գեղեցիկ են հայրենի ոստանիս մաքրամաքուր առավոտները, գրավիչ ու անկրկնելի են երկինք հագած, ծաղկազարդ լեռները, ինչքան հիասքանչ է ծաղկած մասրենու կուսական քնքշությունը:

Հետո՝ տարիներ անց, բազում անգամներ խաչվեցին Սահյանի պոեզիա-



յի եւ իմ ճանապարհները թե՛ դպրոցում, թե՛ բուհում սովորելու տարիներին: Իսկ զավակներիս ուսումնառության տարիներին ուշի-ուշով հետևում, հետաքրքրվում էի, փորձում հասկանալ՝ արդյո՞ք նույն խորությամբ են ընկալում Սահյանի պոեզիան, արդյո՞ք նույն ակնածանքն ունեն պոետի բանաստեղծական աշխարհի նկատմամբ, ինչպես իմ սերնդակիցները, եւ հուրախություն ինձ, բացահայտեցի՝ այո՛, հպարտանալու սերունդ ունենք, որ զարմանալիորեն խորը, զարմանալի զգացողությամբ է լցված մեծ բանաստեղծի արվեստի նկատմամբ:

Արդեն հասուն տարիքում մի կարելուր բան եւս բացահայտեցի, որ հիմա Սահյան ընթերցելիս նորովի են ընկալում, զգում են ավելի փիլիսոփայական գուններագով, կարողանում են ճիշտ արժեւորել յուրաքանչյուր բառ ու տող, համոզված

ասել՝ նրա պոեզիան մի ողջ աշխարհ է աշխարհի մեջ:

Ակնածանքով, մի առանձնակի հպարտությամբ, հուզմունքով են ուզում բարձրաձայնել, որ պատիվ են ունեցել անձնապես ծանոթ լինելու բանաստեղծի հետ, սեղմել նրա ձեռքը, երբ վարպետը գալիս էր Սիսիան՝ հանգստանալու նախկին աշխատավայրիս հարեւանությամբ:

Տարիների հեռվից իմ առջեւ հառնում է աշխարհ տեսած, կյանքի փորձով իմաստնացած, հույս ու հավատով լեցուն, մարդու հոգս ու ցավով ապրող, ժողովրդի կողմից սիրված ու հարգված, բարոյական վեհությամբ օժտված անձնավորություն:

Նրանից ճառագում էր բարի եւ անչար մարդու առիքնող ժպիտը:

Հաստատապես կարող են ասել, որ Սահյանն ինչպես իմ, այնպես էլ նրան ճանաչողների համար կմնա օրինակելի՝ իր մարդկային վեհ կերպարով եւ ապրած իմաստուն կյանքով:

«Քարի պես պինդ», «հողի պես փխրուն» պոետն ամենից առաջ ժողովրդական մարդ էր, քանի որ ինքն աշխարհի մեջ էր, աշխարհին՝ իր:

Սահյանի պոեզիայի մասին խոսելը եւ հեշտ է, եւ դժվար, ուստի կփորձեմ ներկայացնել՝ ինչպես են ընկալում Սահյան-բանաստեղծին՝ որպես հայ, որպես ընթերցող...

Բանաստեղծի ստեղծագործություններն իրենց մեջ կրում են բնության ներկայանալի բոլոր գույները, դրանք թաթախված են կյանքի ու աշխարհի իրական սիրով:

Նա բնությունը սիրող, նրա վեհությունն ու հմայքը գնահատող գրող է: Սահյանը կարողանում է կյանքի մասին եղած պարզունակ պատկերացումներն ընդհանրացնել, մատուցել յուրովի, պոետին հատուկ վարպետությամբ:

Սահյանը կարողանում է խորանալ երեւոյթների մեջ, զգալ կարելուր, զատել գլխավորը երկրորդականից, ներկայանալ առանց ավելորդությունների...

Հայաստան աշխարհը կրկնակի սիրով եւ սկսում սիրել, երբ սեղանից են հատկապես հայրենասիրության թեման շոշափող գործերը, որոնցով ներշնչվում են, ավետափ լցվում հայրենիքով:

Նախանձել կարելի է Սահյանի հայրենասիրությանը, որն, անշուշտ, սրբություն սրբոց է բանաստեղծի համար:

Երբ ընթերցում ես Սահյանի Հայաստան-հայրենիքին ձոնված ստեղծագործությունները, զգում ես՝ ամեն մի քար, ամեն մի քուփ, ամեն մի անկյուն այնքան հարազատ է, այնքան բնական, այնքան հայկական ու ... այնքան մերը:

Արվեստագետը պետք է անբաժան լիցի ժողովրդից. ըստ իս՝ այդպիսին է Սահյանը՝ միշտ ժողովրդի կողքին, ժողովրդին միաձույլ, ժողովրդի հոգս ու ցավով ապրող:

Օրդ լցվում է զմայելի, արբեցնող բույրերով, երբ ընթերցում ես «Օրը մթնեց», «Հայաստան ասելիս», «Ախր ես ինչպե՞ս...» բանաստեղծությունները: Թվարկեցի ինձ հոգեհարազատ բանաստեղծություններից մի քանիսն ու մտածեցի՝ էլ ո՞րը թվեմ, որի՞ն առաջնություն տամ, չէ՞ որ բոլորն էլ սիրելի են, մնայուն, արժեքավոր, ուսուցանող, դաստիարակչական...

Գաղտնիք չէ՝ մեզանից յուրաքանչյուրի մեջ մի-մի պատահիկ Սահյան է «բնավորված»: Երեւի դա է պատճառը, որ երբ հարկ է լինում գրուցել մարդկանց հետ, կյանքի փիլիսոփայությունը յուրովի ներկայացնելու ուղի ենք ընտրում Սահյանի տողերը, Սահյանի փիլիսոփայությունը:

Միայն Սահյանի պես իմաստուն այրը կարող էր այսպիսի խրատ-խորհուրդ թողնել սերունդներին.

*Խղձիկ հեք գրույց սալս
Ամեն օր քնկույց սառչ...*

Սահյանի ստեղծագործությունների մեջ ամփոփված են մեր հայրենիքի, մեր ժողովրդի եւ անցյալը, եւ ներկան, եւ ապագան:

Այնպիսի տաղանդավոր բանաստեղծ, ինչպիսին է Համո Սահյանը, արժանի է հավերժանալու, քանզի անգնահատելի են նրա մատուցած ծառայություններն իր ՇՄՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՑ 8



ՈՐՈՏՆԱԲԵՐԴ

Կենսագրության էջեր

Հատված Դավիթ Գասպարյանի «Համո Սահյան. կյանքը եւ ստեղծագործությունը» մենագրությունից

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 7

Հ.Սահյանի մահվան կապակցությամբ Հ.Սաթեղոսյանը գրեց. «Նա տվեց ավելին, քան կարող էր, դիմացավ ավելի, քան կարող էր...» եւ հայոց մեր այս տանը թողեց ավելին, քան ի գորու էր, որովհետեւ տեր ու հայր էր ծնվել...»⁽³⁶⁾:

Ապրեց ու ստեղծեց իր փառքը: Երբեք փառքի ետեւից չվազեց, «...մի տարիք է գալիս, երբ զգում ես, որ փառքը սուտ է, ամենաճիշտը քո տառապանքի հաճույքն է»⁽³⁷⁾: Այդ տարիքը նա ապրել է միշտ՝ եւ մանկության, եւ ծերության օրերին: Նա շատ լավ գիտեր, որ փառք ստեղծողն էլ է ինքը, փառքի տերն էլ...:

Իսկ նրա փառքը կար, եւ նրա գրական համբավը թեւեւ հանդարտ ու անաղմուկ, բայց դահլիճներ նվաճեց, հոգիներ գերեց՝ նրան բերելով համազգային ճանաչում ու պատիվ:

Կյանքի վերջին պահին կնոջ հուսահատ պնդումին. «Համո, մի խոսք ասա», - պատասխանել է. «Հետո»⁽³⁸⁾: «Հետո», էլ ե՛րբ... «Հետո», այսինքն՝ հավերժության մեջ, այսինքն՝ իր բանաստեղծություններով, որ կենդանի ծայրով խոսում են ժողովրդի հետ...:

Հ.Սահյանն ապրեց շուրջ 60 տարվա անընդմեջ գրական կյանք:

Հ. Սահյանը թարգմանություններ է արել ադրբեջանական, բելոռուսական, թուրքմենական, էստոնական, իսպանական, պարսկական, ռուսական, վրացական, ուկրաինական, ֆրանսիական գրականություններից, Ասիայի եւ Աֆրիկայի բանաստեղծներից: Դրանց մեծ մասը լույս է տեսել ինքնուրույն ժողովածուներում, իսկ մի մասը՝ առանձին գրքերում: Այս բնագավառին եւս Սահյանը կարեւորություն է տվել,



ՈՐՈՏՆԱՎԱՆԸ

որովհետեւ գիտակցում էր, որ «Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործության մի մասը»⁽³⁹⁾: Այսինքն՝ նա ստեղծագործական կապի մեջ էր թարգմանվող նյութի հետ, եւ պատահական չէ, որ ցանկանում էր հրատարակել իր թարգմանությունների մի առանձին ժողովածու:

Ծանոթագրություն

- 1. Հ.Սահյան, Արեւը բարձրանում է սարից, «Գրական թերթ», 1959թ.,

- թիվ 43, 23 հոկտեմբեր:
- 3. Հ.Սահյան, Որ կյանքը շարունակվի. - «Պիոներ կանչ», 1986, թիվ 86, 29 հոկտեմբեր:
- 4. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն, հարցազրույց. - «Գրական թերթ», 1972, , թիվ 18, 28 ապրիլ:
- 5. Նույն տեղը:
- 6. Նույն տեղը:
- 7. Րաֆֆի, Երկերի ժողովածու, 12 հատորով, Ե., «Սովետական գրող», 1986, հ. 8, էջ 8:
- 8. Տես Բ.Կարապետյան, Հարյուր տարվա Երկխոսություն, Ե., «Հայաստան», 1990, էջ 157:
- 9. Հ.Սահյան, Արեւը բարձրանում է սարից:
- 10. Հ.Սահյան, Մարդու եւ բնության դաշինքը. - «Երեկոյան Երեւան», թիվ 116, 19 մայիս:
- 11. Նույն տեղը:
- 12. Հ.Սահյան, Ապրում եմ մանկության պաշարներով, հարցազրույց. - «Տաթևի համալսարան», 1993, թիվ 3, հուլիս:
- 13. Հ.Սահյան, Կոմիտասը՝ մենք ենք. - «Սովետական Հայաստան», 1969, թիվ 272, 21 նոյեմբեր:
- 14. Նույն տեղը:
- 15. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն:
- 16. Հ.Սահյան, Մշակիր քո հողը. - «Սովետական դպրոց», 1984, թիվ 17, 26 ապրիլ:
- 17. Հարցազրույց Համո Սահյանի հետ. - «Շիրակ», Բեյրութ, 1974, թիվ 4:
- 18. Հ.Սահյան, «Քո ծյունագեղ բարձունքից արեւի հոտ է գալիս», հարցազրույց. - «Ավանգարդ», 1984, թիվ 45, 13 ապրիլ:
- 19. Հ.Սահյան, «Դեռ չի գրվել մեծ հերոսամարտին արժանի գործ». - «Գրական թերթ», 1975, թիվ 19, 9 մայիս:
- 20. Նույն տեղը:
- 21. Նույն տեղը:
- 22. Նույն տեղը:
- 23. Հարցազրույց Համո Սահյանի հետ. - «Ավանգարդ», 1975, թիվ 57, 14 մայիս:
- 24. Հ.Սահյան, Դեռ չի գրվել մեծ հերոսամարտին արժանի գործ:
- 25. Հ.Սահյան, Խոսք «Ավանգարդ»-ի 65-ամյակին. - «Ավանգարդ», 1988, թիվ 58, 6

- մայիս:
- 26. Հ.Սահյան, Խոսքը ատոմից ուժեղ է, հարցազրույց. - «Սովետական Հայաստան», 1987, թիվ 99, 24 ապրիլ:
- 27. Հ.Սահյան, Բանաստեղծությունը ցավից է ծնվում, հարցազրույց. - «Գարուն», 1984, թիվ 9, էջ 43:
- 28. Նույն տեղը, էջ 44:
- 29. Նույն տեղը, էջ 45:
- 30. Նույն տեղը, էջ 46:

Օրհնված էգերք

Մեր երազաշար ապրումների թարգմանը

ՍԿԻՉԲԸ ԷՋ 4

շատ սիրելի ժողովրդին:

Հարգանքի, մեծարանքի, խոնարհումի, ակնածանքի թերեւս ոչ շռայլ արտահայտություններ կհամարվեն նրա նշանակալից հորելյանի՝ ծննդյան 100-ամյակի շրջանակներում անցկացվելիք բազմաթիվ միջոցառումները՝ կատարելով մեծ պոետի հորդոր-խնդրանք-պատգամը՝ «Ինձ բացակա չդնեք»:

Յուրաքանչյուրս աշխարհ է գալիս մի առաքելությամբ՝ կառուցելու, երգելու, ուսուցանելու... Իսկ Սահյանն, անշուշտ, բառի «շինարար» է:

Կան մարդիկ, ովքեր իրենց այս րած կյանքով, իրենց կատարածով սրբագործում են կյանքը. ըստ իս՝ այդպիսին է նաեւ Համո Սահյանը:

Սահյանն իրավամբ կարող է համարվել մեր բանաստեղծական աշխարհի առաջնորդն ու ջահակիրը:

Ամեն անգամ, երբ անհրաժեշտություն զգանք վերադառնալու, ծուլվելու արմատներին, անշուշտ, մեզ կուղեկցի Սահյանի անմահ պոեզիան: Երբ հայացք ձգենք Սահյանի անցած իմաստուն, փառահեղ ուղուն, կզգանք նրա ամենօրյա, ամենժամյա ընկերակցությունը:

Ինչպե՞ս կարելի է երախտապարտ չլինել «ծիսածառաքել երազանքների տիրոջը»՝ Համո Սահյանին, դարահասակ տաղանդավոր պոետին, ով մեզ է թողել բարիքն ու բարին, անաղարտը, կատարյալը, վեհն ու վեհնը, խնդրել Աստծուն, որ բարի-բարի՝ հայացքով նայի «այս մի բուռ Հայաստանին» եւ նրա անմեռ երգերի հավերժ երկրպագուներին:

Բանաստեղծը մի առիթով խոստովանել է, որ շնորհակալ է ճակատագրին, քանի որ ինքը «ճակատը համբուրելի ժողովրդի՝ Սիսիանի ժողովրդի գավակն է»:

Դե, իսկ մենք՝ հանճարեղ Համո Սահյանի կողմից այսպիսի գնահատանքի արժանացածներս, հպարտ ենք՝ «երազաշար ապրումների թարգման» բանաստեղծ ունենալու համար:

- 31. Հ.Սահյան, Ապրում եմ մանկության պաշարներով:
- 32. Նույն տեղը, էջ 47:
- 33. Հ.Սաթեղոսյան, Ամեն շնչավորի հանգրվանը. - «Գրական թերթ», 1989, թիվ 16, 14 ապրիլ:
- 34. Հ.Սահյան, Գերված մի արժիվ, հարցազրույց. - «Սովետական Հայաստան», 1990, թիվ 69, 25 մարտ:
- 35. Խոսում է Համո Սահյանը, կազմող Հ.Յուրանյան, Ե., «Վարք» հրատարակչություն, 1992, էջ 111, 119:
- 36. Հ.Սաթեղոսյան, Նրա կենսարար շունչը. - Գրական թերթ», թիվ 10, 23 հուլիս:
- 37. Հ.Սահյան, Որ կյանքը շարունակվի:
- 38. Հ.Այվազյան, Ժամանակների արանքում. - «Հայություն», 1993, թիվ 14, 27-31 օգոստոս:
- 39. Հ.Սահյան, Պոեզիան կօզնի մարդուն:

Հողի եւ հողու պարմություն

ՎԱՏԱԳԸ ԴՎԱԹՅԱՆ

Այն, լցվելուց, դարարկվելուց մաշվեցի, Բերս իմ յուղով քրապակվելուց մաշվեցի: Վին-հինավուրդ իջեալսի դուսն պես Շատ բացվելուց ու փակվելուց մաշվեցի: **Նամո Սահյան**

Ձյունոտ կատարներ են, արեւով լեցուն խորունկ կիրճեր, արծիվների, նժույգների, հեթանոս քուրմերի կերպարանքով քարացած ժայռեր, տաք քարափներ, հավերժ թռիչքի մեջ որոտացող գետեր...

Ձանգեզուրն է... Հայաստանի ամենաբանաստեղծական լեռնաշխարհը:

Այո, ամենաբանաստեղծականը: Եվ զարմանալի է, որ այդ զարմանալի ու բանաստեղծական աշխարհը մինչեւ վերջերս չէր մտել մեր բանաստեղծական արվեստի մեջ, մինչդեռ նրա կիրճերն ու անդունդները, անտառներն ու հովիտները լիքն էին խորհուրդներով ու թրթռումներով, առասպելներով ու երգերով:

Եվ սպասում էին... ժայռերն էին սպասում, գետերը, անդունդները, քարափներից կախված մասրենիները, աղբյուրներն ու թռչունները... Եվ մարդիկ, պարզ, իմաստուն, հողագործ ու հողաբույր մարդիկ էին սպասում, որ մտնեին բանաստեղծության մեջ:

Իսկ նրանց բանաստեղծ չէր կարող չգալ ու եկավ: Եկավ ու թուժանյանի Լուռու, Բահալյանի Ծիրակի, Տերյանի Ջավախքի, Մեծարենցի Եփրատյան հովտի հարեանությունը մեր պոեզիայի մեջ տեղադրեց իր լեռնաշխարհը, որ բանաստեղծական ներշնչանքով ողողված, արդեն սոսկ աշխարհագրական լեռնաշխարհ չէր, այլ ոգեղեն բնօրրան, խորհուրդ ու խորհրդանիշ:

Ձանգեզուրյան կիրճերից մեկում ծվարած Լորից եկավ այդ բանաստեղծը՝ Համո Սահյանը:

Շատ բարդիններ կան այդ գյուղում: Դարերով խռնում էին այդ բարդինները եւ սոսկ բարդիններ էին... Պիտի գար բանաստեղծը, որ ընդհանրացներ այդ բարդինները, դարձներ «Նաիրյան դալար բարդի», դարձներ խորհրդանիշ ու կերպար, այնպես, որ հայ պոեզիայի բարձունքներից մեկի վրա կանգնած նա հավերժորեն խռնում...

Յետո այդ բարդու հետքերով բանաստեղծության շենքից ներս մտան շատ ու շատ ուրիշ ընդհանրացված կերպարներ, մտան պարզ, հողագործ մարդիկ, մտան իրենց ավանդական առաքինություններով, հողից, ժամանակի անընդմեջ հողովումից, տառապանքից եւ ստեղծման վայելքից ժառանգած իրենց կենսափոխակերպումը: Հայ բանաստեղծության մեջ մտավ մի ամբողջ աշխարհ, որ հին էր ու նոր, հին, որովհետեւ հին էին բանաստեղծի երգած բարդինները, քարափները, ժայռերն ու անդունդները, եւ նոր, որովհետեւ բանաստեղծը 20-րդ դարի մարդու հայացքով ու հոգեբանությամբ էր նայում այդ ամենին: Եվ այս վերջինս է, որ ամենաարժեքավորն է Սահյանի բանաստեղծական արվեստում: Ոչ, սոսկ բնանկարներ չէ, որ Սահյանը բերեց մեր պոեզիային, այդ բնանկարների ծավալում, նրա ամենախոր շերտերում մի արդար ու բարի, մեծ ու ազնիվ հողու շարժում կա, հողու ամբողջ մի պատմություն, իսկ ճշմարիտ բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատկերների խորքում թաքնված հողու պատմություն: Ահա, հենց դրա շնորհիվ է, որ այդքան կենսունակ ու այդքան վարակիչ է սահյանական պոեզիան, սովետահայ բանաստեղծության ամենախոշոր, ամենագեղեցիկ ու մնայուն երեւոյթներից մեկը:

Վաթսուն տարեկան է Համո Սահյանը, բայց նրա բանաստեղծական գարկերակը տրոփում է առողջ ու առույգ, քանի որ իր սկիզբն առնելով բանաստեղծի էությունից, շրջանառությունը շարունակվում է ժողովրդական կյանքի խոր ծալքերում, հայրենի հողի ընդերքում ու նորից վերադառնում դեպի բանաստեղծի սիրտը: Իսկ սրտի եւ հողի դաշինքն ամենահուսալիցն է ու ամենից ամուրց: Ուրեմն, սիրելի Համո, Չարենցի խոսքերով ասենք.

Քսնի կա լյառն Արագած եւ քսնի աշխարհում Դու կաս - Դժվար թե գամարեն երբեւէ սկունքները քո ջիւջ երգերի...

1974թ.



Պարզ ու բարդ, ինչպես բնությունը

Հայոց էպոսի մեջ, հենց սկզբում, կա մի խիստ խորհրդանշական ու խիստ խորիմաստ պատկեր, լեռան բարձունքից բխում է մի վճիտ, բարեհամ, ազնվական աղբյուր եւ դեպի ձորն է սլանում: Իսկ ձորի միջով հոսում է գետը՝ պղտոր, անթափանց, ահավոր... Բարձունքից բխող աղբյուրն իջնում, հասնում է այդ գետին, կտրում, ինչպես էպոսում է ասված, «չերտում» է այդ պղտոր, անթափանց ահավորությունը, հասնում է հանդիպակաց ափին ու շարունակում իր ճամփան:

Համո Սահյանի պոեզիան ինձ ներկայանում է լեռնային այդ վճիտ, ազնվական ու նաեւ գորեղ աղբյուրի խորհրդանշանով, աղբյուր, որ իջավ հայոց լեռներից, կտրեց մեր ապրած դժնդակ ժամանակների թաղաքական-հասարակական պղտոր, աղտոյի, ահավոր հեղեղը, հասավ հանդիպակաց ափին ու շարունակում է իր ճամ



փան:

Ապրածը ժամանակի ամենքին հայտնի, բայց արգելված ճշմարտության, անարդարությունների, արատների, անհեթեթությունների մասին ենթատեքստերով, եզրվապայան լեզվով, ակնարկներով եւ նման այլ միջոցներով խոսելու համար համարձակության ինչ-որ չափ, ճարտարություն ու նաեւ խորամանկություն է պետք, որ կարող են ունենալ առավելագույն փոքր տաղանդները եւ դառնալ հեշտ հասկանալի ու նշանավոր: Մինչդեռ սույն ժամանակի մասին մեծ ճշմարտությունն ասելու համար մեծ տառապանք է պետք, որ միշտ չէ, որ այդպիսի տաղանդները անմիջապես ընկալվում են եւ գնահատվում ըստ արժանիության: Բայց եթե առաջինների գործերը ժամանակի ընթացքում կորցնում են

կունենա եւ, ինչպես ասացի, առավել կմեծացնի նրան:

Ես այստեղ հնարավորություն չունեմ փոքր-ինչ հանգամանորեն խոսելու Համո Սահյան բանաստեղծական երեւոյթի էության մասին: Այսքանը կասեն, կան բանաստեղծներ, որոնց հայացքը արտաքին աշխարհին է, իրենցից դուրս եղածն են քննում ու դատում: Կան, որ հակառակն են՝ ներհայաց են, անվերջ իրենց ներսն են պեղում: Այս իմաստով խիստ ուրույն, ինքնատիպ ու զարմանալի է Համո Սահյանը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նա արտաքին աշխարհի բանաստեղծ է, եւ դա է պատճառը, որ ոմանք միամտորեն նրան բնության երգիչ, բնանկարիչ եւ նման այլ բնորոշումներ են տվել: Մինչդեռ ըստ էության ուղիղ հակառակն է: Ինքն է իր պատկերած քարափը, ժայռը, անտառը, ինքն է քարանձավը, մասրենին, գետը, աղբյուրը, ծիածանի ծվենը... ինքն իր ներսն է անվերջ պեղել, խորացել իր հողու մեջ: Եվ շնորհիվ դրա է, որ նրա բանաստեղծական աշխարհը եւ այդքան նյութեղեն է, եւ այդքան ոգեղեն ու խորհրդավոր: Պարզ ու բարդ է նա, ինչպես յուրաքանչյուր խոշոր արվեստագետ, ինչպես բնությունն ինքը:

Ինձ համար դժվար, անասելի դժվար է Համո Սահյանի մասին դամբանական ասելը: Հավանաբար լռելի, քարանայի, մինչեւ հաշտվելի նրա մահվան հետ: Խոստովանեմ, ես խուսափում էի նայել դագաղում պառկած Համոյին, որպեսզի նա իմ հիշողության մեջ մնա կենդանվույն, այնպես, ինչպիսին էր ինձ համար մոտ հիսուն տարի իր նահապետական առաքինությամբ, հումորով, սրամտությամբ, իմաստությամբ, լռությամբ, ինչո՞ւ չէ, նաեւ իր հակասություններով, որոնք, սակայն, նրա առաքինությունների յուրատիպ շարունակությունն էին:

Հատկապես վերջին տասը-տասնհինգ տարիներին հաճախ էր հիվանդանում ու խիստ վատանում: Ականջիս չարագուշակ շշնջում էին, թե դա վերջ է: «Ոչ», ընդդիմանում էր բնագոյս, ապավինելով նրա գեղջկական բնատուր ամրությանն ու իր սեփական տողին, թե ինքն իր հայրենի ժայռերի զուգաճորտն է: Եվ միշտ բնագոյս էր լինում անսխալակամբ:

Սակայն այս դեպքում բանականությունն ու բնագոյս վեճի մեջ մտան, ու ես դեռ մի թեթեւ հույս ունեի, թե այս անգամ էլ կփրկվի, բայց, ավաղ, բանականությունն դաժանորեն հաղթանակեց:

Տարիներ առաջ, կարծես 1980-ին, Համոյին նվիրված մի բանաստեղծություն եմ գրել, որն այսպիսի տողերով է ավարտվում.

Ես չգիտեմ, մեզանից ո՞վ պիտի շուր հեռանա Դեպի եզերքն անհայտի, ուր քրապակված է լուռն, Բայց մեկն ու մեկն, գիտեմ, պիտի խելույն որքանա, Ես՝ աշխարհում իմ կորած, դու՝ քո կորչող աշխարհում...

Այդ տարիներին ո՞վ կենթադրեր, թե հողը կվերադարձվի գյուղացուն, եւ մենք կսկսենք փայփայել այն հույսը, թե գոնե կորստից կարող է փրկվել Համո Սահյանի գյուղաշխարհը, ուր դեռ ապրում են մարդկային խիղճը, բարությունն ու քրիստոնեական առաքինությունը:

Եվ, սակայն, այդ տարիներին իսկ գիտեի, որ եթե Համոն հանկարծ ինձանից շուտ հեռանա, ապա որբանան պիտի ոչ միայն ես, այլեւ՝ մի ամբողջ աշխարհի իր Որոտանով, իր Որոտանավանքի փառավոր ավերակներով, իր մասրենիներով, քարափներով, իր Լոր սքանչելի գյուղով, որի լեռնային բարձունքներից մեկի վրա կա մի վճիտ, ազնվական աղբյուր ճիշտ եւ ճիշտ նման էպոսի աղբյուրին եւ նման Համո Սահյանի պոեզիային:

Պիտի շարունակի լեռներից իջնել այդ աղբյուրը, պիտի կտրի, անցնի բոլոր փորձությունների ու արհավիրքների պղտոր, ահավոր հեղեղները, հասնի հանդիպակաց ափին ու շարունակի իր ազնիվ ճամփան դեպի ապագան, դեպի հավերժը...

Ես գլուխս, սիրտս, խիղճս, զսպված հեկեկանքս եմ խոնարհում իմ մեծ ընկերոջ, մեծ բանաստեղծի թարմ աճյունին...

1993թ.

Խոսք՝ հոբելյանական համարի առիթով



ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Համո Սահյանի տեղը Հովհաննես Թումանյանի կողքին է»

«Այունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիր Դավիթ Գասպարյանը



ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

– Պարոն Գասպարյան, ապրիլին լրանում է Համո Սահյանի ծննդյան 100-ամյակը, հոբելյանի առթիվ մեր թերթը նախատեսում է հատուկ համար թողարկել: Այս հարցազրույցն այդ նպատակով է: Որպես նախաբան՝ խնդրում ենք ներկայացնել Համո Սահյանի մուտքը հայ գրականության:

– Նախ ասեմ, որ ես միշտ էլ լավ տպավորություն եմ ստացել «Այունյաց երկիր» թերթի բացառիկ համարներից: Չեմ կասկածում, որ շատ հաջողված պիտի լինի նաև այս մեկը:

Համո Սահյանը գրական ճանապարհին սկսել է 1930-ական թվականներին, բայց կայացել է 1940-ականներին: Նախորդ տասնամյակը հիշողությամբ է միայն նրա համար գրական անցյալ:

1946-ին լույս տեսավ անդրանիկ ժողովածուն՝ «Որոտանի եզերքին»: Այդ գիրքն առանձին մեծ արձագանքներ թեև չունեցավ, բայց դրական ընդունելության արժանացավ: Դրանից հետո Սահյանը տպագրեց երեք գիրք, որոնք անկոմֆլիկտայնության եւ կյանքի գունագարդման արգասիք էին՝ «Առագաստ»(1947), «Ալագքի մեջ»(1950),

«Ծիածանը տափաստանում»(1953): Թույլ գրքեր էին. մեղքը ոչ թե բանաստեղծին էր, այլ ժամանակինը: Ետպատերազմյան տարիներին գրականության ու մշակույթի դեմ Կենտկոմի մի քանի որոշումներ ընդունվեցին, մասնավորապես «Լեւոնի գրադ» և «Չվեզդա» ամսագրերի մասին» որոշումն ունեցավ կործանարար հետեւանքներ: Մշակութային կյանքը սահմանափակվեց, պատերազմի տարիների համեմատական ազատությունը վերացավ. հայրենասիրությունը և սիրո քնարերգությունը վերստին արգելափակվեցին: Այլ կերպ՝ 1946-1953 թվականներին, մինչև Ստալինի մահը, խիստ սահմանափակվեց ստեղծագործական առանց այդ էլ խիստ սահմանափակ համեմատական ազատությունը: Գրողներն իրենց պատեպատ խփեցին՝ ի՞նչ գրել: Իսկ ինչ գրելը թելադրվում-պարտադրվում էր: Ստիպված ինտերմացիոնալ եղբայրության մասին էին գրում, շինարարության, ինդուստրիայի, միջինասիական անապատների ջրարբիացման, Մազհիտոգորսկի ու Կարմիր հրապարակի, իսկ Լեւոնի կար ու կար: Բայց այդ ծայր իրենց ներսից չէր գալիս: Այս ամենին կու գնաց նաև Համո Սահյանը: Նա հետագայում խոստովանեց, որ ամաչում է հիշյալ երեք գրքերի համար: Միայն ետահայաց ճիշտ կողմնորոշում ունեցող ստեղծագործողը կարող էր ասել, որ իր քայլի համար ամաչում է: Եվ, իրոք, ամոթալի գրքեր էին՝ Սահյանին պատիվ չբերող: Բնական է՝ այս գրքերը հնարավորինս արագ պիտի մոռացվեին: Այդ ընթացքում շատերը հասցրեցին փառաբանել նաև Ստալինին: Եվ հետո ոչ թե փոշմանեցին և անոթի զգացում ունեցան, այլ ավիտոսացին, որ այդ ժամանակներն անցան: Ստալինի գաղափարական որդիներն ու դուստրերը շրջագայում էին նաև հայ գրականության պարտեզներում:

Իսկ Համո Սահյանը թեև ենթարկվեց փորձության, բայց մաքրվեց և, կորուստներով հանդերձ, մաքուր դուրս եկավ այդ գրական նվաստացումից:

– Ե՞րբ է սկզբնավորվում սահյանագիտությունը: Ի՞նչ ծանապարհ է անցել, օտարազգի գրողներից ովքեր են անդրադարձել Սահյանի կյանքին և գրական վաստակին:

– Համո Սահյանը վերստին Համո Սահյան դարձավ «Բարձունքի վրա»(1955), «Նախորդ դարի բարոյի» (1958) ժողովածուներից հետո, դրանով ասես կամուրջ նետեց դեպի «Որոտանի եզերքը»: Դրանից հետո ոսկեցող մայրամուտին ընդառաջ որպես բանաստեղծ Սահյանն անընդհատ բարձրացավ կարմիրն ու սևը քարափներով դեպի վեր: Սահյանագիտություն ասածը (լավ է, որ այդպիսի եզրույթ ենք օգտագործում) գրականագիտության ճյուղ է, ինչպես թունամյանագիտությունն ու բակունցագիտությունը... Սահյանի ստեղծագործության հանդեպ վերաբերմունքը լրջացավ 1950-ականների կեսերից: Նրա մասին գրել են Գուրգեն Մահարին, Հրաչյա Քոչարը, Վազգեն Մնացականյանը, Սողոմոն Սողոմոնյանը, Հակոբ Սալախյանը, Վահագն Դավթյանը, Սուրեն Աղաբաբյանը, Հրանտ Մաթևոսյանը, Լեւոն Մկրտչյանը: Ռուսներից՝ Լեւ Օզերովը, Ալլա Մարչենկոն, Ստանիսլավ Ռասսոտինը, Ալեքսանդր Դիմշիցը, գրել են նաև Էդուարդաս Մեժելայտիսը, Կայսին Կուլիեղը և ուրիշներ: Սողոմոն Սողոմոնյանին ու Վազգեն Մնացականյանին որպես գրականագետ, քննադատ առանձնապես լուրջ չեմ ընդունում, բայց իրենց հետքն են թողել այդ տարիների գրական կյանքում: Սահյանի ելույթները բացահայտող բնույթ ունեն Վահագն Դավթյանի հոդվածները: Առավելապես Սահյանին ճիշտ հասկացող և ժամանա-

կի մեջ ճիշտ դիտող քննադատ էր Սուրեն Աղաբաբյանը: Գուրգեն Մահարին Համո Սահյանին արտակարգ բարձր է գնահատել և նրան վերապահել առաջնակարգ տեղ հայ պոեզիայում: Սահյանագիտությունը, ըստ էության, սկիզբ է առնում 1940-1950-ականների առաջին գրախոսություններից ու հիշատակումներից և շարունակվում է առ այսօր: Ավելացնեմ, որ շատ դիպուկ բնութագրություններ են տվել հիշյալ ռուս և այլազգի գրողներն ու քննադատները:

– Հատ բարի, ի՞նչ նորություն և թարմություն է բերում Սահյանը հայ քնարերգության մեջ:

– Նորություն բառը մենք շատ հաճախ շահարկում ենք, իսկ թարմությունն առավել չափով կնոջն է սազական: Մենք ամենօրյա նորությունների մեջ ենք, որոնք բոլորն էլ աղետալի են. մի տեղ երկրաշարժ է, մեկ այլ տեղ՝ հեղափոխություն, մի ուրիշ տեղ՝ բնական աղետ, ամեն տեղ՝ սպանություն, ինքնասպանություն ու ահաբեկություն, ընտանիքի կործանմանն ուղղված միասնականության վարակ և նույնասեռ հիվանդների ամուսնություն: Աշխարհն ամենօրյա հեղաշրջումների, ընդհարումների ու պատերազմական նորությունների գլխավոր ինքնակործան աղետների մեջ է:

Նորություն ասածը Համո Սահյանն այլ կերպ էր բացատրում, ասում էր՝ աշխարհն ունի ինքնակրկնվող հատկություն. օրինակ՝ տարվա եղանակները, թռչունների չուն, առավոտն ու մայրամուտը: Բնության ձեւերի մեջ նա նախընտրում էր կայուն ու հաստատված արժեքները. Հայաստանի բնաշխարհի անդրադարձով՝ քարն ու քարափը, սարն ու ձորը, վանքն ու ամրոցը, հայ մարդն ու նրա բախտը... Ասում էր՝ միլիոն տարի էլ անցնի, թռչուններն իրենց թռչելու ձեւը չեն փոխի, իրենց երան կազմելու ձեւը չեն փոխի, ժայռերը, ձորերը, քարափերը հաստատուն արժեքներ են:

Համո Սահյանը հաստատում էր ոչ թե փոփոխական արժեքների, այսինքն՝ հավիտենության հետ խոսող բանաստեղծ էր, նրա կապակցությամբ ասել՝ ի՞նչ նորություն բերեց, նշանակում է մի շրջադարձ անել և աշխարհի կառուցվածքը տեսնել նրա պոեզիայի մեջ: Մեծ գրողներն իրենց ստեղծագործությամբ վերակերտում են աշխարհի կառուցվածքը և ստեղծում աշխարհի իրենց մանրակերտը: Փոքրերը չգիտեն՝ ինչ են անում, չեն էլ գիտակցում՝ ինչ է գրականությունը: Համո Սահյանը յուրովի ստեղծեց այդ մանրակերտը, և դա Համո Սահյանի աշխարհն է: Նախկինում գրելով ու խորանայով Սահյանի ստեղծագործության մեջ, իսկ նրան մոտիկից ճանաչելուց ու լսելուց հետո նորից ու նորից կարողավո՞ղ հոգեխոս գրքերը, աստիճանաբար եկա այն համոզման, որ Համո Սահյանի տեղը Հովհաննես Թումանյանի կողքին է:

Տերյանը 1914-ին Թումանյանին համարեց «ուճիկուն» և կամխորշեց, որ նրա ճանապարհը չի լինելու ապագա հայ գրականության մայրուղին: Տերյանն այդպես տեսավ և իր ճանապարհն առանձնացրեց, որովհետև Թումանյանով փակվում էր խաչատուր Աբովյանի գրական դպրոցը: Սակայն Թումանյանի ժողովրդախոսական լեզուն կենդանի էր ու գայթակղիչ: Վահան Միրաքյանը գրեց «Լավարի ուրու» և մնաց Թումանյանին մնանակողի դերում: Ստեփան Ջրոյանի մեջ Թումանյանը կար այնքանով, որքանով նրա համար եւս ծագումնաբանորեն նույնն էին միջավայրը, հերոսներն ու լեզուն: Նախորդ Ջրոյանը գրեց «Ռուշանի քարափը» և տապալվեց, որովհետև Թումանյանի լեզուն փորձել էր խցկել պրոլետարական պոեզիայի սխեմատիկ վանդակների մեջ: Բակունցը գտավ Թումանյանի ու Տերյանի լեզվական համարության գաղտնիքը, և հրաշքը տեղի ունեցավ: Հետագայում Թումանյանը յուրովի վերապրեց Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ: Այդ յուրովին շատ հիմնովին բացատրվելու պահանջ ունի: Ամբողջ մի հարյուրամյակ, նշվածներից բացի, այլևս ոչ ոք չհանդգնեց նորոգել Թումանյանի գրական, լեզվական ավանդույթները:

Բայց ահա եկավ Համո Սահյանը և ոչ թե Թումանյանի անմիջական ազդեցությամբ, այլ միանգամայն

Խոսք՝ հորեվանական համարի առիթով

Ժամանակը Համո Սահյանի պոեզիայում



ՆԱՄՐՏԻՆ ԳԻՆԱՎՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Յուրաքանչյուր մեծ գրողի ստեղծագործության զեղարվեստական արժեքները խորապես պայմանավորված են նրանով, թե նախ՝ ոչ միայն հասարակական կյանքի որոշակի շրջանում, այլև ընդհանրապես ի՞նչ դեր է նա հատկացնում գրականությանը, ապա՝ կոնկրետ իր ստեղծագործությամբ ի՞նչ նոր իրողություններ է հայտնաբերում եւ ինչպե՞ս է դրանք մատուցում ընթերցողին:

Դեռեւս 1960-ականների սկզբին նախորդ շրջանին յուրահատուկ ու դեռեւս լիովին չհաղթահարված «հրավառության, հանգավոր ախուլվախերի, քառաստիճան ճիչերի» փոխարեն Համո Սահյանն ապագայի բանաստեղծության մեջ տեսնում էր.

Այնպիսի գույներ, այնպիսի բույրեր,
Այնպիսի կանաչ մի ուրախություն,
Այնպիսի թավշյա թափիմ ու կարուր,
Որ մինչև անգամ երևակայել
մենք չէինք կարող:

Նրանք՝ ապագայի բանաստեղծները,
նկարելու են այն հրաշքները,
Որոնք տեսել են ու չեն նկատել
Չորավոր լույսի պայծառությունից
Մի քիչ մթազնամ մեր այս աչքերը:
Նրանք գալու են եւ լսելու են
Այն շրշունները սիրող շուրթերի
Եվ սրբերի այն փխրուն կանչերը,
Որ կյանքում որսալ չկարողացան
Աղմուկի, ծափի, որոտի սուփոր
Մեր սկսանջները:

Համո Սահյանի պատկերացմամբ բանաստեղծական խոսքն օժտված է մարդկային տառապանքն ու անդարձության օրենքը ժխտելու աստվածային ուժով («Երգող արտերի խոսքն էր հերկում ու տառապանքն էր հերքում մարդկային», «Ինձ թվում է, թե մի քանի անգամ (Յերթել եմ արդեն) ես անդարձության օրենքն անողոք»):

Բանաստեղծն իր դարի խիղճն է, ու աշխարհի եւ ոչ մի արքա չի կարող ստիպել նրան աճուրդի հանել իր խիղճն ու հավատը: Բանաստեղծն իրավունք չունի դառնալու այս աշխարհի հզորների կեղծ խոսափողն ու նվազելու նրանց պատվերով:

Բանաստեղծությունը ցավից է ծնվում եւ աստվածային առաքելությամբ է օժտված: Այն հզոր զենք է գոյապահպանության ճանապարհին, եւ, բնականաբար, չի կարող չզգաստանալ, թեկուզ «դեռ հստակ հրահանգ չկա»: Բանաստեղծն իր ժողովրդի արդար պայքարի զինվորն է եւ իրավունք չունի մեռնելու այնքան ժամանակ, «քանի չեն մեռել ենիչեր ու հոն»: Եվ վերջապես՝

Եթե թեզ վրա չի գայրանալու
Քո ծաղկած հողի ուտիչը քիչուր,
Լավ է հավիպյան լուես, իմ երգ...

Շշգրտելով նոր բանաստեղծու-

թյան մասին իր պատկերացումները՝ Համո Սահյանը հավատարիմ է մնում իր դավանանքին, սակայն թվում է, թե շարունակում է զննել նույն ճանապարհով, որը սկիզբ է առել «Որոտանի եզերքից»: Բայց... փոխվում է ամենակարեւորը՝ շարժման ուղղությունը՝ նոր խորքեր բացահայտելու, ստորգետնյա նոր հոսանքներ հայտնաբերելու, հոգեբանական նոր շերտեր բացելու ընդգծված միտումներով:

Արդեն 60-ականների սկզբին Համո Սահյանի պայքարն ուղղված էր ծուլ ու անվտանգ քնարերգության՝ «իրականության ամխռով – իդիլիկ նկարագրության» դեմ, նրա հերոսն արդեն հանգում է «բնության մեջ ստեղծագործող մարդու բարձր դիրքն ու տեղը հաստատելու պոետական-փիլիսոփայական բարձր գաղափարներին» (Վ.Խեչումյան):

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, որ զորավոր լույսի պայծառությունից, աղմուկից, ծափից ու որոտներից կշտացած ու հոգնած բանաստեղծը գրում է.

Ես չեմ սիրում համր ու հանդարտ
առունները դաշտավայրի,
Քարափնների բաշից կախված
ջրվեժներն եւ սիրուն վայրի

Գրողում են դեպի անդունդ եւ
անկումից չեն սարսափում:

Գրողի համար խիստ կարեւոր է ժամանակի սրված զգացողությունը... Համո Սահյանը վախենում է հետ մնալուց.
Առ քո թեւերին, փար ինձ,
Ժամանակ,
Ես եր մնալուց շար եւ վախենում,

Դուրս հանիր ինձ այս մթին
կիրճերից,
Որ թեզ հասկանաւ ու
ինձ ճանաչեւ:
Փրկիր ինձ այս խուլ ախ ու ճիչերից,
Տուր ինձ քո ոգին, քո միտքը
ներսում,
Առ ինձ հանձարեղ քո
փարեղքի մեջ,
Որ չմոլորվեւ քո ոլորներում
Եվ իմ հոգու բարդ փեղգերի մեջ:
Պարզեցրու, զփիր խոհերն
իմ խառնակ,
Առ քո թեւերին, փար ինձ,
Ժամանակ...

Ժամանակի սրված զգացողությունն օգնում է բանաստեղծին ավելի համարձակորեն ներթափանցելու ոչ հեռավոր անցյալում «բանաստեղծական» չհամարվող ոլորտները եւ բացահայտելու իրականության ցավոտ կետերը: Նա կերտում է սերնդի հոգեւոր պատմությունը, որը հյուսվել է երկրի պատմության հետ միաժամանակ: Հյուսվել է, երբ «սուտն աշխարհով մեկ թռչում, թնդում էր // Եվ սերը դառն էր, ինչպես տանջանքը», երբ «ինչպիսին էլ լինեիր խնդրանքը, պատասխանը լույ չեն ու չկան էր»:

Դժվարին է եղել սերնդի երթն աշխարհում, բախտի բաժինը՝ դա ժան ու ահավոր: Բայց մաքառելով, ինքն իր ու աշխարհի հետ կռիվ տալով ու մաքրվելով, իր կորուստներով հարստանալով եկել-հասել է «ասուպավոր ու ցուպավոր տարիներին», լցվել է մի մեծ ու անսահման բարությանը, որից լույս է ծառագում՝ անսահմանորեն առատ լույս, «ստվերները պատառատող լույս»:

Ժամանակի սրված զգացողությունը, վերջապես, օգնում է ոչ թե հորիզոնական փովածքով, այլ ուղղահայաց խորությամբ ներկայացնելու դարակեսի մարդու հոգե-


կան դրաման, որի «ոչ թե հանդիսատեսը, այլ գործող ու մաքառող անձն է եղել՝ իր տագնապալի հարցումներով, պատասխաններով ու խոստովանություններով»: Դարակեսի մարդն այնքան է հեռացել բնական մարդուց, որ նրան արմատներին վերադարձնելու, բնության մի մասնիկը դարձնելու խնդիր դարձել է հրամայական: Ատոմային խելահեղ մրցավազքի մեջ ներքաշված մոլորակի վրա մարդու կեցության ու ներքին ներդաշնակության խաթարված կապերի պրոբլեմները Հ.Սահյանի համար դառնում են մշտադիտարկման առարկա:

Նա որոնում է ինքն իրեն ճանաչել ցանկացող մարդուն, որն արդեն կարծես թե ուզում է իրեն հայտնաբերել «ոչ թե այլոց կարծիքներով», ոչ թե գլխի ու թեւի տակ «դրած փափուկ բարձիկներով», այլ «յոթգլխանի տառապանքին դիմանալու կարողությամբ», մաքուր պահած իր հավատով, արյան գույնով իր անարատ, իր անհանդուրժողականությամբ եւ այն գիտակցությամբ, որ աշխարհից ու մարդկանցից թաքցնելու այլևս ոչինչ չունի:

Դարակեսի մարդն արդեն չի ցանկանում «խառնվել ու ծուլվել բոլորին»: Նա արդեն հոգնել է «միշտ երթի առջեւից» գնալուց, թաքուն ակնկոծվելուց, «սին կյանքը խոսքով ոսկեզօծելուց», «սուտ կուռքերի դեմ մոմեր վառելուց», «ամեն պարողի ծափահարելուց»: Այժմ նա ցանկանում է լինել ինքն իր հետ, «ծանր ու թեթև անել հուշն ու երազանքը», ուրիշներին

իրն փնտրել իր, իսկ իրեն՝ ուրիշների մեջ, սիրտն ու միտքը «գրանցել նույն հարկի տակ», գտնել կորցրածներն ու բաժանել գտածները: Ինքն իրեն իրագործելու այս խառնակ ժամանակներում իր գոյությունն արդարացնելու նպատակով բանաստեղծն աղոթք էր հղում առ աստված՝ իրեն դաժանությամբ ներշնչելու խնդրանքով, որ կարողանա «պոկել կեղծավորության մացառն աշխարհում», ոլորել այն լեզուները, որ «սուտ երդումով սուտը հաստատում եւ նոր թելեր են տալիս ստին», իրենից վանել «ինքնապաշտության ստվեր վերջին» եւ վերջին շապիկը տալ տառապողին: Աղերսում է նաեւ «բարություն ու գութ առավել», որ կարողանա զորավիգ լինել խեղճ ու տկարին, աղերսում է չարություն, որ կարողանա կռվել բոլոր նրանց դեմ, «ովքեր աշխարհում գութանն ու խոփը արարող մարդուն դարձնում են լծկան»: Նա խնդրում-աղերսում է իր «թեւավոր ու թեւաբեկ», իր «ցուպավոր ու ասուպավոր» տարիների իմաստության բարձունքներից...

Համո Սահյանի պոեզիայում արարչագործությունը սկսվում է Լույսի պաշտամունքից: Բանաստեղծը նախ փորձում է ինքն իրեն ճանաչել եւ աստվածային արարչագործությանը հաղորդակից լինել բացվող առավոտների անխառն լույսով, իր հոգու մեջ շառագունած երազների Կաթն-օրով («Սկսել եմ ինձ ճանաչել այն համարձակ առավոտով»), որ մարդուն պարզեւում է «ինքը՝ նորին





Հայոց պատմության հրաշք Քարահունջը



ՊԱՐԻՍ ՆԵՐՈՒՆԻ

Ավարտեմիկոս

Անգլիայում է գտնվում հռչակավոր Սթոունհենջը: Ուղղահայաց կանգնեցված հսկա քարեր, որոնք կազմում են ավելի քան 30մ տրամագծով շրջան: Այդ ազդեցիկ հնագույն կառույցը համարվում է աշխարհի 8-րդ հրաշալիք, տարեկան այստեղ է գալիս 2 մլն զբոսաշրջիկ:

Ի՞նչն է եղել կառույցի նպատակը: Ե՞րբ է կառուցվել, ովքե՞ր են եղել կառուցողները: Բազում մասնագետների ուսումնասիրությունները վերջին 200 տարվա ընթացքում բերել են այն եզրակացության, որ այն հանդիսացել է Արեւի պաշտամունքի կենտրոնն է աստղադիտարան, որի միջոցով որոշվել են օրացույցը, արեւի ելուստի խավարումները: Կառուցվել է 3800-4000 տարի առաջ քարե ել բրոնզե դարերի սահմանագծին, բայց ով է կառու-

ցել, հայտնի չէ: Արդի բրիտանացիները են անգլոսաքսերն այն ժամանակ չկային, արեւմտյան գիտնականները համարում են, որ այս բարձրագույն մշակույթը եւ գիտելիքները, որոնք բացակայում էին բրիտանական կղզիների այն ժամանակվա սակավաթիվ բնակիչների մոտ, ներմուծվում են դրսից, ըստ ամենայնի միջերկրածովյան ավազանի արեւելյան մասից: Բայց թե ո՞ր երկրից, հայտնի չէ: Նույնպիսի հնագույն քարե կառույցներ կան նաեւ Ֆրանսիայում, Իռլանդիայում, Շոտլանդիայում եւ այլ երկրներում: Ոչ բոլորը գիտեն, որ Հայաստանում, Սիսիան քաղաքից 3կմ հյուսիս գտնվում է մի հսկայական հնագույն կառույց՝ հարյուրավոր ուղղահայաց կանգնեցված մեծ քարեր, որոնք տեղավորված են որոշակի կարգով՝ երեք հեկտարից ավելի տարածության վրա, ծովի մակերեսույթից 1170մ բարձրության վրա:

Ջարմանակի է, որ մինչեւ օրս այս ապշեցուցիչ հուշարձանը չի ուսումնասիրվել: Մոտակայքում գտնվում է հնագույն մի բնակավայր, որն ուսումնասիրվել է հայ հնէաբանների կողմից (Ստ.Լիսիցյան, 1938թ., Մ.Հասարթյան, 1985թ.) եւ թվագրված է մ.թ.ա. III-II հազարամյակներով: Ինչ վերաբերում է բուն քարե հուշարձանին, արվել են միայն շատ աղուտ, մոտավոր ենթադրություններ նրա պաշտամունքային եւ աստղաբաշխական հնարավոր կոչման մասին: (Օ.Խնկիկյան, 1984թ., Կ.Կուշմարյովա, 1977թ., է.Պարսամյան, 1988թ.):

Այս հին քարե կառույցն ուսումնասիրելու նպատակով սույն հոդվածի հեղինակի կողմից 1994թ. սեպտեմբերի 18-23-ը (աշնանային գիշերահավասար) ձեռնարկվել է առաջին հատուկ գիտարշավը: Արշավախմբի կազմում էին Սեյրան Հակոբյանը (տեսաօպերատոր), Պավել Սաֆարյանը (պատմաբան), Սամվել Մանուկյանը (մեխանիկ-ավտոմեքանիկ): Արշավախումբը գինված էր թեոդոլիտներով, հարթաչափե-

րով, խրոնոմետրերով, աստղադիտակով, կողմնացույցներով, անկյունաչափերով, հեռադիտակներով, տեսախցիկներով, լուսանկարչական ապարատներով, երկրաչափերով, հաշվիչներով, հատուկ սեպերով, մետաղյա ձողերով, աստիճաններով, պարաններով եւ այլն:

Անհրաժեշտ է ասել, որ ինչպես առաջին, այնպես նաեւ գիտարշավների աշխատանքներին մեծ աջակցություն ցույց տվեց Սիսիան քաղաքի հանրությունը: Հատկապես կուզեի նշել պարոնայք Վիլեն Ազոյանին, Լավրենտի Սարգսյանին եւ ուրիշներին:

Երկրորդ գիտարշավը (նույն կազմով) ձեռնարկվել է 1995թ. հունիսի 19-24-ը (ամառային արեւադարձ): Մասնակցում էին նաեւ Հրահատ Հակոբջանյանը (ճարտարապետ) եւ Սիբայել Հովսեփյանը (զեոդեզիստ)՝ մասնագետներ Սիսիանից: Արշավախմբի արշավանքին մասնակցում էր նաեւ Գ.Կայանյանը՝ մասնագետ Շվեյցարիայից:

Երրորդ գիտարշավը տեղի ունեցավ 1996 թվականի հունիսի 20-ից 25-ը: Նույն օրերին քարե հնագույն հուշարձանում աշխատում էր Հայաստանի ռադիոսպորտի ֆեդերացիայի բազմամարդ արշավը, որը համապատասխան միջազգային մարմինների որոշման համաձայն հունիսի 22-ին եւ մյուս օրերին ռադիոկապ հաստատեց Անգլիայի, Ֆրանսիայի, Շոտլանդիայի եւ շատ այլ երկրների կարծալիքայինների հետ, որոնք նախօրոք զգուշացված էին եւ այդ օրերին գտնվում էին «սթոունհենջներում» կամ այլ պատմական վայրերում:

Առաջին իսկ գիտարշավի արդյունքները չափազանց հետաքրքիր էին եւ կասկած չէին հարուցում, որ այդ կիկլոպյան կառույցը կանգնեցվել է եւ ծառայել է հնագույն հայերին երեք հիմնական նպատակների համար, այն եղել է Արեւի՝ գլխավոր աստծո՝ Ար (Արամազդ, Արեւ, ինչպես նաեւ Արրա) տաճարը, այն եղել է հզոր եւ ճշգրիտ աստղաբաշխական գործիք, այն եղել է խոշորագույն համալսարանական կենտրոն: Կառուցված է եղել ավելի քան 6000 տարի առաջ եւ օգտագործվել է ավելի քան 4000 տարի, ընդհուպ մինչեւ Հայաստանում քրիստոնեության ընդունումը:

Հուշարձանի կենտրոնական մասում կանգնեցված 39 քար դասավորված են ձվաձև, ունենալով 37մ երկարու-

թյամբ դեպի հյուսիս-հարավ ուղղված փոքր առանցք եւ 43մ երկարության դեպի արեւելք-արեւմուտք ուղղված մեծ առանցք: «Չվի» ներսում 20 քար կազմում են աղեղնաձև լար մոտ 42մ երկարությամբ: «Չվի» կենտրոնում գտնվում են նախկին շինության ավերակներ: Շինությունը ծածկված է եղել քարե մեծ տափակ սալերով: Ըստ ամենայնի, ողջ կենտրոնական մասը ծառայել է պաշտամունքային նպատակների, ուր կատարվել են ծիսական արարողություններ:

Մենք կատարել ենք ամբողջ հուշարձանի մանրամասն տոպոգրաֆիան: Նրա կենտրոնական մասից ձգվում են երկու երկար եւ մեկ կարճ ճյուղեր (թեւերալեաներ) կանգնած քարերից, որոնք շարված են ոչ բարձր 2-10մ լայնությամբ թմբերի սալապատ ուղիների եզրերով:

Թեւերի վրա գտնվող քարերի նշանավոր եւ համաշխարհային առումով եզակի առաձեռնահատկությունն են խմբակառուցված կանոնավոր անցքերը, որոնք փորված են շատ քարերի վերին մասերում: Անցքերն ուղղված են դեպի հորիզոն (տարբեր ազիմուտներով) կամ շեղ, վերեւ՝ դեպի երկինք:

Հյուսիսային թեւը բաղկացած է 71 հիմնական քարից, ունի 172մ երկարություն եւ վերջում շեշտակի դեպի արեւմուտք թեքված 40մ երկարությամբ ալեա: Այստեղ 43 քար ունեն անցքեր: Հարավային թեւը պարունակում է 69 հիմնական քար, որոնցից 27-ը անցքավոր են: Նրա երկարությունը կազմում է 160մ, ներառյալ դեպի արեւմուտք թեքված վերջնամասը՝ 40մ երկարությամբ: Հյուսիսարեւելյան կարճ ճյուղը բաղկացած է երեք քարից՝ առանց անցքերի:

Հուշարձանի շուրջը կան բազմաթիվ օղածե դամբարաններ, ինչը բնորոշ է նաեւ Սթոունհենջի եւ նման այլ կառույցների համար:

Հուշարձանի գրեթե բոլոր քարերը բազալտից են: Հողից վեր նրանց բարձրությունը տանտանվում է 0.5-ից մինչեւ 3մ, իսկ լայնակի չափը հիմքի մոտ հասնում է 1.5մ: Քարերը գրեթե անմշակ են, բացի վերի մասերից, անցքերից եւ երկարատեղիտարկման համար որոշ հատուկ խոռոչներից:

Անցքերը, որոնց տրամագիծը 5-ից 7սմ ՇՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՁ 50

Այունիքի ժայռապատկերները

Հատված համանուն գրքից

1966թ. մեր կողմից նախնադարյան արվեստի չափազանց հարուստ օջախներ են հայտնագործվել Այունիքում (1): Հայկական խՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի Այունիքի ժայռապատկերներն ուսումնասիրող արշավախումբը 1967-1968 թվականներին շարունակելով իր աշխատանքները Այունիքում՝ Սիսիանի, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններում մի քանի հազար ժայռապատկերների վրա հայտնաբերել է վիթխարի քանակությամբ պատկերներ: Այունիքի այս նորահայտ հուշարձանները զբաղեցնում են Ծղուկ լեռան, Ուղտասարի լանջերի, Վարդենիսի լեռնաշղթայի ստորոտների, Եղեգիս, Արփա, Որոտան գետերի, սրանց ակունքներին մերձակա լեռնապարերի լանջերն ի վար փոփոխ, մի քանի տասնյակ կիլոմետր երկայնք ունեցող տարածությունը: Հայտնաբերված ժայռապատկերները թվով այնքան շատ են, որ հրապարակելու նպատակով խստիվ ընտրություն կատարելու դեպքում անզան անհնար է մեկ ստվար հատորում տեղավորելը: Բավական է հիշատակել, որ միայն Սիսիանի շրջանի Ուղտասար հնավայրում գտնվել են ավելի քան երկու հազար նկարազարդ քարեր:



Գրիգոր Կարախանյան



Արամ Սահյան



Ուղտասարի ժայռապատկերներից մի քանիսը



Ուղտասար, բնական քարակրկառներ, որոնց մեջ բազմաթիվ քարեր նկարազարդ են



Մոտակա տարիներին թողնելով Այունիքի ժայռապատկերների բազմաթիվ խմբերի հրապարակումը, մասնավորեց մեր խոսքը և դառնանք սույն հատորի խնդրո առարկա Ուղտասարի և սրան մերձակա Ջերմաջրի հուշարձաններին:

Ժայռարվեստի կարելու օջախներ Ուղտասար և Ջերմաջուր հնավայրերը գտնվում են Սիսիանի շրջանում, ծովի մակերևույթից շուրջ 3300 մետր բարձրության վրա: Տեղանքը շրջափակված է լեռներով, բլուրներով. հովտային է միայն դեպի Այլախի սարահարթը ձգվող տարածությունը: Այս տարածքում կան բազմաթիվ լճակներ, որոնցից ամենախոշորը Ալ լիճն է: Ամբողջովին անտառազուրկ լանդշաֆտի տերիտորիայի հիմքը վերին պլիոցենյան դուրրիտային և օլիգոցենյան բազալտներն են, անդեզիտները, դաջիտները և այլ ապառներ: Այստեղի լեռնամարգագետնային ճակատները հողերը ծածկված են ալյուրեղեն փաթեղաբաշխված օժիտներով: Ծովի մակերևույթից 2900-3300 մետր բարձրության վրա, գոգ, հարթ և փոքրաթեք տեղանքներում փռված են բուսատեսակային հարուստ կազմ ունեցող ալյուրեղ գորգերը (2): Լեռանցամեջ տարածության հարթակներում, ձորակներում, բնական քարակրկառների մոտ, լճակների բոլորքը երեւում են հնագույն ավերակ կացարանների, կիսավեր պատերի հետքեր, արհեստական

քարակույտեր, գերազանցապես կրոնիկներ, այլ տիպի թաղանթներ:

Հեռավոր անցյալում անասնապահ ցեղերի կողմից յուրացված այս վայրերի, ամառային արոտատեղիներ լինելու պերճախոս վկայություններ են վերոհիշյալ հնագույն կացարաններն ու դամբարանները, ինչպես նաև բաց երկնքի տակ քարաբեկորների վրա փորված պատկերները, հնագույն ցեղերի գոյության վկայվածները: Դրանց գերակշիռ մասը քանդակված է բնական ողորկ մակերես ունեցող սլուլուն քարերի վրա: Ուղտասարի պատկերները շուրջ 9 ամիս շարունակ ծածկված են լինում ձյան ստվար շերտով և ուսումնասիրության համար մատչելի են միայն ամռան ամիսներին:

Պատկերազարդ քարերը զբաղեցնում են ուղտի նմանվող սապատավոր լեռան՝ Ուղտասարի կողերից ծյուղավորվող լեռնաբազուկների ստորոտները, ձորակներն ու դարավանդները: Նախնադարյան նկարիչը մեծ կարեւորություն է տվել քարի բնական ֆոնի ընտրությանը. հարթ, պղնձագույն և սեւ կուպր հիշեցնող ժայռաբեկորները բնական հարմար կտավ են ծառայել պատկերներ դրոշմելու համար. ընդ որում, նայած քարի դիրքին, պատկերները փորվել են քարի հորիզոնական կամ ուղղահայաց մակերեսի վրա: Այնտեղ քարով են փորված պատկերները, որոնք հիմնականում գծային են և ծավալային: Հարյուրներով են հաշվվում 10-50 պատկերներ ունեցող կոմպոզիցիոն «կտավները»: Ամենամեծ պատկերները բնօրինակի մեկ քառորդի չափ են, ամենափոքրերը՝ իրականից 5-10 անգամ փոքր: Փորվածքի խորությունը 2-6 մմ է, գծերի լայնությունը՝ 2-21 մմ: Ժայռապատկերները մեզ են հասել անաղարտ վիճակում: Աննշան մասը միայն հողմահարման ազդեցության տակ վնասվելով պոկվել է ժայռաբեկորի մակերեսից: Հնավայրը թեւեւ հեռու է բանուկ ճանապարհներից, այդուհանդերձ աղբյուրների, վրանների մոտակա պատկերազարդ քարերի մի մասը ծածկված է հողաշերտով:

Այունիքի ժայռարվեստի հնագույն, թերեւս մ.թ.ա. V-IV հազարամյակների ստեղծագործություններ են եղջերուների, գիշատիչների մեծադիր, ծավալային պատկերները, որոնք դրոշմված են զանգվածեղ ժայռաբեկորների վրա:

Երկրորդ մեծ խումբը ներկայացնում են մ.թ.ա. III-II հազարամյակների «գերեզմանաքարերին» մոտ գտնվող, արտադրական կենցաղի և այլ տեսարաններով, առավելապես բազմաֆիգուր ժայռակտավները:

Այունիքի ժայռարվեստի հուշարձաններում պատկերված է Հայաստանի ֆաունայի ողջ հարստությունը, վերարտադրված են ժամանակի կենդանական աշխարհի ներկայացուցիչների, վայրի և ընտելացված կենդանիների՝ թեզոարյան ուղղաեղջյուր և գալարուն եղջյուրներով այծի, մուֆլոնի, վիթի, եղջերուի, տուրի, ձիու, վարազի, շան, գայլի, շնագայլի, հովազի, արջի, առյուծի պատկերները: Սակավ է հանդիպում գուրբի պատկերը:

Ժայռապատկերներում չափազանց շատ են նետ ու աղեղով, տեգով, նիզակով, վահանով, լայնալիճ աղեղներով զինված որսորդների պատկերները, որսորդական պարանների-լաստների, օղակապարանների, թակարդի, որսորդական այլ հարմարանքների, սայլերի, ծածկասայլերի, սահնակներ հիշեցնող սայլերի, արորների, ինչպես նաև տիեզերական պատկերացումների հետ առնչվող նկարները:

Ծանոթագրություններ

1. Գր. Կարախանյան, Պ. Սահյան, Ժայռապատկերներ Այունիքում: «Սովետական արվեստ», 1967, N1, էջ 31-38, Գր. Կարախանյան, Պ. Սահյան, Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ, «Պատմաբանասիրական հանդես», 1969, N1, էջ 110-116:
2. A. A. I i ai nyi , E ai a theta theta
Ç ai a a c o d a , A a d i d a c o d a d a o
e ai a e a a o n e i e a e n n a d o a d o e e , A d a a a i ,
1966.

1970թ.

Սիսիանը՝ հոգեդարձության և շարժման շրջան

Միսիսիանը՝ հոգեւոր-վշակաբանական փորձերի արարածը

Վիթխարի, անընդգրկելի անհապականություն

ՍԿԻՉԲԸՆ ԵՏ 53

Մանկան ճակատագրում եւ ընդհանրապես հայագիտության համակարգի համար վճռական նշանակություն ունեցավ խոհուն եւ ներհուն երիտասարդին իր հովանավորության տակ վերցնելը ազգային անզուգական բարերար Ալեքսանդր Մանթաշյանի կողմից: Վերջինիս հոգածությամբ է, որ սպազա պատմաբանն իր բարձրագույն կրթությունը ստացավ Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1894-1895) եւ Ս.Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության եւ արեւելյան լեզուների (սանսկրիտ-պարսկերեն-հայերեն լեզուներ) բաժանմունքում: Նրա համալսարանական ճակատագրում վճռական նշանակություն ունեցավ ակադեմիկոս լեզվաբան, հնագետ Ն.Յա. Մամիսի աշակերտելը: Հենց Մամիսի հսկողության ներքո է, որ երիտասարդ Արդնցը սկսում է հայագիտական գործունեությունը: Ս.Պետերբուրգի համալսարանը ոսկե մեդալով ավարտելուց հետո, դարձյալ Ալ.Մանթաշյանի նյութական հովանավորությամբ, երիտասարդ հայագետը մեկնում է Եվրոպա, ուր նշանավոր համալսարանական քաղաքներում (Վենետիկ, Վիեննա, Մյունխեն, Փարիզ, Ստրասբուրգ, Լոնդոն) խորացնում իր գիտելիքները բյուզանդագիտության բնագավառում (1899-1902): Այստեղ աշակերտել է ժամանակի ամենանշանավոր բյուզանդագետներին ու լեզվաբաններին (Կարլ Կրունբախեր, Շառլ Դիլ, Ավգուստ Կարիեր, Անտուան Մեյե, Ֆրեդերիկ Կոմբերե եւ ուրիշներ): Անցյալի, նաեւ ներկայիս ոչ մի հայագետ, մտավորական այսպիսի հետազոտական ու սխտեմատիկ ու փայլուն կրթություն չի ստացել (շուրջ 25 տարի): Կատարելապես տիրապետում էր հին ու նոր բազմաթիվ լեզուների (ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն, հունարեն, արաբերեն, ասորերեն, սանսկրիտ, եբրայերեն, լատիներեն եւ այլն): Լեզուների այսպիսի փայլուն տիրապետությունը շատ է օժանդակել Արդնցին՝ իր գիտական պարապմունքների ընթացքում:

Ն.Արդնցի ստացած կրթությունը հունում է, թե նա պետք է իրեն դրսեւորեր լեզվաբանության, բանասիրության բնագավառներում: Թեեւ այդ գիտաճյուղերը միշտ էլ մնացին հայագետի ուշադրության կենտրոնում, դրանց նվիրելով մի քանի ուշադրավ հետազոտություններ («Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները», Ս.Պետերբուրգ, 1915, 510 էջ (ռուսերեն), նույնը նաեւ ֆրանսերեն (Լյուվեն, 1970) եւ հայերեն (2008)), սակայն Արդնցի գիտական հետաքրքրությունները հիմնականում կենտրոնացվեցին պատմագիտության ասպարեզում: Բովանդակ հայագիտության, ինչպես նաեւ բյուզանդագիտության բնագավառներում իսկական գլուխգործոց է նրա մագիստրոսական թեզը, որը որպես մենագրություն լույս տեսավ 1909թ. Ս.Պետերբուրգում («Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», Ս.Պետերբուրգ, 1909, 540 էջ (ռուսերեն), նույնը նաեւ անգլերեն (Լիսաբոն, 1969) եւ հայերեն (1987)):

Ն.Արդնցի անձնական եւ գիտական ճակատագրում շրջադարձային եղավ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը: Ինչպես իր օրերի շատ ու շատ նշանավոր ու ազնիվ մտավորականներ, նա եւս 1920թ. տարագրվեց արտասահման: Նախ Լոնդոնում (1920-1921), հետո Փարիզում (1921-1942) եւ ի վերջո Բրյուսելում (1931-1942) արդեն լայն ճանաչման ու պատկառանքի արժանացած հայագետը շարունակում է իր գիտական արպտունները, աշխատակ-

ցում հայկական եւ միջազգային նշանավոր պարբերականներին («Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Սիոն», «Հայրենիք», «Վեմ», «Ազգարար», «Չվարթոնգ», «Յառաջ», «Armeniac», «Massis» «Revue des Etudes Armenienne», «Byzantinisch Zeitschrift», «Byzantion» եւ այլն): Սրանցում տպագրվում են փոքրածավալ գիտական ուսումնասիրություններ, որոնք իսկական գլուխգործոցներ էին: Ն.Արդնցը մեզանում հիմնադրեց պատմագիտական մի ժանր, որ, ցավոք, նրանից հետո այլեւս զարգացում չապրեց: Նա հիմք դրեց փոքրիկ մենագրությունների միջոցով վեր հանելու եւ արժեւորելու անցյալի հայոց նշանավոր հոգեւոր-կրոնական ու քաղաքական դեմքերի իրական նկարագիրը: Ժանր, որ Եվրոպայում չափազանց տարածված էր ու հարգի: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել սույն բնագավառին պատկանող «Քերտուհի եպիսկոպոս Ամպելիոս», «Գրիգոր Լուսավորիչ եւ Անակ Պարթե», «Եզնիկ Կողբացի», «Տորք աստված իհն Հայոց», «Կիբելե աստվածուհի», «Մեսրոպ Մաշտոցը եւ նրա աշակերտները», «Վասակ Սյունի», Եղիշեհի, Անանուհի, Կորյունի, Մովսես Խորենացուն, Ղեւոնդ Վարդապետին, Մովսես Կաղանկատվացուն եւ այլ հայ հին մատենագիրներին նվիրված այլ ուսումնասիրություններ: Հայ պատմագիտությանը Ն. Արդնցի բերած մեծագույն նպաստը դրսեւորվել է նրա մենագրական այնպիսի նշանակալից ուսումնասիրություններում, ինչպիսիք են «Հին հայոց շինականություն», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», «Հայաստանի ոսկեհամբը», «Բագրատունյաց փառքը», «Աշոտ Երկրորդ Երկաթ» եւ այլն:

Հայ նոր գրականության արժեքների



Նիկողայոս Արդնցի հուշակոթողը Միսիսիանում

նկատմամբ Արդնցը նրբին ու մանրակրկիտ դիտողականություն է ցուցաբերել, մանավանդ՝ Խ.Աբովյանին, Մ.Պեշիկ-Քաշյանին, Ս.Նալբանդյանին, Ռ.Պատկանյանին, Ռաֆֆուն, Ռ. Ջարդարյանին, Ավ. Ահարոնյանի ստեղծագործություններին նվիրված գրական-քննադատական ակնարկներում:

1931թ. Արդնցի համար միանգամայն գիտական նոր հորիզոններ բացվեցին, երբ հրավեր ստացավ Բրյուսելի Ազատ համալսարանի վարչության կողմից՝ զբաղեցնելու այդ նույն համալսարանի նորաբաց Հայագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը: Պատմաբանն առանց երկմտելու ընդունեց այդ առաջարկությունը: Նա կարիք էր զգում իր ծով, ամբարված գիտելիքները փոխանցելու ուսանողներին՝ թողնելու դպրոց: Եվ ահա, Արդնցի կյանքի վերջին տասը տարին կապվում է Բրյուսելի Ազատ համալսարանի հետ, որը, իմիջայլոց, համարվում էր Եվրոպական բյուզանդագիտության նշանակալից կենտրոններից մեկը: Այդ տարիների Արդնցի ստեղծագործական կյանքը տարբերվում է նախորդներից՝ այժմ նա գրում եւ տպագրվում է միմիայն ֆրանսերենով, իսկ գիտական բեմատիկան նվիրվում է բացառապես բյուզանդագիտությանը: Շուտով Արդնցը դարձավ այդ համակարգի ճանաչված ու անուրանալի հեղինակություն վայելող գիտնականներից: Եվրոպայի բյուզանդագիտական շրջաններում հայ գիտնականը նկատվում էր որպես մի հեղինակ, որն իր հավասարը չուներ հատկապես հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրության ոլորտում: Բյուզանդագիտությունն Արդնցին է պարտական Բյուզանդիայի բազմաթիվ հայտնի պետական ու ռազմական գործիչների, ազնվականական ընտանիքների մասին գիտականորեն հիմնավորված վերջին՝ անփոփոխ խոսք ասելու իրողությամբ: Մեկը մյուսի հետեւից լույս են տեսնում պատմաբանի «Լեւոն 5-րդ Հայկազն», «Արտակամ Արշակունի», «Վարդ Մամիկոնյան», «Հայերը բյուզանդական գիտության մեջ», «Վասիլ Հայկազն. մեծագործ կայսր», «Մորիկ եւ Կոստանդին 5-րդ կայսրերի ծագումը», «Ռուբինյանների նախահայրը», «Սամուել Հայր բուլղարների թագավոր», «Թոռնիկ Վանական», «Դավիթ Կյուրոպաղատ», «Հայ-բյուզանդական նոթեր» եւ այլ ուսումնասիրություններ:

Կյանքի վերջին տարիներին Ն.Արդնցը ծրագրել էր իր պատմագիտական աշխատանքների հանրագումարի բերել եւ ստեղծել «Հայոց քննական պատմություն» խորագիրը կրող մի բազմահատոր աշխատություն (հնագույն ժամանակներից մինչեւ 20-րդ դար): Ցավոք, նա հասցրեց գրել միայն առաջին հատորը (հայկական հնագույն ցեղերի եւ Ուրարտուի պատմություն) ժամանակաշրջանները): Հատորը լույս է տեսել հետմահու՝ Փարիզում՝ ֆրանսերեն (Փարիզ, 1946, 450 էջ, նույնը նաեւ հայերեն (Երեւան, 1972 եւ 2009)): Այս աշխատանքի մասին իր գնահատական խոսքում ֆրանսիացի ակադեմիկոս Արդնցի հարուստ ժառանգությունն արդեն դարձել է իր պաշտելի ժողովրդի բանկ սեփականությունը: Նիկողայոս Արդնցը մահացել է 1942թ. հունվարի 27-ին: Թաղումը տեղի է ունեցել փետրվարի 2-ին հայ եւ օտար բազմության եւ հավատարիմ բարեկամների ու բազմաթիվ սաների ներկայությամբ: Մեծագույն հայի ու մեր ժողովրդի փառավոր զավակի մասին մեր խոսքն ուզում ենք ավարտել դարձյալ Մուշեղ Իշխանի խոսքով. «... Նիկողայոս Արդնց այն հայն էր, որ ավելի իրավունք ուներ Հայաստանի հողին մեջ հանգչեցնելու իր ոսկորները, որոնք, վստահ եմ, հանգիստ չունին օտար հողի ցուրտ գրկին խորը: Արդնցի տեղը Հայաստանի Պանթեոնն է, անմահներու հանգստարանին մեջ»:



Լամրեկեր Սարգսյան

Իսկ Գյազբեյը նրա բանաստեղծական ներշնչանքի աղբյուրն էր: Բնության սիրահար էր, այգի էր սիրում, մասրենի, սովորական մի թուփ...»:

Համո Սահյանը քաջախոս էր եւ սակավապետ: Նաեւ գուսայ: Անձնական հարցով ոչ մեկին չէր դիմում, չէր սիրում խնդրել, մանավանդ՝ պահանջել, ընկեր-բարեկամի համար բարեխոսել: Լ. Սարգսյանը հարցնում էր. «Վարպետ, բա սիրտդ մի բան չի՞ ուզում, պատասխանում էր՝ քջուք արած հավի միս, այսինքն՝ տնական հավ»: Կուսակցական պաշտոնյաներին չէր սիրում, ձգտում էր քիչ շփումներ ունենալ: Իհարկե, կային այնպիսիք, որոնց անվերապահորեն ընդունում եւ հարգում էր՝ Վլադիմիր Մովսիսյան, Ալեքսան Կիրակոսյան: Երկուսն էլ՝ հարգված կուսակցական-պետական գործիչներ:

Պատահում էր՝ մեկը գալիս խոսում-խոսում էր, իսկ նա մի բառ անգամ չէր արտաբերում: Չէր սիրում հեռուստատեսությամբ խոսք ասել, նկարահանվել: Մի անգամ՝ ավելի ստույգ՝ 80-ականների վերջին, լրագրող, բանահավաք Հովհաննես Պապիկյանը (այժմ՝ սահմանադրական դատարանի մամուլի քարտուղար) եկել էր Սիսիան՝ տեսաֆիլմ ստեղծելու Համո Սահյանի մասին: Իսկ դա դուրսից գործ չէր՝ Համո Սահյանին համոզելու առումով: Սիսիանի այն ժամանակվա կուսըղջկոմի առաջին քարտուղար Հեղինե Առաքելյանն ասել էր. «Գնացեք, Լամրեկեր գտեք, միայն նա կարող է Սահյանին համոզել»: Այդպես էլ եղավ, Փիրիկուլի այգում ստեղծվեց այդ ֆիլմը, որում Համո Սահյանն է՝ երկրի, երիտասարդության, արցախյան ազատամարտի, հայ պոեզիայի ներկայի եւ վաղվա օրվա մասին բանաստեղծի դատողություններով, մեկնություններով, նրա բանաստեղծություններով, որ ընթերցում է հեղինակը:

Հետագայում Հովի. Պապիկյանը խոստովանել է. «Լամրեկեր, եթե չլինեիր դու, այդ ֆիլմը չէր հաջողվում նկարել»: Նշենք, որ Հովի. Պապիկյանը 2004-ին եւս մի տեսաֆիլմ է նկարահանել. «Իրիկնա-հաց առանց Համո Սահյանի»:

Լամրեկեր Սարգսյանին Համո Սահյանն ասում էր, թե երկու մարդ գիտի իր գաղտնիքները, մեկը՝ ինքը, մյուսը՝ Ալեքսան Կիրակոսյանը: Ալեքսան Մատվեյիչը տեղյակ էր Սահյանի պետական պաշտոնյաների հետ շփումների գաղտնիքներից, Լ. Սարգսյանը՝ անձնակազմից: «Ինքը քիչ էր խոսում, ամեն ժամանակ չէր կարող լսել նրան, հազվադեպ էր «բացվում», բայց, երբ խոսում էր, միայն հետաքրքրությամբ էր լսում նրան», - շարունակում էր պատմել Լամրեկեր Սարգսյանը, - աշխատանքից հետո այցելեցի նրան, հյուրանոցում էր: Այս անգամ «բացվել» էր, Պարույր Սեւակի մահվան եղելությունները պատմում: Աշխատանքային լարված օրվաին հետո հոգնածություն էր գզում, պատմության կեսին մինչ եկավ այցելին: Նեղացավ. «Ես թեգ համար եմ պատմում, դու էլ ննջում ես»: Հետո փորձեց մեղմել իրադրությունը՝ ասելով՝ ուրեմն հոգնած ես: Մարդիկ կային, գալիս խոսում, խոսում, մի պատասխան չէր տալիս: Ուրեմն գրուցակիցը սրտով չէր...»:

Հարգում էր իր սերնդակից գրողներին. Հովհաննես Շիրազին, Վահագն Դավթյանին, Պարույր Սեւակին, ում հետ նույն շենքում էր բնակվում: Սեւակի մասին այսպես է արտահայտվել. «Պարույր, դու շուտ գնացիր, բայց ճամփա բացեցիր, որ քո գործը շարունակվեր»: Համոն առաջարկ էրիտասարդներից ընդունում եւ հարգում էր Հրանտ Մաթեոսյանին եւ Ռազմիկ Դավթյանին: Վերջինս նրան հայրիկ էր անվանում: Իսկ միջակների առնչությամբ լռում էր եւ իր վերաբերմունքը արտահայտում էր ձեռքը թափ տալով:


Լամրեկեր Սարգսյանի արխիվում Փիրիկուլի ծիրանի այգում արված մի լուսանկար կա, որն ունի իր նախապատմությունը: Բանն այն է, որ այդ անգամ բանաստեղծն ասել էր. «Լամրեկեր, արի, վերջին անգամ լուսանկարվենք»: Եվ, իրոք, դա վերջին լուսանկարն էր...

Պարաբայան շարժման տարիներին Համո Սահյանը չմտավ քաղաքականու-

Ինչ որ գրել է՝ անկեղծ է գրել, սրբով է գրել

ՎՐԻԳՈՐ ՂԱՐԻՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Հիշումսք մեռնում է, որ անմահանա:

Ավ. Իսահակյանի անտիպ պատմվածքը հրատարակելու եւ ոչ հնազանդ ներքին խառնվածքի համար Համո Սահյանին ազատում են «Գրական թերթի» խմբագրի պաշտոնից: ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանն ասում է. «ԳՈԱ, թող՝ մի քիչ հանգիստ քնենք»: ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Էր. Ջրբաշյանը հայտարարում է, թե «Համո Սահյանն այլեւս նորություն չի բերում, ամբողջատ կրկնում է ինքն իրեն»: Հենց դա էլ ըստ երեւութի, փակեց ՀՀ ԳԱԱ անդամ ընտրվելու Համո Սահյանի ճանապարհը: Համո Սահյանին համարում էին միայն «Սյունիքի բանաստեղծ»:

Քո լեռներում ի՞նչ ես գրել, Որ դու նրանց գիրքը մտել, Ամեն թուփ ու անբով փարված, Խեղճի նման սիրահարված, Խոնարհվում ես ամեն բարին Ու երգում ես ամբողջ փարին - Իմ լեռներում գրել եմ եւ Ակունքները համբուրելի, Ամենաջինջ աղբյուրների, Որ կարող ես նշալ, փրկիլել, Լվանալ ու պարզաջրել Ապակունված մի ողջ աշխարհ:

Իրականում Համո Սահյանը Սյունիքով բացահայտեց եւ սրբացրեց ողջ Հայաստանը՝ հայրենիքի հանդեպ իր մեծ սերը համեմատելով միայն մոր հետ:

Դու իմ միակն էիր, ինչպես Տպասարսևս: Լուսահողի Վ. Աբաջյանը ֆիլիպարմոնիայի մեծ դահլիճում էլույթի ժամանակ ասաց. «Ես միշտ հաճույքով եմ ասումընթացում Սահյանից: Ախր Համոն շատ հայ է»: Այո, Համոն շատ հայ էր, շատ հայաստանուտ էր: Ակսել Բակունցը եւ Համո Սահյանը դարձան Սյունիքի եւ Սյունիքի միջոցով ողջ Հայաստան աշխարհի խիղճը եւ անմնացորդ սիրվեցին ոչ միայն սյունեցիների, այլև համայն հայության կողմից:

Համո Սահյանի պոեզիայի ուժը, ճշմարտացիությունը եւ համամարդկային լինելը նրանից է, որ ինչ որ գրել է, անկեղծ է գրել, սրտով է գրել:

Թող, որ աչքերիս լույսը հավաքի, Թե առանց սրբի մի բան եմ գրում...

Ինչպիսի՞ անկեղծություն...

Ինչպես եւ Մարտիրոս Սարյանը, Համո Սահյանն էլ բնությունն աստվածացնում էր: Ըստ նրանց՝ իրական Աստվածը հենց ինքը՝ բնությունն է: Բանաստեղծը բնությանն է վերագրում աշխարհի կատարյալ երգի ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՁ 70

թյան մեջ, ինչպես Սերո Խանգաղյանը, բայց հանդես եկավ հողվածներով, որոնցում շոշափվում է նաեւ հայ-ռուսական հարաբերությունների հարցը: «Ինձ բացակա չդնեք՝ ժողովածուի մեկ տասնյակից ավել լի բանաստեղծությունում շոշափվում ես դարաբայան թեմաներ: Դրանցում նաեւ լավատեսական տողեր կան.

Մենք ապրելու ենք, ինչ էլ պատրաստի, Մեր հողի վրա, մերն ենք լինելու...

Շուշիի ազատագրումը ցմծությամբ ընդունեց բանաստեղծը: Ասաց, որ ինքը կենդանի չի լինի, սակայն Ղարաբաղը մշտապես կլինի հայկական: Բանաստեղծը, ըստ Լամրեկեր Սարգսյանի, ռուսական կողմնորոշում ունեւ, ինչն այսպես էր ձեւակեր-


պում. «Մեք պիտի ռուսի հետ լինենք»:

Լամրեկեր Սարգսյանի փոխանցմամբ՝ Համո Սահյանն ասել է, որ իրեն հողին հանձնեց ծննդավայրում՝ Լոր գյուղում, հայրենական տան բակում: Երբ կախճանվեց բանաստեղծը, թաղման կառավարական հանձնաժողով էր ստեղծվել՝ Վանո Սիրադեղյանի գլխավորությամբ: Համո Սահյանի ցանկությանը Լամրեկեր Սարգսյանը տեղյակ պահեց հանձնաժողովի նախագահին: Վերջինս էլ հայտնեց, որ որոշվել է բանաստեղծի դիմ ամփոփել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում, ինչն եւ տեղի ունեցավ:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

«Միրյա պայթում է... պայթում է»

Հուլիսի 16, 93թ. 16.30-20.30



մոքային գեղծի քաղցկեղ: Լեդին ստամ-
քոս չի մտնում: Տարածվում է արյան մեջ:
Անենածանրը եղել է երեկ եւ այսօր: Այս վի-
ճակը նշանակում է վերջ: Երկու անգամ
գետ պետք չէ լինել հասկանալու համար:
Հրեշտակներից մեկի ներկայությունը սե-
նյակում այնքան պարզ է: Երկու աշխարհ-
ների, երկու ժամանակների սահմանա-
գծին է Համո Սահյանը: Աչքերը բացեց:
Թույլ տնքաց: Երկրաները զվարճ գլխով
նշան են անում խոսի:

- «Դադի ծաղկից» չընտրեցինք, Վար-
պետ:

- Ոչինչ:
- Հետո բերել եմ, ահա: Գուցե ցանկի
մեջ նշեք, թե որ բանաստեղծություններն
եք ուզում «Հատընտիրի» մեջ մտցնել:

- Չէ...
- Ձեզ համար մի հինգ- տասը թուղթ
գործ է:

- Չեմ կարող... Ուժ չկա...
Այդ դեպքում ես կարողան ցանկը: Դուք
ասե՛ք՝ «այո», «ոչ»:

- Չէ, եղ էլ քեզ եմ թողնում, դու արա:

Ամեն այցիս՝ տուն, թե հիվանդանոց,
տնտեսությունից, քաղաքականությունից,
նազանական իրավիճակից եր հարցնում:
- Եղ քո լավատեսությունից մի բան
ասա, ուրախանանք, - ձեռ եր առնում:
Բայց լրջորեն էլ հարցուփորձ եր անում:

- Դուրսը շատ ես լինում, ջախել ես,
չվիվում ես մարդկանց հետ, ինչ կա՞...
Այսօր էլ մի քիչ պատմեցի վերջին հու-
սադող նորություններից:

Անորոշ մի ծայն հանցի, գլուխը թեքեց
բարձի վրա... Անգր վիճակի մեջ ընկավ:

Բուպեն մեկ, թվում է՝ վայրկյանը մեկ՝
այրոց: Դեմքն անընդհատ ծամածոլում
է շնչափողի ցավերից: Աջ ձեռքը՝ կրծքա-
վանդակի աջ կողմին հանգած: Աչքերը փա-
կում է:

Կինը ծնկի է ընկնում: Ձեռքերի մեջ է
վերցնում Համո Սահյանի թռչած ամիւր,
հեկեկում է.

- Համո, մի բան ասա... Մի բան ասա,
Համո... Մի լռիր...
- Սպանում ե... - ձեռքը հազիվ սահեց-
նում է աջ կողմով՝ վերից վար: Դառնում է
ինձ.

- Զի անցնում ես այրոցը... Սպանում
է... Երկու անգամ ուժեղ դեղ սրկեցին...
Զօգնեց...

Ու վերադառնում է մեր գրույցի շարու-
նակությանը.

- Սվետան էլ մյուս գիրքը կարդաց, վեր-
ջացրեց... Տեսար, չէ՞, հենց էստեղ՝ հիվան-
դանոցում արբարեց... Շատ լավ բաներ
կան մեջը... Երկու նայեցի եր բանաստեղ-
ծություններն ու տեսա, որ լավերը կան
դրանց մեջ... Մերուժանը եկավ-տարավ...
Տեր Գուլանյան... Տեր Գուլանյան...

- Դա էլ, ահա կտպարվի: Երկու գիրք՝
միանգամից:
Ձեռքը թափ տվեց՝ իբր հեչ, իբր դա
տարկ բան է: Բայց հետո աշխուժացավ
փոր-ինջ.

- Ասում ես կտպարվի՞...
- Անկասկած:
- Զի խաբի՞...
- Հաստատ կտպարվի... Շարվածք է ար-
վել համակարգային, սրբագրվել է, ինչու՞
պիտի խաբի այսքանից հետո:
Վերնագիրը որոշել եր «Վերջին լեռ-
նանցք» դնել: Հետո Սվետան ասաց, որ Հա-
մո Սահյանը իր նախավերջին օրը, թե դրա-
նից եւս մեկ օր առաջ փոխել է վերնագիրը,
դարձրել «Ինձ բացակա չդներ»:

- Մանուկն ավարտեց թումանյա-
նական շարքը, - ասացի: - Զորս երգ: Զորս
երգ՝ Քուչակից, չորս երգ՝ Թումանյանից,
չորս երգ՝ Տերյանից, չորս երգ՝ Սահյանից:

- Հը՞մ, - ակնարկս հասկանալու նշան
տվեց:

- Լավն են, չէ՞, երգերը, - հարցրեց Համո
Սահյանը: - Ափսոս, չեմ լսել:
- Սեպտեմբերին Թումանյանի տուն -
թանգարանում է առաջին անգամ հրապար-
ակային կատարում լինելու:

- Որո՞նք են, ասում ես, - հարցրեց Հա-
մո Սահյանն ու ինքն էլ սկսեց թվարկել՝
«Արագիլ»...
- «Ուլունք», -շարունակեցի:

- «Եճճուկներ»...
- «Կանաչ ախպեր»:
- Լսած կլինես:

- Հեղինակի կատարմամբ, իրենց տա-
նը:
- Շատ լավ կլինեն:
- Բայց քիչ են: Ասում եմ՝ հինգ թիվը լավ
է, հինգերորդն էլ գրեք: Ասում է. «Ամեն մեկը
գրելուց գրեն մի անգամ մեռել եմ: Դժվար
է»: Հավատա՞մ, որ մեռելուվ է գրում եղ թե-
թե, հրաշք երգերը:

- Հավատա... Հաստատ մեռել է... Ամեն
մեկի հետ:

Այնպիսի զգացում ունեն, թե ծանրա-
ցած եմ Համո Սահյանի շնչին. չեմ թողնում՝
հանգիստ հանգի: Միեւնույն ժամանակ
զրուցելու բուռն ցանկություն կա, ինչպես
միշտ... Ինչպես միշտ՝ վերջին տարինե-
րին... Ներքին մի հանգզվածություն կա,
որ այդ մեր զրույցներն այլևս չեն կրկնվե-
լու: Սա վերջն է: Վերջ: Վատագավ ճորից...
Կնոջ խնդրանքով վագեցի հերթապահ
թշկուհու մոտ, ում անունը Մերի Վահա-
նովնա էր: Եկավ բուժքոչու հետ: Սրկեցին:
Ներերակային:

- Աշխատեցրեք ձեռքը:
Համո Սահյանը բացուլուսի է անում
ձեռքի ափը: Դեղի գործը հեշտացնելու հա-
մար:

- Ինձ մասին ձեր թերթում հոդված գրած
տղայի հետ ո՞նց ես, - քիչ հետո հարցրեց:
- Լավ: Աշխատանքային ընկերներ ենք:
Ասում է՝ մի հոդված էլ իմ մասին է գրելու:

- Կատակիս տոնը պահում եմ: - Սրկեցին:
Հիմա լավ կզգաք ... Լավ էր գրել: Ուրիշ-
ներից էլ եմ լսել: Տիրան Մանուկյանն է
շատ հավանել:

- Ինձ կուսակցական եր դարձրել, -
ափսոսանք կար ծայնի երանգի մեջ:

- Մի երկու օր առաջ լրագրող էր եկել, -
ասաց Համո Սահյանը: - Գիտես... Են մեկը:
Հարցազրույց էր ուզում: Ասի՞ չեմ կարող, ի
վիճակի չեմ: Մի բանի օր հետո արի: Չայ-
նագրող սարքն աներեսաբար դեմ արեց:
Ես էլ ասացի. «Դու հարցը տուր, դու էլ
պատասխանիր»: Բայց որ շարունակեց
աներեսություն անել ու ծայնագրիչը միաց-
րեց, մի երկու խոսք ասի:

Թույլ է: Նայում է ինձ, նայում
առատարիմ ու բան չի ասում: Խնդրում
է, որ օգնեմ կողքի շրջվի: Գետիկն արագ
մոտենում է, երկուսով թեքում ենք ձախ
կողքին: Քիչ է դիմանում այդ վիճակում:
Այրոցը: Երկու է ուզում մեջքին դառնալ:
Ձեռքերը՝ կրծքին խաչած:

Կարճ ժամանակով մտավ ու գործով
տեղ շտապեց «Ավանգարդի» խմբագիր
Մնացական Ջոհրաբյանը:
- Տիրանն ո՞ր է... Ինչու՞ չեկեցի:
- Չանգահարեցի, քարտուղարուհին
ասաց, որ Մանուկյանը շատ է զբաղված,
զանգահարեմ վաղը: Դեսպանների կա-
նայք են իր մոտ եկել: Հենց հիմա պաշտո-
նական ընդունելություն է:

- Շատ է չարչարվում: Հասկանալի է...
- Ուզում եք՝ նորից փորձեմ: - Մոտեցա
հեռախոսին:
- Չէ... Չէ... Շատ է զբաղված: Մի
զանգահարիր... Վա՛յ, - թույլ, խաչուտ ծայ-
նով ասաց, - վա՛յ, - ձեռքն իր սովորական
համածայն դրեց ճակատին, - Տիրանն ինձ
ես վիճակում տեսնի... Հանկարծ Տիրա-
նը գա, ու ես չկարողանամ հետը խոսել...
Չէ, մի զանգիր: - Նահապետական ամոթի,
ափսոսանքի, դառնության երանգները
խառն էին այս խոսքի մեջ:

- Այսօր հերթապահ եմ տպարանում,
Մանուկյանին չեմ տեսնի: Վաղն ի՞նչ հա-
ղորդեմ Ձեր կողմից:
- Ասա՛ կարողում եմ իրեն... Ասա՛ պաշ-
տուն եմ իրեն...

Եվ առանց այն էլ թույլ ծայնն ավելի
ծանրացրեց.

- ... Եվ, թվում է, ինքն էլ ինձ:
Տիրան Մանուկյանին չէր տեսել ըն-
դամենը մեկ շաբաթ: Նախորդ ուրբաթ
Մանուկյանի հետ էինք եղել հիվանդանո-
ցում:

Սենյակում մնացել ենք Սվետան, քույ-
րերից՝ Սեդան, Գետիկը, ես: Սվետան նո-
րից ծնկների վրա է: Լացականա՞ծ աղաչում
է.

- Համո, մի լռիր... Համո, խոսիր, մի
բան ասա, Համո, խնդրում եմ... Համո, էն
կողմը մի գնա, ես կողմն անցիր, Համո...
Համո Սահյանն աչքերը բացեց:
- Մի բան ուզի, Համո... Ուտելու բան
տամ... մի քիչ հյուր խմիր:
- Չեմ ուզում...
Դիմում է ինձ.

- Եղ իմ մասին հոդվածն ու Արամ հա-
չատրյանի մասին՝ Տիրան Մանուկյանի
հոդվածն իբր կողքի էլ դրել էիք... - Կա-
տակի շեշտ կա ծայնի մեջ:
- Խաչատրյանն էլ մեծ մարդ է, Վար-
պետ, - շարունակեցի այս անգամ իր
սկսած խաղը:
- Օ՛- օ...
- Իսկ Տիրանի հոդվածը կարդացի՞ք
... Լավ՞ ըր...

- Շա՛տ...
Արգելված մի համեմատություն - հարց
տվեցի: Մտածեցի, որ սովորական պայ-
մաններում է չզրված օրենքով արգելվում
նման հարցը, բայց այս պահին կարելի է.
- Վարպետ, իսկ ո՞վ է ավելի մեծ՝ Արամ
խաչատրյանը, թե Տիրան Մանուկյանը: -
Վախեցա իմ չարածիությունից:
- Պատմականորեն՝ Արամ խաչատր-
յանը, զուտ ստեղծագործաբար՝ Տիրան
Մանուկյանը: - Մի փոքր դադար: Շունչը
տեղը բերեց: - Դե արի ու Տերյանի հետ
համեմատվիր... Պատմություն՝ կա, ժամա-
նակ՝ կա...
Նորից անդամայն մեջ ընկավ:

Սվետան վատացավ: 47-օրյա հիվան-
դանոցային մեն-միայնակ տառապանք-
ներն անհետ չեն անցել: Գետիկի հետ
տեղափոխեցինք ազատ մահճակալին:
Սեդան սրտի դեղեր կաթեցրեց ջրի մեջ:
Սվետային հանցեցինք պատշգամբ՝ մաքուր
օդի: Աչքերը խառն են, հայացքը՝ անորոշ:
Երեսնյան գեղեցիկ երեկու է: Խաղաղ, ար-
դեն անշոգ: Հիվանդանոցի բակի ծառերը
մեղմ խշշում են: Խաղողն է հասունանում:
Երկու մարդ հիվանդասենյակում ձեռքից
գնում են: Սենյակը ընդմիշտ, մյուսը քիչ անց
ուշքի կզա: Բժիշկը եկավ: Օգնություն՝
Սվետային:
Համո Սահյանի աչքերը բաց են: Մի քիչ
ննջել էր:
Հիշեցի հենց այս հիվանդանոցի մի
պատմություն, որ ինքն էր ինձ պատմել:
Համո Սահյանը բուժվելիս է եղել:
Ծխելու ցանկությունը վերացել է: Պրոֆե-
սորն անընդհատ ներս է մտել՝ ծխախոտը
չորունքների արանքում. «Ծխիր, Համո»,
- ասել է: «Ցանկություն չունեն», - պա-
տասխանել է: «Եղ ոնց է երկու-երեք տուփ
էիր օրական ծխում ու ինձ չես կարելի:
«Չեմ կարող, հա»: «Ուրեմն, կմեռնես: Հենց
ծխելուդ ցանկությունը վերականգնվի՞
ինչպիսի, որ լավացած ես»: «Իսկապես, եղ
պես էլ եղավ, - ծիծաղեց Համո Սահյանը:
- Զօխելուս 21-րդ օրը հանկարծ ծխել ուզե-
ցի: Ծխախոտ վառեցի ու լավացա»:
Այս անգամ չծխեց 15 օր ... Ես մի հա-
վերժություն արրեց:
Պատշգամբից ներս եկա.
- Ծխախոտ տա՞մ ...
Գլուխը բացասական տարուբերեց:

Դուրս եկա պատշգամբ, ծխելու:
- Հովհաննես, - լսեցի անունս:
Սեդան ասաց՝ քեզ էլ կանչում:
Մոտեցա մահճակալին:
- Գրքիս վերնագիրը՝ «Քարե պա-
տարագ»:
Բառերը հազիվ արտաբերեց, ու լավ
չհասկացա:
- Հը՞... «Քարը՝ պատարագ»:
- «Քարե՝ պատարագ», - երկու բառն էլ
չեշտեց հատ-հատ:
- Գրքի վրա նշե՞մ հատընտիր:
- Պետք չէ:

ՎՈՎԱՆՆԵՍ ԱՅՎԱԾՅԱԼ

Համո Սահյանը պառկած է՝ դեմքը պա-
տի կողմը՝ միհար, փոքրացած, դեղնած:
Հիվանդասենյակում են Համո Սահյա-
նի կինը, քույրերը, երկու դեռահաս աղջիկ՝
զարմուխները, տարիների մտերիներ
քանոթակարծ Գետիկ Բաղդասարյանը ու
իր կինը՝ Օդեսն:

Օդես՝ ուրբաթ: Ժամը՝ 16.30: Շոգը դեռ
չի կտրվել:

- Ի՞նչ, եկա՞ր, - ուրախացավ Համո Սա-
հյանը, - կենդանությանս հասար...
- Ո՞նց եք, Վարպետ, - ծայնի սովորա-
կան ելեւեջ կեղծեցի:
- Վատ... Մեռնում եմ...
- Հիվանդները սովորաբար հոռետես
են լինում, - ամհոգություն խաղացի: - Ի՞նչ
անեն, ինչու՞ օգնեն...

- Ոչ մի բան չես կարող անել...
- Մի քիչ վախեցած չե՞ք, ոնց որ, Վար-
պետ, - չարածիություն արեցի:
- Հա, վախեցած եմ...
- Բա Դուք չե՞ք գրել. «Ինձ բաց թողեք
ես գնամ...»: - Հոգու հետ խաղացի:
- Գրել եմ: Բայց ասել եմ՝ ես գնամ... Ոչ
թե եսպես տանջանքով, տառապանքով.../
- Լռեց: Երեկ ուզում էր շարունակել «...
ինձ տանի», բայց ուժը չհերիքեց: Այրոցը
խեղդեց:
- Տրամաբանական շեշտը «ես»-ի վրա
եք դնում, - բանասիրական գրույցի պատ-
րանք ստեղծեցի, երբ փոքր-ինչ հանգստա-
ցավ:
- «Գնամ»-ի, - շարունակեց իմ սկսած
խաղը:

Աչքերը փակեց: Գլուխը թեքեց: Ուժերը
լքեցին: Կինը՝ Սվետլանան, ու Գետիկը բե-
րեցին թթվածնի բարձր: Ընչարգելություն:
Այրոցը խեղդում է: Թույլ ձեռքը դնում է
կրծքավանդակի աջ կողմին ու կծկվում
ցավից: Թթվածինն օգնեց: Աչքերը բացեց:
Ներկաները քաջալերում են ինձ, որ խոսես:
- Գիրքը համարյա վերջացրի, Վար-
պետ: Մի ժամուկես-երկու ժամկա աշխա-
տանք է մնացել: Երկուշաբթի կհանձնեմ
հրատարակչություն:

(Օգնում եմ կազմելու հատընտիրը):
- Հա՞, - ուրախացավ:
- «Նահիրի» դեկավարությունը խոս-
տացել է շատ արագ՝ մի երկու ամսում
հրատարակել Ձեր «Հատընտիրը»:
- Շատ շնորհակալ եմ, - թույլ ժպտաց:
Երկու մատը վեր պարզեց ու իջեցրեց:
Զհասկացա իմաստը:
- Լավ նշելու ենք, - ասացի:
- Ինձ երկու օր է մնացել, - նորից վեր
պարզեց գույգ մատը:

Ընչարգելություն: Այրոցը: Նորից
թթվածին: Կինը, բուժքույրը, Գետիկն օդ
են տալիս: Ես չզիտեմ անելիքս: Մեծ մար-
դը, որին վերջին հինգ-վեց տարիները մոտ
են եղել, հեռանում է մեզվից: Ենթաստա-



Ե - Բայց ընտրել եք մի քանի գրքերից:

- Նշիր... թերեւս...

Վերջին օրերը վերնագրի վրա էր տանջվում ու անենալավը չէր գտնում... Սիա: Վերջին ժամերին: «Քարե պատարագ»:

- Շատ են սիրել Ձեր բանաստեղծությունը, - ասացի: - Բայց հիմա, երբ նորից ու միաժամանակ կարդացի Ձեր ընտրած «Յատրոնտիրը», ուրիշ տպավորություն ունեմ: Բոլորովին ուրիշ: Մեծ... Յգոր... Գեղեցիկ:

- Բա՛, - ասաց, - թե՛ հը՛մ...

Անաչկոտություն ու միաժամանակ սեփական ուժի գնահատում զգացի իր միական բացականչության մեջ:

Մինչեւ վերջին պահին ուղեղը՝ պարզ: Մինչեւ վերջին պահը՝ բանաստեղծ: Մինչեւ վերջին պահը՝ ստեղծագործության մեջ: Մինչեւ վերջին պահին՝ անտրտուն: Մինչեւ վերջին պահը՝ շնորհակալ բոլորին: Մինչ վերջին պահին՝ անաչկոտ:

- Գրքի համար Վովան մեկ միլիոն փոխանցել է, - ասաց Յան Սահյանը:

- Բայց հրատարակչության հաշվի համարը ես պետք է բերեի, դեռ չեմ տվել...

- Ինքն իմացել ու փոխանցել է:

Յան Սահյանի բարեկամ Վովան փոխանարար Դանիել Գասպարյանն է:

Կողքի պատշգամբից Տիգրան Մանսուրյանի կինոերաժշտության հնչյունները լսեցինք:

- Սվետա, - ասացի, - Տիգրան, ահա, ներկա է: Ռադիոն միացնենք:

Կինը մտավ սենյակ: Յան Սահյանը նրա հետ մտնելու փորձեր էր անում: Սվետան միացրեց ռադիոն: Մանսուրյանի հնչյունները ողորդեցին Յան Սահյանին:

- Տիգրանի երաժշտության տակ էլ հանգում է, - ասաց Սվետան՝ հոգոցով: Վերջին մեղեդին էր: Յան Սահյանը հայտարարեց.

- Ժամը 18-ն անց է 17 րոպե: Այժմ հարդրում ենք...

Ի՛նչ մարդ է Գետիկը: Ի՛նչ հրաշք է ու լուռ ու պատրաստակամ Գետիկը: Ինչպիսի՛ հոգատարությամբ էր վերաբերվում-օգնում Յան Սահյանին:

- Սիրտս պայթում է, - դիմեց նրան Յան Սահյանը՝ ասես բժշկի: - Սիրտս պայթում է...

Մեջն այլևս ուժ չկար: Եվ մի 4-5 անգամ կրկնեց.

- Սիրտս պայթում է...

- Յուր կիսմեի: Բաժակով չկարողացավ: Յուրը քաշելու ուժ չկար:

- Չողիկ կա՞, ձողիկով փորձեի:

Չողիկ չկար: Չողիկ ճարեցինք: Նարնջի հյութ չուզեց Յան Սահյանը:

- Մասուր կա՞, - ասաց, -մասուրի հյութ տվեք:

Իր պոեզիայի մասուրն ու մասրենին ինքն է, ինքն էլ մերն է («...Աղն են ձեր կենաց, ձեր մասրենին են»): Մասուրի հյութ ուզեց կյանքի ամենավերջին պահին:

Մասրահյութով բաժակը պահեցի, ձողիկը մտցրեցի մեջը: Քաշեց... Փորձեց քաշել... Ուժ չկար:

Գլուխը թեք ընկավ: Աչքերի բիբերը՝ դեղնած ու փառակալած, շրջվեցին դեպի ճակատը:

Սվետան ճչաց.

- Յան, մի բա՛ռ ասա...

Սվետան համբուրում էր Յան Սահյանի ձեռքերը՝ արցունքներ կաթեցնելով նրանց դեղին մաշկին.

- Յան, մի վերջին խոսք ասա...

- Յետո, - հազիվ արտաբերեց Յան Սահյանը:

Չեռք տվեցի ոտքերին, սառը թվացին, ձեռքերի եղունգների չորս կողմն սպիտակած էր:

Աչքերը նորից շրջվեցին: Այդպես՝ երկու-երեք անգամ:

Վազցի բժշկի հետևից: Սվետայի ու Գետիկի օգնությամբ սարքերով նայեց, կարգադրեց մորՖի ու չեմ հիշում ինչ սրսկել: Յանգասացնելու համար: Գետիկը գնաց: Ես էլ հետը միջանցք դուրս եկա: Թերթի հերթապահությունից ուշացել էի:



Փոշմանցի, ետ եկա: 20.30-ն էր: Ներս ընկավ Յան Սահյանի ավագ որդին՝ Նաիրին: Ներքին տառապանքը թաքցրած, ասաց. - Յայրիկը քնել է, հանգիստ թողեք, թող քնի: Սենյակից դուրս եկեք բոլորը: Վերջին անգամ ձեռքս դրի Յան Սահյանի ոտքին՝ տպավորությունս նույնն էր՝ սառչում է: Վերջին հրաժեշտի հպումն էր:

Վերցրեցի Սվետայի տված՝ Յան Սահյանի վերջին տուփ ծխախոտը՝ որպես հիշատակ: Ստա բժշկի սենյակ: - Մինչեւ առավոտ չի դիմանա: - Ասաց: - մենք դեռ երեկ էինք սպասում: Եկա խմբագրություն: - Մեծ մարդը գնաց, - ասացի խմբագրին:

Իմ գնալուց հետո շնչել էր եւս 8 ժամ 10 րոպե: Առանց գիտակցությունը կորցնելու: Բայց այլևս չէր խոսել: Առավոտյան վաղ զանգահարեցի հիվանդանոցի իր սենյակը: Չուզաիեռ հեռախոսով հերթապահն ասաց. - Յան Սահյանը գիշերը վախճանվեց: ■

Հուշագրություն

Մի Սահյան կա աշխարհում



ՎԱՐՂԱՆ ԿՎԻԵՏԱ

ԼԴԴ ՁՄ վարչության նախագահ

Դիմել Սահյանին, նշանակում է ճշմարիտ բանաստեղծությանն անդրադառնալ նորից ու վերստին: Իսկ մեծք որքան մոտենում ենք բանաստեղծությանը (բայց մոտենում ենք) այնքան հեռու ենք մնում նրանից: Բանաստեղծությանը ես ավելի մոտիկ եմ եղել այն ժամանակ, երբ նրանից անհամեմատ հեռու էի գտնվում, երբ դեռ թորվաճառների մեջ էի, երբ դեռ չէի ծնվել, բայց հայրս ու մայրս արդեն սիրում էին իրար: Ուզում եմ ասել՝ բանաստեղծության մեջ նախնականության մասն է լինում խառնել «նա օգիտից»: Միշտ էլ այս համոզմունքն է եմ հանգում, երբ Սահյան եմ կարդում: Իսկական բանաստեղծին իր ամբողջ կյանքն ասարձակ էր պահել, ասես ձեռքով ընկած է: Աստիճան էր միշտ Սահյանի ունկերում: Գրում, չէ, Համո Սահյան արարում էր Աստծո ձայնին ունկերով: Ահա թե ինչու նրա բառով ընթացավ դրսևս է տիեզերական շարժումը, հատկապես լույսը:

*Դու սարերի մեջ ու ձորերի մեջ,
Ամենամոտր դու սրբերի մեջ
Ու խոհերի մեջ ամենահինը,
Դու խնդ, խնդ, ամենախնդ:
Ես մի բոս մոխր մամուռը բարիդ
Եվ հեղին հյույն կենսական ծառիդ,
Ես բո բողբոջը, ծիր, կոկոնը,
Ես բունը, բունը, ամենաբունը:*

...Տերյանից միշտ անբաժան եմ: Նարեկացին, Քուչակը, Չարենցը, Բասիլյանն ու Շիրազը, Սեւակը իմ սիրած պոետներն են: Եվ, ահա, ոտքով-զվիտով, ինչպես ասում են, ինձ կորցրի Սահյանի մեջ, տարվեցի, հափշտակվեցի ու նորից ինձ վերագրեց: Բաբլի ուսանողական իմ հանրակացարանի սենյակում երեք օր փակված մնացի՝ սոված-ծարավ, ըմբռնվեցի «Մայրամուտից առաջ» գիրքը: Այն միանգամից փոխեց իմ ընկալումներն ու մոտեցումները, գեղագիտական ըմբռնումներն ստապեց ինձ ընդմիջ լինելու: Հաստ ճանաչեցի իմ հայացքների մեջ: Ոչ ոք տեսնել չէր կարող, որ Սահյանը ձեռքը դրել է իմ ուսին ու ամենամտերիմի իրավունքով կանգնել կողքիս՝ ինձ նորից տանելով մեր Մռավի ու Մեծ սարի լանջերը, Մեր եխձուն տակն ու թառանի աղբյուրը...

*Երգիս քունը քարիս քանն պես
Նայկական է ու հին,
Ու կապված է սիրտը շան պես
Նրա ամեն բարին:*

Բանաստեղծության մեր կերպար: Նոր պոետ, այդ, սակայն՝ մեր սարերից եկած, նույնիսկ՝ տրեխների հագած երբեք: Դրան ավելանում էր ես այն, որ Բաբլի հայկական թերթում ու նախնային մարդիկ են գտնվում, որոնք, իրենց պատմածով, աշխատել են Սահյանի հետ հենց այս «սե քաղաքում»: Սահյանը յուրաքանչյուր տող, յուրաքանչյուր բանաստեղծություն ձուլվում է իմ արյանը, դառնում նրա բաղադրատարրերի

ամենակարևոր մասը, իմ էության էությունը: Ինստիտուտի ուսանողներս՝ Վաղարշակ Գաբրիելյան, Գովիկ Պետրոսյան, Վլադիմիր Ավագյան, Յաշա Բաբայան, Հայկ Ազատյան, Միքայել Խաչիյան եւ ուրիշներ, հավաքվում ենք հայկական ռադիոյում աշխատող մի անգուզական հայի ու մտավորականի՝ Ջարմիր Դանիելյանի շուրջ եւ ստեղծում գրական խմբակ: Խմբակը կոչվում է Հովիկի բանաստեղծություններից մեկի մեջ տեղ գտած պատկերով. «Շիածանը կաթիլի մեջ»: Ամեն կիրակի հավաքվում էինք մեր ավագ ընկերոջ՝ Վաղոյի մեկ սենյականոց բնակարան-խրճիթում ու ոչ այնքան ճոխ, հաճախ նույնիսկ խեղճության աստիճանի աղբատ սեղանի շուրջ եւ բանաստեղծություններ ընթերցում, քննարկումներ անցկացնում, Սեւակ եւ Սահյան վերլուծում: Այս ամենին ընթացք էր տալիս անկրկնելի Ջարմիրը, որը մեր տողերի մեջ պոետական մի թարմ մտքի, նոր պատկերի հանդիպելիս ուրախությամբ ու բավականությամբ վեր էր թռչում, իր խորին հրճվածքը հաղորդում բոլորիս, ոգետրվում ու ոգեւորում: Նույնքան անհանդուրժող էր նաեւ տափակ, ծանծանկար նաշված պատկերի, տողի հանդեպ: Եվ լավի օրինակը մշտապես բերում էր Սեւակից կամ Սահյանից: Ինչ երանակյալ օրեր էին: Շատ ժամանակ չանցած, մեր գրական խմբակը ներկայացվեց «Ավանգարդ» թերթում՝ շնորհիվ Ջարմիրի ու Երեանուս գտնվող մեր ընկերոջ՝ փիլիսոփայության ասպարեզում նոր ոտք դրած Ալեքսանդր Մանյանի ջանքերի: Բոլորիս գործերում նկատելի էր Սահյանի բարերար շունչն ու ազդեցությունը: Իսկ այդ տարիներին Բաբու ժամանած Սեւակի տված գնահատականը Սահյանի պոետիայի մասին մեզ ավելի էր զուտեպնդել մեր համոզմունքի ու հավատքի մեջ:

Սահյանը անկրկնելի է, նորարարության մեջ՝ անմրցակից ավանդապահ:

Տարիներ անցան: Աշխատանքի անցա Ստեփանակերտում: Արդեն մի քանի գրքեր էի հրատարակել, բայց ես այնպես չէի համարձակվում ներկայանալ Սահյանի դասին, նույնիսկ գիրք նվիրելու ուժ չէի գտնում իմ մեջ: Եվ համկարծ, օրերից մի օր, Բոզորան Ջանյանը, որի ազնվությունն ու անմիջականությամբ աշխարհում ոչ ոք չի կարող կասկածել, ինձ ասում է, որ Սահյանը բանաստեղծություններս կարդացել ու հավաքել է: Ես արմատեց-գարմանը դարձած լսում եմ եւ, մեղք ինչ թաքցնեմ, մտածում եմ, որ, երեւի մի փոքր դրական է արտահայտվել Սահյանը, իսկ Բոզորան Ջանյանը, համաձայն իր անչափ բարի բնավորությանը, ուզում է ինձ ուրախացնել զուցե թե գույնեղի փոքր-ինչ հավելումով: Բայց ես այնպես, ո՞վ չէր լավ զգա իրեն մնա՞ն լուրով: Պարզվեց, որ իրանահայ մի խումբ ընթերցողներ խնդրել են նամակով Հայաստանի ռադիոյի սփյուռքայայտի համար հաղորդումներ պատրաստող բաժնին, որպեսզի հաղորդեն Համո Սահյանի եւ, ոչ ավել, ոչ պակաս, Վարդան Հակոբյանի բանաստեղծություններից: Ջանյանն էլ ընտրում է բանաստեղծությունների շարքը եւ Հրաչուհի Ջինաթյանի կատարմամբ հաղորդումը եթեր տալիս: Հետո Ջանյանն ինձ հեռախոսով պատմում է, որ Սահյանն ու Եմինը շատ են հավանել իմ բանաստեղծությունները, ապա նա հորդորում է գրքերիցս ուղարկել նրանց: Այդպես էլ անում եմ: Դրանից մի քանի ամիս անց մեկնում եմ Երեւան: Գորղների միության շենքի չորրորդ հարկում Արտաշես Ղահրիյանի աշխատասենյակն է: Դուրը բացում եմ եւ տեսնելով շախմատ խաղացող Սահյանին եւ Եմինին, անվատահ քայլերով ներս եմ մտնում: Նկատելով անհամարձակությունս, Եմինը քաջալերում է.

- Արի, Վարդա՛ն... Արի:
Ապա նա սեղմելով ձեռքս, ինձ ներկայացնում է Սահյանին.
- Համո, ծանոթացիր, Վարդան Հակոբյանն է, Արցախի գորղների միության ղեկավար եմ նշանակել:
Սահյանը հարյուր տարվա ծանոթի մեղմ ու համգիտ մի շարժումով շախմատի

դաշտը քիչ հեռացնում է իրենից, սեղմում ձեռքս, ապա գլուխը հակելով շախմատի դաշտի վրա, քթի տակ խոսում.

- Այ մարդ, կարգին բանաստեղծ ես, ինչ գործ ունես գորղների միության ղեկավարի հետ:

Այնուհետեւ նրանք ցրում են դաշտում տեղակայված քարերը, սկսում հարցուփորձել: Ավելի ակտիվ է Եմինը:

- Ի՞նչ կա Արցախում... Ե՞րբ եք մեզ հրավիրելու Արցախ...
Կյանքը ո՞նց է այնտեղ...
Եվ այլն, եւ այլն:

Մինչեւ այսօր էլ, իհարկե, շատ են ցավում, որ չկարողացա, ոչ իմ մեղքով, մեր պոետիայի այդ երկու մեծերին հրավիրել Արցախ, հանդիպումներ կազմակերպել: Հետո իմացել եմ, որ Մերո հանգաղայնի հետ, շատ թունցիկ, կես ժամով, Սահյանը եկել է Ստեփանակերտ ու մեկնել: Իսկ Եմինը այդպես էլ Արցախում չեղավ: Ավելին, անկեղծ լինելու համար ասեմ, որ դրա համար Եմինն ինձնից «նեղացած» էր, միշտ մեկ ուրիշ բանաստեղծի ամուն էր տալիս, որի հետ մոտ հարաբերությունների մեջ էի, ասում՝ գիտեմ, այդ նա չի թողնում... Բայց այդպես չէր ամենելին: Քանի անգամ պատրաստվել էի կազմակերպել այցը, միշտ, դժբախտաբար, մի բան խանգարում էր, ինքն էլ այն մարդը չէր, որ վեր կենար մի կանչով, մի հրավերով գար: Տարիքն արդեն իրեն անում էր: Ավելի ուշ բայտ ունեցա Եմինի հետ մասնակցել գորղների մոսկովյան համագումարին, մոտիկից չփվել նրա հետ: Այդ օրերից որպես ինչառակ մնացել է մեր նկարը՝ կողք-կողքի կանգնած, գրուցելիս:

Սահյանի բնավորությունը այլ էր: Նա միշտ ինքնամիտի ու լռակյաց էր, անբառ խոսքի մեջ՝ անսահման խորը, հաճախ չասածի մեջ մեծ հուժկո ու հեզմանք տեղավորող: Հիշում եմ, գորղների միության շենքի առաջ, ուր կանգնած էինք մի քանի հոգի, հանկարծ երեսաց Սահյանը, բարեւեց, ուզում էր «ոնց եք, ոնց չեք»-ից հետո գնալ, Երեւանում բնակվող մի բանաստեղծուհի, որ Սահյանի «խախախ Ժակից ընկած թեփն էր շուկա հանում», մոտեցավ ու թե.

-Ընկեր Սահյան, միշտ ինձ ասում եմ, որ ես ու դու իրար շատ նման ենք գրում:

Սահյանը նայեց նրա դեմքին այնպես, ասես կողքի ծառին էր նայում ու անխոս, եթե դա անխոսություն էր, հեռացավ՝ մի ուսը նկատելի կախված: Ամբարտախոս «բանաստեղծուհին», որ արագ տպագրվողներից էր, գրեթե միանգամից ընկավ «շոգեբաղնիսի» մեջ ու քաշվեց մի կողմ:

Ես շատ էի երազում մոտիկից չփվել մեծ բանաստեղծի հետ, լսել նրան: Եվ, ահա, կարծես եկավ ժամը: Լրացել էր Համո Սահյանի ծննդյան 70-ամյակը: Այն ընդհանուր պես նշում էին նրա ծննդավայր Լորում ու Սիսիանում: Որքան հիշում եմ, այդ գործում մեծ ավանդ ունեն է սահմանագետ Շչրոս Դավթյանը, որի միջոցով էլ խնդրել-հաղորդել էինք, որ Արցախից ես պատվիրակություն լինի այնտեղ: Ուրախությամբ չափ ու սահման չկար: Ինչ անեմք, ինչպես գնալինք: Որպես Արցախի գրական կազմակերպության ղեկավար, մի քանի ելույթներ էի արդեն պատրաստել, մեթոնագրել (մեթոնագրությունները տեղափոխվելու պատճառով, քանի որ պիտի արտասանեի), բայց բոլորն էլ թվացին շատ թույլ ու ավելորդ: Որոշեցի խոսել բանավոր: Գորղների միությունում հավաքվեցինք եւ ընտրվեց պատվիրակության կազմ՝ երեզ հոգով, Հրաչյա Բեգլարյան, Սոկրատ Խանյան, Վարդան Հակոբյան: Վճռեցինք՝ Գորիսով գնալ, Երեւանով ու Ղազարով գալ:

Ճանապարհվեցինք գորղների միության «Վոլգայով»: Մեզ Սիսիանում դիմավորեցին հատուկ ուշադրությամբ ու սիրով: Հետո իմացանք, որ դրանում Սահյանի «մատը խառն է»: Պատվիրակությանը գիշերելու տեղ հատկացրին Բռնակոյ գյուղից անդին, փոքր լճի ափին, բավականին լավ կահավորված առանձնատան սենյակներում: Սահյանով էին հագեցած օդը, ջուրը, հողը, մեր հոգիները: Ամեն-ամեն ինչ: Հաջորդ առավոտյան սկսվեցին արարողությունները: Սահյանը մեզ դիմա-

վորեց գրկախառնությամբ ու իր տնավարությամբ մեզ համարձակություն ու անմիջականություն հաղորդեց: Հրեկանական ցերեկություն տեսանք մեր արվեստի մեծերից շատերին: Առաջին անգամ այստեղ հանդիպեցի եւ «Օգոստոս» գրքի հեղինակ (գիրք, որ Սահյանի «Մայրամուտից առաջ», Սեւակի «Մարդը ափի մեջ») ժողովածուների հետ ուսանողական իմ սեղանին էի միշտ պահում) Հրանտ Մաթեոսյանին:

Եվ ահա հասավ ելույթ ունենալու իմ հերթը: Բեմ բարձրացա վախվորած, խոսք ասացի: Չերեւացող ամոթխածության միջից ուզում էի ներկայանալ համարձակ, ներսից այնպես ասեղնավում էի, ճնշում էր ընդգծված հուզմունքս: Արցախի եւ արցախցիների անունից հրեկարին հանձնեցինք պղնձի վրա պատկերված մի դրվագում («Տատիկն ու պապիկը»), որը մեզ է տրամադրել բազմաշնորհ դրվագող, երաժիշտ ու նկարիչ Ալբերտ Սաֆարյանը, ապա մի գույգ տրեխ, որն, իր շատ տարիներ առաջ, Արցախից քաղաք մեկնելիս երիտասարդ Սահյանն էր թողել Ստեփանակերտում, մանկության կածանները մաշած տրեխներ: Սահյանի հուզումը նկատելի էր դախիճի համար: Դա պարզ երեւում էր, որն էլ ինձ սրտապնդեց: Ելույթս ավարտեցի Համո Սահյանին նվիրված բանաստեղծությամբ.

*Վազում եմ ամենախի իրեկից,
Չեր ցավով վատվում եմ ես սուզան,
Մսկայն դոք սպրում եք առանց ինձ,
Չգիտեք նույնիսկ կամ, թե չկամ:
Տարվում եմ մի փոքրիկ ժայիտով,
Պարզում եմ ձեզ եւ սիրտ, եւ հոգի...
Խնդում եք, խաբում եք ինձ հերթով,
Նման եք ամենախ ամենախ:
Գնում եմ իմ ձայնի մի ակնարկում
Չարքած գաղտնիքն աշխարհի...
Եվ էի գույս եւ, ձեզ գրում,
Եվ էի՜ հավապում ամենախի:*

Տարիներ շարունակ Արցախը գրկաված էր Հայաստանում անցկացվող գրական-մշակութային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունից ու իրավունքից: Առանց չափազանցության խոստովանեմ, որ Արցախի գորղների միությունում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրից իմ նպատակը, ծգտումը այն էր, որ հոգևոր Արցախի ուշքն ուղղվի դեպի մայր հայրենիք: Ը՞ որ մի ազգ ու գրականություն, մի մշակույթ է: Եվ դա հաջողվեց մեզ: Հայաստանի մեր գրչակիցներն եւ ցերեկային բոլոր մասնակիցները մեզ վերաբերվում էին ընդգծված սիրով ու գորովանքով, առավել եւս՝ ըմբռնումով:

Իսկ երբ արդեն հրեկյանական երեկոյի երկրորդ՝ «գեղարվեստական» մասն սկսվեց, ինչպես ասում են, բոլորս տեղ գրավեցինք մեծ դախիճում տեղադրված կլոր սեղանների մոտ: Անընդհատ պատվում էի Հրանտ Մաթեոսյանի շուրջն ու չէի համարձակվում խոսք ասել: Դա երեւի զգացել էր ինքը եւ ուղղակի բռնեց ձեռքս.

- Տեսնում եմ, որ ոչ մեկը չունեցավ ծանոթացնելու, մենք ծանոթանանք: Լավ բանաստեղծություն էր:

Թվում է՝ թեւեր չունեի, ունեցա միանգամից եւ, ուր-որ էլ, պիտի թռչեի: Բայց՝ ո՞ր: Ամենավաղ տեղն այն դախիճն է հենց, ուր գտնվում ենք: Հրանտ Մաթեոսյանը եւս մեր պատվիրակության հետ տեղավորվեց նույն սեղանի մոտ: Գիտեի, որ Հրանտ Մաթեոսյանը շատ բարձր է գնահատում Սահյանի պոետիան, խոսեցինք այդ մասին: Մաթեոսյանը վերիիջեց Սահյանի տողերը.
*Իմ սպարը քնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ սպարը պայտել է
Մեր գյուղի ձիերը:*

Անընդհատ մեր սեղանին էր մոտենում Սահյանի երիտասարդ կինը՝ Ավետան, նստում մեր կողքին, հարցնում՝ ամեն ինչ նորմալ է, ո՞ր բա՞ն էի հրավիրվում... Ջգում էինք, որ Սահյանն է նրան «ուղարկում», նրա մեծ, անհուն սրտից է բխում այդ հոգատարությունը, որ ես նկատում էի անգամ հեռվից հեռու՝ նրան նայելիս: Իսկ երբ դեռ դախիճ չէինք հասել, մեկ էլ կոտեսնեիր, բազմաթիվ մարդկանց մեջ գտնում էր մեր պատվիրակության անդամներից, մեկ անգամ ես հիշեցնում, թե ուր ենք գնում, մասնավոր՝ ճաշկերպության մեկնելիս: Այնպես էր մտերմաբար բռնում մեր



«Պապոնց» փունջ

*Ինչ-որ ձայն եմ լսում հսկկարծ
Ինձ պապոնց քան կողմից...
Մարերն ասես շորջս նարած
Ավագներն են փոխին...*

Համո Սահյան

ՎԱՐԳԵՍ ԽԱՆՈՅԱԼ

- Համոն է գրել, մեր Համո Սահյանը, - արտասանում է ռեժիսորային, հետո ինձ է դիմում, - մեր տունը նաեւ իր «պապոնց տունն» էր համարում: Երբ անձանը Սիսիան էր գալիս, իր ծննդավայր Լորից հետո պիտի անպայման մի քանի օրով Շաղատ մտնեք, հյուրընկալվեք մեր օջախում, հորս հետ ժամերով զրույցի բռնվեք, միասին ոտի տակ տային հանդ ու այգի, գյուղացունց հալ ու քեֆը հարցներ... Համոն ուրիշ մարդ էր, բնության պես իմաստուն ու խորախորհուրդ մարդ էր: - Մի պահ լռում է, խոհերի մեջ սուզվում, հետո խոսքը շարունակում է: - Շատ էր մեր գյուղի ու մեր տան հետ կապված, հատկապես հորս հետ: Մեր բնաշխարհն էլ նրա մեծագույն սերն էր: Մինչև կյանքի վերջ այդ սիրով այրվեց... Ինքը գնաց, սերն իր բանաստեղծական աշխարհում ու մեր հոգում մնաց: - Հետո նորից մենախոսեց՝ ասես ինքն իր հետ, ինձ մոռացած: - Ես չասեմ, դուք էլ ինձնից լավ գիտեք, որ նրա համարյա բոլոր բանաստեղծությունները բնությունից են ծնվել, բնությունը մի տեսակ նրա բոլոր գործերի համահեղինակն է: Համոն սարերի ծաղիկների թերթիկներից, ծառերի տերեւներից, ժայռ ու քարափից, Որոտանի զրնգոցներից էր իր պոեզիայի պատկերները պերլում, - սթափվեց, նորից ինձ դարձավ, - հապա լսիր.

*Երկնքի մեջ քայրափններն են հորսնուն,
Եվ սարդերն են ձորերն ի վեր դողան-
ջում...*

Ես Սյունիքի հին, բայց գեղանորոգ Շաղատ ոստան էի գնացել հատուկ նպատակով: Գիտեի, որ Համո Սահյանը հաճախ էր եղել այս շենում՝ Սերգեյ (Ստեփան) եւ Գագիկ Խաչատրյանների օջախում: Մեծ բանաստեղծը շատ կապված է եղել նրանց գերդաստանին, մեկ-մեկ էլ Սերո Խանգաղյանի, Հրանտ Մաթեոսյանի, կոմկուսի Սիսիանի շրջանի առաջին քարտուղար (այժմ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, «Համո Սահյան» մշակույթի կենտրոնի տնօրեն) Շչորս Դավթյանի հետ են գյուղ այցելել: Եվ ահա կանգնած լսում էի շաղատացի երեւելի գիտնական, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Գագիկ Խաչատրյանի «գրականագիտական» իմաստավորումները, որոնցից անսահման սեր էր ճառագում Համո Սահյան մարդու եւ նրա անկրկնելի պոեզիայի հանդեպ: Հայրը՝ Ստեփան Խաչատրյանը, հայտնի մարդ է Սյունյաց աշխարհում: 27 տարի

ղեկավարել է Շաղատի կոլտնտեսությունը: Հետո կուսաշրջկոմի հրահանգի որդին՝ Գագիկն է հորը փոխարինել կոլվարչության նախագահի պաշտոնում, ապա աշխատել է շրջխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, 90-ականներին արտադրական տարբեր ձեռնարկությունների տնօրեն, 2000-ից մինչև այժմ Սյունիքի մարզի սերմարտադրողների միության տնօրեն, «Աշնանացան ցորենի սորտերի սերմարտադրության տեխնոլոգիայի մշակում Զանգեզուրի գյուղատնտեսական գոտու պայմաններում» թեմայով ատենախոսության համար ստացել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

85-ի ասանան անցած հայրը, իբրեւ



արձագանք, միջամտեց.

- Տղաներս՝ Գագիկը, Սամվելը, Համոյին շատ էին սիրում... Համոն ուրիշ մարդ էր, Համոն մեծատառով մարդ էր. իմ ու Համոյի լուսանկարը բեր, մեր հյուրը տեսնի... Գագիկը հուշալրումի բազմաթիվ լուսանկարներից ընտրեց հատկապես մեկը:

- Երեւի մի քառասուն տարի առաջ ենք Համոյի հետ նկարվել Որոտան գետի ափին:

ցեցից, էլի չէր հանդարտվում. «Բա օձը հենց իմ ափսեի միջով պիտի անցներ»: Հետո օձի պատմությունը հաճախ էր հիշում:

- Բա կաթի պատմությունը, հայրիկ, - հիշեցրեց որդին:

- Հա, էլ էլ ասեմ... Կոլխոզի կովերն էին կթում, Համոն ու իր կինն այդ պահին ֆերմայում էին: Կինն ասաց. «Թարմ կաթ եմ ուզում խմել, իսկ դու կխմե՞ս, Համո»: Համոն ձեռքը թափ տվեց. «Ա, գնա է, կհամիքի

հետ տեղ գնայն էլ սա է»: Կինը մի տարա վերցրեց, լցրեց փրփուր կաթով եւ հաճույքով խմեց: Համոն, մի տեսակ կարծես ափսոսալով, ասաց. «Ես էլ կխմեի, բայց օրգանիզմս չի վերցնում»:

Ստեփան պապը վեր կացավ, մտավ այգի՝ ինձ թողնելով Գագիկի հետ: Խոսեցինք դեսից-դենից, բայց, միեւնույն է, մեծ բանաստեղծի հետ կապված հուշերն այս անգամ էլ Գագիկին հանգիստ չէին տալիս: - Համո Սահյանի մահից հետո նրա հուշաքարը տեսական ժամանակ չէր դրվում: Հայրս ցավագին ապրումների մեջ էր: Մի օր էլ Շչորս Բագրատիչը մեր տուն եկավ ուրախ լուրով. «Ստեփան դայի, հանգստացիր, Համոյի հուշարձանն արդեն դրվեց»: Հորս աչքերը մի տեսակ թրջվեցին, թե՛ ինձ թվաց: Ախր Համոյին շատ էր սիրում: Հետո Շչորսը նստեց դաշնամուրի մոտ ու Համոյի սիրելի մեղեդին նվագեց...

Բաժանվելուց առաջ Գագիկ Խաչատրյանն ինձ ուղեկցեց Սիսիանի մերձակայքում իր հիմնադրած հացահատիկային մշակաբույսերի նոր տեսակների արտադրության տասնյակ հեկտարների վրա տարածված տնտեսություն, որտեղ գյուղատնտես-գիտնականի ջանքերով ու ստեղծագործ մտքի արդյունքում ծնված բարձրորակ սերմացուները մատակարարվում են նաեւ հանրապետության մյուս մարզեր եւ ԼՂՀ: Ինձ հիացնումը պատճառեց նրա ստեղծած «Հացի թանգարանը», որտեղ ցուցադրված են ցորենի եւ այլ հացաբույսերի նոր տեսակների բազմաթիվ նմուշներ, ծանոթացրեց իր հեղինակած 14 տեսակներին: Թանգարանում ցուցադրված էին նաեւ Խաչատրյանների տոհմածառն ու գերդաստանի նահապետի 80-ամյակին նվիրված «Հավերժության խորհուրդը» գիրքը, իր՝ Գագիկ Խաչատրյանի եւ Գրիշա Մուրադյանի հեղինակած «Շաղատ» պատմավեպագրական աշխատությունը եւ նրա հովանավորությամբ լույս տեսած «Հա մո Սահյան» ձեռագիր մասունքներ, Ն.Նազարյանի «Սիրտս գարուն է» բանաստեղծությունների ժողովածուն, Օ.Մաթաթյանի «Կառուցել են կանայք» եւ այլ գրքեր: Հետո բացեց «Հավերժության խորհուրդը» գրքի 23-րդ էջը, որտեղ Համո Սահյանի լուսանկարն էր, կողքին՝ այս խոստովանությունը՝ առ Ստեփան Խաչատրյան. «Սիսիանի ձորերի համ ու հոտ ունեցող Սերգեյ: Ինչքան խորն է քո հոգին, դու հայրենի բնությունն ես, որի հետ ինձ հանգիստ եմ գգում: Խաղաղ ու պարզ բնավորությամբ մարդ: Չեմ մոռանա քո հյուրասիրությունները, դրանք իմ պապենական տան քաղցրությունն ունեն: Քո օջախն իմ պապոնց տունն է, որի դռներն ու սրտերը միշտ բաց են եղել գրկաբաց ընդունելու ինձ: Սերգեյ, նմանը չունեցող մարդ: Միշտ՝ քո Համո»: Խաչատրյանների հրաշալի ընտանիքին հրաժեշտ տալուց հետո էլ ականջիս հնչում էին բանաստեղծի տողերը՝

*Ինչ-որ ձայն եմ լսում հսկկարծ
Ինձ պապոնց քան կողմից:*

ձեռքից, որ կարծես թե երեխաներ էինք եւ պիտի կորչեինք:

Նրա ամեն տողը մի առու է՝ գուլալ, մաքուր: Եվ եթե առվի տուտը բռնենք ու գնանք, երբեք չենք կորչի, չենք մոլորվի, քանզի առվի ճամփին միշտ մարդ է սպասում... Խիստ ինքնատիպ է Սահյանն իր հակասությունների ներդաշնակության մեջ, նրանում մի ամբողջ դարաշրջան է ապրում, նրանում հազար մարդ ու հազար սիրտ կա՝ բոլորն էլ հայոց քար ու հողից, անկրկնելի, նոր, թարմ, ինքնատիպ: Բոլորն էլ ինքն է:

*Մթնում մեզ եմ ուրից գլուխ,
Բայց այդ մեզը ես չեմ:
Այսպես փարվա ձամիորդ եմ հեզ,
Բայց այդ հեզը ես չեմ:
Շար եմ փորձում ինձ հսկիսպե,
Փորձս փորձ է մեռու...
Տազար մարդ է մեզս նստած,
Բայց ոչ մեկը ես չեմ:*

Յավով, մեր պատվիրակությունը Լոր չգնաց: Դա մեր սխալն էր անձերելի: Երեւանի ճանապարհին մեքենայի արգելակները հրաժարվեցին աշխատել: Վարորդը՝ Վիտալին, սփրթնել էր: Ես, իբրեւ ավելի փորձ

ունեցող վարորդ (Վիտալինն նոր էինք աշխատանքի վերցրել), նստեցի դեկի մոտ. բոլորս էլ մի քիչ խմած էինք: Եվ հանկարծ մի ոլորանում ավտոտեսուչը շվկացնում է ու կանգնեցնում մեքենան: Արագ դուրս եմ գալիս: Ավտոտեսուչը ձեռքը քունքին է դնում ու պատիվ տալիս, բարձր ասելով իր պաշտոնը եւ ազգանունը՝ ավտոտեսուչ Սարգսյան: Ինչ անեի: Ես էլ ձեռքս նույն արագությամբ տանում եմ իմ քունքին, նույնակերպ պատիվ տալիս՝ բանաստեղծ Հակոբյան: Մեքենայում նստած ընկերներս բարձրաձայն ծիծաղում են: Ավտոտեսուչը կռահում է, թե որտեղից ենք գալիս:

-Համո Սահյանի հորեղբայրն էիք մասնակցում, շատ բարի, - ասաց նա, - մենակ թե գոյւշ վարեք մեքենան:

Ես նորից նստեցի դեկի մոտ, մեքենայի պատուհանով ավտոտեսուչը հայացքը ներս բերեց ու մտերմաբար ասաց, «Տղերք, դուք, երեսուն է, կուշտ կերած-խմած եք: Առաջարկում եմ այսօր մնալ մեզ մոտ, ձեզ համար լավ տեղ կապահովենք մնալու՝ քեֆն էլ վրան: Հը՞, մանավանդ՝ իրիկունն է վրա հասնում ուր-որ է... Ապա նա տեսնելով մեր անհամաձայնությունը, արտա-

սանց.
*Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնասուցի,
Տիրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:*

Ամբողջ ճանապարհին Սահյան էինք արտասանում, Սահյան էինք վերլուծում ու հորեղբայրական արարողության այս կամ այն մանրամասն իրար հիշեցնում, մինչև որ... ինքներս էլ չիմացանք, թե առանց արգելակի ո՞նց հասանք Երեւան: Իսկ հաջորդ օրը՝ Արցախ:

Արցախը Սահյանի համար նույն Հայաստանն էր միշտ, նույն Սիսիանն ու նույն Որոտը:

*Որտեղից այսքան ցավ ու թափիծ,
Քարեր են փռվում սրտիս վրա...
Գուցեք եմ գալիս Հարաբարտից,
Մարեր են փռվում սրտիս վրա,
Կուրում են այնտեղ քաղերն ազգի...
Եվ, ահա, նախերգը նրանց սաքի
Ողբի է փոխվում եւ մահազգի,
Հարեր են փռվում սրտիս վրա:*

Ինչպես բանաստեղծություններում, այնպես էլ այսօրվա կյանքում արած ամեն մի քայլով ասես ջուր էր խմում իրեն

փափագած սրտից: Իմաստուն, վեհ, պարզ ու անհուն, միշտ այսպիսին տեսա բանաստեղծին, որին, խոստովանում եմ, սիրում եմ այն սիրով միայն, որով անբաժան եմ Տերյանից:

Եվ այսպես, տարիներ են անցել, հոսում են ժամանակները: Կյանքի, բանաստեղծության խոհ ու խոկունի մեջ հաճախակի եմ անդրադառնում Սահյանին, նրա մեծ եւ խորը փիլիսոփայությանը, երգին բարձրարվեստ, վերջին տարիներին գրած, համազգային շարժման ու արցախյան գոյամարտին նվիրված նրա տողերը վերընթերցում ու մխիթարվում եմ հավերժ նոր ու մնայուն անվան խորհուրդների մեջ: Ասել է թե՛ մարգարեական էր նրա գուշակունը. մեր բոլոր երթերում նա կա որպես... ամենամեղեկ, սիրված ամենուրակյան: Եվ հայրենի սարերն անգամ ասես խունկ են ծխում Սահյանի երգերով: Հավերժության շուրթերից չեն իջնում բառերը՝ մի հայրեն ասեմ ես էլ... ասեմ, գնամ: Եվ գնամ: Եվ գնում է: Ինչքան հեռանում, նույնքան մոտենում է: Եվ հեռանալով այնքան մոտեցավ, որ բաժանվելու էլ հնար չկա...

Բնության հավերժահողով գույների երգիչը



ՎԱԿԱԴԻ ՍՍՏՈՒՐՅԱՆ

Հայաստանի գրողների միության անդամ

Մեր ստեղծագործ ու իմաստասեր ժողովուրդը շատ բանաստեղծներ ունի՝ պարզ ու բարոյ, սովորական ու ինքնատիպ, շունդակից ու քնքույշ, նորարար ու ավանդապահ, եւ բանաստեղծներ, որոնք ուղղակի այս տեսակների մեջ չեն տեղավորվում: Եվ եթե մեր բանաստեղծահայր Գրիգոր Նարեկացին փոթորկաշունչ ու աստվածային ոգի է, Սայաթ-Նովան ինքն իր կրակների մեջ մոխրացող սիրահար, Վահան Տերյանը քնքույշ ու մաքրամաքուր զգացումների սիրահար, Չարենցը հզոր ու ըմբոստ թափի քնարերգու, ապա Համո Սահյանը հայոց լեռնաշխարհի հավերժահողով գույների երգիչն է, բնության եւ մարդու սերտ կապվածության նկարիչն ու քանդակագործը: Ասում են՝ տաղանդը միայն իր ժողովրդի հետ է խոսում, իսկ հանճարը՝ ողջ մարդկության: Եթե այդպես է, ապա մեծն Ռուսոնյանին, Իսահակյանին, Չարենցին հաջորդող գրական հսկաներից մեկը Համո Սահյանն է, որ իրավունք է նվաճել խոսել համայն մարդկության հետ: Համո Սահյանը բանաստեղծ է, որը մնան է միայն ինքն իրեն, բանաստեղծ, որի մասնները ծնվում են հարյուր, երկու հարյուր տարին մեկ անգամ:

Եթե Պուշկինը ռուսների հպարտությունն է, Գյոթենը՝ գերմանացիների, Միցկևիչը՝ լեհերի, Շեչենևկոն ուկրաինացիների, Թումանյանը՝ լոռեցիների, Իսահակյանը՝ շիրակցիների, ապա Սահյանը նախ եւ առաջ Չարենցու աշխարհի հպարտությունն է:

Համո Սահյանն այսօր հայոց պառնասի ամենաժողովրդական բանաստեղծն է, որին սիրում եւ ընթերցում են մեծերն ու փոքրերը՝ գեղջուկից մինչեւ գիտնական: Եվ ոչ միայն ընթերցում, այլեւ հիշում ու արտասանում են նրա հոգեհույզ եւ իմաստուն խոսքերը:

Սահյանի գրական ժառանգությունը մեր ժողովրդի հոգեւոր մշակույթի գանձերից է, եւ ինչքան ժամանակ է անցնում, այնքան ավելի մեծ խորություններ են հայտնաբերվում նրա՝ արտաքինից պարզ ու հասկանալի թվացող տողերում:

Համո Սահյանը շատերիս ժամանակակիցն էր: Հանճարեղությամբ ծանրաբեռնված այդ հասարակ մարդը՝ խառնված անբոխներին, հպարտորեն քայլում էր հայոց պատմության միջով ու ստեղծում իր սքանչելիքները: Սայաթաղաքային աղմուկներից հոգնած՝ գալիս համբուրում էր իր հայրենի տան մամռոտած քարերը եւ մեկ-մեկ ողջունելով բոլոր սիսիանցիներին, գալիս Գորիսում միանում էր Սերո Խանգաղյանի հետ, հուզախոյզ անցնում, Օխտն ախարդի եւ կամարների տակով՝ մի ականջում Որոտանի շառաչը, մյուսում՝ Վարարակնի կարկաչը...

Եվ շատերին բովում էր, թե միշտ այդպես է լինելու: Ինչպես սրբերի, Գորիսը շրջապա-

տում էր նրանց: Զբոսայգին լցվում էր անընդհատ շատացող երկրպագուներով: Հարցերը հաջորդում էին մեկը մյուսին: Ինչպես միշտ, Համոն լուռն էր, հերթը տալիս Սերոյին: Սերոն, հայացքը Լաստի խութին, խոսում էր... իր ժողովրդի հետ... Հայոց քաջերից էր խոսում, Չարենցուց փրկողներից էր խոսում, հանճարեղ Ակսելից էր խոսում... Հետո շուռ գալով դեպի բանաստեղծը, ձեռքը մտերմորեն դնում էր նրա գլխին եւ իբր կատակով ասում.

- Ժողովուրդ, ես հսկա ճակատը տեսնում եմ, լավ նայեք, մի քանի տարի հետո այլեւս չեք տեսնելու:

Բոլորը հասկանում էին, որ ակամավոր արձակագիրը դա նաեւ իր համար է ասում:

Եվ կատարվեց անխուսափելին. հարյուր հազարավոր երկրպագու համոյականներ մեծ դժվարությամբ հաշտվեցին 1993թ. տեղի ունեցած բանաստեղծ-հսկայի ֆիզիկական չզոյության հետ: Մահ, որ վկայում էր նրա հավերժ կենդանության եւ մշտական ներկայության մասին:

Մենք՝ ընթերցողներս, անդառնալիորեն շատ բան կորցրինք, զրկվեցինք մեծ բանաստեղծի գրուցընկերը լինելու երանությունից, նրա իմաստուն բանավորը մոտիկից վայելելու մեծագույն հաճույքից: Ավա՛ր, շատերը բավական ուշացումով

թյուն էր գալիս, փաթափվում նրան, եւ նա մոռանալով այն ամենը, ինչ անձնական է կոչվում, սկսում էր կատակներ անել, զվարճախոսել, իմաստախոսել...

Իրար հետ անգիջում կատակներ էին անում հատկապես երկու մտերիմ հսկաները՝ Համոն ու Սերոն:

Երբ Սերո Խանգաղյանն արժանանում է հերոսի կոչման, ոմանք ուրախանում, ոմանք՝ նախանձում են: Մի օր Սահյանն այդ նախանձողներից մեկին հանդիպում, ասում է.

- Գիշերները հանգիստ քնիր, այ մարդ, ուրախ չե՞ս, որ մեր քաղաքում իսկական գրող հերոս է հայտնվել: Վտանգի դեպքում ինձ էլ կպաշտպանի, քեզ էլ, ի՞նչ ես այդպես թունոտվել:

Կենտրոնի քարտուղար Անտոն Քոչինյանը կանչում է «Գրական թերթի» խմբագիր Համո Սահյանին եւ բարյացակամորեն ասում.

- Խոստանում եմ՝ խոսել ակադեմիայի ղեկավարության հետ, որ քեզ ակադեմիկոս ընտրեն, դրանից եւ պատիվը կբարձրանա, եւ նյութական վիճակը կլավանա: Սահյանը պատասխանում է.

- Շնորհակալ եմ, Անտոն Երվանդիչ, ձեր հոգատարության համար, բայց ես դժգոհ չեմ իմ աղքատությունից, համ էլ իս-

գործական արժեքի սահմանները դժվար է միանգամից որոշել: Դա միայն ժամանակի ընթացքում կարող է որոշել արվեստասեր հայ ժողովուրդը՝ սերունդ-սերունդ տեսանելի դարձնելով ծովի խորությունը...

«Մեր ժողովուրդը կենսասեր է, կենսունակ եւ ավելի շատ հեթանոս է, քան ասկետ, այլապես նա չէր կարող դիմանալ դարերի արհավիրքներին եւ վերածնվել նույնիսկ եղեռնից հետո, - մի առիթով ասել է Համո Սահյանը, - իմ կարծիքով լացն ու ողբը, որով լեցուն է մեր պատմագրությունն ու գրականությունը, մեր ազգային գիծը չեն, այլ դարերով մեզ պարտադրված վիճակ»:

Երեւի դրանից է, որ Համո Սահյանի գրիչն այդքան կենսաթրթիռ է, այդքան տոգորված հայ լինելու, հայ մնալու եւ հայոց հայրենիք ունենալու զվարթությամբ:

«Դժվար է մեր ժամանակներում հայ բանաստեղծ լինել», - մի ուրիշ անգամ ասել է նա, նկատի ունենալով Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի մեծության անկախությունը:

Բայց ի պատիվ Սահյանի, պիտի ասել, որ նա չմնաց հայոց մեծերի սովորի տակ: Ընդհակառակը, նա հայոց քնարերգության մեջ փայլատակեց որպես մի նոր առաջին մեծության աստղ եւ եկավ լրացնելու հայոց մեծերի շարքը:

Սահյանը միշտ էլ թեթեւ հունորով է նայել իր կյանքին եւ իր գործին: Ասում են նա այդպիսին է եղել նաեւ մահվան սեմին: Բանաստեղծի ամենամտերիմներից մեկը՝ Շչորս Դավթյանը, վկայում է, որ մահից մի քանի օր առաջ բուժօրյուրը գալիս է հիվանդ Սահյանի ճնշումը չափելու:

- Դու իմ ճնշումը չափել չես կարող, եւ ոչ դք իմ ճնշումը չափել չի կարող, - տմբում է բանաստեղծը:



Գորիս, Սերո Խանգաղյանն ու Համո Սահյանը գորիսեցի մամիկների հետ

զգացին, որ այլեւս հանճարի կենդանությունը վայելել չեն կարող:

Ինձ՝ որպես Սահյանի ստեղծագործության անկեղծ երկրպագու, բախտ է վիճակվել միայն երեք-չորս հպանցիկ հանդիպումներ ունենալ բանաստեղծ-հսկայի հետ: Եվ ես հիմա ուխտավորի սրբազան դողով իմ հոգու խորքում սուրբ մասունքի պես պահել-պահպանել եմ ընդամենը մի քանի հուշապատահիկներ, որոնք հասցրել եմ ըմբռնվելու նրա կենդանության օրոք:

Համո Սահյանը շատերին էր հայտնի որպես կատակասեր ու սրամիտ մարդ: Բայց քչերին էր հայտնի, որ նա մենակության մեջ անբավարար զգացումներով խորովվում էր հազար ու մի դարդերի մեջ: Այդ վիշտն ու անհանգստությունը նա թաքում էր պահում իր պայծառ աչքերի խորքում, երբ դուրս էր գալիս փողոց: Սարդկանց շրջապատում մի զարմանալի զվարթու-

կական բանաստեղծն իր ժողովրդի գիտնականն էլ է, ակադեմիկոսն էլ:

Սահյանն, իրոք, մեր քնարերգության ակադեմիկոսներից մեկն էր, որն ուներ իր առանձին դպրոցը, բռնեմական աշխարհի մեր ինքնատիպ ռաբունապետը, որն իրենից հետո թողել է գործեր՝ հավերժի համար:

Մի անգամ մեծ արձակագիր Սուրեն Այվազյանին հարցրի, թե ինչ կարծիքի է Համո Սահյանի եւ նրա ստեղծած գրականության մասին, ասաց.

- Լինում է գյուլ, լիճ, ծով, օվկիանոս: Ամենամեծերն օվկիանոսներ են, օրինակ՝ Նարեկացին, Սարոյանը, որոնք մեր պատկերացումից էլ դուրս են: Մենք անգոր ենք նրանց սահմանները տեսնելու: Իսկ երբ կանգնում ենք գյուլի մոտ, պարզ տեսնում ենք նրա սահմանները: Սահյանը լիճ էլ չի է, ծով է, մեծ ու անտարած ծով, որի ստեղծա-

- Ինչու՞, - զարմանում է բուժօրյուրը:

- Լսիր, սիրելիս, ես տարբեր տեղերից տարբեր տեսակ ճնշումներ ունեմ: Ծնունդն ունեմ ընտանիքիս կողմից... ունեմ սոցիալական, հասարակական, նույնիսկ համաշխարհային մասշտաբի ճնշում... Դու, հարգելիս, ունե՞ս համապատասխան գործիքներ իմ այդ ճնշումները չափելու համար:

Ցավոք սրտի, հայոց բարձրապաշտոն այրերը ժամանակին չբռնեցին բանաստեղծի հուզումների եւ հոգեքիչ գարկերակը, եւ, երեւի, չհասկացան, թե ինչ մեծություն է հեռանում կյանքից: Եվ, ինչպես հայոց շատ մեծերի հետ է պատահել, այս անգամ էլ նույնը պատահեց նաեւ Համո Սահյանի հետ:

Սահյանն իր երկրային փառահեղ կյանքին հրաժեշտ տվեց միայնության եւ կարիքի պայմաններում:

«Արեւին թիկնած, արեւից շիկնած» բանաստեղծը

«Մեծերն իմ կյանքում» հուշագրքից, 2000թ.

ՆՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱՅԱՆ

Գյուղի ակունքում կարդացի իմ նոր գրած «Չերոսուհին» բանաստեղծությունը: Ջերմ ընդունեցին: Ակունքի վարիչ Կոլյա Կոնիսյանը խորհուրդ տվեց ուղարկել «Ավանգարդին»: Ուղարկեցի ու սպասում եմ:

Պատասխանը չուշացավ: Արտատրոփ բացում եմ նամակն ու կարդում:

«Հարգելի ընկ. Մուրադյան.

«Ավանգարդին» խմբագրությանն ուղարկած ձեր «Չերոսուհին» բանաստեղծությունը ցույց է տալիս, որ դուք գրելու շնորհը ունեք: Կարող եք վերցնել կոնկրետ դեպք ու դեմք եւ մանրի մեջ արտացոլել մեծը: Դուք անպայման պետք է շարունակեք գրել: «Չերոսուհին» ոտանավորը խրախուսելի է միայն մի կողմից: Այդ այն է, որ դուք կյանքից վերցրել եք մի կոնկրետ երեւույթ (ժողով) եւ կամեցել եք տալ հերոսուհու բնավորության որոշ գծերը՝ համեստություն, համարձակություն: Բայց դժբախտաբար չի երեւում, թե ինչպես է աղջիկը դարձել հերոսուհի: Նա ժողովում կոչ է անում բերքը հնձել եւ ակի մեջ հատիկ ունի: Այսքան, իհարկե, քիչ է, որպեսզի նա հերոս դառնա: Ուրիշ աղջիկներ նրա ո՞ր օրինակին պիտի հետեւեն հերոս դառնալու համար: Ինչ մի խրախուսելի բան է, որ աղջիկը ժողովում համարձակ է, իսկ սիրո հարցում՝ անոթաւոր: Իմ կարծիքով այս գործը կարելի է մշակել, ցույց տալ աղջկան բերք աճեցնելիս եւ ապա բերքը հավաքելիս: Տալ նրա նոր, խորհրդային աղջկան բնորոշ բնավորության գծեր: Մշակելիս անպայման պետք է ի նկատի ունենալ, որ չի կարելի ասել՝ «իմ օղակով եմ ստացել», պիտի պարզապես ցույց տալ, որ կոլեկտիվը օգնել է նրան՝ հերոսանալու գործում: Եվ ծանր հասկերը մեր հողում խոնարհվել են մեղմ ու կռացել:

Հասկը խոնարհվում է ոչ թե հողում, այլ՝ հողին: Չի կարելի ասել «մեղմ խոնարհվել»: Խոնարհվել հասկացողությունն իր մեջ պարունակում է մեղմություն ու հետո հասկի խոնարհվելը հենց կռանալ է մշակվում: Մշակելուց հետո կարելի կլինի տպագրել:

Կոնսուլտանտ ՂԱՍՄ ՍԱՀՅԱՆ:»

Երեւի եթե թերթում տպագրված տեսնեի բանաստեղծությունս, այդքան չէի ուրախանա, որքան ուրախություն պատճառեց ինձ համար դեռ այն ժամանակ սիրելի դարձած «Որոտանի եգերթին» գրքի հեղինակ Համո Սահյանի նամակը: Այդ ժողովածուի շատ բանաստեղծություններ բերանացի գիտեի:

Սահյանի հետ ծանոթացա «Ավանգարդին» խմբագրությունում, երբ ուսանող էի: Քչախոս մարդ էր, կցկտուր էր խոսում, բայց ամեն մի միտքը, ամեն մի նախադասությունը համեմատված էր ժողովրդական ոճավորմամբ, խտացված իմաստությամբ: Նույնիսկ ելույթների ժամանակ խոսում էր հակիրճ, պատկերավոր:

Սահյանի հետ հանդիպել եմ տասնյակ առիթներով, պատմում եմ միայն մի քանիսի մասին:

1954 թվականին էր: Աշխատում էի «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում: Ապրելը դժվար էր, կյանքը թանկ, աշխատավարձը ցածր: Բանաստեղծություններ տարա «խորհրդային գրականություն» ամսագրին: Հրաշյա Հովհաննիսյանը վարում էր պոեզիայի բաժինը: Նա երկու բանաստեղծություն ընտրեց տպագրության համար: 1955թ. փետրվարի համարում տպագրվեցին: Ուրախացա, որ հոնորար կստանամ, կոստյում կամ ձմեռային վե-

րարկու կգնեմ:

Հոնորարն ստացա ու մտա Հրաշյայի աշխատասենյակ: Այնտեղ էին Համո Սահյանն ու Սուրեն Աղաբաբյանը:

- Քեզ ահագին հոնորար էինք գրել, ստացա՞ր, - հարցրեց Հրաշյան:
- Ստացա, - ասացի ես:
- Սիրտս գարեջուր ուզեց, - ասաց Սահյանը: - Չգնա՞նք մի տեղ խմենք:
- Ես էլ վաղուց գարեջուր չեմ խմել, սիրով կգամ, - ասաց Աղաբաբյանը:
- Ես էն գլխից գարեջուր խենք եմ, - աշխուժացավ Հրաշյան:

Վերջին խոսքը իմն էր: Երեքն էլ ինձ համար հարգված մարդիկ էին ու անկեղծ ասացի.

- Իսկ ինչո՞ւ գարեջուր, գուցե որեւէ ռեստորան գնանք:
- Այ տղա, դու ռեստորանի փող ունե՞ս, - ծիծաղեց Սահյանը:
- Ունեմ, ասացի:
- Ինչքա՞ն հոնորար ես ստացել, - հարցրեց Սահյանը:
- Երկու հարյուր հիսուն ռուբլի:
- Դրա կեսն էլ մեզ հերիք է, գնացինք, - ասաց Սահյանը:

«Արարատ» ռեստորանում մոտ երկու ժամ ուրախ ժամանակ անցկացրինք: Լեւոնի հրապարակում էլ չորսով նկարվեցինք:



«խորհրդային Հայաստան» ամսագրի արվեստի ու գրականության, սփյուռքի բաժնի վարիչն էի: Խմբագիրը, որ գեղարվեստից հեռու մարդ էր, դժվամոթյամբ էր բանաստեղծություն ու պատմվածք տպագրում: Նույնիսկ պարծենում էր, որ կյանքում ոչ մի վեպ չի կարդացել: Գրողները երես էին թեթել ամսագրից: Երբ մի գրողից որեւէ գործ էի ուզում, մերժում էին, ասելով՝

- Քանի դեռ խմբագիրը նա է, ոչինչ չենք բերի:

Խմբագիրն էլ ինձ մեղադրում էր.

- Մեր ամվանի գրողներին չես կապում ամսագրի հետ:

Եվ ահա խորամանկության դիմեցի: 1972թ. հունվարյան համարին ներկայացրի Համո Սահյանի «Նոր տարվա հետ նորանալով» տպագրված բանաստեղծությունը, մտածելով «խմբագիրը անտեղյակ է, չի իմանա՞ անտի՞պ է, թե՞ տպագրված»:

- Այս բանաստեղծությունը Սահյանն է բերել, - հարցրեց խմբագիրը:
- Այո, երկու օր առաջ բերեց, - համոզված ասացի ես:

Բանաստեղծությունը տպագրվեց, խմբագիրը շատ բարձր հոնորար նշանակեց: Չանգահարեցի Սահյանին:

- Հոնորար ունես, Համո Սահակիչ...
- Ես ձեզ ոչինչ չեմ տվել, - զարմացավ:
- Կգաս՝ կիմանաս:
- Համոն եկավ:
- Ի՞նչ համելուկ է, չեմ հասկանում, - ասաց նա:

Ես պատմեցի ամեն ինչ: Հոնորարն ստացավ, նորից եկավ ինձ մոտ:

- Ոչ մի անտիպ բանաստեղծության համար այսքան շատ հոնորար չեմ ստացել, այն էլ բանաստեղծություն չսիրող խմբագրից:

Ու պատմեցի հետեւյալը: Ու պատմեցի զավալիտի պետ էր: Գիրքս տպագրվում էր. մի բանաստեղծություն էր հանել: Գնացի մոտը: Տեղից վեր կացավ. մայեց պատից կախված էին հայկական քարտեզին ու աչքերը արցունքոտելով ասաց.



- Իսկական իմ սրտից ես գրել, բայց թույլ չեմ տա, որ տպագրվի, ծայրահեղ ազգային է:

Ու մերժեց: Վիճեցինք, իրարից նեղացանք:

Տարա տուն, սպասելով, որ հարմար օրեր կգան՝ կտպագրեմ:

Դուրս գալիս Սահյանն ասաց.

- Ինձ ու խմբագրիչ հաշտեցիր, մոր գործեր կբերեմ...

1973թ. մարտի 9. մենակ դուրս եմ եկել ու թափառում եմ Արթուրյան փողոցում: Համոն հիպեցի Համո Սահյանին ու Լյուդվիգ Դուրյանին:

- Լավ գինի ունեմ, Ղարաբաղից եմ ուղարկել, գնում եմք մեր տուն, դու էլ միացիր մեզ, մենակ թափառելուց խմելը լավ է, - ասաց Սահյանը: Գնացինք:

Սահյանը մոր տուն էր ստացել, դեռ կահավորված չէր, ամեն ինչ թափթփված էր: Դեսուդեն ընկավ, հաց ու պանիր գտավ, գինին տակառիկից հանեց, լցրեց բանկաների մեջ եւ սկսեցինք հանգիստ գրուցել ու խմել:

Ես ու Լյուդվիգը ավելի շատ լսողի դերում էինք, ուզում էինք Սահյանին լսել: Սահյանը ողբերգական մի թեմայից անցնում էր մյուսին ու ասում այն, ինչ մտածում էր: Խոսում էր Պարոյրի, Հրաշյայի, Վահագնի մասին:

Հիմա բոլորն էլ սահուն եմ գրում: Գիտեմ՝ ինչ է կարդում ժողովուրդը, պարզ մտքերը լավ մշակում են: Սկսնակներ կան, որոնք մեկ-մեկ այնպես են գրում, այնպիսի հիանալի տեխնիկայով, որ արտաքուստ ընթերցողին խաբում են:

Բանաստեղծությունը ճրագի նման է եւ ոչ թե էլեկտրական լույսի, որ մի կոճակի սեղմումով ամբողջ փողոցը լուսավորում է: Մեկը գույնի բանաստեղծ է, մեկը ծայրի, մեկը տեսողության:

- Ես տեսողության բանաստեղծ եմ, - ասաց Լյուդվիգը: - Տեսել էի, որ թիթեռը անտենա ունի թեւերին ու ձայներ է որսում: Մի անգամ Սեւակին ասացի այս մասին, զարմացավ ու պատկերը հավանեց:

- Եթե ես մի բանաստեղծություն գրեմ ու մի որեւէ մտքի հանգեմ, մի մոր գյուտ արտահայտեմ, որն անկախ ինձից Գյոթեն կամ Բայրոնը արդեն գրել են, ես շատ

հպարտ կլինեմ, - ասաց Սահյանը:

- Այսօր ինձ համար ուրախալի օր է, - ասաց Լյուդվիգը, - «Եղեգան փողոց» գիրքս մոր է լույս տեսել:

- Խմենք Լյուդվիգի մոր ժողովածուի կենացը, որը հավասար է մորածին երեխայի աշխարհի գալուն, - առաջարկեցի ես:

- Ճիշտ է, - ասաց Սահյանը, - երկուսն էլ զլխացավանք են բերում կամ ուրախություն:

Ներս մտավ Սահյանի փոքր տղան ու փող ուզեց հորից:

- Այ տպե ինձ «թալանում են»: Սրանք մի կողմից, կինս մյուս կողմից, - դժգոհեց Սահյանը: - Մի շաբաթ Սիսիանում էի, խոնվել եմ, թե ուր եմ գնացել, ուր մնաց արտասահման գնալի:

Այս խոսքի վրա ներս մտան կինը՝ բանաստեղծուհի Սարիա Հակոբյանը եւ Վիդա Հայրապետյանը, որը Սահյանի մասին դիտերտացիա էր գրում:

Սահյանն ու Արթուրյանը մեկական բաժակ գինի խմեցին ու սկսեցին ծխել:

- Քեզ չեմ գտնում, ո՞ր ես կորչում, ես հո քո կինը չեմ, որ ետեւիցը ընկնեմ, - Համոյին մտերմիկ նախատեց Արթուրյանը:

- Դու գիտես թե իմ մասին դիտերտացիա գրելն այդքան հե՞շտ է, - ասաց Սահյանը:

- Քեզ Շեքսպիրի տեղն ես դնում, - կատակեց Արթուրյանը:

- Ես էլ իմ գործի Շեքսպիրն եմ, նա դրամատուրգ է, ես՝ բանաստեղծ:

- Բայց նա տնտեսների մեջ էլ ուժեղ է, - ասաց Արթուրյանը:

- Հի լինի՞ իմ պոեզիայից առանձնացնես հիսուն բանաստեղծություն ու դրանց շուրջը շարադրես թեզերդ:

- Բայց քո թույլ գործերն էլ հետաքրքիր են ուսումնասիրելու համար, - ասաց Արթուրյանը:

- Հիմա դու շոյու՞մ ես, թե՞ քննադատում, - ասաց Համոն:

- Մարդը մի գեղեցիկ միտք ասելու համար հաճախ ճառեր է ասում: Իսահակյանը պատմում է, որ Վենետիկում մեկը պոեմ է բերում իրեն: Վարպետը հանգիստ լսում է ու զգում, որ սյուժեյն թեքած է: Երբ սկսեցինք վերջացնում է, Վարպետը ոչ մի կարծիք չՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 78

Համո Սահյանը մտահոգված էր Մեղրու ճակատագրով

ՆՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ



Համո Սահյան մեծ բանաստեղծի անձամբ տեսել էի նախորդ դարի 70-ական թվականների վերջին, երբ աշխատում էի «Արաքս» շրջանային թերթի խմբագրությունում: Թեև հանդիպումը շատ հպանցիկ էր, բայց ամոռնաց: Հաջորդ անգամ մեծ բանաստեղծին հանդիպեցի 1986թ. հուլիսին, երբ Մեղրիում կազմակերպվել էր արվեստի ու գրականության փառատոն: Այն նախաձեռնել էր կուլտուրային առաջին քարտուղար Ալբերտ Հարությունյանը, իսկ Մեղրին հյուրընկալությանը նախապատրաստվել էր պատշաճորեն (ես այդ ժամանակ ՀԿԿ շրջկոմի քարտուղար էի): Ծանաչված բանաստեղծների, կոմպոզիտորների, ճարտարագետների, մտավորականների մի փայլուն ու անկրկնելի համաստեղություն չորս օր իր ներկայությամբ հարստացրեց Մեղրին: Նրա մեջ էին բանաստեղծ Համո Սահյանը, արձակագիր Սերո Խանգադյանը, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը, գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը, ճարտարապետ Ֆերդինանդ Առաքելյանը, բանաստեղծ Գեորգ Դելիկյանը եւ շատ ուրիշներ: Տոն էր Մեղրիում, այն լցված էր արվեստի շնչով, որից ամառային օրն ավելի գունեղ էր դարձել: Գյուրերը խմբով

շրջում էին Մեղրիում, շրջանի գյուղերով, հանդիպում մարդկանց հետ:

Առավել տպավորիչ էր շրջկենտրոնի մշակույթի պալատում կազմակերպված հանդիպումը:

Բնահարթակում մեր մեծերն էին: Նրանք հանդիպման էին եկել Շվանիձոր գյուղից՝ լավ հյուրասիրված եւ, անկեղծ ասած, ունեին բարձր տրամադրություն:

Խոսքը տրվեց Համո Սահյանին: Դահլիճն հոտնկայա ծափահարում էր, իսկ Մեծ բանաստեղծն անտարբեր էր: Եվ այդպես մի քանի րոպե: Ես, որ վարում էի երեկոն, կարկամել էի, չգիտեի ինչպես վարվել, իսկ դահլիճը սպասում էր: Մեկ էլ Սերո Խանգադյանը, որ նստած էր Սահյանի կողքին, դահլիճին լսելի բարձրաձայնեց՝ «Համո քեզ են կանչում, վեր կաց...»: Սահյանը դժվարությամբ բարձրացավ բազմոցից, դանդաղ քայլերով փոքր-ինչ առաջ գնաց ու մեղմիկ, շատ ցածր ձայնով սկսեց իր մտերմիկ գրույցը մեղրեցի հանդիսատեսի հետ, իսկ դահլիճն այդ ընթացքում անընդմեջ ծափահարում էր: Ծափերը դադարեցին, երբ Սահյանը սկսեց իր ստեղծագործություններից ասումները:

Մեծ բանաստեղծն այնուհետ հատուկ կարեւորելով Մեղրու տեղն ու դերն աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, առանձնակի գորովանքով խոսեց Մեղրու մասին՝ համեմատելով մուսուլմանական աշխարհում շրջապատված, անապատում փայլատակող մարգարտի հետ:

Տարիներ են անցել, ու ամեն անգամ Սահյանի մասին խոսելիս հիշում եմ այդ ամոռնաց երեկոն:



Մեղրի, հուլիս 1986թ.

«Արեւին թիկնած, արեւից շիկնած» բանաստեղծը

«Մեծերն իմ կյանքում» հուշագրքից, 2000թ.

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 77

չի հայտնում, գրադարակից հանում է մի գիրք, բացում ու դնում սկսնակի առաջ:

- Կարո՞ղ:

Սկսնակը կարողում է... սուսուփուս վերցնում է պոեմը ու համարյա փախչում:

Այնուհետև Սահյանը մի դեպքից մի դեպքին է անցնում:

- Գեղամ Սարյանը միշտ իր գործերը վերահրատարակում է: Մի օր ասացի՝ ինչո՞ւ ես վերահրատարակում: Ասաց՝ միշտ նոր ընթերցողներ են գալիս: Ճիշտ էր ասում:

- Կինս «Սեզան բացվիր» գրքիս հոնորարը լրիվ կահույքի տվեց, ինձ բան չթողեց:

- Մի օր մենակ եմ տանը, դուռը հաճախում էր, ծայրեր եմ լսում: Սուրճը վերցրի ու կանգնեցի դռան հետևում: Հասկացա, որ քամին է ճռագնում: Ինքս ինձնից ամաչեցի:



1974թ. հունիսի 5. Համո Սահյանի տանն եմ: Գնացել եմ լուսանկարը բերեմ, որ «խորհրդային Հայաստան» ամսագրում տպագրենք Սեւակ Արզումանյանի հոդվածի հետ բանաստեղծի 60-ամյակի առթիվ:

Սահյանը նոր է վերադարձել Բեյրութից: Տույց տվեց «Ազդակ», «Սփյուռք»,

«Նաիրի», «Արարատ», «Կանչ» թերթերը, որոնք իր մասին հոդվածներ էին տպագրել: Տրամադրությունը բարձր էր:

-Հրաշալի հանդիպումներ ունեցա: Ես այդպիսի ընդունելություն չեմ տեսել այստեղ: Բոլոր կուսակցությունները ջերմ էին ընդունում: Մեծ Սկրտչյանի եւ տիկնոջ՝ Դոնարայի հետ ինձ մի քանի ակումբ հրավիրեցին: Նրանք էլ իմ գործերից կարդացին, շատ անկեղծ հնչեցին: Լիբանանահայերն ասում էին՝ Դազմիկ Դավոյանը եկավ ինքը վայելեց Բեյրութը, Բեյրութն էլ Համո Սահյանին վայելեց:

Ասաց ու հանկարծ մռայլվեց.

- Իսկ այստեղ կիսաբերան նշեցին իմ հոբելյանը: Նույնիսկ «Գրական թերթը» մի լրիվ էջ չէր տվել, կողքին ուրիշ նյութեր էին տպագրել: Նախանձից է: Գրողների միությունը Նոր-Այրիմ հեռագրով շնորհավորել էր, ինձ՝ ոչ: Հունիսի 7-ին իմ հայրենի Սիսիանում երեկոս է, գնում եմ Սողոմոն Սողոմոնյանի, Գեորգ Հայրյանի եւ ուրիշների հետ, դու էլ արի:

Հրավիրատունս տվեց, ապա «Սեզան բացվիր» գրքի վրա մակագրեց. «Սիրելի Սուրենին, 7-70 տարեկան ընթերցողների տաղանդավոր բանաստեղծին»:

Սահյանը երկրորդ անգամ էր ամուսնացել, իրենից շատ ջախել կնոջ հետ: Համալսարանից մի դասախոս զանգահարեց: Համոն բարձր ձայնով ասաց.

- Վաղը, 12-ին իմ մեքենայով մեկնում եմ Սիսիան:

- Կնոջդ էլ ե՞ս բերում, - լսվեց հեռախոսափողում:

- Չէ, չեմ բերում: Որ կնոջս հետ գամ, հոբելյանս թողած՝ նրա աչքերին եմ նայելու: Ասելու եմ՝ Համոն ի՞նչ ջախել կին է առել: Բամբասանքի առիթ կտամ: Ավելի լավ է, թող մի քիչ անցնի, մի խաղաղ, անճշան օր կտանեմ մեր գյուղ:

- Կենտրոնից զանգել եմ՝ օպերայու՞մ ես ուզում երեկոյդ անենք, թե՞ ֆիլիարմոնիայում: Ասացի՝ առայժմ ոչ մի տեղ, թողեք մի քիչ հանգստանամ:

- Ինչպե՞ս կարելի է ապրել առանց կարծիքի: Մեկի երեսին լավ ես խոսում, նրա թշնամին քեզ հետ էլ է թշնամանում: Մեկի մասին վատ ես խոսում, էլի ես թշնամիներ ձեռք բերում: Էլ ո՞նց ապրես այսքան զգույշ: Անհնարին է: Հետաքրքիր է՝ համրերը կարծիք հայտնու՞մ եմ: Անտարբեր ապրելն էլ հատուկ է չորքոտանում, իսկ մենք ե՞րբ ենք երկու ոտքի վրա կանգնելու: Ծայրը չի երեւում...

1983թ. փետրվարի 10. «Ոսկե տերեւաթափ» ժողովածուն նոր էր լույս տեսել: Ձանգահարեցի Սահյանին ու գիրքս վերցրի, գնացի: Առաջին էջի վրա մակագրել էի իրեն մվիրած բանաստեղծությունս, որը տպագրվել էր «Գրական թերթում»:

Ըն կամրով լեռը կանաչում է,

Ջրվեժը ծիծաղում,
Բանդակված հորթը որոճում է,
Ծիածանը՝ խաղում:
Ըն կամրով անպն արքայախում է,
Խենթ անպրոպը պայտում է,
Քարափնների երգը լսվում է,
Արտուրյաներն են խայտում:
Ըն երգում մամ ու հորովել է,
Մասրենու վեհություն,
Ընեն են աշխարհի քյուր ցավերը,
Խորհուրդը՝ իմաստուն:
Ըն երգում արևը ամեն րեկ
Տայերեն է երգում,
Ըն երգում հայն ու Տայաստանն են,
Դարերը՝ փոթորկուն:

Կարդաց, շատ զգացվեց: Ապա գրադարանի դարակից իջեցրեց իր «Տոնի կանչը»:

- Փոխանակենք՝ գիրքը գրքով, թե ով կշահի, հետո կհմացվի:

- Իհարկե ես կշահեմ, ասացի ես: Մակագրեց. «Սիրելի Սուրեն Սուրայանին, իմ ու մանուկների փնտրված բանաստեղծին»:

- Սահարու հետ շատ մոտ ես եղել, գուցե մեր ամսագրի համար հուշեր գրես, - ասացի ես:

- Բնքա՞ն բան կա գրելու: Վախթանգ Անանյանի մասին էլ ունեմ գրած, չեմ տպագրել: Ջորյանի, Իսահակյանի, Ջարյանի, Դեմիրճյանի մասին շատ գրառումներ ունեմ, պիտի գրեմ, ժամանակ չկա: Բայց Սահարին կգրեմ:

Ու հանկարծ հիշեց.

- Պալանգայից Սահարին նամակ էր գրել. Պարույրի «Անլեւի զանգակատունը» տակնուվրա էր արել, ոնց որ հեղեղը նոր ծլած բոստանով անցնի ու արմատախիլ անի կամ ջրից հանես ձկների վտառը: Բայց հո չե՞ս կարող էս նամակը հրապարակել: Պարույրին ժողովուրդը Բնախի բարձունքի է հասցրել, հնարավոր չէ անբարեմաստ կարծիք հայտնել:

Համո Սահյանի բանավոր խոսքը

Եւ, սա ուրիշ խոսակցություն է: Գրքույկից մի բան կարդամ, պատահական մի բանաստեղծություն: Ու կարդաց.

Կյանքս խարոյկ էր:
Բոցկլորուն ու թեժ,
Բայց փարիները
Դարձան խեղճ ջրվեժ:
Կյանքս խարոյկը
Տանգորին կամաց,
Ու մեծ խարոյկից
Լոկ մոխիր մնաց:

- Հոյակապ է, հիմա սա որ մի մեծ անուն հանած բանաստեղծ լիներ գրած՝ քննադատները երկինք կհանեին: Անուն հանած գրողն ինչ թույլ բան էլ գրի, երեւում է:

- Մեծակ եմ: Ժամանակ չունեն ու տրամադրություն չկա, լրջացել եմ: Գլխումս լիքը հղացումներ եմ: Ե՞րբ պիտի գրեմ, չգիտեմ:



1983թ. մարտի 7. հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Համո Սահյանը ու մի քանի հարցերի մասին խոսեց: Ահա քաղվածքներ այդ ելույթից:

- Ով լավ է գրում՝ լավ քաղաքացի է, ով վատ է գրում՝ վատ քաղաքացի է:

- Բնության երեւոյթները, քարը, ծառը, ծաղիկը մարդու նման շնչում են, ապրում, սնվում, մեռնում:

- Մարդուն մինչեւ վերջ էլ չենք ճանաչում, անճանաչելի է:

- Պրիշվինն ասում էր՝ վաղահասները շուտ են հասունանում, որ իրենց խոսքն ասեն արագ, իսկ ուշահասները անբողկ կյանքում են ասում: Դուրյանը, Մեծարեւոցը, Լորկան, Պուշկինը վաղահաս էին, Գոթեն՝ անբողկ կյանքում ասելիք ուներ:

- Ջահել ժամանակ մի աղջիկ, մի ձի էի տեսնում, ոգեւորվում էի ու գրում, այս տարիքում պիտի մեծ ապրում ունենամ, որ գրեմ:

- Հիմա ոչ բանաստեղծը բանաստեղծներից շատ է գրում ու տպագրում: Պոեզիան պահածոյի նման է, ճամփում ենք գալիքին, հիմա չեն կարդում:

- Եթե ապրելու ենք ձկան նման լուռ, գոնե ապրենք մաքուր ջրում:



1993թ. հուլիսի 17-ին ես իմ օրագրում գրում եմ վերջին գրառումը. «Սահյանը հայ պոեզիայի վերջին դասականներից մեկը՝ Համո Սահյանը»:

Այդ օրը հեռուստատեսությամբ հաղորդեցին Սահյանի հին ծայնագրություններից: Ահա երկու տող. «Ես իմ քաղաքում ինձ պանդուխտ եմ գգում... Ափսոս, որ վերացել է մեր գրական ժանրերից մեկը՝ մանակահին, մինչդեռ շատ մանակներ մեծ հաճույք են պատճառում»:

Սահյանի դագաղը դրեցին օպերայի թատրոնում: Թաղումը տեղի ունեցավ Կոմիտասի պանթեոնում, թաղեցին Հրաչյա Ներսիսյանի, Հովհ. Շիրազի հարեւանությամբ:

Հրաժեշտի խոսք ասացին նախարարների խորհրդի նախագահ Հրանտ Բազրադյանը, Վահագն Դավթյանը, Հրանտ Մաթեոսյանը, Տիգրան Մանսուրյանը:

Պանթեոնից վերադարձա շատ տխուր, շուրջս ասես ամառի էր:

Համո Սահյանի պոեզիայում շնչավորված են Որոտանի կիրճն ու լեռներից գահավիժող ջրվեժները, ժայռերի պրեկին արմատավորված մարեմին, երկնքից կախված ամպերը, երազանքի պես բարձր թռչող արծիվները: Նրա ամեն մի տողը ամուր է իր երգած քարափերի ու ժայռերի նման, իր փնջած ծաղիկների նման բուրավետ, իր փառաբանած «արեւին թիկնած, արեւից շիկնած, արեւի երկիր Հայաստանի» նման հավերժական:

Սահյանի պոեզիան մի անբաժանելի ներդրում է կազմում հայոց բնաշխարհի հետ եւ բնության անխախտ պատկերների հետ ձուլված խոսում է գալիք դարերի հետ:

Այն բախավորները, ովքեր պարփվ են ունեցել հաղորդվել Համո Սահյանի հետ, հանդիպել ու գրուցել, իրենց մտքին ու փրամադրության մեջ մշտապես ունեն պոետի հետաքրքիր, խրապական գրույցները, նրա բանավոր խոսքը: Ավար, այդ գրույցները մնացին լոկ նրանց մոտ, ովքեր մերձավոր էին Սահյանին՝ Վահագն Դավթյան, Հրանտ Մաթեոսյան, Տիգրան Մանսուրյան, Ռուբեն Հովսեփյան, Ֆելիքս Մելոյան, Սոս Սարգսյան, Շչորս Դավթյան եւ այլք: Նրանք իրենք էլ են ասիտում, որ ընկերակական այդ գրույցներում չեն էլ մտածել ձայնագրել, պահել այսօր արդեն մասունք համարվող Սահյանի կենդանի խոսքը:

Հիմա ի՞նչ ունենք, որ Համո Սահյանը սերունդներին ներկայանա իր կենդանի կադրերով, իր կենդանի խոսքով: Ունենք Հովհի Հախվերդյանի «Տարիներս, փարիներս» եւ Հովհաննես Պապկյանի «Իրիկնահացի հրավեր» ֆիլմերը: Այս առիթով ես այցելեցի «Իրիկնահացի հրավեր» ֆիլմի հեղինակ, գրող, հրապարակախոս Հովհաննես Պապկյանին:

- Պարոն Պապկյան, նախ շնորհակալություն, որ ժամանակին նկարահանվեց այդ ֆիլմը: Ներկայացրեք, խնդրեմ, որոշ մանրամասներ Համո Սահյանի հետ Ձեր հանդիպումներից:

- Ես եմ շնորհակալ, որ գրույցի այս հնարավորությունը տվեցիք: Պիտի ասեմ, որ Համո Սահյանը չէր սիրում լրագրողների հետ շփվել: Հաճախ մեծ անբեռություն էր պետք՝ նրա հետ հաղիպում խնդրելու, նրան նկարահանելու կամ ձայնագրելու:



Այդպես եղավ, երբ 1989 թվականին նկարահանող խմբով մեկնեցինք Սիսիան, ուր այդ օրերին հանգստանում էր պոետը: Երեւանում Սահյանի կողմից արդեն մի քանի անգամ պիտակվել էի «պոետես լրագրող» մակդիրով, եւ երբ դուռը բացեց ու «հյուրը Աստուծուն է կամ հանեցեք» չասաց եւ խոժոռ հայացքը հառեց վրաս, բայց զգացի, որ կեղծ խոժոռություն է եւ չարություն չկա, համարձակ ստեցի:

- Դե, ինչպես պայմանավորվել էինք, Համո Սահյանից:

Իմ սուրը ներվեց, բայց պատժվեցի՝ մեկ օր սպասելու հարկադիրով:

- Լավ, վաղը մի բան կմտածեմք, - ոչ այն է հաստատելով, ոչ այն է մերժելով՝ ասաց ու փակվեց իր սենյակում՝ անորոշության մեջ թողնելով ինձ ու նկարահանող խմբին:

Մեզ փրկեց Սիսիանում պոետի մտերիմներից Լավրենտ Սարգսյանը, ով ոչ միայն այդ օրը կարգավորեց մեր ընկճված տրամադրությունը, այլեւ առավոտյան Սահյանին առաջարկեց գնալ Շամբուտի ձոր կոչվող տեղամաս, ուր ծիրանների մի հրաշալի այգի կար՝ հարակից հյուրատունով: Սահյանը համաձայնեց, եւ արդյունքում մենք ունեցանք «Իրիկնահացի հրավեր» ֆիլմը, ուր հազվագյուտ կադրերով



մեծանուն պոետի կենդանի խոսքն է:

Անոռաց է գարնանային այդ գեղեցիկ օրը, երբ ծիրանուտուն մեկեն փոխվել էր պոետի՝ երեկվա տրամադրությունը, եւ մենք արդեն գործ ունեինք ասող-խոսող, մեր հանդեպ բարեկամաբար տրամադրված Համո Սահյանի հետ:

- Նրա այդ լավ տրամադրությունը երեւի վերագրեցեք Սիսիանում լինելու հանգամանքին:

- Անշուշտ: Նախ ծիրանուտուն թագավորում էր ծիծաղկոտ գարունը, եւ տեսարանը շատ էր ակնհաս: Իսկ պոետին նման միջավայրը ոչ միայն տրամադրություն, այլեւ իրենից անբաժան մուսային ակտիվություն կբերեր: Չմոռանաք նաեւ, որ Սիսիանը Սահյանի համար միայն իր ծննդավայր Լոր գյուղը չէր, միայն լեռնաշխարհի կծիկ-կծիկ սարերը, պարան-պա-

չէ: Մենք բոլորս շարունակությունն ենք մեր նախնիների, ասել է թե՛ մեր ծննդավայրի, մեր միջավայրի, որն անպայման այլ վայրերից տարբերվում է իր առանձնահատկություններով, իր կոլորիտով: Ափոս, իհարկե, որ շատ բան մոռացվեց: Առաջ ինչպե՞ս էր: Մի երեսուն հոգի էր մեր ընտանիքը, բոլորը հավաքված՝ մեկը հինծից էր եկել, մեկը՝ դաշտից, մյուսը՝ տավար պահելուց, մեկն էլ՝ կալից: Պապն էլ, կալը որ վերջանում էր, եզերներ էր բերում: Դե, պասս էր էլի, դանդաղ գալիս էր, մինչեւ էր եզերը չբերեր, հլա մեկի վզին էլ գանգ էր կախված՝ մինչեւ էր գանգը չձլնգար, մինչեւ պապի ոտները չլվանային, ոչ ոք հացին չէր մոտենա: Հիմա՝ ի՞նչ, մտնում ես տուն, ոչ չք էր նկատում քո գալը, դու էլ տան մեծն ես՝ պապն ես: Բա, այսպիսի բաներ:

- Կարծում եմ, այդ տրամադրության ծնունդ է այն հրաշալի բանաստեղծությունը՝ «Կծիկ-կծիկ սարեր, կիրճեր պարան-պարան...»:

- Անշուշտ: Դրա մեջ եւ մեծարանք կա՝ «...Մանուկ էին պահում եւ տուն էին պահում, //Աշխարհ էին պահում ու ժողովուրդը», եւ կարոտ կա՝ «...Եվ ապրում են հիմա ու հեքիաթ են ասում, //Իմ հուշերի հարուստ տերության մեջ», եւ նաեւ հորդոր կա ընթերցողին, թե՛ մի կտրվեք անցյալից, մի պոկվեք այն հողից, որ ձեզ սնել է: Ափսոս, մեր այս հարցազրույցի ժամը, այն էլ թերթի սահմանափակ տարածքով, թույլ չի տա այս շատ հետաքրքիր թեման ազատ քննարկել:

- Այո, բայց ես վստահ եմ, որ սահյանական թեման հետագայում էլ մեր հանդիպումների մոտ առիթներ է տալու:

- Ուրախ կլինեմ:

- Քանի որ մեր այսօրվա գրույցի թեման առավելապես Սահյանի բանավոր խոսքի շուրջ է, կուզենայի եւս մի քանի դրվագ հիշենք, որոնք անձանք են Սահյանի պոեզիայի երկրպագուներին:

- Սահյանն ինքն էլ էր շատ կարեւորում բանավոր խոսքի պահպանումը: Հովհաննես Շիրազի առիթով է նա մի անգամ ասել՝ «Ափսոս, չպահպանվեց Շիրազի բանավոր հարուստ խոսքը»: Բայց Սահյանն ինքն էլ էր հաճախ խուսափում այնպիսի գրույցներից, որտեղ առկա էին կամ տեսափոխիկ, կամ ձայնագրիչ: Մի անգամ Տիգրան Մանսուրյանի հետ (նրանք մտերիմներ էին եւ փոխադարձ խորին հարգանք էին տածում միմյանց հանդեպ) գնացինք Սահյանի տուն: Սիրով ընդունեց: Ինձ էլ լավ գիտեր՝ «Իրիկնահացի հրավեր»-ն արդեն եթեր էր տրվել, մի քանի անգամ կրկնվել: Բայց հենց պայուսակից հանեցի տեսափոխիկը, խոժոռ հայացքով մայեց. «Այ, դա ինձ խանգարելու է, առանց դրա սիրով կգրուցեիք, էլի»:

Այդ օրվա գրույցը սկսվեց մայիսի 28-ի շուրջ մտորումներով: Ահա Սահյանի, այսպես ասած, գնահատանքը. «Մայիսի 28-ն ինձ համար մեր ազգի հավերժության փախած բեւեռներն իրար կապող օղակն է: Մենք, որպես ազգ, արդեն չքանալու վրա էինք՝ անդունդի եզրին՝ Արեւմտյան Հայաստանը՝ կորած, Արեւելյանը՝ պատռած-պատռած: Մայիսի 28-ը մորից վերականգնեց մեր պետությունը, իրար բերեց մեր ժողովրդի մտորումները, հավաքվելու, բռնկեցվելու կամքը: Այնպիսի ժամանակ ենք ապրում, որ մի կողմից իսկապես խանդավառվելու ինչքան ուզես բան կա, որ վերջիվերջո մենք հասել ենք, ինչպես ժողովուրդն է ասում, մեր նպատակին՝ ունեցանք մեր Հանրապետությունը, աշխարհը մեզ ճանաչեց, մեր եռագույնը բարձրացավ Միացյալ ազգերի դրոշմերի հետ միասին: Եվ ես հավատացած եմ, որ մեր հաղթանակը լինելու է բոլոր բնագավառներում: Մենք հիմա այն ճանապարհն ենք ելել, որ առտնին դժվարությունները ոչինչ պիտի թվան մեզ: Սա մեր սերն է հայրենիքի հանդեպ: Հիմա թե դժվար մշակվող հող է, թե դժվար բարձրանալի սար կամ դժվար իջնել-ելնելու կիրճ, սա՛ է մերը, եւ մենք պարտավոր ենք հենց սա՛ սիրել: Հիմա ամեն ինչ կախ-ՇՈՒՐՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՅ 80

Վավերագրական ֆիլմեր

Յովիկ Յախվերդյան. «Նա ծնված էր բանաստեղծություն գրելու համար»

Ըստերը կինոռեժիսոր, վավերագրող Յովիկ Յախվերդյանին գիտեն որպես «Մատենադարան» ֆիլմաշարի (18 կինոնկար) ռեժիսոր, բայց այժմ արդեն քչերը գիտեն, որ 1981 թվականին նկարահանել է «Յամո Սահյան» փաստավավերագրական ֆիլմը «Տարիներ» խորագրով, որ մեծ բանաստեղծի մասին պատմող ֆիլմաշարում լավագույնն է: Նրա լավագույն բանաստեղծություններից մեկի՝ «Տարիներ, տարիներ» բանաստեղծության վերնագիրն է: 1970-ին «Կարոցականի գրադարան» մատենաշարով լույս տեսած բանաստեղծությունների ժողովածուն ես այդ խորագիրն է կրում:

Ինչեւէ, այդ հեռուստաֆիլմի ստեղծման նախապատմության մասին ռեժիսորը տեղեկացնում է, որ հեռուստաֆիլմերի «Երեւան» ստուդիայի աշխատանքային պլանում նկատել է, որ նախատեսվում է ֆիլմ նկարահանել Յամո Սահյանի մասին: Իսկույն համոզվել է, որ նախատեսվում է ֆիլմ նկարահանել Յամո Սահյանի մասին: Իսկույն համոզվել է, որ նախատեսվում է ֆիլմ նկարահանել Յամո Սահյանի մասին: Իսկույն համոզվել է, որ նախատեսվում է ֆիլմ նկարահանել Յամո Սահյանի մասին:


Դեռ ավելի՛ն՝ բախտավորություն է համարում շարժանկարի նկարահանումը եւ առավել մոտիկից առնչություն ունենալը բանաստեղծի հետ, ինչը հնարավորություն տվեց թափանցելու Սահյան մարդու եւ բանաստեղծի ներաշխարհը, բացահայտելու բնավորության ինչ-ինչ գծեր. «Յամոն լռակցի մարդ էր, հաճելի էր նրա հետ շփվելը, բայց շատ քիչ էր խոսում: Ես չեմ տեսել, որ նա ինչ-որ մեկի բերանից խոսք վերցնի, շարունակի: Բայց քիչ խոսելու դեպքում էլ այն տպավորություն ունեւիր, որ նա անընդհատ խոսում է, որովհետեւ ասածները շատ բովանդակալից էին, դիպուկ: Մի առանձնահատուկ հաճույք էր նրան ունկնդրելը: Իսկ երբ բաժանվում էիր նրանից, մի տեսակ հարստացած էիր լինում: Ինչ թեմայի շուրջ էլ խոսեիր, նա քիչ էր արտահայտվում, բայց շատ դիպուկ բնորոշումներ էր տալիս: Կարճ ու դիպուկ, ինչպես իր բանաստեղծությունները», - վերհիշում է Յովիկ Յախվերդյանը:

Ֆիլմի սցենարը գրել է Վահագն Դավթյանը, օպերատորական աշխատանքներն իրականացրել է Էդվարդ Վարդանյանը: Նկարահանումները կատարվել են Երեւանում եւ Սիսիանում: Սահյանը մտերմություն ուներ Սիսիանի կուսըղջկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Շչորս Դավթյանի հետ, ով էլ ստեղծագործական խմբի համար նպաստավոր պայմաններ ստեղծեց նկարահանումների համար: Յովիկ Յախվերդյանի փոխանցմամբ՝ շատ դժվար է բանաստեղծի ու բանաստեղծության մասին ֆիլմ նկարահանելը: Ստեղծագործական խումբն իր առաջ նպատակ էր դրել կինոհանրաստեսի մեջ առավել

հետաքրքրություն առաջացնել Յամո Սահյանի անձի եւ ստեղծագործության հանդեպ: Եկրանից հնչող Սահյանի բանաստեղծությունները ռեժիսորի բնութագրմանը հրաշալի ընթերցում է Սոս Սարգսյանը: Ի դեպ, «Իմ պապը» բանաստեղծությունը ներկայացնում է Յովիկ Յախվերդյանի որդին, ով այն ժամանակ ութ տարեկան էր: Յամո Սահյանին նկարահանել են բնության գրկում, քաղաքային միջավայրում, բայց բանաստեղծն, ինչպես երեւում էր, քաղաքից խուսափող մարդ էր, ասես մարդկային բարոյականությունը փնտրում էր գյուղում, գյուղաշխարհում, գյուղացիների փոխհարաբերություններում:

Դարձյալ ամսանք կինովավերագրողի խոսքին եւ հուշերին. «Ստացվել էր այնպես, որ շատ էինք շփվում, մոտ կես տարի իր կողքին եմ եղել, իր տանը, ինքը՝ մեր տանը: Բնականաբար, նա սեղանի մարդ էր, ծիչտ էր, քեֆ անող չէր, իր քեֆն իր ներսում էր, խրախճանքներն ու ուրախություններն իր ներսում էին: Սեղանի շուրջ մարդիկ աշխույժ ասում-խոսում էին, Յամոն գլուխը կախ լսում էր, մեկ էլ հանկարծ մի բան կասեր, որ նույնն է՝ բոլորի ասածներն ամփոփեր: Ընդգծված պաշտամունք ուներ թուրքացուհի անձի եւ ստեղծագործությունների հանդեպ: Մի անգամ իմ խնդրանքով թուրքացուհի «Անուշը» վերլուծեց: Մինչեւ հիմա թուրքացուհի պոեմի նման վերլուծության չեմ հանդիպել՝ այդպիսի խոր ընկալում ճակատագրի, բնության, գյուղական բարքերի, մարդկային փոխհարաբերությունների: Մի անգամ ասաց. «Չգտե՞լ ես, որ թուրքացուհի գործերում քրիստոնեությունը ուրիշ կերպ է արտահայտվում, ոչ թե քարոզի միջոցով, այլ քրիստոնեական արժեքները նա բնության ու մարդու հոգու միջով է անցկացնում»: Մի խոսքով՝ մեծ էր Յամոն, մեծ մտավորական ու մեծ մարդ՝ իր ժողովրդի դարդ ու ցավով ապրող»:

Ֆիլմի նկարահանման օրերին Սոսկվայում «Դուրժա մարդուկ» ամսագրում տպագրվեց Յամո Սահյանի բանաստեղծությունների մի շարք: Կողքից ասացին, որ թարգմանությունները հաջող չեն: Նա էլ թե՛ բանաստեղծությունն ընդհանրապես անթարգմանելի է: Բանաստեղծության միտքը թարգմանվում է, բայց ոգին, էությունը չեն թարգմանվում, հնարավոր չէ: Յայտնի խոսքեր էին, բայց Սահյանը Սահյան չէր լինի, եթե եզրահանգում չաներ, այն էլ յուրահատուկ. «Ոչ միայն բանաստեղծությունը չի կարելի թարգմանել, այլեւ նույն լեզվի մեջ կան տարբերակներ՝ թուրքացուհիներն առանձին լեզու է, տերյաներնը՝ առանձին, չարեցներնը՝ առանձին: Տե-



րյանի բանաստեղծությունը երբեք չես կարող չարեցներն թարգմանել, թուրքացուհինը՝ տերյաներնը»: Յովիկ Յախվերդյանի կարծիքով, այս ամենից հետո, կարելի է ասել, մեր լեզվի մեջ մտել է սահյաներեն հասկացությունը:

Եվ մի բնավորության գծի տեղեկանում ենք մեր գրուցակցից: Յամո Սահյանը լուռ էր տանում ամեն ինչ, գովեստներ չէր շռայլում: «Շատ զուսպ մարդ էր, եւ ֆիլմում դա կարողացել ենք արտահայտել: Սահյանը հավանում էր ֆիլմը, մի քանի անգամ խնդրել էր ցուցադրել, բայց գնահատանքի խոսքեր չի ասել: Նրա բերանից շռայլ գովեստ լսել եմ Յամոն Մաթեոսյանի մասին, խոսքն իր ժամանակակիցների մասին է, իսկ նրանցից առավել շփվում էր Յամոն Մաթեոսյանի, Ռուբեն Յովսեփյանի, Ֆելիքս Մելոյանի, Ռազմիկ Դավոյանի հետ», - ասում է Յովիկ Յախվերդյանը եւ հավելում, որ բանաստեղծը մեծ դեր է խաղացել ոչ միայն իր, այլեւ իր այն ընկերների կյանքում, ովքեր մտերիմ էին նրա հետ: «Ինքնատիպ մտքեր շատ ուներ, - շարունակում է իր միտքը գրուցակցից, - մի անգամ մի բանաստեղծի մասին կարծիք հարցրի, պատասխանեց. շատ լավ բանաստեղծ է, բայց իր աշխարհը չունի: Յամոն իր աշխարհն ուներ, ըստ նրա՝ մեկ կարող էր փայլուն բանաստեղծ լինել, բայց իր աշխարհը չուներ: Եվ մի բան էլ. նա չէր ընդունում արձակ բանաստեղծություն ասվածը: Ասում էր՝ բանաստեղծության ամբողջ հմայքն այն է, որ արձակ չլինի: Դա նրանից էր, որ ինքը տաղաչափության մեծ վարպետ էր: Յետո, գիտե՞ք, ինչ կա: Որքան հիշում եմ, նրան չեմ տեսել գրասեղանի առջև նստած կամ գրիչը ձեռքին գրելիս: Նա շատ անգամ կրկնում էր՝ ես մտքում եմ գրում»:

Յովիկ Յախվերդյանի կարծիքով՝ Յամո Սահյանը սրամիտ մարդ էր, եւ նրա սրամտությունն ինքնաբերական էր: Մարդիկ կան, ովքեր ուզում են անընդհատ ցույց տալ, որ սրամիտ են, տեղի-ամտեղի անկերտներ են պատմում, բնավ չչարժեղվել շրջապատի ծիծաղը, բայց «Յամոյի սրամտու-

թյունը շատ դիպուկ էր եւ շատ տեղին: Յետո. քչերը գիտեին, որ նա նաեւ նմանակում էր: Մի անգամ դեմքի արտահայտությունը դարձրեց այնպիսին, ինչպիսին Վիգեն Խեչումյանին էր, ապշեցի: Բանաստեղծական տողը հիշո՞ւմ եք՝ քարափի ունքը ծովել, աչքը շաղկվել է: Ասաց, որ Վիգենի դեմքին է տեսել այդ արտահայտությունը: Սահյանը քչերի մոտ էր բացվում, բայց երբ նրանից բաժանվում էիր, թվում էր թե նրա հետ մի լավ էլ գրույց ես արել: Նուրբ, շատ նուրբ մարդ էր նա»:

Բանաստեղծը ցավ էր հայտնում, որ լեզուն գնալով աղքատանում է, գյուղաշխարհին առնչվող շատ բաներ ու արտահայտություններ դուրս են գալիս գործածությունից. «Մի անգամ ասի՝ Յամո Սահյանից, դա էլ բնական է, բաներն էլ, ինչպես կյանքը, ունեն իրենց արշալույսն ու մայրամուտը, ծնվում են ու մեռնում, օրինակ բերեցի «Իմ պապը» բանաստեղծության մի տողը. «Իմ պապը մեր գյուղի բոլոր կամերը բարել է»: Ասում էի՝ այդ դպրոցականը հիմա չի հասկանա կամը բարելն ինչ է նշանակում, մանավանդ կամ գոյակահի իմաստը: Յամոն այնպես էր բացահայտում, որ կորչում-անհետանում են ոչ միայն գյուղական գործիքների անունները»:

Գրական հասունությունը շատ ուշ «այցելեց» բանաստեղծ Յամո Սահյանին: Նա առավել ճանաչման արժանացավ «Քարափների երգը» ժողովածուից հետո (1968թ.):

«Մի անգամ, - վերհիշում է Յովիկ Յախվերդյանը, - կատակով ասի, Յամո Սահյանից, այդքան տարեց մարդ եք, նստել սպասում եք, թե երբ պիտի մուսան գա, որ բանաստեղծություն գրեք, էդքան բան եք տեսել, էդքան մարդկանց հետ շփվել, ճանաչել, հիմա էլ հուշեր գրեք: Յուսահատ հայացքով նայեց, թե՛ ես ի՞նչ ես ասում, դրա իմաստը ո՞րն է: Ասելու այն է, որ նա ծնված էր բանաստեղծություն գրելու համար, որտեղ էլ աչք բացեր, նա բանաստեղծ էր լինելու»:

Յովիկ Յախվերդյանի փոխանցմամբ՝ Յամո Սահյանը քնարերգուի մահով մենք մի աշխարհ կորցրեցինք: Ուստի նրա գրական ժառանգությունը շատ պիտի տպագրել ու կարդալ: Մանավանդ, որ մեր այսօրվա գրական ու խոսակցական հայերենի վիճակը (իր եւ բոլորի կարծիքն է) ահավոր է, իսկ Սահյանի լեզուն պարզ է ու գուլպալ, նաեւ փիլիսոփայական: Նա այս առումով կարեւորում է «Յամո Սահյան գիտամշակութային կենտրոնը» ՅՎԻ Սախազադե Շչորս Դավթյանի գործը՝ բանաստեղծի գրական ժառանգության հրատարակման, նրա հիշատակի ոգեկոչման տեսակետից: «Յամո Սահյանին առնչվող որեւէ գործ ձեռնարկել, նշանակում է՝ հայ մշակույթը բարձրացնել, քանզի հայ մշակույթի ամենավառ դեմքերից մեկն էր նա», - պոետի մասին իր մտորումներն է ամփոփում կինոռեժիսոր Յովիկ Յախվերդյանը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Յամո Սահյանի բանավոր խոսքը

ՍԿԻՉԲԸ՝ ԷՏ 79

ված է մեզանից՝ մեր կամքից, մեր ուժից, մեր համբերությունից: Իսկ այդ բոլորը մենք ունենք: Մենք հիմա այդ ամենով ավել լի ուժեղ ու հաստատուն ենք, քան թշնամու զենքերը:

— Անտարակույս, Սահյանի արտահայտած ամեն միտքն էլ ուսանելի է, պոետի հետ ձեր գրույցից էլ ի՞նչ թեմա առանձնացնեք մեր ընթերցողների համար:

— Երբ ես նկարահանման էի գնում, նախապես լավ էի ուսումնասիրել Սահյանի եւ քնարերգուները, եւ իր կյանքի որոշ մանրամասներ: Օրինակ, ես գիտեի, որ պոետը ամանակ գրել չի սիրել, ինչպես, ասենք, Վահան Տերյանը, Պարույր Սեւակը: Ու ինձ շատ հետաքրքիր էր, թե նամակ գրել չսիրող մարդն ի՞նչ կարծիք ունի այլոց գրած նամակների մասին: Ասեմ Ձեզ, որ այդ թեմայի շուրջ Սահյանի դատողությունները շատ հետաքրքիր են: Նա անգամ ասիտասանք

ունեի, թե հայ արվեստի ու գրականության մեծերից ոմանցից ընդհանրապես նամակ չի մնացել:

Ահա նրա պատասխանը նամակ գրելու մասին իմ տված հարցին. «Նամակն իմ կարծիքով, նաեւ գրական ժամը է: Մեր մեծերին, հատկապես դասական հեղինակներին լավ ճանաչելու համար իրենց գրած եւ իրենց ստացած նամակները շատ բան են ասում նրանց մտերմիկ կապերի, բնավորությունների, մտածողության, նրանց ընտանիքի, ամենաջերմ զգացումների մասին, որոնք հնարավոր չէ, կամ՝ հաճախ անհնարին է արտահայտել գրական գործերի մեջ: Հիշում եմ, Տերյանը մի առիթով գրել է, թե նախորդ նամակը չուղարկեց, որովհետեւ մշակված չէր: Ուրեմն նրանք անգամ մշակել են իրենց նամակները: Նշանակում է՝ ինչ մեծ արժեք են ունեցել նամակները նրանց համար: Պատահական չէ, որ ակադեմիական հրատարակություններում գրողների նամակներն առանձին

տեղ ունեն. դրանք նույն գրական գործերի արժեքն ունեն... Նամակի մեջ մարդը բացվում է, մարդը ժամանակ է ուզում գտնել՝ մտերմորեն մեկի հետ կիսվելու, նրան պատմելու իր հուզումների մասին, նրան հարցնելու որպիսությունը... Հիմա ի՞նչ՝ հեռագիրը եկավ, հեռուստացույցը կա, հեռախոսը կա. մի հատ գանգում կամ չենք գանգում, ստացվում է, որ իրարով հետաքրքրվեցի՞ն: Երբեմն մտածում եմ, թե հնար լինե՞ր գտնեմք Նարեկացու մի նամակը, իմանայինք, թե այդ հանձնարող մարդն ինչպես է տքնել, ինչպես է ստեղծել տիեզերական մեծության իր Մատյանը: Ինչ գանձ կլինե՞ր, չէ՞:

— Յամո Սահյանի հետ երանելի մտերմություն ունեցողը, անշուշտ, ծրագիր կունենա պոետի ծննդյան 100-ամյա տարեդարձին:

— Ծրագրեր ունեն, անշուշտ: Այս օրերին մթնոլորտը լցված է Սահյանով, եւ ես ուրախ եմ, որ կան գործարարներ, ով-

քեր Յամո Սահյանի սիրույն՝ աջակցում են ստեղծագործողներին՝ մի նոր լույս սփռելու Սահյանի ժառանգությունը սերունդներին բերելու ճանապարհին: Ես իմ գոհունակությունն եմ հայտնում Մաքսիմ Յակոբյանին, ով նախանձախնդիր մոտեցում ցուցաբերեց՝ ինձ հնարավորություն տալով պոետի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնակատարություններին ներկայանալ իմ նոր ֆիլմով:

— Յամոն Սահյանի մեզ եւ շնորհակալություն հարցազրույցի համար:

— Ես եմ շնորհակալ: ...Մենք գրուցում էինք Պապիկյանի աշխատասենյակում, ուր նրա նկարահանած հաղորդումների ու ֆիլմերի տեսաերկերն էին, Սահյանի ծննդյան 90-ամյակին նվիրված «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս» խորագրով Գիրք-օրացույցը, որ հրատարակել է իր գործընկեր Շուշանիկ Սահակյանի հետ, պատիվ՝ Յամո Սահյանի դիմանկարով մեծադիր կտավը, որը Պապիկյանը պատրաստվում է տանել Լոր գյուղ՝ նվիրաբերելու դպրոցին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ինձ բացակա չդնեք

Բանաստեղծություններ համանուն ժողովածուից

Իմ քարափներն ու ես

Չեք լուռությունը զնգում,
Չընգում է ձեր լուռ մեկ,
Չեք լուռության համերգում
Ինձ բացակա չդնեք:

Նամբերություն եմ ստում,
Ակնարկներս կրկնեք,
Նամբերության հանդեսում
Ինձ բացակա չդնեք:

Չեք շուրջը անայ է, կայծակ,
Քնով չանցնեք, չընկեք:
Քնեցիք էլ, արթնացաք,
Ինձ բացակա չդնեք:

Թվում է, թե կամենաք,
Մի օր երկիրը կթռնեք...
Չեք թողնեք ժամանակ
Ինձ բացակա չդնեք:

Չեք պնդության պաշարով
Դուք աշխարհներ կանեք,
Իմ մեղմության պարճատով
Ինձ բացակա չդնեք:

Ես եմ քարե պարսրագ
Չեզոք սերված, ընդունեք,
Դուք, ձեր կամքին հակասակ,
Ինձ բացակա չդնեք:

Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքննեք...
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք:

Տարիքն իմ...

Տարիքն իմ գլխին այս ի՞նչ է
բերում,
Տիղմը փրփուրից էլ չեմ
փարբերում:

Էլ չեմ փարբերում խոզանը
կորդից,
Ես ինձ իմ անսիրտ
հակասակորդից:

Այրվում եմ ջրից, կրակից թրջվում...
Նայում եմ երկնից,
Նամբերի տեղակ բներն են չվում:
Նայում եմ, ես ինձ զարմանք է պատում,
Նայած հովազ է կոճղը բացատում:


Կենդանի հովազ... Նաև կարծ նկարի,
Պիտի վեր կենա ես ինձ ծվարի:
Տարիքն իմ գլխին այս ի՞նչ է բերում,
Կոճղը հովազից էլ չեմ փարբերում:

Էլ չեմ փարբերում վեճը գրագից
Պիտիքը՝ պարզից, երանը՝ պարսից,
Կեսուրը՝ հարսից, շահը՝ վնասից,
Բռնակը՝ կանթից, ասուպը՝ շանթից,
Վանդակը՝ վանթից, դրակը՝ բանտից
Էլ չեմ փարբերում... Նայք էլ չկա,
Երբ հանցավորին դարձնում են վկա
Եվ բանտ են դնում ազնիվ վկային...
Այս օրերսերը հնում էլ կային:

Կային, երեխ...
Աշխարհն էն գլխից այդպես է եղել՝
Օրենքները միշտ թույլին են նեղել:
Այդպես է եղել:
Պնաս ալեխին...

Թող որ ինձ ներեն հարկերը վերին:
Նարկերը վերին... որ վերցնում հաճախ
Նշանակում են հիմարին հանձար,
Կանգնում թիկունքին, ճանապարհ
հարթում

Եվ փրփուրներով զրահապատում,
Որ հանձարների բերանը փակի,
Չեղբերը կայսի, ձեռքը հավաքի...
Եվ հեղո դառնա ես ատանց վախի,
Մտնի ողորունքն այս ատուխախի,
Իր ժանգն ու մուրը լույսի տեղ ծախի
Եվ միևնույն անգամ իր հին փափախի
Մաշված թաղիքը քանի թանգարան,
Որ սերունդները որունեն վրան
Մարնահեղեղերը անմահ նախահոր
Եվ դրանով իսկ հաղորդվեն նրա
Նանձարեղ հոգու սուրբ մասունքներին:
Այդպես մի նայեք իմ արցունքներին...



Տարիքն իմ գլխին այս ի՞նչ է բերում,
Օրհնակներ անեծքից էլ չեմ փարբերում:
Լրբին շնորհում կոչումը արբի,
Մրբին քանում եմ, որ կոշիկ արբի...
Եվ սրբում եմ, իրենց հերթական
Նաջողությունից մթնում պարկով,
Որ սուրբը երդվի լրբի արեւով
Եվ նրա ատաք իր վիզը ծոխ,
Որ մարտի նրա կոշիկը ձի
Եվ շնորհակալ լինի նրանից
Եվ դեռ պարտք մնա...

Ի՞նչ անի սուրբը, ո՞ւմ դուրը գնա:
Գրուի չեմ հանում մարդիկ հերթերից...
Իսկ ո՞վ է նրան հերթագրելու:
Եվ գրուի կախ, կորովյալ սրբով
Կոշիկ է մաքրում նա այն հավատով,
Որ վաղն աշխարհի խիղճն է մաքրելու...
Ներքի, ընթերցող, որ դուսն զանգից
Իմ այս չափածո հողվածն ընդհատվեց:
Մեկը ներս եկավ ես իր անհասգիսր
Խոսքերով մրթխ նոր ընթացք տվեց:
Մարից էր գալիս...

Լսեցի փխուր գրույցը նրա,
Ու միտքս գնաց շնեքի վրա...
Փոխվել են հիմա շնեքը բոլոր,
Անհոգ են դարձել, անտարբեր, անբան:
Շնեքն, ասում են, իրենց նախահոր
Շանորդությունն են ժառանգել միայն:
Ինչքան ուզում է հովիվն սղաչի,
Ինչքան սպառնա, շունը չի հաչի
Ոչ գողի, ոչ էլ գայլերի վրա,
Թեկուզ հաչելն է կոչումը միակ
Ու պարտքը նրա:

Շունը չի ուզում պարտքը կարարել,
Շունը չի ուզում իրեն չարչարել,
Ինչպես ասում են, հեշտ հաց է ձարել,
Եվ այդ հեշտ հացից երես է առել:
Շունը գնում է, ուր որ կարենա,
Չեն կախվում պոչից, ուրբը չեն կապում:
Շունը բնում է, երբ որ կամենա,
Չեն գոռում վրան, գլխին չեն բանփում:
Լաիր փայլա են ճիշտ ժամանակին,

Երբեք չեն խաբում:
Իսկ եթե լաիր ուշացավ հանկարծ,
Խեղճ հովիվի գլխին շան լախ են թափում:
Շունը փրփուրը շան տեղ չի դնում,
Եվ տերը նրան միշտ պարտք է մնում:
Պարտք էլ կմնա, քանի շունը ունի,
Շան գլխին տեր կա, տերը շուն չունի...
Տարիքն իմ գլխին այս ի՞նչ է բերում,

Շունը փրփուրից էլ չեմ փարբերում:
Ո՞ր ես շնային հավատարմություն,
Եվ ո՞ր ես փրփուր
ազնվագարմություն:
Գրուի չեմ հանում աշխարհի բանից,
Գրուի չեմ հանում ինքս ինձանից
Եվ ձարս կորած Աստուն եմ
դիմում.

- Վերին ողորմած, ինչպե՞ս է լինում,
Որ երկար մի կյանք շնորհելով ինձ,
Չես օգնել կարգին,
Որ չփոթեմ ես եղեգ ու սինձ,
Որ ուշքս մի քիչ գրուիս բերեմ,
Անոթը վախից կարգին փարբերեմ:
Ուշքը չես պահում դուր ու փանթիս,
Որ թեթե պանեն բեռը փարիքիս:
Ինչո՞ւ չես օգնում դու
հոգևորանջիս...

Ու շնորհում է Աստված ակնաջիս.
- Տեղդ պիտի մնա, մի քրքիր բեգ,
Տարիքն ի՞նչ անի, քո բախարն է
այդպես:

Մեկը մեր մասին բան չեմք ասում,
Մեր բերանը խցանում ենք:
Կարծի-կարծի, գյուր-գյուր
Իրար գալիս, խոսում ենք:
Լինել է պեղք, մենք լինում ենք,
Երեսուր բարը գլխին,
Մեր լինելով չարը մեթոմ,
Բարին է, որ խթանում ենք:
Բաց ենք անում ինքներս մեր
ճանապարհը ծուր ու շիրակ,
Վրակ-վրակ գեղ ենք դառնում,
Ո՞վ է ասում իճանում ենք:
Արդ ու հովիտի ուրբերն ընկնում,
Վիզ ենք ծոռում, որ մեզ խնեն...
Ծարավներ են խեղճ ու կրակ,
Եվ խղճում ու խեղճանում ենք:
Աշխարհը փուչ... փուչ աշխարհում
Այսքան փուչ ու փշերի մեջ,
Ի՞նչ իմանա, մենք էլ գուցե,
Ինչ-որ չափով փչանում ենք:
Ի՞նչ է ասում ձեր խիղճը ձեզ,

Երբ մեզ քոտուրուց են անում
Փուչերը այս փուչ աշխարհի,
Եվ մենք այսպես քսանում ենք:

Քչանում ենք

Մեկը մեր մասին բան չեմք ասում,
Մեր բերանը խցանում ենք:
Կարծի-կարծի, գյուր-գյուր
Իրար գալիս, խոսում ենք:
Լինել է պեղք, մենք լինում ենք,
Երեսուր բարը գլխին,
Մեր լինելով չարը մեթոմ,
Բարին է, որ խթանում ենք:
Բաց ենք անում ինքներս մեր
ճանապարհը ծուր ու շիրակ,
Վրակ-վրակ գեղ ենք դառնում,
Ո՞վ է ասում իճանում ենք:
Արդ ու հովիտի ուրբերն ընկնում,
Վիզ ենք ծոռում, որ մեզ խնեն...
Ծարավներ են խեղճ ու կրակ,
Եվ խղճում ու խեղճանում ենք:
Աշխարհը փուչ... փուչ աշխարհում
Այսքան փուչ ու փշերի մեջ,
Ի՞նչ իմանա, մենք էլ գուցե,
Ինչ-որ չափով փչանում ենք:
Ի՞նչ է ասում ձեր խիղճը ձեզ,

Ինչ էլ որ լինի

Ինչ էլ որ լինի, ինչ էլ ասեն,
Փուչը զինված է, ծաղիկն՝ անզեն:
Ծաղիկը՝ խոնարհ, փուշն՝ աներես,
Աստված, դու փշի քունն ալեկես:
Բաց ալեկես էլ, կայսրի դարձյալ
Ամենուրակալն այդ անիծյալ:
Փուչը զինված է, ծաղիկն՝ անզեն,
Բաց էլի ծաղիկն թող նախանձեն:
Ինչքան էլ փուշը վեր-վեր ցարկի,
Նա չունի երբեք ուժը ծաղիկի:
Ի՞նչ է ծաղիկը... երկրի վրա
Գեղեցկությունն է ուժը նրա:
Բաց գեղեցկությունն ինչ էլ դառնա,
Ինչքան էլ աճի ու համբարտնա,
Առանց օգնության ու պաշտպանի
Ինքն իրեն ինչպե՞ս կպաշտպանի...
Փուչը՝ գորավոր, ծաղիկը՝ գոհ,
Էլի ծաղիկն է աշխարհից գոհ:
Նայում եմ ծաղիկն թարմանալով,
Ես զարմանում եմ զարմանալով,
Որ անգամ իմ այս ծաղկած հողում
Ծաղիկի փրփուրը փուշն է կրում:

Մտվերս ես ես

Նարեյ ենք քարին արվերս ես ես.
Ես վեր եմ նայում, իսկ ինքը՝ վար:
Պահի խորհուրդը բռնում է մեզ,
Ինձ՝ ուշքս գլխիս, նրան՝ շվար:

Քարը փառացում, կրոնքանս,

Քարը պաղ մնաց, նա կրոնք...
«Չբացիր», - ասեմ, կքանա՞,
Ասեմ. «Ուշքի եկ», - ինձ կլի՞:

Ոչ արթնանում է, ոչ մրսափում,

Ոչ արթնանում է, ոչ մրսափում,
Ոչ արթնանում է, ոչ մրսափում,
Ոչ արթնանում է, ոչ մրսափում,
Ոչ արթնանում է, ոչ մրսափում,

Այս է, ուզենաս, թե չուզենաս:
Նանգուցրալ պապս էր դեռ խրատում.
- Խուլոխամրի հեղ գործ չունենաս:

Որպեսզի ինձ էլ խոլ չդարձնես,
Լեզուս կծում եմ ու համբանում:
Մպասենք միևնույն կեսօրն անցնի,
Վեր կենանք, րեսները ի՞նչ ենք անում...

...Ու վեր ենք կենում լուռ, կարկամած,
Նեղվում ենք փայլից ու մեղիկանում,
Ճամփա ենք ընկնում... կամաց-կամաց
Ես կարճանում եմ, նա՛՝ երկարում:

Լեզուն հանում է օրը փաթից,
Նետում է, սիրտը չի հովանում:
Ամեն մի թուփ ու քարի փակից
Ծոյլ մի սրվեր է քիթը հանում:

Այնպես անզոր եմ, անօգնական,
Մարդ թիչ է մնում գնա, գրկի...
Բայց նրանք կզան, կզան, կզան
Եվ կհավաքվեն իրար գլխի:

Եվ կկայանա, թող որ ներվի
Այս քաղաքական ոճի համար,
Ամեն բացարձակ արվերսերի
Պարմական մի նոր համագումար:

Եվ կամենալով իրար բարին,
Իրարից խոլով, արվերս ես ես
Մտվերստվում ենք ճանապարհին
Եվ արվերստված գնում այսպես,

Որպեսզի յոթ սև քրտիկը բամբակ,
Իրար խառնելով սկիզբ ու վերջ,
Մխրճվենք, կորչենք մի թանձրամած
Մուրջ, միակրորդ արվերսի մեջ:

Ի՞նչ է լինելու

Ի՞նչ է լինելու, սարսևան գիրի,
Պարզ է, չհմացավ, էլ ի՞նչ սարսևան,
Բայց եթե հանկարծ սարսևան արի,
Նարջը ալեխի պիտի բարդանա:

Դեռ ինչքան պիտի թուխար խորանա,
Եվ բացվող օրը հոնքերը կիտի,
Ի՞նչ է լինելու, պարոն Սարսևան,
- Ես ի՞նչ իմանամ, սարսևան գիրի:

Երբ պիտի վանենք մեզանից հեռու
Այս թանձրաթափած մշուշն օրհասի...
Երբ կիմանանք, թե ինչ է լինելու,
Թե սարսևանյին սարսևան չասի:

Ես չեմ գրելու

Բանաստեղծություն ես չեմ գրելու,
Չեմ հորինելու արարտող բաներ,
Չշողությունս չեմ քրթրելու
Եվ չեմ փնտրելու զրեզոն բառեր:

Ես ոչ ոքի չեմ զարմացնելու,
Ոչ մակդիրների հրավառությամբ,
Ոչ նորով, ոչ էլ հնավանդությամբ,
Միայն մաշվածն եմ թարմացնելու:

Պղնձյա րոտեր ես չեմ կռելու
Եվ չեմ փռելու մեարաբյա քողեր,
Եվ չեմ կրելու պերճ սկանզոդեր,
Չարդ ու զարդարանք ես չեմ կրելու:

Ես իմ հրճվանքն ու ցավն եմ պարմելու
Տոգնած հնձվորի, ջրվորի հանգով,
Իմ նախնիների խոսքի երանգով,
Չուր ոճի համար ինձ չեմ պարտելու:

Պարտքը մարտի խիղճն եմ սպրելու,
Ինչպես իմ պապը մարզը ջրելիս,
Ինչպես իմ փառը արդևն փռելիս...
Եվ վարձիս համար վիզ չեմ ծռելու:

Իմ սովորական գիրն եմ գրելու
Եվ մերժելու եմ կոչերը բոլոր,
Խոսքի պոզերն ու պոչերը բոլոր,
Նախնական, նախնի ծիլն եմ ջրելու:

Բանաստեղծություն ես չեմ գրելու:

Մոցուլյթի արդյունքները

Մեր Սահյանը



ՆԱԹԵՎԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ք. Սիսիան

Կողք-կողքի մեր գրապահարանում նրա բոլոր գրքերն են ու դիմանկարը: Երբեմն-երբեմն ուշադիր նայում են նրա տխուր աչքերին... Որոնել ու գտել են բազմաթիվ նկարները նրա: Չեն գտել, սակայն, լայն մի ժպիտ մշտախոհ դեմքին:

Ու թախծով են նրա հետ... Տեսնես ո՞վ է տարել ու չի վերադարձրել այս մեծ մարդու ժպիտը. անուրախ մանկությունը, որն ասես պահ է տվել «Ինչո՞ւ հիշեցրեցի» բանաստեղծությանը: Այստեղ ցրտից փշաքաղված մագերն են ու բորիկ ոտքերը նրա, շապիկի թեքից կախված մաշված, գույնզգույն խաշաման-ման կարկատանները... Այստեղ մի քարի նստած, ցրտից կապտած նախապան տղեկ է նա.

*Ու կապույտ քարից
Տարբերվում են ես
Այնքանով միայն,
Որ ես դողում եմ,
Քարը չի դողում...*

Եվ մեղքն է ծորում նախ «մեղավոր» հոր աչքերից՝ որպես արցունք, ապա նույն-քան «մեղավոր» պոետ որդու հայացքից, որ քառասուն տարի անց հիշեցրեց...

Ցավի մեջ էլ զգում է ծաղկի ու փշատե-նու բույրը, տեսնում է հավքի ճախրանքի վեհությունը, լսում է չխռոված, քիչ նեղա-ցած Լորագետի մեղմ կարկաչը, ականջ է դնում անտառի շշուկներին ու երկնա-լաց բարդու բողոք-խշշոցին. դրանք մի-մի գոհարներ են դարձել, իրենց փայլով գերել մեծին ու փոքրին, հային, օտարին...

Տեսնես ո՞վ է տարել ու չի վերադարձրել ժպիտը կյանքն այսքա՞ն սիրող պոե-տի...

Մեծ հայրենակա՞նց իր սարսափազդու, աշխարհավեր տեսարաններով, արյան դառնահամով ու բացաջք նահատակնե-րով, թե՞ չքնաղ Նաիրին կորցնելու ակը: Մարտադա՞շտը, որտեղ նա հրի ու սրի եր գիչ է եւ այլ սեր չունի հայրենիքի սիրուց զատ ու պատրաստ է .

*Կունեմեմ, միայն թե դու դարերում
ազատ խշշաս,
Իմ հեռու՛, հեռու՛, հեռու՛ նախրյան
դալար բարդի...*

Ժպիտը սե՞րն է տարել՝ այն անհաս վե-հությունը՝ ուրիշին տալով իր բուրմունքը, պոետին՝ փշերը... Բայց սերն աստվածա-տուր է, եւ նա հանուն սիրո հավերժության խոստովանում է.

*Նանդիսյանն օրից ես ինձ նեղել եմ,
Որ դու աշխարհում նեղություն չզգաս...
Ու արքանում եմ նրա թախծածոր սերերի
համար...*

Մտերիմները չեն հիշում, որ հունորի մեծ վարպետը, կատակասեր պոետը եր բեւե քա՛հ-քա՛հ ծիծաղել է:

Եվ ինքն էլ, չինձնալով, թե ո՞վ եւ ե՞րբ է տարել իր ուրախությունը, կասկածում է. *Երեւի փարիներն անսիրտ
Իմ սրտի կրակը փարեւ,
Տարել են ու եր չեն քերել...*

«1984ին Արսիանի՝ այսօր արդեն իր անունը կրող մշակույթի կենտրոնում նշվում էր Սահյանի 70ամյակը: Լեփ-լեցուն դահլիճում նրա շունչն էր, ներկայությունը: Երգ, ասմունք, հուշեր, ելույթներ, այս ամենին ասես անհաղորդ, անթխած ու «մեղավոր» պոետը վերջում շնորհակա-

լություն ասաց Սյունյաց աշխարհին, սյու-նեցիներին՝ իրեն կյանք տալու, ապրեցնե-լու համար: Ապա երկա՛ր ու խո՛րը գլուխ տվեց...», - պատմում է տատա, ու իմ տե-սադաշտում կարմրաթուշ ու քաղցրահամ բեռն տակ կթած, ճյուղերը մինչեւ գետին խոնարհած խնձորենի են տեսնում... նրա հենակներն անգամ ճկված են, խոնարհ-ված...

Տեսնես նա գիտե՞ր, որ ինքն է Լորը եւ Որոտանը, մասրենին ու ջրվեժը, չքնող անտառն ու օրոր ասող քամին, մենավոր, սաղարթախիտ ընկուզենին, քարափն ու քարայրը, Սյունիքն ու Յայաստանը:

Տեսնես նա գիտե՞ր, որ ինքն է բնու-թյան մշտաբուն մայրենին, որով այնքա՞ն մեղմանուշ աղաղակեց ամենքին, թե ինչ դրախտային ու փառահեղ հայրենիք ու-նենք...

Եթե ուսուցիչ լինեի, իմ բոլոր սեպ-տեմբերի մեկերը Մաշտոցին ու Սահյանին կնվիրեի. քանզի նրանք են մեր մայրենին, գիտությունների գիտությունը...

Քաղաքի արտուն հպարտ ու երախտապարտ սիսիանցիները Յանո Սա-հյանի արձանն են կանգնեցրել: Այն մեծ

հայրենակցիս մշտաբուն ներկայությունն է հայրենի եզերքում:

Այսօր այցի կզնամ նրան: Ծաղիկներ կտանեն: Գլխիկոր կնստեն կողքի նստա-րանին ու մերձբալթյան չքնաղ տպավորու-թյունն կկիսեն նրա հետ.

- Երեկ եմ վերադարձել Վիլնյուսից, քո մեծ բարեկամի՝ Մեծեյայտիսի հայ-րենիքից. այնտեղ իմ Սոնա մորաքրոջ ընտանիքն է ապրում: Փոքրիկ, հարմա-րավետ ռեստորանի սրահը, որտեղ նշում էինք իմ զարմուխի Սոսի ծննդյան օրը, գրեթե դատարկ էր: Անկյունում չորս-հինգ երիտասարդ աշխույժ գրուցում էին սեղա-նի շուրջ: Շուտով, սովորույթի համաձայն սկսեցինք ցածրաձայն «Ամաի տակից» երգել: Երիտասարդները համակ ուշա-դրություն դարձրին, նայեցին միմյանց եւ հաստատական մոտեցան: Նրանցից հրա-վառ աչքերով սկսեց արտասանել ռուսե-րենով: Առաջին տողերից հասկացա, որ նա քո «Պապն» է ասմունքում: Ապա երկրորդն անգլերենով «Առաջին սերը», երրորդը լա-տիշերենով «Տարիներս»...

Ու այսպես, ասես նախօրոք կազմված ծրագրով, հինգ խանդավառ երիտասարդ, իրենց մայրենով, քո գրչով, մեր հայրե-նիքով ու քեզով լցրին մերձբալթյան այն գողտրիկ անկյունը, շողշողուն տոն նվիրե-ցին ամենքիս, Սոսին...

Ծովացավ հպարտությունը մեր, սերը մեր առ աշխարհ, առ Աստված, որ քեզ ու-նենք մենք, քեզ ունեն ռուս, լատիշ, բրիտա-նացի, ուզեկ ու չինացի բոցկտուն այս երիտասարդները, որոնք ուսանողներն էին Վիլնյուսի բժշկական համալսարանի:


Ես նրանց Յայաստան են հրավիրել գարնանը՝ քո ծննդյան 100-ամյակին: Այդ օրը բազմամարդ է լինելու «սուփրի» շուր-ջը, անհամար են լինելու հյուրերը, մոլորա-կի բոլոր ծագերից են գալու...

Ու կխոստովանեն բոլորը, որ անկրկնե-լի, անմահ իրիկնահաց է Լորում... ...Իշխանասարից կապույտ երեկոն է իջնում, պարուրում Սիսակ ճահապետի հրապարակը, քո մշտաբուն ներկայու-թյունը...

Այն քարեղեն է ու քարափ է, ինչպես խաչկապալը, խաչկապաի ժայռակուռ թո ղը, ինչպես Զանգեզուրը եւ Յայաստանը...



ՆԵՐՍԵ ՍԱՐԳՍՅԱՆ



Արզվանի կամուրջը՝ վերանորոգված Ներսե Սարգսյանի ընտանիքի ներդրումով

ՆԱՄՈՒ ՍՄՆՅԱՆ

Գարբասի ձորը

*Մեջքին էր ընկել Գարբասի ձորը,
Բացել էր բերանը իր սահագին,
Եվ ինձ թվում էր, թե նա ուր որ է
Կուլ կրաւ ելեող արեգակին:
Իսկ արեգակը միշտ խուսափում էր,
Նրան խաբում էր ու հեռանում,
Չորը խոտվում ու մրսափում էր՝
Խեղդելով բախար իր բերանում...
Չորի լանջերը հիմա ծաղկում են,
Այգեստաններն են շրջում անվերջ,
Մոնա կանգնել է եւ աղմկում է
Լույսի կայանը այդ ձորի մեջ:
Անցյալը դառն էր, ծանր է հիշելը...
Ի՞նչ իմանայի, փոքր էի դեռ,
Որ այս խոր ձորից անգամ գիշերը
Արեւներ կկենն լանջերն ի վեր:
Ի՞նչ իմանայի եւ այն մութ օրը,
Որ մի աստղ իբրեւ փրկության հույս,
Նեռու հյուսիսից գալով այս ձորը,
Կրեւեր հազար արեւի լույս:*

1953թ.


*Երբ ամեն անգամ բացվում է օրը,
Մրթով մտնում եմ Գարբասի ձորը...
Կարծես լսում եմ մոռու օրորը,
Երբ ստափում է ծանոթ բարդին:*

*Դեմս փոխում է իմ կանաչ Լորը,
Իմ փառավորը, իմ բախարավորը...
Մշտն եմ մոռու մութ-կապույտ շորը,
Երբ փառաբանում է մշուշն արդին:*

*Այն, այնպես ջերմ է եւ այնպես խոր է,
Այն սերը, որով սիրում եմ Լորը,
Այդ սիրով միայն սիրում է մորը
Ազնիվ, անձնագոհ նրա որդին:*

*Ինչպե՞ն չսիրեմ եւ այս բոլորը,
Երգիս մեջ թռչում, երգում է Լորը,
Անվերջ ծաղկում է, ժպտում է ևտրը
Այս հեռանկի սարսափարթին:*

1953թ.



Գարբասի Սբ Սարգիսյանու Նախավկա եկեղեցին: Կառուցվել է գարբասեցի Ներսե Սարգսյանի ընտանիքի ներդրումով: Նավակափիցը փեղի է ունեցել 2010թ. մայիսի 5-ին:

ԾԵՂԵՂ ԾՊԻՆՆԵՐ

Կարոտների փուն



ՎԼԻԽԹ ԿՈՎԱՆԵՆԻՍՅԱՆ

Միսիանի շրջան, գյուղ Լոր

Երբ բացվում են քո դռները, ես զգում եմ սառնությունը... իմ աշխարհ... իմ լեռնոտ աշխարհ... քարերի ու սարերի... բույրերի ու սերերի... լույսերի ու հույսերի... կանաչների ու կակաչների... իմ բազմա-հազար երազների ու մտքերի երկիր Սյունիք, իմ հող ու ջրի պատմության Միսիան, իմ մայրական բնօրրանի տուն՝ իմ Լոր... իմ չնաշխարհիկ աշխարհ...

Երբ փորձում եմ խոսել քեզանից, սիրտս թրթռում է, որովհետև դու իմ տունն ես, երբ լեզուս բարբառում է քո պատմությունը, մարմինս փշաքաղվում է, որովհետև դու իմ շունչն ես, երբ փորձում եմ քեզ վերապրել ու զգալ քո հոտը, շունչն ու միամտությունը՝ խոնարհվում եմ, որովհետև դու իմ մեծությունն ես...Երբ փորձում եմ նկարագրել քո գեղեցկությունն ու հոգեւոր հարստությունը, զլուխս վեր եմ պահում, որովհետև դու հզոր ես...

Իմն ես, իմ մանկության տունն ես, իմ առաջին ծայրի համեստ վկան ես:

Քո կանչի ու ձայնի մեջ ինձ եմ տեսնում...քո քարի ու քարափի մեջ ինձ եմ զգում... քո գետի ու գետափի մեջ ինձ փնտրում... որովհետև դու ես իմ ծննդյան կանաչ վկայականը, դու ես իմ անձնագիրը, ու քո պատմությունն ու միտքը, հիմքն ու սերերն են իմ դիպլոմները...

Փոքրիկս, իմ բնօրրան, իմ տխրության ու ժպիտների տուն, իմ գողտրիկ լուսավոր իմ գյուղ... իմ ԼՈՐ...

Քո մեջ է իմ պատմությունը, քո երկնքում են իմ պապիկները, իմ օրորներն ու որորները...

Ուրախ եմ որ երբեք, բայց արդեն թռչում եմ, թռչում եմ օտարի պես, հյուրի պես տուն եմ գալիս, քարո՞ւ քարափո՞ւ եմ համբուրում, կարոտ եմ, բայց թռչում եմ...

Գնալով հավիվում ես ու հանգչում, բայց էլի նույնն ես մնում քո ձեռի ու տեսակի մեջ, քո մուտք ու ելքի մեջ... Իմ փառահեղ, իմ լեզվի հեղինակ... Ծնողական բնօրրանի ու սիրո պես դու ինձ գիրկդ առար ու

ազատություն տվեցիր քո փոքրիկ աշխարհում, ինձ գարուններ, ամառներ, աշուններ ու ձմեռներ տվեցիր: Դու Սահյան ծնեցիր ու ինձ Սահյանի խոսք տվեցիր ու միտք... տվեցիր մի հոտ, որ շնչեմ ու տեսնեմ այն , որ տեսնել չի կարող ամեն մարդ...

Դու ինձ օդ տվեցիր շնչելու, գրելու մի փորձ ու մի մեծ նվեր՝ տվեցիր մասնագիտություն:

Հոգատար իմ տուն, այսօր մթնում է, օրը փոխվում է , բայց իմ մտքերը չեն մթնում երբեք, իսկ իմ օրերը փոխվում են սիրով ու մեծ կարոտով, ՍՅՈՒՆԻՔ, ՄԻՄԻԱՆ, ԼՈՐ, ահա ծնունդն իմ....

Սա է իմ տունը, իմ մեծ հայրենիք:

ՆՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՍ

Ով մայր բնություն, իսկոթ ու խոհեմ, Դու փոխ ես արվել իմ շրթունքները, Որ ես կրկնեմ քո շունչները, Որ ես նրանցով քո երգը սուլեմ, Նրանցով փչեմ եղեգևա փողը...

Համո Սահյան

...Ու քո աչքերը մի օր գողացա...

Գողացա, որ տեսնեմ աշխարհը կանաչաշխարհը խաղաղ, աշխարհը պայծառ, գունեղ, լուսավոր, գողացա, որ տեսնեմ մասերնիմ, որ կախված է ժայռից, որ տեսնեմ ու խոսեմ բնության հետ Քո պես ու Քո լեզվով, որ շուրջս փռեմ դաղձի ծաղիկներ, ու հոտը սփռեմ համայն աշխարհով, գողացա, որ տեսնեմ Քո Որոտանը, Եզերքը նրա, Լորագետը տեսնեմ ու մտքով լող տամ ջրերում... Գողացա, որ ետ բերեմ քո հորովելը, գողացա, որ տեսնեմ, թե ինչպես է կախված աման ամսի վրա, որ տեսնեմ հողի օրհնությունը մեծ, որ տեսնեմ, թե ինչպես է Յայաստան ասելիս ծնկներ են ծալվում, որ զգամ պանդուխտի հոգին հեռացող տանից, որ զգամ՝ ինչպես ժամանակը խենթ կառնի թեւերին ու վեր կտանի... ու հաստատ, հաստատ եմ ուզում գողանալ, որ ժպտամ՝ տեսնելով, թե գարունը ինչպես է հայերեն գալիս, որ շփոթահար պատուհանից դուրս նայելով տեսնեմ քարե արցունքը, քարե ժպիտը, քարե սարսուռը ու քարե սունկը: Ու գողանալով նաեւ ուրբերդ, հողից ճաքճաք խոսուն ձեռքերդ՝ բռնելով թփից, քարից ու ծառից Աղոթարան սար փորձեմ բարձրանալ ու աղոթք անեմ առ ԱՍՏՎԱԾ...

Եվ չկշտացա քո աչքերից ես, եւ ազահաբար նաեւ գողացա փառահեղ հոգիդ, նույնիսկ տեսնելով ձնհալի միջից, ձնծաղիկի պես ժպտացող սիրուն... Ու ես կանգ առա, ու քո տողերից սրտիս թրթռով, սառած շուրթերով, հպարտ հայացքով մայր բնության մեջ, մասրեմու կողքին, Լորագետի մոտ, Լորանդրի մեջ թնդանոթի պես տողեր հնչեցին...

...Եթե միևնույն անգամ
Լասո լինես, թե ես այս աշխարհում չկամ,
Միևնույն է կգամ, ինչ էլ լինի, կգամ,
Որ էլ լինեմ, կգամ...

Իմ հրաշք աշխարհը



ՎԳՈՒ ՍՏԱՌԻՐՅԱՆ

Կապանի N2 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ

Ալեքիբիուր ջրվեժներն այլևս դեպի երկինք չեն շառաչում, ծորը ծորից ջուր չի խմում. ջրվեժների հոսքը դադարեցվել է, ծորակները ցամաքել, գետերի ընթացքը դանդաղել. դեպի երկինք աճող ծառերը հատվում են, դրանց փոխարեն վեր են հառնում ավտոտնակներ, ռեստորաններ, սուպերմարկետներ, ամառաները դառնում են հանքեր, սարերը հորատվում, վերածվում են ժամանակակից ճանապարհների: Մարդկանց մեկ օրում ու միանգամից հարստանալու տենչը խախտել է բնության սահյանական անդորրը: Բնությունը, որ ի գորու է ավելի երկար հոգալ մարդու համար, խեղճացել է, մերկացել: Սահյանը կարծես թե գուշակում էր, որ մարդը մի օր ձեռք կբարձրացնի բնության վրա եւ ժամանակին իր բանաստեղծություններով կարծես թե մի յուրօրինակ բնապահպանական շարժում էր ծավալել՝ փորձելով մարդուն սովորեցնել սիրել բնությունը՝ սարը, ծառը, ամեն մի փոքրիկ շյուղը, քարը, առուն, սովորեցնում բնությանը զարդարել այն փոքրիկ անկյունը, որտեղ իրենից հետո դեռ սերունդներ են ապրե-

Սա է նրանց պատկերացրած հավիտենական հավերժությունը, այդ պատճառով էլ մարդիկ այս հրաշք աշխարհում ուրախ էին, երջանիկ, հաշտ ու համերաշխ: Այստեղ բնությունն ու մարդը միաձուլվել էին: Նա մարդուն տալիս էր ամեն ինչ, ինչ նրան անհրաժեշտ էր գեղեցիկ, արդար, ծնմարտ, սիրով ապրելու համար: Ամեն ինչ ընթանում էր ճիշտ ճանապարհով: Հյուսվում էին բանաստեղծի կանաչ-կարմիր երազները: Բայց արի ու տես՝ նա չէր էլ պատկերացնում, որ մի օր այս հեքիաթային հրաշք աշխարհում դեռ շատ փորձություններ կլինեին հաղթահարելու. պատերազմներ, նախանձ, մարդկային չարություն, ազահություն, բամբասանք... Այս բարի ու արդար մարդիկ չէին հասկանում, թե դրանք ինչ բաներ են, ովքեր են հորինել եւ որ իրենց կբերեն կսկիծ, ցավ ու տառապանք: Ու հանկարծ մի հրաշագեղ աշխարհ վերածվեց իսկական քաոսի: Այդ ե՞րբ աշխարհն այսպես փոխվեց: Բոլորը կարծես խելագարվել էին, զժվել, գլուխները կորցրել, երկար ժամանակ տառապանք, ցավ ու մշուշ էր իջել կենսախիճը, ուրախ, երազկոտ աշխարհի գլխին: Ազահությունը, նախանձը, չարությունը բույն էին դրել դրախտային աշխարհի բոլոր անկյուններում: Ամենուրեք տխրություն էր ու թախիծ, լռել էին բնության աստվածային ձայները: Մարդիկ ծարավ էին հարստանալու տենչով, կռվում էին ու պատերազմում, որ իրենք տիրանան այս փոքր, հիասքանչ ու բարուբանք լեցուն աշխարհի գեղեցկությանն ու հավիտենական հավերժությանը: Սակայն ոչինչ էլ չէր ստացվում: Անվերջանալի կռիվներ, թալան, կտորած, ավերում, արդյունքում՝ ոչինչ, քանդվում էր մի հրաշագեղ

լու: Սահյանի հրաշք աշխարհում, ուր սարը սարից ամպ էր քամում ու երկինք էր բուսնում հողից, մարդու թեթև ձեռքով խախտվում է ներդաշնակությունը... Չորը ծորից այլևս ջուր չի խմում. մարդը ավելորդ շքեղություն է համարել: Չորերից մեկը փակել ու հիդրոէլեկտրակայան է կառուցել՝ ավելի փողաբեր է, ավելի շահավետ: Արդարացումն էլ կա՝ ստեղծվում են աշխատատեղեր, երկիրը էներգետիկ ռեսուրսներով են հարստացնում, սոցիալական խնդիրներ են լուծում: Այսօր, սակայն, քիչ չեն սրտացավները. Սահյանով ոգեշնչվածները նրա գրչով համեստ պայքարը մեր օրերում հրապարակ են տեղափոխել. երկրի ապագայով մտահոգ քաղաքացիները միշտ այնտեղ են, ուր կանաչապատ խաղահրապարակները քանդվում, բազմահարկ շենքերի են վերածվում, պայքարում են մարդկանց հանգստի համար նախատեսված պուրակներում, ուր մի քանի մեծահարուստներ ծառերը հատելով խանութներ են փորձում կառուցել: Նրանք հասկացել են՝ մի փոքրիկ ծառի, գետի նկատմամբ հոգատարությունը սեր է ոչ միայն բնության, այլև սեր հայրենիքի, ծննդավայրի հանդեպ:

Սահյանը, սակայն, ամենաշատը վախենում էր մարդու համար. նա գիտեր, որ առանց մարդու աշխարհը դատարկ է ու անիմաստ, որ առանց մարդու ոչ միայն ապրելը, այլև մեռնելն է դժվար. վախենում էր, որ բնության աղճատումը կփոխի մարդուն: Նա մարդուն է տվել իր ունեցած հացի վերջին պատառը, ջրի կաթիլը: Եղել ներողամիտ նախանձների նկատմամբ, բաշխել կրակ ու կորով, ժպիտներ, ուժ ու ժամանակ: Վախ կար Սահյանի սրտում, որ կփոխվի աշխարհը՝ այնտեղ կբացակայի սերը, հանդուրժողականությունը, հայրենասիրությունը, միմյանց օգնելու պատրաստականությունը եւ փորձում էր օրինակ ծառայել: Սահյանը նույնիսկ մահից հետո գեները վայր չի դնում, միանում է աշխարհը ավելի լավը դարձնելու ցանկացողների պայքարին ու ցանկանում է մարդուն էլ ավելի լավը, բնության հետ ներդաշնակ տեսնել, իր հոգեւորի հետ մարդուն միայնակ թողնել չի ուզում նույնիսկ մահից հետո... Նա, միևնույն է, օգնության է գալու, եթե միևնույն անգամ մարդկանց վերջին հույսը մարած լինի, գալու ու հավատի ժպիտ է դառնալու:

Համո Սահյանի պարգամը



ՆԱԵՍ ՍՏԱՌԻՐՅԱՆ

Կապանի Ա. Մարգարյանի անվան N 7 հիմն. դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի

Հրաշք... Արարվեց մի հրաշագեղ ու աստվածային աշխարհ: Դրախտ էր իսկական: Հրաշք այս աշխարհում մարդիկ բարի էին, հյուրընկալ, բարյացակամ, ստեղծող ու արարող: Շատ էր նրանց մեջ ձգտումը սիրո, գեղեցիկի, արդարության, ճշմարտության հանդեպ: Այս հրաշք, փոքրիկ աշխարհում ամենուրեք սեր էր, ժպիտ, երջանկություն, խաղաղություն ու անդորր: Հիասքանչ էր ամեն բան. շառաչում գետերը, հանդարտ լճակները, փարթած ծառերը, բուրավետ ու երփնե-րանգ ծաղիկները, դայալոդ թռչունները, բազմապիսի կենդանիները, սլացիկ ու վեհ սարերը, ամեն բան, առեղծվածային մարդը: Այս հեքիաթային ու դրախտային աշխարհը ծնեց իր պոետին: Այստեղ մարդիկ իրար սիրել գիտեին, իսկ շրջապատող ամեն բան սրբություն էր իրենց համար, պաշտում էին քարը, ծառը, լուսինը, արեւը, խոնարհվում ավանդույթի առաջ, հավատում հավերժության: Այն հավերժության, որ ամեն զարնան հետ ծնվում էր ու ծնունդ հետ քուն մտնում: Եվ այսպես շարունակ՝ ամիսներ, տարիներ, դարեր...

Մոցուլյթի արդյունքները

Սահյանական սիրածս բանաստեղծությունների հեղինակը



ՆՍԵՐՍ ՍԱՐԴՐԱՅԱՆ

Սյունիքի տարածաշրջանային պետական
քոլեջի մեթոդիստ ուսուցչուհի

Քայլող ժամանակին համաձուլել հավերժանում է Համո Սահյանի բնական-ազնվական, ապուրապուր պոեզիան, որում մաշված մագաղաթների, հնօրյա մեծ գերդաստանների օջախների ծխանի ծխի կենդանություն, հայկական վանքերի աստվածաշունչ դուրանքներ, թախծամրմունջ աղոթքներ, մի բուռ ժողովրդի ճակատագրի կուռ հենք, թանձրացած ու պոռթկուն սեր, Լեռնահայաստանի անանցանելի անդունդների ծործորների, դաշտավայրերի արգավանդ մարդ ու հերկերի գովք, համաժողովրդական բառ ու բանի մեծարում, մարդկայության խնթությունների ու խորությունների առիթնություններ կան: Բանաստեղծական ձայնեղ հանգերի ու վարպետության է՛լ դայլայլով, է՛լ հրաբխով պարուրվելու ու շիկանալու բաղձանք կա հոգում: Հայրենական խորհրդանիշերը շալակած փանելու ու ժառանգություն թողնելու դասեր կան գրողի անեղական ինքնաշխարհի բուլր եւ իմ պաշտած երգերում:

«ՏԱՐԻՆԵՐՍ»: Ժամերի ու օրերի, հերթագայող հասակների անտեսանելի սահանքը հանրագումարով խտանում է տարիների մնայունության եւ տարեգրության մեջ որպես աներկբա փաստարկուններ, որոնց սերունդներում իրական ու անգոր առասպելների ըմբռնություններ ու ամբարուններ, հարագատ ու թանկագին հայացքների աղանձառաջող, շողակաթ գգվանք, չար ու սթափ ոսոխների հիշաչար հետանտություններ, զարմանահրաշ վայրերով հիացալտ թափառումներ, անձեռակերտ բնության խոնարհ ու հեզ մերձեցումներ, սիրո ցավոտ տվայտանք ու քաղցրանուշ վայելք, անգին ու սրբազնագույն որբա՛ն այլ հուշերի մարգարտաշարեր կան...

Ձառ մանկության հուռթի ակունքներից լիակատար չափահասության սերմերն են ծլարձակում, բախտավորության ու երջանկության մեղրածոր կաթկթուններն են քաղցրանում ցմահ ներկայությամբ: Ապրած կյանքիդ տարեկան շարակցումները ներաշխարհումդ ակոսվում են բառաշերտերով՝ փաղաքշանքոտ, սարսուռն ահերով ու աղետավոր մահերով, քո կյանքի աստվածները դարձած ռափկրաների մոլորակներով, ինքնագոհ նվիրաբերումներով, համասփյուռ կարոտախտի շրշյուններով, կենսափորձի ու մասնագիտական նվաճումներով, գիտելիքների ինքնամոռաց ու անհագ կլանման ծովացումով, զմրուխտ անտառի ու վե ս լեռների գաղտնագերծումներով, պարտքի ու պատվի գիտակցումով: Մարդու ու գոյի առեղծվածները ստվար գրքաշարերի անսպառ նյութ են:

Իսկ Համո Սահյանը եւ պարզագույն, եւ միաժամանակ քարափաթերձ ածականներ է կիրառում՝ ապրածիդ գունագեղ խճանկարները ծիածանելու եւ ստույգ արժեւորելու համար: Խաղաղ ու առտոնին հոգեւորով շրջանակված տարիներդ սպիտակ են ու շիտակ, բերկրանքիդ ու ժպտերեսությանդ տարիները՝ կանաչ-կարմիր, տաք-կրակոտ, սիրավոր ու ձիավոր: Վշտոտ ու ցավոտ տարիներդ սեւ են կամ սառն, ոտաբոբիկ ու խեղձ, թեաբեկ: Հոգեծեւակորման մեջ հայտնվում են նաեւ քար ճեղքող, երկինք խմող, չասված սերերի ու չասված խոսքերի ծուռ տարիները:

Ավա՛ղ, իմաստության ու ամուր բնավորության արարման վայրէջքին տարիներդ ցուպավոր ու ասուպավոր են եւ հանդարտ մարմնում են:

Մարդու էության բուն զանձարանը ամփոփվում է տարիների բազմաբնույթ, տարատեսակ եղելությունների համաձուլված-համակարգված տողորումներով:

Օրերի տարեկան հուլովույթն ամենեւին անհեթեթություն է, սին պատրանք, նախապես պատվիրված նախագիծ, չնայած խելացի մարդիկ ի գորու են իրենց հիմնարար երազանքներն ի կատար ածելու: Կյանքը նաեւ գուշակելու արհեստական հանելուկ կամ խաչբառ է, անհնար է նաեւ տառացիորեն արտագրել կամ նմանակել ուրիշների արածները, քանի որ բոլորին տրվում է յուրովյալ շանս, հիրավի անհատական կենսագործունեություն:

Անցած կյանքը չի խմբագրվում, չեն գտում լավը վատից, խոտանը՝ ոչնչացնում, թերմացքը՝ չարտում շներին կեր, մնացուկները՝ նետում աղբարկոլ: Անցկացրած կյանքին հետադարձ ու վերադարձ չկա, մարդու կենսակերպն իրապատում է՝ ուրույն սկիզբ ու վախճանով, զարմանային ծաղկուն փթթման ակնկալությամբ, առմիշտ հիշողությամբ, ամոթի ու խղճի զգացումով:

«Տարիներն իմ, փարիներն, Ո՛ր մնացին փարիներն...»:

«ՏՈՎՆ ԷՐ, ԳԻՃԵՐՆ ԷՐ, ԵՍ ԷԻ ՈՒ ԴՈՒ
ՉՈՐՍ ՆՈՂՈՎ ԷԻՆՔ, ԷԼ ՈՉ ՈՔ ՉԿԱՐ...»:

Ծով՝ անհորիզոն, երկնածույլ, ցերեկով՝ փիրուզյա կամ գնրուխտաշող, իսկ իրիկնամուտից՝ լուսնածածան: Հրածին ավազից դեռ վետվետող բարկա ր եւ ա բ ու յ ր :
Գորշ եւ սեւորակ ջրի ու լիպուսնի շողարձակ գ ր կ ա խ ա ռ -

նություններ: Գաղջ ալիքների ծովածայն ու տարուբեր մատների թաց ու ջերմ շոյանք՝ ծնկահար բարձրությամբ: Ափին քարացած-արձանացած, լողալ չիմացող, արեայրուքով շաղախված սիրահար աղջիկ: Ալիքների մթնշաղոտ-գիշերացող սարեր-պատվարներ ճեղքող քաջածին, կոփված ու մկանուտ, սիրատենչ տղա: Ծովային թեժաթուխ հալումներ, սիրո անմեկնելի ու սրտառու խլրտում, սիրագեղ պապակ-փափագ, սիրահեղ ողջակիզում: Երկու հոգիների՝ առնածին տղայի ու քնքուշ աղջկա ամէ ու վերացած թեածուններ փափամերձ սյուքապար ալիքների վրայով դեպի ծիրանագույն լուսինը՝ սիրո կնունքի վկան ու հովանավորը: Սիրո տիրակալություն, հոգեկերտվածքների դաշնությունների միախյուսում, աստղերից կախված վերածնության օրորներ: Անխոս ու համր տիեզերական խոկուններ, ինքնամոռաց համբույրներ: Ծովի մտնտություն շնկշնկան ու զնգզնգան սիրային պերճաշուք լեզունների ճիխացում եւս մեկով:

Արշալույսի երկունքոտ կարմիր արեւի ծագման առկա ու անհետ մոռացում: Առավոտն ինքն ինքն՝ էր գալիս ...

Ծովը գվարթ ու կուտակ-կուտակ լուսնաթաթախ ալեբախումներով եւ ծովային օրենքներով օրհներգում, փառաբանում էր հանճարեղ սերն իմաստալից մարդերգությանը ու ծովերգության հնչուն ծննդաների ծափածափումներով՝ փոխադարձ նվիրվածություն, սիրագործ ու բախտավոր կյանք, վառ զգացմունքների կաղնիացում ու անվախճանություն բարեմաղթելով սիրաթաթավ հոգիներին:

Սերը գոյության խորհուրդն ու հանճարն է միակ, անմահության վերանորոգման երաշխիքը:

Համո Սահյանի պոեզիան, անշուշտ, վիպական հարստություն, բարուն հավատալու եւ բարի մնալու ներշնչանք ունի, մղում է քո կյանքի անցուղարձը պատճառաբանելու, ինքը քո առաջ հաշվետու լինելու, ինքը քեզ չդավաճանելու, հավիտյան նորոգ կենսակամության քո հավատամքն ունենալու:

Պոետի քնարերգությունն ուղղորդում է մաքրագերծման, ոգու քնքազեղության, մայրենի լավագույնս տիրապետման: Սահյանական կենսահայեցողության բացահայտում-հարաբերակցումը շնորհապարտության մտորումներ է արթնացնում հատրնտիր բանաստեղծությունների համար, համակեցության բարորությունն մշակում:



Համո Սահյանի հուշարձանի մանրակերպը, պահվում է Լորի միջնակարգ դպրոցում (հեղինակ՝ քանդակագործ Գեորգի Բաղդասարյան)

Երբ Սահյան եմ կարդում...



ՆՍԻ ՍԱՐՅԱՆ

Կապանի N 2 ավագ դպրոցի 12-րդ
դասարանի աշակերտուհի

Ես բանաստեղծ եմ, իմն եմ հավիտյան
Ամական թեթևած այս կաթն-ծիրը,
Սարից սար փանող այս բարակ
ճամփան:

Այս փոքրիկ փունն ու այս մեծ երկիրը:
Կարդում եմ Սահյան ու զարմանում, կարդում եմ ու հիանում: Կածանն ինձ Լոր էր տանում, ուր երկինքն այնքան մոտ է երկրին, ուր աստղերն այնպես փայլուն են, ուր քարափներն ու ժայռերը քեզ հետ են գրուցում, ուր... Ահա այստեղ՝ այս հեռավոր գյուղում, դու ծնունդ տվեցիր քո առաջին երգին, որ հյուսված էր մանկության օրերից, կապույտ կարոտից, անվերադարձ հանդիպումներից: Այստեղից սկսվեց քո հավերժի ճամփան, որ հավերժորեն մնաց քարափների շուրթերին ու մասրենիների ծաղկաթերթերին:

Քեզ զգայու, ճանաչելու համար պետք է լինել Լորում, որպեսզի հասկանալի դառնա քարափների գաղտնիքը: Գուցե պետք էլ չէ հասկանալ այդ գաղտնիքը, գուցե հրաշքը չբացահայտված գաղտնիքի մեջ է: Չգիտեմ: Չգիտեմ նաեւ, թե այդ ինչպես, երբ թաթախեցիր երգերդ հայրենի հողով ու բույրով, ինչպես եւ երբ թարգմանեցիր լեռնաշխարհիդ հրաշքների լեզուն: Այդ ինչպես գյուղական պարզ ու գունազեղ հնչյուններդ կառնեցիր բաղաձայն աղմուկին ու ծխին, երբ հայրենի եզերքում «խառույկն իր խաղաղ ծուխն էր ծածանում»: Այդ երբ նորից ետ եկար: Եկար, որ բացահայտես արտաքին աշխարհի թաքուն հմայքները: Այդ հմայքների մեջ ապրող ու շնչող քարափներ կան իսպախապի տեսքով, առուների շուրթերին՝ երգ ու տաղիկ, մասրենիների վարսերը շոյող քամիներ՝ անսամձ ու բազմափորձ: Այդ հմայքների մեջ աշխարհի ամենամեծ հմայքը կա՝ մարդը՝ Աստծո տեսքով:

Կարդում եմ, եւ հոգուս խորքում ծավալ ամպեր են դիզվում, քարափներից գահավիժող ջրվեժների երգ է հյուսվում, Գյազբելն է հառնում աչքերիս առաջ, եւ անպատասխան մի հարց քրքրում է ինձ.

- Այդ ինչպե՞ս եւ ե՞րբ լերկ քարերն ու ժայռերը սկսեցին քայլել, շնչել, խոսել, այդ ինչպե՞ս կարողացար դառնալ նրանց կնքահայրը:

Չեմ ուզում լսել պատասխանը, որովհետեւ... որովհետեւ երբ Սահյան եմ կարդում, սիրտս դողում է, շունչս կտրվում է, եւ լռությունը, հայրենի լեռների լռությունն իմ տիրակալն է դառնում, եւ շուրթերս աղոթք են ընմնջում, որն Աղոթարան սարի հագարեանգ ծաղիկների բույրով ու քարափների լռությամբ է շաղախված:

Խոյրեքում գունձ ունեն բարափները,
Թիկունքներին ունեն սևաբառ ու հերկ...
Միայն մի բան չունեն բարափները,
- Բարափները չունեն կարապի կեր:

Ուրեմն քարափները չեն մեռնում, ուրեմն քարափները հավերժ են: Հավերժ է եւ նրանց հավերժացող բանաստեղծը՝ Համո Սահյան անունով:

ՈՒՇԱՑԱՍ ՇԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ու ապրելու ես դու, ինչ էլ պատահի



ԵԿԵԼԻՆ ԹԱՐԵՎՈՍԱՆ

Սիսիանի N2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

1914թ. ապրիլին երեք տարեկան, հոգեզնայլ, անզուգական, գարնանաբույր ու... սիրահատ: Է՛լ երբ էր այսպես գարունոտ, ջրհաղաղ, անձամաշ եղել երկնամերձ սարերի մեջ ծվարած գողտրիկ գյուղը՝ Լորը, գյուղ, ուր սարեր են ծալ-ծալ, ձորեր են խորունկ, ուր աշունը ձորն է մտնում ձորերի միջով, ուր կապույտ հողմերը կապույտ զայրույթով բախվում են իրար, կապույտ սուլոցով սաստում են սարսուռները, ուր ծյունագետ բարձունքից արելի հոտ է գալիս, արվիին մշտապես համբույր է հղում կապույտ վերնուշերի ջրհաղ «պատահիկին», ուր... Այնտեղ՝ Լորում, ամեն ինչ հրաշք է իրական, ամեն ինչ կատարյալ է: Այո՛, անապական, անաղարտ է եղել Լորը մաքուր այն հեռավոր 1914-ի ապրիլին: Երեւի նորին գերագնացություն ժամանակը զգացել է, որ ապրիլյան այդ օրն առանձնահատուկ է լինելու, որ Ապրիլին քնարն անտես իջնելու է եւ օրհնելու աշխարհ եկած փոքրիկին՝ Համայն Գրիգորյանին:

Հետո երկրագունդը 100 անգամ պտտվեց՝ մեզ պարզեցնելով պայծառ ու գեղեցիկ, խաղաղ ու անշար, անտրտուն, լուսավոր օրերի շքերթ, իսկ օրերի մեջ այդ՝ 100-ամյա պատմությունը քանքարավոր մի մարդու՝ Համո Սահյանի մասին: Չգիտեմ՝ որքանով է իրատեսական, որքանով է ընդունելի ու ընկալելի այն, ինչ կներկայացնեմ, բայց միտք հղացավ անցկացնել հարցազրույց քարափների դեսպանի՝ Համո Սահյանի հետ՝ ծննդյան 100-ամյակի շնորհիվ:

Է.Թ.՝ Թաղեկայան - Ձեր մանկությունը, որն այսօր ունի առաքելություն՝ պահ տալ սերունդներին Ձեր անմեռ պոեզիան՝ երկրորդածորներ, ակնածանքով, նվիրումով...

Հարցազրույցի սկզբում ուզում եմ Ձեզ փոխանցել ողջույններ բազմազան գրքերի ընթերցողների անունից եւս: Համո Սահյան - Ողջուն, ողջուն, իմ հարգարժան ընթերցողներ: Անչափ զգացված եմ, ուրախ պատեի առիթի համար:

Է.Թ.՝ Սիրելի պոետ, ո՞րն է Սահյան-մարդու դերն այս կյանքում: Եթե ներկայացնեմ ինձ ինքնեդ Ձեզ, ապա ո՞վ է նա:

Հ.Ս. - Սովորական մահկանացու եմ, ով աշխարհ եկավ, քանզի արդեն չգալ էր կարող, ինչ էլ լիներ, պիտի գար: Ասում են՝ մեծ իրարացում է եղել խաչի պատեցման մեծ օղայուն: Հետո մեծ աջքալույս են տվել հորս՝ Սահակին, ով երեւի մտածել է՝ արտ ու կալում ցավի ընկեր եմ լինելու, տատս մի բուռ է դարձել ու փոքր-ինչ դժգոհել է մի ուտող բերան ես ավելանալու համար:

Փառքը շա՛տ, Աստված, շատ չհամարես, - աղոթել է պապս... Եվ այսպես, ես աշխարհ եկա վերքերը շատ աշխարհի մեջ, բայց... նոր երգ ասելու հաստատ որոշմամբ: Մարդ եմ սովորական, մարդկային աշխարհի բազմատեսակ ու բազմազան ապրումներ, խոր հույզեր, երջանիկ կյանքի հետ կապված հույսեր փայփայող մեկը, ով իր հոգու տագնապը, սրտի խռովքն արտահայտում է բանաստեղծորեն:

Է.Թ.՝ Անուրանալի ճշմարտություն է՝ Սահյանն անուղղելի բնապաշտ է: Մի ողջ աշխարհ, մի ողջ բնաշխարհ ու... մի Լոր:

Հ.Ս. - Անասելի շատ եմ սիրել երազներիս օրրանը՝ Լորը: Վաղ հասակից ինձ անչափ գերել է Լորի ջրհաղ բնությունը: Մարդը բնության զավակն է, ուստի պետք է վայելի բնության բարիքներն ու գեղեցկությունը: Ամենածանր պահին մարդը փարվում է բնությանը, նրանից օգնություն ու օրհնություն է աղերսում: Միշտ եւ մշտապես անդավաճան է մնում միայն բնությունը:

Ես հարուստ եմ, անչափ հարուստ... իմ ձորերով, արծիվ բռնող իմ Լորով, Լորի թեւերով, Լորի տերերով, Լորի խորհրդով ու հավատով Լորի:

Հ ա պ ր Ի տ ո լ - թյունս, ներշնչանքիս հերոսապետ աղբյուրն է հարազատ ուտանս՝ Լորը՝ թառած երկնամուխ լեռնապարի լանջին:

Ի ն չ պ ե ս չ խ ո ն ար հ վե ս քեզ ծնող սուրբ բ ո լ թ յ ա նը, չինայվես Տատնա ձորի խաղաղությամբ, որն այնքան վարակիչ է, այնքան դուրեկան, ինչպես չզերվես երկնամերձ սարերի քնքշությամբ, վեհ հպարտությամբ: Կուսական անարատ ու անաղարտ բնություն, ուր ամեն քերթից մաքրություն է ծորում, ուր արեւոտ դաշտեր ու արտեր են, որոնց վրա դրոշմված են ծիածանների ծվեները տաք: Ինչպես չներշնչվես ամառներ շնչող Աղոթարանով ու Գյազբելով, Ձորգորաջրով, Կապուտջուղով ու Որոտնավանքով...

Մեծ, անչափ մեծ է բնության համերգը, դյուբական, որի մասնակիցը պետք է լինել շատ հաճախ: Քանի՞-քանի՞ անգամ եմ իջել Տատնա ձոր, լցվել տիեզերքի անհունով, հմայվել «երկնամոր», երկնակարկառ, երկնամուխ, սրագագաթ լեռներով, լեռներից իջել ձոր ու Ձորգորաջրի ափին արբել դաղձի բույրով, հետո, տարիներ անց երկնել հերթական «զավակիս»՝ «Դաղձի ծաղիկը»:

Շատ եմ պարծեցել, հպարտացել հայրենիքով ու իրաշք հավիտենությունից փորձել լսել «մամուռի» արցունք, հավերթի երան, ծանր ու մեծ ժայռերի տնքոցը, հմայվել, զմայվել դարահասակ մասունքներով:

Է.Թ.՝ Ի՞նչ կարող է գտնել ընթերցողը Ձեր պոեզիայում, որ չկա առօրյայում, չկա կյանքում:

Հ.Ս. - Անշուշտ, ընթերցողը կարող է վստահել ինձ, քանզի իմ պոեզիայում կգտնի իր փնտրածը՝ խոհերն ու անուրջները, չիրականացած երազները,

կորցրած սերը, մոլորությունները, հույսն ու հավատը, կյանքի դառնությունն ու քաղցրությունը...

Է.Թ.՝ Ես ամբողջովին կհսում եմ Ձեր կարծիքը, սիրելի՛ պոետ, հավաստիացնում եմ, որ մեկն եմ այն բազմաթիվ երկրպագու-ընթերցողներից, ովքեր աներկբա «սնվում» են Ձեր պոեզիայի ակունքներից, սիրում յուրաքանչյուր բառ ու բան, հպարտանում Ձեր հայրենակիցը լինելու պատվի համար: Հավատացեք, որ երբ անհրաժեշտություն եմ ունենում՝ մոռանալու ժամ ու ժամանակ, երբ փորձում եմ քայլել՝ հիշելով մանկությանս ու պատանեկությանս «ապուպապոտ» կածանները, դիմում եմ ձեր պոեզիային: Երբ հարկ է խոսել լավի, գեղեցիկի, բարու, երկնածին անուրջների, վառ երազների մասին, կրկին բախում եմ ձեր պոեզիայի դուռը:

Այդուհանդերձ, որոնք են Սահյան-մարդու, Սահյան-բանաստեղծի ներշնչանքի աղբյուրները:

Հ.Ս. - Քառատրոսի թռչող կյանքում կան մնայուն արժեքներ, որոնք երբեք չեն խուճանում ժամանակավոր անմահության մեջ:

Ամեն անգամ, երբ հայրենի տուն՝ Լոր եմ վերադարձել, լցվել, հմայվել, հիացել եմ արթնացող հավերթի կանչից, կյանքս նորոգվել է նորեմ՝ հավվող քարերի ծայրից, դաղձի ծաղիկ բույրից ու լցվելով նորից ու նորից երկնաթափախ լեռներով՝ մաքրվել, դարձել եմ «հավիտենության միջուկը»:

Աստղաթափախ Գյազբելի աստղահամ օտո շնեւո. հմ հոռ ու օռի աշխատիմ | ԸՍԵ



Համո Սահյանի դիմաքանդակը (հեղինակ՝ Սուրեն Նազարյան): Բանաստեղծի նորաստեղծ փունջաբանությանն է նվիրել Կիմ Հովհաննիսյանի ընթերցողը:


Ըր հոգիս փառավորում է, ու ես դառնում եմ ավելի վստահ, առավել համարձակ՝ կրկին ու կրկին երկնելու, հոգուս ջերմությունը մարդկանց անմեծացող փոխանցելու հաստատականությամբ:

Աշխարհը հետաքրքիր է ու շատ բազմազան: Նրա մեջ պետք է տեսնել, ճանաչել, բացահայտել ինքը քեզ: Բարի հայացքով պետք է մայել աշխարհին, համոզված եմ՝ կյանքը կհարստանա դրանից:

Է.Թ.՝ Վարպետ, դժվա՞ր էր արդյոք վեր կենալ, գնալ ու... ապրել հեռու հարազատ ոստանից:

Հ.Ս. - Ամեն անգամ հայրենիք գալիս մարդահոտ էի առնում, մարդահոտ, որ հաճախ կորչում է քաղաքների լաբիրինթոսում, քառսների մեջ:

Մարդահոտ, մարդահոտ, մարդահոտ Լորը վկա: Ամեն անգամ նվիրական երազներիս աշխարհը գալիս ընթրշնում եմ երազ-երազանքներիս ծվեները տաք, իրաշք հավիտենությունից լսում ծանր ու ՇԱՐՑԱՅԻՆՆԵՐԸ՝ ԷՑ 86



Տրիվերներ

Տասկը չի բնում, անբուն է հասկը, Պաշտում եմ հասկի ուռած աչքերը: Մարգարեներ են բոլոր հասկերը, Տասկը չի բնում, անբուն է հասկը: Օրհնաբանում են հասկի հրաշքը, Բոլոր ազգերի բոլոր սաքերը: Տասկը չի բնում, անբուն է հասկը: Պաշտում եմ հասկի ուռած աչքերը:

Երկրպագում եմ սրվերը հասկի: Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը Տասկի սրվերում ննջած մրջյունը: Երկրպագում եմ սրվերը հասկի: Տասկի սրվերը բախար է հավասարի, Եվ բախարի կանչը արտի շրշունը... Երկրպագում եմ սրվերը հասկի: Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը Տասկի սրվերում ննջած մրջյունը:

Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու, Յավերն ինձանից դեռ հեռու էին... Ծառերը շուրջով ծաղկելու էին, Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու: Արագիլները տուն էին գալու, Ձմեռն մեղքերը ներվելու էին... Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու, Յավերն ինձանից դեռ հեռու էին:

Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում Կրեթի շուրջով երգն իր կարասիի, Բան չի փոխելու, ինչքան տատալի Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում... Բոլոր ցավերս իրար է խառնում Դեղին պարարազն աշնանաթափի, Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում Կրեթի շուրջով երգն իր կարասիի:


Տոգուղ կրակը թե՛ սիրի պահեստ, Եղանակները վաղ են ցրվելու, Փշաքաղվել է թուփը ցրվելու, Տոգուղ կրակը թե՛ սիրի պահեստ: Թե՛ որ պահեցիր, ամենաստեղ Մատնանակիքն է թե՛ քեզից խորհելու... Տոգուղ կրակը թե՛ սիրի պահեստ, Եղանակները վաղ են ցրվելու:

Մի օրավար կրակը անցավ Անձրեի տակ ու կայծակի: Այնպես արագ, հանկարծակի Մի օրավար կրակը անցավ... Թվում է թե՛ չվերջացավ, Թվում է նոր սիրի ծաղիկ... Մի օրավար կրակը անցավ Անձրեի տակ ու կայծակի

Ես ծնվել եմ երգի համար Ու միևնույն մահ սիրի երգեմ, Երգով կորդեր սիրի հերկեմ, Ես ծնվել եմ երգի համար: Անեն տարիք, ամեն տարիս, Անեն սահման սիրի հերքեմ, Ես ծնվել եմ երգի համար Ու միևնույն մահ սիրի երգեմ:

Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը

Բանաստեղծություններ Համո Սահյանին



ՎԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Տագնապ

Տաց է եղել ու գինի ու լուսնըս է եղել,
Ու թափածն է կաթկթե, որ մաքուր էր
որպես ցող,
Մենք նստել ենք իրար դեմ ու թափածով
այդ ցողել
Ես՝ իմ աշխարհը կորած, դու՝
քո աշխարհը կորցող:

Ինչ տխուր է լեռներում չվող կանչը կրունկի,
Եվ սիգախոտը այրված ինչ
թանկագին է բուրում,
Թափասական մի կարտր այնպեղ
իջնում է ծունկի,
Նկկկացող աղբյուրի
մանկությունը համբուրում:

Վանք է եղել ավերակ, չորացած
հուն ու ակունք,
Ու եղինջները կարծես բոբիկ
նորբերդ են վառել,
Դու լռել ես քարի պես, բայց ես
նայել եմ թաքուն
Ու աքերիդ շատած արցունքները նշմարել:

Ո՛ր են քանում, չգիրեն, արասեպներն
այս քարոք,
Բարդիներն այս արծաթե ո՛ր են
այսպես հեռանում...
Այնպեղ շրջում է անվերջ թափասական
մի կարտր,
Ծխանի հոտ, հացի հոտ, ուրցի հոտ է որոնում:

...Ես չգիրեն, մեզանից ո՛վ պիտի
շուր հեռանա
Դեպի եզերքն անհայտի, ուր
բառասպանքն է լուռ,
Բայց մեզանից մեկը, գիրեն, պիտի
կրկին որբանա,
Ես՝ աշխարհում իմ կորած, դու՝
քո կորցող աշխարհում:



ՀԱՄՈ ՍԱԿՅԱՆ
ԹԻՒԼԻՍԻ

Համո Սահյանին

Դու չէիր գնում... Դու ո՛նց գնացիր...
Բայց գնացիր ու հավերժ մնացիր, -
Աստված պարզեց, Աստված էլ արարավ,
Նրա ծարավ եմ, քո ձայնին ծարավ:

Նրա մրտում եմ, անուժ է արհիկ,
Կածանն է դրել պոչը քարափին,
Ել ծիածանի երգ ու շող չկա,
Ել հոգու խորքից երգ ասող չկա:

Անպը սահում է ու բարդին շրջում,
Կածանն արցունք է խնում մշուշում,
Ել ո՛վ պիտի, ո՛վ դողով իր սրտի
Ջերմություն սփռի իրիկնամուրին:

Որտանն, ասես, որբացած, տխուր,
Ինքն էլ չգիրի՝ ո՛ր է գնում, ո՛ր,
Վշտից ձորերում վաշ ու վուշ գցած
Իրեն նկարում է քարափներից ցած...

Իրիկնածում է, ու ցուրտ է այնպես...
Ի՛նչ կրակ վառելն քեզանից հեքու ես...
Օ՛, Համո Սահյան, անուղի քայլիս,
Ե՛վ մեղմ ժպտում եմ, ե՛ն թափումս լալիս:



ՀՈՎԻ ԶՈՎԵՅԱՆ

Համո Սահյանն՝ Արթուրյան փողոցում

Անցավ գնաց սուս ու փուս,
Իր մեջ՝ լեռ ու լեռնաշխարհ,
Թիկունքին՝ դար, դարի լույս,
Մորում՝ չասված հազար բառ:

Անցավ անրես, անհպարտ,
Անաչելով մանկորեն,
Ո՛նք էր անրիպ երգեր պարտք,
Ինչո՞ւ էր լուռ ու խոհեմ:

Լուռ էր, լեռ էր քաղաքում,
Լեռան մեջ՝ բոց ու կրակ,
Կրակը՝ մեզ, մեր հոգուն,
Մոխիրն՝ իր ծով սրտի փակ:

Մրցույթի արդյունքները

ՌԻՇԱՅԱԾ ՆԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ու ապրելու ես դու,
ինչ էլ պապահի

ՍԿԻՉԲԸ՝ ԷՑ 85

մեծ ժայռերի տնքոցն ու ինձ մնում է զմայլ-
վել, հմայվել զարմանահրաշ այս աշխար-
հով ու կրկին բարձրաձայնել՝ Ախր ես ինչ-
պե՞ս վեր կենամ գնամ...

Է.Թ. - Այսբան գունեղ, այսբան խո-
նարիումով, այսբան ակնածանքով խո-
սել Լորի մասին ու չխոսել՝ մանկության,
պատանեկության մասին...

Հ.Ս. - Այո՛, անիմանալի են ճակատագրի՝
քեզ բաժին հասած, քեզ համար պահված
ճանփաները...

Եվ երբ մի պահ լռել է աղմուկը կա-
նաչ-կարմիր աշխարհում՝ Լորում, ծորա-
ցել է մանկությանս, պատանեկությանս
ոսկերիզ ու ոսկեթել երգը՝ դառնալով
հրաշք հեքիաթ, սկիզբը չասված հեքիա-
թի: Անտես, հեքիաթային թվացող այդ
արահետները տարան ինձ հեռո՛ւ-հեռո՛ւ-
ներ, որ հետո հետ գայի ու նվիրական կա-
րոտի խորհրդանիշ Լորիս համբավ բերելի,
կանաչ-կարմիր աշխարհը մեկեն հայտնի
դարձնելի, խոնարիվելի ու համբուրելի այդ
սրբասուրբ հողը:

Է.Թ. - Սիրելի՛ Վարպետ, եթե հան-
կարծ «հրաշք լինել, կրկնվել այն
հրաշքն իրական...»:

Հ.Ս. - Ա՛յո, այդ սերը, ա՛յն այդ սերը՝
Առաջին սերս ծնծաղկի պես ժպտաց ծնի-
լի միջից ես..., երկրորդը՝ խոնարի մանու-
շակ, թաքուն ծիծաղեց ու... մենակ թողեց:
Երրորդը վարդ էր բոսորաթերք, ինձ գերեց,
խաղաց սրտիս հետ, փշերն ինձ տվեց,
բուրմունքն՝ ուրիշին: Մի խոսքով՝ ես այն
եմ եղել, ինչ որ եղել եմ՝ հողեղեն, հողոտ,
հողածին...

Է.Թ. - Սիրելի՛ բանաստեղծ, իհարկե,

Ռոբերտ Կամոյան,
«Համո Սահյանի դիմանկարը»,
կրավ, յուղաներկ, 85x83: 2011թ.:
Պատվիրարու՝ «Սյունյաց երկիր»
թերթի խմբագրություն:



շատ կցանկանայի՝ ստանալ շատ ու
շատ հարցերի պատասխաններ ես,
բայց որոշեցի բավարարվել այսբանով,
իսկ որպես հետգրություն՝ եթե հնարա-
վոր լինել, մեկ անգամ էլ կրկնեիք ինք-
ներդ ձեզ, արժե՞ր արդյոք՝ աշխարհ գա
յիք...

Հ.Ս. - Կյանքը, մեր ապրած կյան-
քը վայրկյան է դարերի երթում: Երկտ
ապրենք, պատվով ապրենք մեկ անգամ
տրվող կյանքը... Արժե՞ աշխարհ գալ, կա-
տարել առաքելությունը ու...

Է.Թ. - Այո, Վարպետ, խոստովանու-
թյան բառերը երբեք ուշացած չեն եւ չեն
կորցրել թարմությունը:

Ափսո՛ս, հազար ափսոս, որ հետ չեն
գալու ձեր անցած օրերը կրկին: Իսկ որ-
պես վերջաբան՝ ի՞նչ կմաղթեք ձեր պոե-
զիայի երկրպագուներին:

Հ.Ս. - Ցանկություններս արտա-
հայտված են իմ ստեղծագործություննե-
րում: Չեզ բոլորիդ անվերջ ծաղկաշատ
գարուններ եմ մաղթում անգամ ծննան
պաղ համբույրի մեջ...

Է.Թ. - Ես ավելի քան համոզված
եմ, որ ձեր հոգին ծնվել է երգելու հա-
մար, ես ավելի քան վստահ եմ, որ ձեր
պոեզիան անմեռ է եւ չի ունենալու
«կարապի երգ»: Կան մարդիկ, ովքեր
գալիքից ո՛չ պարտք ունեն, ո՛չ հուշար-
ձանի ակնկալիք, ո՛չ հետմահու փառք,
որովհետեւ նրանք իրենց բանաստեղ-
ծական համբարով են կառուցում հան-
ձարի հուշարձանն անձեռակերտ: Ամեն
անգամ, երբ Լորում բացվի օրը խորա-
խորհուրդ, երբ մասունքների մի ողջ
համաստեղություն՝ ջրվեժի ծիծաղ, մա-
մուռի արցունք, ծանր ու մերկ ժայռեր,

«քարափի թունդից» կախված
մասրենին վերածվեն հեքիաթի,
անշուշտ կպատմեն Սահյան-
բանաստեղծի, Սահյան-անհա-
տի հավերժող կյանքի պատմու-
թյունը, կպատմեն ու կհավելեն՝
ապրելու է նա, ինչ էլ պատահի:

Երբ ամեն անգամ ծաղ-
կեն դաշտերը, երբ գարունն իր
խոսքն ասի նորից, երբ ժամա-
նակի ալիքները բախվեն մի-
մյանց, երբ սիրո խորհուրդը
ծաղկի բարության, բարու հո-
վիտ այս աշխարհում, ուրեմն՝
կա՛, ապրում է Համո Սահյանը:

Մնում է միայն խոնարիվել
հանձարածին այս հողի՝ Լորի առ
ջեւ՝ Սահյանի պես հանձար երկ-
նելու համար, բանաստեղծ, ով
«կանաչ-կարմիր աշուններով»
զարդարեց մեր պոեզիայի երկ-
նակամարը, «Քարափների եր
գը» դարձրեց նորոգ կյանքի
հավերժ պատմություն, հավերժ
հիշողություն, «Մայրամուտից
առաջ», «Իրիկնահացի» տաք
ու զգլխիչ բույրերը լցրեց մեր
ակունքներն այն հաստատ հա-
մոզմամբ, որ կհավերժի, կծաղ-
կի «Հայաստանը՝ երգերի մեջ»
Համո Սահյանի:

Ամեն Աստծո օր, երբ լցվենք
Համո Սահյանի բանաստեղ-
ծական աշխարհի անհունով,
կիիշենք, կփառաբանենք հան-
ձարածին հողն այս, որը դեռ
կերկնի հանձարներ, ու սիրով,
հպարտությամբ կբարձրաձայ-
նենք՝ երանի՛ այն ժողովրդին,
որն ունի այսպիսի քանքարա-
վոր բանաստեղծ:

Շնորհավոր՝ ծնունդդ, Վար-
պետ, շնորհավոր՝ 100-ամյակդ,
բառ ու բանի հանձար, քարափ-
ների դեսպան Համո Սահյան:



Մարենագիտություն

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| ԳԴ | Անվանումը | Թվակ. | Էջ. քան. | Տպաքա- նակը |
|-----|--------------------------|-------|----------|-------------|
| 1. | Որոտանի եզերքին | 1946 | 63 | 3000 |
| 2. | Առագաստ | 1947 | 95 | 3000 |
| 3. | Սլացքի մեջ | 1950 | 91 | 3000 |
| 4. | Ծիածանը տափաստանում | 1953 | 140 | 3000 |
| 5. | Բարձունքի վրա | 1955 | 219 | 5000 |
| 6. | Նաիրյան դալար բարդի | 1958 | 320 | 5000 |
| 7. | Հայաստանը երգերի մեջ | 1962 | 459 | 5000 |
| 8. | Մայրամուտից առաջ | 1964 | 216 | 7000 |
| 9. | Բանաստեղծություններ հ. Ա | 1967 | 428 | 10000 |
| 10. | Քարավանների երգը | 1968 | 183 | 15000 |
| 11. | Բանաստեղծություններ հ. Բ | 1969 | 256 | 10000 |
| 12. | Տարիներս | 1970 | 410 | 5000 |
| 13. | Սեզամ բացվիր | 1972 | 280 | 20000 |
| 14. | Կանչե, կռունկ | 1973 | 440 | 15000 |
| 15. | Երկերի ժողովածու հ. 1 | 1975 | 496 | 10000 |
| 16. | Երկերի ժողովածու հ. 2 | 1976 | 508 | 10000 |
| 17. | Իրիկնահաց | 1977 | 308 | 15000 |

| | | | | |
|-----|--------------------------|------|-----|-------|
| 18. | Շի՛ն, ձո՛ւն, ձո՛ւն | 1977 | 182 | 10000 |
| 19. | Ժայռից մասուր է կաթում | 1979 | 172 | 10000 |
| 20. | Կանաչ-կարմիր աշուն | 1980 | 236 | 20000 |
| 21. | Տոհմի կանչը | 1981 | 384 | 20000 |
| 22. | Երկեր հ. 1 | 1984 | 392 | 30000 |
| 23. | Երկեր հ. 2 | 1984 | 440 | 30000 |
| 24. | Դաղձի ծաղիկ | 1986 | 214 | 15000 |
| 25. | Էժժեժ | 1989 | 248 | 25000 |
| 26. | Աստվածս՝ ցորենին ասեմ | 1998 | 60 | 1000 |
| 27. | Ինձ բացակա չղներ | 1998 | 171 | 1000 |
| 28. | Հատընտիր | 2001 | 212 | 1000 |
| 29. | Ինձ բացակա չղներ | 2003 | 178 | 1000 |
| 30. | 60 ու 1 հայրենի | 2003 | 132 | 500 |
| 31. | Արցունքով լվացված սերեր | 2004 | 150 | 1000 |
| 32. | Քարե պատարագ, հատընտիր | 2009 | 659 | 500 |
| 33. | Երկեր չորս հատորով, հ. Ա | 2011 | 407 | 500 |
| 34. | Համո Սահյան. ընտրանի | 2012 | 272 | 300 |



Լրագրողական գործունեությունը

1937թ. Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվաբանական ֆակուլտետի հայկական բաժինն ավարտելուց հետո կարճ ժամանակ աշխատել է «Գրական Արբեշտան» հանդեսում:

- Այնուհետև վերադարձել է Սիսիան եւ աշխատել «Սիսիանի հարվածային» թերթի պատասխանատու քարտուղար (1938-39թթ.): Այդ թերթում եռամսյակը մեկ տպագրվել են «Գրական էջ»-եր:
- Բաքվի «Խորհրդային գրող» հանդես (1939 թվականից):
- Բաքվի «Կոմունիստ» հայկական թերթ (1945 թվականից):
- 1950թ. աշխատանքի է անցել

- «Ավանգարդ» թերթում՝ գրականության եւ արվեստի բաժնի վարիչ:
- 1954թ. հիմնադրվեց «Ողմի» երգիծական ամսագիրը (առաջին խմբագիրը Հրաչյա Քոչարն էր): Համո Սահյանը նշանակվեց ամսագրի բաժնի վարիչ, աշխատեց մոտ տասը տարի:
- 1965-67թթ. աշխատել է «Գրական» թերթի խմբագիր:

ՔԱՆՅԱԿՆԵՐ

Այս, լցվելուց, դարարկվելուց մաշվեցի,
Ինքս իմ յուրով քրտալկվելուց մաշվեցի:
Մեկ-հինավուրց իջեաւնի դռան պես
Շարք բացվելուց ու փակվելուց մաշվեցի:

ԹԺՆ

Արթնանային, արթնանային լավերս,
Տասկանային, հասկանային ցավերս,
Տեսնեմն, թե ի՞նչ են աւուում ու քայլս
Աշնանային, աշնանային ծառերս:

ԹԺՆ

Աղբյուրները մանկությունս կրկնում,
Քարերն ի վար ձայն են քայլս ու գնում:
Այրանում են գետերի մեջ կարտդի
Եվ մրնում են ծովն պետր ու աղի:

ԹԺՆ

Տոգոս մեջ սեւեր են ծախարվում,
Մեռել կա հոգոս մեջ, թաղում է..
Իսկ օրը զարնան մեջ թախարվում
Եվ ինքն իր պոչի հետ խաղում է:

ԹԺՆ

Ինձ մարել մի փորձեք անրեղի,
Մի խառնեք մոխիրն իմ անթեղի,
Առանց ինձ կրակն ի՞նչ է անելու,
Ես խղճի շշուկն եմ իմ գեղի:

ԹԺՆ

Փորձը քեզ մարտար մի ձեռք է դարձնում
Եվ սիրտդ՝ կարած-կարկարած մի վերք:
Փորձի մեջ երգի սերունդ չի ծուռ..
Անփորձությունը և փորձությունն են,
որ դառնում են երգ:

ԹԺՆ

Խելքս քո խրատից չկշտացավ,
Տված ու խլածից չկշտացավ,
Այս, կրակված սիրտս, անսիրտ աշխարհ,
Անսիրտ քո կրակից չկշտացավ:

ԹԺՆ

Աչքս անրատից չկշտացավ,
Ականջս բառից չկշտացավ,
Այս, հոգնած ուրբս՝ դար ու քարտր
Այս մանապարհից չկշտացավ:

ԹԺՆ

Կոտկները պարան-պարան
Աչքերի մեջ առան-պարան
Իմ Շաքիի Նիսգարան,
Մարտաց սարն Աղոթարան:

ԹԺՆ

- Ի՞նչ դարպասներ են ձնկում կորից,
Ի՞նչ կծույզներ են վրնջում կորից..
- Չորգորս գետն է, գիշերն ինձ հուշեց,
- Թո կարտրներն են մնջում կորից:

ԹԺՆ

Մրսած մի փոթ կա օդում,
Լուռ մի որտր կա օդում,
Անպր շրթունք է արեթ,
Անպրտպի հոտ կա օդում:

ԹԺՆ

Տարևս զարթնած հովիտում էլի
Դաղձ եմ քաղում ես իմ ձեռքով..
Տիեզերքն է ինձանով լի,
Թե՛ ես եմ լի փեղեղերով:

ԹԺՆ

Ամեն րեքնե մի աշխարհ է աշխարհում,
Քանի՛ աշխարհ քարավ աշունն
աշխարհից..
Ո՛վ շահեց, ո՛վ քանուկ քրվեց այս խաղում,
Եվ ո՛վ կա, որ գրուի հանի այս խաղից:

ԹԺՆ

Ի՞նչ են անում իմ քարափներն
ստանց ինձ,
Քարափներին ևսրած անպերն
ստանց ինձ..
Ով իմանա՛ դեռ ինքնան են մնալու
Այն աշխարհում իմ սուրբ պապերն
ստանց ինձ:

«Սյունյաց երկիրը» ամեն տարի՝ ծննդյան օրը ոգեկոչում է բանաստեղծի հիշատակը

2013թ. անդրադարձը՝ ստորել

Հայ բանաստեղծի օրհներգ տեսակը

Նախքան մեծարունի խոսք ասելը եւ նրա հայրենի քաղաքի հրապարակում ժայռեղեն վեր խոյացող հուշարձան-սրբատեղիի մոտ պահ առ պահ սովորացող ուխտավորների խնկարկուն-արարողությանն անդրադառնալը, դառնանք ու փառաբանենք Համո Ոսկեբերան Սահյանի ծնունդը, որը, ըստ էության, կանխորոշված էր գեղեցիկ եւ վայելուչ աստվածային երթով, ով մեզ պես «հողեղեն, հողոտ, հողածին», կրակների վրայով ճախրած, հանդուրժունի եւ հաշտվածության վերին բարոյականությունը ճաշակած, բնությունից՝ մարդ, մարդուց՝ բնություն երթուղարձն ապահոված, իր ներկան հավերժորեն ժողովրդի ու հայրենի եզերքում ծոցվորած հայ մարդու օրհներգ, հացընկեր, գրուցակից եւ ունկնդիր տեսակն էր:

Նրա ծննդյան հերթական տարեդարձը մեծ շուքով մշվեց բանաստեղծի հայրենի Սիսիան քաղաքում:

Արարողությանը մասնակցում էին բանաստեղծի հայրենակիցները, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, բանաստեղծի մտերիմ ընկեր Վլադիմիր Մովսիսյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Կիմ Աղաբեկյանը, Դավիթ Գասպարյանը, Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, բազմաթիվ հյուրեր, մտավորականներ:

Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը բացելով արարողությունը՝ շնորհավորեց ներկաներին, ողջ հայ ժողովրդին՝ իրենց տաղանդավոր գավակի ծննդյան տարեդարձի կապակցությամբ, շնորհակալություն հայտնելով Սիսական աշխարհին, նրա ժողովրդին՝ Համո Սահյան ծնելու համար:

Համո Սահյանին մեծարման եւ



երախտիքի խոսք ասաց բանաստեղծի ընկեր Վլադիմիր Մովսիսյանը: Նա բանաստեղծին համարեց հայ գրականության ամենամեծ համաստեղության երախտավորներից՝ նրան դասելով Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի եւ մյուս գագաթների շարքը: Այնուհետեւ ասաց. «Սյունիքը տվել է շատ հանձարներ՝ գրականության, երաժշտության եւ այլ ասպարեզներում. Ակսել Բակունց, Սերո Խանգաղյան, Սուրեն Այվազյան, Գուսան Աշոտ, Սաթյաններ, Տաթևիկ Սազանդարյան եւ այլն: Ես մշտապես ինձ հարց եմ տվել՝ ինչո՞ւմ է Համո Սահյան մեծ բանաստեղծի տաղանդի ուժը, նրա ստեղծագործությունների հմայքն ու զորությունը, որոնք եւ բնատուր են, միաժամանակ, եւ աստվածային-տիեզերական: Սովորական մահկանացուն երբեք չէր կարող այդպես զգալ բնությունը, նրա հետ մար-

դու հավերժական զրույցը, նրա ողջ խոհափիլիսոփայությունը: Այդ պոետական զգացողությունը կարող էր սնվել միայն տիեզերական արարչագործությունից, եւ դրա վկայությունն են Սահյանի երկնած հանձարեղ գործերը: Նրա ողջ պոեզիան բազմախորհուրդ է, միաժամանակ, առեղծվածային եւ պարզ, անսահման պատկերավոր, այնպես որ բնությունն ինքն այդքան... ընկալելի եւ խորհրդավոր չէ: Եթե հասարակ մասրենին լեզու ունենար, հավանաբար ինքն էլ կգմայլվեր Սահյանի պատկերած՝ իր գեղեցկությամբ, շուքով եւ ողջ փիլիսոփայությամբ: Հիրավի, ինչպե՞ս չհիանալ այս տողերով.

Ժայռից մաստր է կաթուն,
Կարմիր սաքսոտ է կաթուն.
Չորում մշուշ է:
Առուն մաստր է քանտուն,
Կարմիր սաքսոտ է քանտուն.

Աշուն է, ուշ է:

Սահյանն ունի բնաշխարհի յուրահատուկ պաշտամունք: Նա բնապաշտ է, հողապաշտ ու հայրենապաշտ, նա իր էությանը հացապաշտ է: Աշխարհը մահից հեռու պահող ցորենին նա այսպես է դիմում.

Էլի ցորենն է աշխարհի հիմքը,
Մայրը հողն է սուրբ,
հայրը՝ երկինքը,
Նոյ դարձնենք բարդ եւ ցորեն ցանենք,
Փայք քանկ ցորենին եւ օրհնաբանենք:

Սահյան բանաստեղծի համար հայրենիքը ոչ քարտեզ է եւ ոչ էլ՝ ուռճացված գլորուս, հողը եւ հայրենիքը նրա համար համատեղված երջանկություն են, ապրելու եւ արարելու հիմք, առանց որի մարդը ոչինչ է: Պատահական

չեն այս տողերը.

Ախր ես ինչպե՞ս վեր կենում գնամ,

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Սահյան բանաստեղծն այնքան բնապաշտ, ծառապաշտ, ծաղկապաշտ եւ անտառապաշտ է, որ անգամ իր մտերիմներին խնդրում է մահից հետո իրեն մի հին կոճղում դնել եւ իր դագաղի համար ծառ չկտրել...

Գերդաստանապաշտ է Սահյանը, տոհմիկ-ավանդական ընտանիքի խորհրդապաշտ, որն այնպես պատկերավոր երելում է նրա բազմաթիվ ստեղծագործություններում: Ահավասիկ.

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տիրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Համո Սահյանը խղճի բանաստեղծ է: Նա ասում է.

Խղճիդ հեք գրույց արա

Ծննդյան 90-ամյակի կապակցությամբ լույս տեսավ թերթի հարուկ համար

N19-20, 2004թ., 2 տպագրական մանուլ, հովանավոր՝ «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ տնօրեն Մարտուն Հակոբյան



Մեր ավանդույթներին, մեր պատմությանը, մեր հոգուներին և ուրախություններին, մեր հիշատակներին ու հուշերին, մեր բոլոր զգացմունքներին այնքան հաղորդակից ու մերձ է բանաստեղծը, որ, թվում է, շոշափում ենք նրա տողերը և թաթախվում նրանց զեղեցկությանը ու տողատակերի փիլիսոփայությանը: Ահավասիկ, մի փոքրիկ հուշ պատմեմ: Սահյանը կարդում է իր նոր գրած բանաստեղծությունը. «Լռած զանգ է կյանքս, ես՝ ավերակ վանքս, էլ աղոթող չունեմ...»: Ես հակադարձում եմ վարպետին. «Ինչո՞ւ ես այդպիսի տողեր գրել, վարպետ, դու շատ-շատ աղոթողներ ունես, ես դեռ շատանալու է նրանց թիվը...»: Եվ իրոք, ես չէի սխալվել. 3ամո Սահյան բանաստեղծն այսօր միլիոնավոր աղոթողներ ունի, իր պոեզիան սիրողների սովորացող բանակ: Այսօր մեծ բանաստեղծը դարձել է ողջ հայ ժողովրդի կուռքը, ես ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը Սահյանի պոեզիայի նկատմամբ: Մեկ այլ բանաստեղծության մեջ ասում է.

*Դեռ մոր ծիծր բերանում-
Իմաստուն է երեխան...
Էլ ո՞վ կս որ իրապես,
Ինձ բաց թողեք, ես գևաւ:*

Ուզում եմ ասել՝ սիրելի բանաստեղծ, դու դեռ շատ-շատ տալիք ունես թո՞ղովորդին, ես թո՞ղովորդն էլ երբեք բաց չի թողնելու քեզ: Քո հայրական խրատների ու խորհուրդների կարիքը մեր ժողովուրդը միշտ է ունենալու:

3ամո Սահյան բանաստեղծը եւ մեծ քնարերգուն կյանքի վերջին տարիներին դիմելով հայրենի եզերքի քար ու քարափներին, մտահոգ եւ սիրասուն խնդրանքով ասում է.

*Ոչ խոստումներ, ոչ երթում
Չապանք ու ջրնեկք,
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չդնեք...*

3ամո Սահյանն ինքը լինելով մեր երթի, մեր բնաշխարհի ու հոգու մեծ տաղերգուն, միաժամանակ՝ աստվածեղեն եւ աստվածատուր, ծուլված բնությանը եւ իր սիրելի քարափներին, ինչպե՞ս կարող էր զեթ մի պահ մտածել՝ իրեն բացակա դնելու մասին: 3այրենի եզերքն ու նրա մարդիկ՝ մենք, գալիք սերունդները, հավերժորեն ներկա ենք համարելու մեծ բանաստեղծին՝ մեր դժվար երթում, մեր բոլոր ուրախ եւ տխուր պահերի մեջ...»:

3ամո Սահյանի ծննդյան տարեդարձի առթիվ շնորհավորանքի խոսք ասաց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը՝ բարձր գնահատելով բանաստեղծի անցած ուղին, գրական վաստակը, նրա քնարական պոեզիայի անձեռակերտ

զեղեցկությունը, խորհրդապաշտությունը եւ խոհափիլիսոփայական ընդհանրացումները:

- 3ամո Սահյան բանաստեղծի ստեղծագործություններն ամբողջությամբ բխելով մարդու եւ բնության հավերժական դաշինքից, միաժամանակ, բացառիկ է դրանցում առկա պետական մտածելակերպը, անգուզական՝ 3այաստան աշխարհին նվիրված նրա բանաստեղծական շարքը: Ահա նրա համձարը եւ պետություն պահող հայրենասիրությունը վկայող մի բարձրարժեք գործ, որում ասում է.

*Տայաստան ասելիս աշխարհը
իմ տունն է,
Տայաստան ասելիս էլ մահը
ո՞ւմ շունն է...*

Կունամ, կլինեմ այսպես:
Մեծ բանաստեղծի ծննդյան օրը եկել ենք երիցս հաղորդվելու նրա գրականությանը, մարդկային ու քաղաքացիական կերպարին, փառաբանելու Սյունյաց աշխարհը, որ հայ ժողովրդին պարգևել է Սահյանի պես մեծ բանաստեղծ-քնարերգու, - իր խոսքում ասաց Սյունիքի մարզպետը:

3ուգիչ ելույթ ունեցավ մեծ բանաստեղծի քույրը՝ 3ասմիկ Գրիգորյանը: Նա շնորհակալություն հայտնեց մարզային եւ տեղական իշխանություններին, ներկա հասարակությանը՝ իր սիրելի եղբոր՝ 3ամո Սահյանի հիշատակը վառ պահելու, մեծարելու եւ հերթական տարեդարձը շուքով նշելու համար:

Ելույթ ունեցավ նաեւ 3այաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանը՝ 3ամո Սահյանին համարելով հայ գրական աշխարհի անառարկելի մեծություն, պոեզիայի հսկա, իսկական մտավորական եւ մտածող, մեծ հայրենասեր, ով իր լուսե կերպարով ու ստեղծագործությամբ մշտապես ուղեցնելու է հայ ժողովրդի ուղին՝ դեպի լույս:

Արտաբուխ եւ ջերմ խոսք ասաց բանասիրական գիտությունների դոկտոր Կիմ Աղաբեկյանը:

- Դժվար է ինձ համար 3ամո Սահյանի մասին խոսելը, - ասաց նա, - որովհետեւ ասելիքս եւ հուզմունքս մեծ են, մեծ է զարմանքս նրա բանաստեղծ տեսակի, ծով բարության, խորախորհուրդ էության, նրա մարդկային նկարագրի, պարզության եւ խորունկ փիլիսոփայության հանդեպ: Նա իր պոեզիայում ոգեղենացրել է ամեն քար ու թուփ, մաճկալին, եզը, մանուշակն ու մարեճու կարմիր արտասուքները, արթնացող ամպն ու որոտը, անձրեւն ու կածանները, Լորագետը, Որոտանը, ծիրանուտները, սարերն ու ձորերը, սիրող կոտրած կաքավը...Դա մի ողջ համանվագ է ազգային պոեզիա-

յուն:

*Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի,
Մյունք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս չըրասի:*

Ելույթ ունեցավ նաեւ բանասիրական գիտությունների դոկտոր Դավիթ Գասպարյանը եւ մասնավորապես ասաց. «3ամո Սահյանը հասավ արվեստի բարձրագույն աստիճանի, որովհետեւ սկզբից եւթ գտավ ժառանգական հիշողության եւ մտավոր հիշողության համադրության արտակարգ նուրբ համաձուլվածքը: Այստեղ է եւ տեսանելի առարկայականը, եւ անբերույթ վերացականը: Մտավոր բարդ փոխակերպումներն ունեն զգացմունքային արտակարգ խորություն, ապրումների անկեղծ հուզականություն, գեղարվեստական ներգործության այնպիսի ուժ, որ տանում են դեպի մարդու մաքրագործում: 3ամո Սահյանը պահպանեց բանաստեղծության նախնական հատկանիշը, որ երգն է՝ համաչափ ոտքերի, հնչուն հանգերի, տողերի ու կիսատողերի եւ հատկապես կրկնաբառերի, կրկնաբերումների ու կրկնբերքի ներդաշնակ ընթացքով: Նա բացահայտեց բառերի մեղեդին, գտավ խոսքի հաշիշը եւ ստեղծեց իր ընթերցողին, ով հավատարիմ մնաց նրան»:

Ելույթ ունեցան նաեւ Սիսիանի համայնքի ավագանու անդամ Սրբուհի Գրիգորյանը, 3այաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս Դավիթ 3ախվերյանը, Սիսիանի N4 դպրոցի տնօրեն Նաիրա Ստեփանյանը:

3ամո Սահյանի ծննդյան 99-րդ տարեդարձին նվիրված արարողությունը շարունակվեց ուսանողների եւ աշակերտների կողմից՝ մեծ բանաստեղծի գրական ստեղծագործությունների արտասանությամբ, երգի ու երաժշտության հնչեցմամբ:

Ողջ օրը Սիսիանը շնչում էր Սահյանի պոեզիայով, նրա ստեղծագործությունների մաքուր մեղեդայնությամբ, կյանքի ու նրա հարստ ընթացքի, արշալույսի ու մայրամուտի, սկզբի ու վախճանի լուսերգության նվագներով՝ ծավալվելով աշխարհաստեղծման հեքիաթի պես, զուլալելով սահյանական բանաստեղծության սրբազան ավագանուն հայ մարդու հոգին ու սիրտը, նրա կյանքը վերածելով բնության հետ հանդիպման հավերժական ծեսի եւ փառաբանության:

*Ես գևաւ նորից ինձ որոնելու
Ճրագով, մոտով, կայծակի լույսով-
Պապատիկներս իրար բերելու,
Ինձնից մարդասիրտ ստնելու հոյսով:*

ՍՈՒՍԱՆԱ ԲԱԲԱՏԱՆՅԱՆ
«Այունյաց երկիր», N9 (282), 2013թ.

Պատմում են
լուսանկարները

Բանաստեղծի 70-ամյակը նշվեց Սիսիանում



Սահյանի հիշատակը՝ հավերժացված

Վերադարձ

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 3

Սա մտահղացումը, իսկ հուշարձանը ստեղծվեց մոտ վեց տարի: Սիսիանի այն ժամանակվա քաղաքապետ Գառնիկ Յովակիմյանը պատվիրել էր, որ Սահյանի հուշարձանը կերտի Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Յովսեփյանը: Բայց ինչ-ինչ պատճառներով դա տեղի չունեցավ: Եվ քանի որ Գ. Յովակիմյանը տեսել էր Գետիկ Բաղդասարյանի՝ Համո Սահյանի հուշարձանի կոմպոզիցիայի լուսանկարը եւ հավանել, այս անգամ էլ ընտրությունը մյուս ճանաչված քանդակագործի վրա ընկավ. «1999-ին գնացի Սիսիան՝ հուշարձանի էքսիզանսելու: Ըստ դրա մի հսկա, 40 տոննանոց քար էին բերել, պիտի տաշվեր, ինչն էլ տեղում արեցի, թեթևացրի, հետո տեղափոխեցինք Երեւան, չորս տարի այստեղ քանդակեցի, այնպես որ գործը ստեղծվեց մոտ վեց տարում»:

Սահյանի հուշարձանը 2004թ. արժանացավ ՀՀ պետական մրցանակի (ի դեպ, արվեստագետի կերտած Ներսես Աշտարակեցու դիմաքանդակն էլ արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին), բայց դրա մասին հակասական կարծիքներ հնչեցին. «Գովելի է, որ տարբեր կարծիքներ են հնչում քանդակի մասին, թող խոսեն, ես դա վատ չեմ ընդունում: Մեկը Սահյան է սիրում, մյուսը չի սիրում... Բայց ջերմ բան կա նրա մեջ: Քանդակը երբ անում ես, անպայման մի անուն են կայցնում, Սահյանի քանդակն իմ լավագույն գործերից են համարում: Ստեղծագործությունը ստացվում է այն ժամանակ, երբ սիրով, նվիրումով, հավատով ես անում, տվյալ դեպքում երբեք չեմ մտածել վարձատրության մասին, միայն ջանացել եմ, որ քանդակի մեջ արտահայտվի Համո Սահյանի կերպարը: Կարելու եմ համարում, որ իմ քանդակածի մեջ կա կերպար, բնավորություն: Սահյանը մի քիչ բարդ մարդ էր, դժվար էր խոսում, բայց երբ խոսում էր, բերանդ բաց լսում էիր: Աշխատել եմ այդ ինքնամոփոխությունը, փիլիսոփայությունը դնել քանդակի մեջ: Շատերը հարցնում են՝ ուսերն ինչու է բարձր: Մարդ նստում է չէ՛, քարին, նայում հեռուները, ինչպես արծիվը: Նստած արծիվի թևերը մարմնից փոքր-ինչ բարձր են լինում: Սահյանն էլ քարին նստած մեր արծիվներից է, մեր հսկաներից է, որ հսկում է մեր կենսական տարածքը: Ուսերը մի քիչ բարձր են արել, որ կերպարը սրվի: Ամեն ինչ չէ, որ նատուրալիստական մանրամասներով պիտի անես»:

Ինչպես գրեցինք հրապարակման սկզբում, հուշարձանի տեղադրման գործում եւս դժվարություններ ծագեցին: Արվեստագետի՝ Երեւանի Հրայր Զոչար-13 հասցեում գտնվող արվեստանոցում այն շուրջ երկու տարի բաց երկնքի տակ էր, որովհետեւ ոչ ոք չէր կարողանում որոշել դրա տեղադրման վայրի հարցը: Ի վերջո տեղադրվեց Սիսիանի քաղաքապետարանի առջեւի հրապարակում, եւ բանաստեղծի ծննդյան 90-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում 2004-ի ապրիլի 17-ին հանդիսավոր արարողությամբ ներկայացվեց հանրությանը: Բայց դարձյալ խոսակցությունները չդադարեցին, թե հուշարձանի համար կարելի էր ավելի հարմար տեղ ընտրել: «Շատերն ասում էին՝ չէ, այդտեղ չպիտի լինի, չենք բեր են կողքը, – վերհիշում է արվեստագետը, – բայց այն համոզմունքն ունեի ի սկզբանե, որ այդտեղ էլ պիտի լիներ: Եթե իր կանգնեցված տեղից հանենք, այ, այդ ժամանակ կզգան, թե ինչու էին ասում, որ տեղը ճիշտ չէ: Որ այդ տեղում իսկապես դատարկություն լինի, ապա Համո Սահյանի հուշարձանի կառուցումը կզգան: Կամ եթե այլ տեղ տեղադրեին, շրջակայքը պիտի բարեփոխվեր, որ մեծ ծախսերի հետ էր կապված լինելու: Ըստ իս՝ լավագույն տեղում է կանգնեցվել հուշարձանը



Համո Սահյանի գերեզմանը Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում

Համո Սահյանը վախճանվեց 1993թ. հուլիսի 16-ին: Ծանաչված գրողի հուղարկավորությունը կազմակերպելու համար ստեղծվեց կառավարական հանձնաժողով հետեյալ կազմով՝ Հ.Բագրատյան (նախագահ), Գ.Ավագյան, Ա.Բաբոյան, Վ.Դավթյան, Գ.Էմին, Հ.Թամրազյան, Ա.Խանգաղյան, Ա.Խաչատրյան, Վ.Խաչատրյան, Ա.Կապուտիկյան, Հ.Հակոբյան, Հ.Յովհաննիսյան, Ա.Ղազարյան, Ռ.Ղազարյան, Հ.Մաթեոսյան, Մ.Մարգարյան, Ֆ.Սելյույան, Ա.Սահակյան, Ս.Սահակյան:

Հուլիսի 21-ին հանրապետության հասարակությունը վերջին հրաժեշտը տվեց հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանին: Հանգուցյալի դագաղը դրված էր Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնի ճեմասրահում: Սահյանի դագաղի մոտ պատվով պահակ կանգնեցին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բ.Արարքյանը, վարչապետ Հ.Բագրատյանը: Ժամը 14.00-ին սգո թափորը շարժվեց դեպի Կոմիտասի անվան զբոսայգի, որտեղ կայացավ սգո հավաք: Խոսք ասացին ՀՀՄ նախագահ Վահագն Դավթյանը, արձակագիր Հրանտ Մաթեոսյանը, կոմպոզիտոր Տիգրան Մանուկյանը, Սիսիանի շրջապատի նախագահ Սամվել Սահակյանը: ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը հրապարակեց ստացված ցավակցական հեռագրերը Վրաստանի Գև Մախազաի Էդուարդ Շեւարժնաձեից, Մոսկվայի, Ռուսաստանի, Վրաստանի գրողների միություններից, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանից, Համո Սահյանի ծննդավայր Լոր գյուղի բնակիչներից: Սգո մեղեդիների հնչյունների մերթ մեծ բանաստեղծի աճյունը հանձնվեց հողին:



Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2009թ. հունիսի 1-ի որոշմամբ Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոնը կոչվեց Համո Սահյանի անվամբ:

եւ կարծես իր աուրայով լցնում է այդ տարածությունը եւ լավ է նայվում այդ հրապարակում: Այն, որ մարդիկ գալիս, Համո Սահյանի կողքը հավաքվում են, պատահական չէ, ուրեմն այդ քարեղեն մարդը գերում է, ձգում է»:

Մի առիթով Գետիկ Բաղդասարյանն ասել է, որ ինքը Սահյանին ոչ թե սիրում, այլ... պաշտում է: Արվեստագետի պատկերացմամբ՝ Համո Սահյանը բնության մեջ ամեն ինչին նայում էր գեղանկարչի աչքերով, եւ նրա գործերում նկարչական տարրեր կան. «Սահյանի գործերը կարծես մեծամասշտաբ կտավներ լինեն: Այնքան գունեղ է գրել, որ եթե գեղանկարիչ լիներ, Սարյանի պես Հայաստան կնկարեր եւ գեղանկարչության մեջ մեծ բարձունքների կհասներ:

«Ժայռից մասուր է կաթում,
Կարմիր սարսուռ է կաթում...»

Սա արդեն մի ամբողջ կտավ է: Նման բան ոչ մեկը չի ասել՝ ժայռից մասուր է

կաթում: Երբ նրա որեւէ բանաստեղծություն եմ կարդում, մտածում եմ, որ ես էլ կարող եմ նման ձեռով գրել, այնքան սրտիս խորքից է գալիս ու հոգեհարազատ է, բայց դա երեւութական է: Անկրկնելի է նրա բանաստեղծական արվեստը: Սահյանը մեր պոեզիայի հսկաներից է»:

Այս համատեքստում մեր գրույցի ժամանակ քանդակագործն այն կարծիքը հայտնեց, որ հավուր պատշաճի պիտի նշվի Սահյանի ծննդյան 100-ամյակը, որ շատ պիտի տպագրվեն Սահյանի գրքերը եւ դառնան շատ-շատերի սեղանի գիրքը. «Գիրքը մի ուրիշ հմայք ունի, ոչ մի բան չի կարող փոխարինել գրքին, որի մեջ եւ սեր կա, եւ հայրենասիրություն, զգացմունք, ասելիք, փիլիսոփայություն: Ցավում եմ, որ այժմ մեր դասականներին չեն տպագրում: Գիրքն ամեն ինչ է, որքան էլ ոմանք նախապատվությունը տան համակարգչին: Բանաստեղծությունը համակարգչին:

չի էկրանին կարդաս, նույնը՝ գրքում, միանգամայն տարբեր բաներ են»:

Գետիկ Բաղդասարյանը եզակի մարդկանցից է, ով Սահյանի կյանքի վերջին օրերին նրա մահին մոտ է եղել: Խնդրեցինք ներկայացնել հուշեր բանաստեղծի երկրային կյանքի վերջին ժամերից. «Հովհաննես Ավագյանի հետ գնացինք հիվանդանոց: Շատ վատ էր զգում: Ուզում էր հեղուկ ընդունել, բայց չէր կարողանում: Ասի՝ գնամ, հյուս բերեմ: Չեքով հասկացրեց, որ մնամ, կռահեցի, որ բան է ուզում ասել: Մի քիչ խմեց. Տիգրան Մանուկյանից էր խոսում: Տիգրանը երգ էր գրել Համո Սահյանի խոսքերով: Երեւում է՝ շատ էր հավանել: Էդ վերջին րոպեներին էլի արվեստից էր խոսում, բարձր բաներից էր խոսում, ասում էր՝ շատ եմ հավանում Տիգրանին որպես կոմպոզիտոր եւ մարդ: Քիչ լռությունից հետո էլի արվեստի մասին խոսակցություն գնաց: Սոս Սարգսյանի մասին խոսեց: Մանրուքները չեմ հիշում: Կրկնում էր՝ շատ եմ ուզում խմել, ներսս վառում է: Մեր ներկայությամբ մի քիչ հյուս խմեց, էլ ուրիշ բան չարեց: Քիչ հետո եկան տղաները՝ Նաիրին եւ Արամ: Երրորդություն խնդրեցի, որ պիտի գնայի, իմ մայրն էլ այդ օրերին հիվանդ էր, եւ դուրս եկա: Դա վերջին հանդիպումն էր անկրկնելի մարդու հետ: Իմ դուրս գալուց շատ չանցած՝ հոգին ավանդեց: Չանգեցին եւ հայտնեցին տխուր լուրը...»:

Լինելով արձանագործի երեւանյան արվեստանոցում, չէինք կարող թեմայից դուրս հարց չուղղել նրան: Տողերիս հեղինակին, նախեւանաջ, հետաքրքրում էր, թե արվեստում պարտադրանքներ լինո՞ւմ են կամ ինքն իր մաշկի վրա զգո՞ւմ է նման բան: «Պարտադրանքներ չեն լինում, բայց ավելի վատ բան է կատարվում. արվեստն արհամարիված է, խնդրեմ, մի մեծ գործ եմ արել, դրսում դրած է եւ ոչ մեկին չի հետաքրքրում...»: Կիսատ են մնացել Կոմիտասի եւ Ակսել Բակունցի քանդակները...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Կարծես երեկ լիներ...

ՆԱԿԵՆՐԿ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու N38 միջնակարգ դպրոց էր այցելել մարզի կրթության վարչության պետ Սահակ Մինասյանը: Մանկավարժական հանրույթը սիրով հավաքվել է և լսում էր նրա խոսքը: Այսպես էր, որ առաջ քաշվեց դպրոցն անվանակոչելու հարցը: Դպրոցի տնօրեն Գոհար Շահբաջյանն առաջարկեց իր սիրելի բանաստեղծ Համո Սահյանի անունը:

Մի տեսակ ավելի ջերմացավ հանրույթը: Սահյանը սիրելի էր բոլորին, այս հարգատ անունը ջերմորեն ընդունեց նաև Ս.Մինասյանը, քանի որ պարզ ու հատուկ, խոր ու խորհրդավոր պոետը գերել էր նաև նրան:

Կատարվեց ընտրություն, եւ դպրոցը կոչվեց Համո Սահյանի անունով, որոշումը պետականորեն հաստատվեց 1992 թվականին:

*Կյանքի վրա ոչ մի օրով
Չծանրանամ, չծանրանամ...*

Այս խոսքերը դարձնելով աշխատանքային օրակարգ՝ դպրոցի մանկավարժական հանրույթն աշխատում է վառ պահել Համո Սահյանի անունն ու հիշատակը:

Կազմակերպվել է հանդիպում Շիրս Դավթյանի հետ, որ վերածվել է գիտական-գեղարվեստական քննարկման:

Դպրոցի հանրույթը հաճախ է այցելում պանթեոն՝ թարմ ծաղիկներ դնում գրողի շիրիմաքմբին, հնչեցնում նրա անմահ հայրեններն ու բնության երգերը:

Մի յուրահատուկ ու անկրկնելի վայր է դպրոցի բակը: Սահյանի բանաստեղծություններն ապրում են հենց այստեղ: Նրա քարափներն ու քարերը, հինավուրց կարասներն ու իրիկնահացին դաշտից դարձող պապի հանգստավայրը հենց այստեղ են:

Նստում են այստեղ ու հիշում Սահյանի «Իրիկնահացը», «Քարափներն» ու հեքիաթային «Սեզան, բացվիր»-ը:

Ամեն տարի առանձնահատուկ ջերմությամբ է նշվում մեր դպրոցում Սահյանի ծննդյան տոնը: Դպրոցի բոլոր աշակերտները քաջատեղյակ են նրա կյանքին, ստեղծագործությանը: Բոլորը սիրով ու մեծ պատասխանատվությամբ են սովորում նրա բանաստեղծությունները:

Դպրոցում կա Սահյանին նվիրված անկյուն, ուր առանձնացված են նրա խոսքերը.

*Ձեր թոխքի ժամանակ,
Ինձ բացակա չլինեք...*

Ու բացակա չէ Սահյանը հայ ժողովրդի կյանքում:

Ու բացակա չէ Սահյանը Գյումրիում:

Ու միշտ մեզ հետ է ու մեր հոգում:

ԳՐԱՐ ՀԱՅԲԱԶՅԱՆ

Գյումրու N38

հիմնական դպրոցի տնօրեն



Գյումրու N38 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը



Գյումրու N38 հիմնական դպրոցը



Սահյանի հիշատակը՝ հավերժացված

Երեւանի քաղաքապետի 2005թ. դեկտեմբերի 13-ի որոշմամբ Երեւանի Կովկասյան փողոցը կոչվեց Համո Սահյանի անվամբ, իսկ Արաբկիրի վարչական շրջանի Կասյան 3 հասցեում տեղադրվեց բանաստեղծի հիշատակը հավերժացնող հուշատախտակ:

Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը

À è ð 1 0 2 Û à ò Á Û à ò Û Û ò ð



ՆԱԲԻ ԽԱՁՐԻ

Չինարի ծառ

Գորգուրեյ եւ քեզ պատ
հովերն առավորվաւ,
Մեր շինարի ծառի
նման շինարի ծառ:
Խոնարհիկ եւ ևորից
կապույր ջրի վրա

Ու ևրա մեջ տեսնում ես թո պարկերը վառ,
Մեր շինարի ծառի նման շինարի ծառ:

Գեղն է հոտում թո ուրթի տակ կարկաչելով,
Նայում ես դու եւ ճրտղերդ իրար տարով
Շնչում ես՝ «բարի գալուստ», «գնաս բարով»:
Գեղը երգի՞ց դու ունկնդիր մի խանդավառ,
Մեր շինարի ծառի նման շինարի ծառ:

Քո գնդախոս տերեւների շշուկներով
Մաղթում ես ինձ բարի գալուստ, քնքանքներով,
Իմ կարողում արդի համար թո շուրթերով
Շնչում է մի ողջ գարուն, մի ողջ անպատ,
Մեր շինարի ծառի նման շինարի ծառ:

Տարեկիթիս ողջույններն եմ բերել ես քեզ,
Դու կանգնեցիր ճամբիս վրա հրաշքի պես,
Ամենամուր բարեկամիս տեսա կարծես,
Տարբեր հասակ եւ հայագրեր ունես
պայծառ,
Մեր շինարի ծառի նման շինարի ծառ:

Ես լսեցի խորհուրդները թո իմաստուն,
Եվ մի վայրկյան այս հեռավոր, օդար
ափում
Մոռացա, թե ինչ ասել է օդարություն,
Ինչ լավ է, որ դու կաս այսպեղ, իմ բարի ծառ,
Մեր շինարի ծառի նման շինարի ծառ:



ԳԱՐՄՍԻ ԱՈՐԿԱ

Տասկեր

Յորենը դաշտում անձնատրու
եղալ

Մահվան շուրթերին,
Մանգաղներն արդեն հասկեր են կրթում:
Ջնկյունու ու բարդիկ գրոյցի համար
Պարզ ու մարդիկ խոսքեր են փնտրում:
Յորենն ուզում է խորին լռություն.
Նա ամբաստանում արեգակի տակ
Այս է քաշում այն լայնություն համար,
Որտեղ սայրում են երազներն արթուն:
Իսկ օդը, օդը,
Որ հագեցել է ու հասունացել
Լույս ու դողանցից.

Լուռ ևստանում է լեռները կապույր:
Խորասուզվել են հասկերը այսպես
Ինչ խորհրդավոր մարբերի ծովում,
Ինչ երազական թափիծի դիտման է
Դաշտը վրդովվում:
Ծանր ու ծերացած հավթերի նման
Տասկերը թռչել չեն կարողանում:
Նրանց ներդաշնակ գլուխների մեջ
Ուղեղ կա, որը ձուլված է ոսկուց:
Դիմագծերը խաղաղ են կրակից:
Նրանք բոլորը նույն բանն են խորհում,
Խորհրդածելով

Մի ծանր ու խորին գաղտնիքի վրա,
Տողից առնում են շնչավոր ոսկի
Եվ, արեւային մեղունների պես,
Ծծում են շոգը շոտյ շողերի
Ու շողեր հագնում,
Որ դառնան ոգին ուրախ տանջանքի:
Լցնում են հոգիս ուրախ տխրությունը
Գալով դարերի հեռու խորքերից,
Նկնել կք հասկեր, Աստվածաշնչում:
Նկնում եք կրկին
Դուք քնարների ներդաշնակ խմբով,
Երբ շոշափում են հեռունները ձեզ
Լուրջան թեով:

Դուք աճում եք, որ կերակրեք մարդկանց:
Չարկածադիվն ու հիբիլը դաշտում
Ծնվում են ամեն ինչի հակառակ,
Դուք՝ գերության մեջ ոսկե մոմիաներ:
Քնի համար է լույս աշխարհ գալիս
Ծաղիկն անբառի,
Մեռնել, որ սարի կրակը աշխարհում, -
Տասկեր, սիսա ձեր ճակատագիրը:



ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆ

Ես թողի հեռվում

Ես թողի հեռվում տունն իմ
հայրենի
Եվ իմ Ռուսիան թողի
կապույրակ:
Կեչու անբառն է վատում երեւի
Ծերացած իմ մոր կարտրանքն անբառ:

Լուսինը ոսկե գորտ լիկի կարծես,
Լողում է խաղաղ ջրերում կրկին:
Խնձորենու նուրբ ծաղկաթերթի պես
Ճերմակ է իջել հորըս մորաքին:

Պորզան շար պիտի գնգա ու երգի:
Ոչ, ես այդքան շուր չեմ վերադառնա:
Կապույր Ռուսիային արթուն կհակի
Մե թիկին՝ կանգնած մի ուրթի վրա:

Ես գիտեմ, իրեն գգվողի համար
Նա իր մեջ ունի խնդրություն մի խոր,
Լոկ այն պարճատով, որ ինձ է նման
Այն հնամենի թիկին իր գլխով:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱՇԻՆ

Աստված

Աշխարհում մի օր աստված էի ես:
Դժվարին է դա եւ տագնապալից:

Բարձրության սահից
Գրոխո սաստիկ սրտույր է գալիս,
Բռնում է հոգիդ
Անվարանությունն ու բաց չի թողնում:
«Արդյո՞ք իսկական աստված եմ, ասե՞ք»:
Կեղծ արքուն էլ տագնապ կա մի խոր.
«Վեր բարձրացրե՞ց:
Իսկ հիմա, նայիր, կշարիքի վար»:
Եվ կասկածանքը վիրավորական
Չի թողնում, որ նա անվրդով քնի:
- Մի՞թե չես տեսնում,
Որ ամենագոր իմ աստվածն ես դու: -
Տարգաբնում է ես ինձ անդադար,
Տրամայիր, անցնեմ ծովն աղեկավոր,
Տրամայիր, քեզ հենք հասրույկ բարձրանամ:
Չէ՞ որ աստված ես, հասկացիր, էլի:
Սրտագիր ու տես:
Պարսպախառնում եմ. - Սրտու՞մ եմ, լավ:
Բայց ես չեմ ուզում խարույկ բարձրանալ,
Չեմ կարող ընկնել ծովն աղեկավոր,
Ինչպե՞ն հավարում,
Որ աստված եմ ես ամենակարող:
Եվ ի՞նչ աստված եմ,
Երբ ոչ մի բանի չեմ հավարում ես:
- Տրամայիր դու ինձ, - համատում է նա:
- Լավ, գնա հիմա, գիկի բեր մի շիշ,
Ծխախոտ գնիր:
(Տարկավոր չես ինձ
Ոչ ծխախոտը եւ ոչ էլ գիկին):
Բայց ուրիշ ոչինչ մերածել, գրկել
Չեմ կարող, ալիսի:
Չէ, չեմ նահանձում
Երկրային բոլոր աստվածներին ես:



ԱՐՄԵՆԻ ՏԱՐԿՈՎՍԿԻ

Կոմիտաս

Այս, իմ հոգին ինչպազարված
Կոմիտասի նման
Վեր է նայում՝ աչքը փակած,
Պեպք չէ ոչինչ կրակ:

Այնպիսիում են աստղերը, տե՛ս,
Երկնի կապույր մուժից,
Արթնացել են նրանք կարծես
Իմ մեջ քնած ուժից:

Այլուտոր է շապիկս, քանակի
Դիպչում է իմ մարմնին
Վաղնջական կորուսածի
Սարսափների քանին:

Նորից Այա-Մոֆիայի
Քարն է իմ դեմ քայլում,
Եվ իմ բորիկ ուրթը հողի
Տաք մոխիրն է այրում:

Ղազարյուն է ելել շիրմից,
Եվ իր գործը չի, թե
Խնձորենու ծաղիկներն իր
Այնպիսուն են մերե:

Կոկորդի մեջ օղն է թաղվում
Օդը մարդ կապակի,
Աստղերի մեջ սուրն է ծաղկում
Անեղ դարասարմի:



ԼԵՎ ՕԳԵՐՈՎ

Ինչպե՞ն սարեն

Ինչպե՞ն սարեն,
Ինչպե՞ն՝ սարեն այսուհետև:
Մեկ հազար տող գրեմ դարձյալ,
Ինքըս ինձ հեղ
Մեկ հազար օր կովեմ դարձյալ,
Տե՛նեմ դարձյալ ինչ հազար օր:

Չորից հեղք էլի մի ձոր,
Ճանապարհներ
Ու տագնապներ հազարավոր,
Սպասումներ երկարատև...
Այսուհետև,
Ինչպե՞ն՝ սարեն այսուհետև:
Ճյուղը մի կոր բողբոջ կրա,
Ու բողբոջից

Նոր մի տերև աշխարհ կգա:
Ներս արևուն քանոն թեփել,
Աստղի նման մի երկրային,
Թեփել կրա երկրիքն ի վեր
Այդ տերևը թեթեւ, թեթեւ:
Իսկ ես, իսկ ես
Ինչպե՞ն սարեն այսուհետև...
Ինչպե՞ն սարեն այսուհետև,
Երբ ընկերս պարճատ բռնած
Իր ցավը սուր
Եվ բաշ արած աչքերը բողբ,
Անց է կենում իմ աչքերին չնայելով,
Սովորական բարեկան անգամ
Խնայելով...
Երբ կենցաղն իր մանրությունով
Պար է քաշում
Ընկերսուտու ես իմ միջև,
Երբ սձնում ու սար է դառնում
Վիրավորանքն անբանեկի,
Եվ այդ սարի սրվերը սեւ
Մթազնում է սերն իմ սրտի՝
Շողն իմ օրվա,
Տրամայում է, որ նա սատի,
Անեւաս
Եվ շունենա թոխց ու թեւ,
Ասացեք ինձ,
Ինչպե՞ն սարեն այսուհետև:

Ինձ լոկ մի կարճ կրակ է տրված,
Իսկ ես, իսկ ես
Դեռ ուզում եմ փորձել, փորձվել,
Եվ կրկնակի եւ եռակի
Իրագործվել,
Եվ չվաբնել վայրկյանը գուր,
Եվ դարարկել
Ոսկե թաղը միկնե մրուր:
Քանի դեռ չեմ
Այրվել կապույր կրակի մեջ,
Տարկավոր է
Որ շարսպեմ չբուսակցում, -
Եվ լռության,
Եվ ստորյա աղմուկի մեջ
Վճռեմ պիտի,
Ինքս ինձ երբեք չհարկում, -
Օրերի մեջ կարմիր ու սեւ
Ինչպե՞ն սարեն,
Ինչպե՞ն սարեն այսուհետև:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒԵՎԻՆ

ԸՃՄարտություն

Վաղուց ի վեր իմաստուններն
անդադար
ԸՃՄարտության կորած հեղքերն են
փնտրել

Եվ դարելով կրակը երկար ու երկար,
Նախնիների հին-հին խոսքերն են կրկնել:
Պեղել են. «մերկ ճշմարտությունն անպարճառ
Թարսն էլեկ, ջրիտրի մեջ է մտել»:
Եվ իմելով ջուրը կրակը միասնաբար,
Աղմկել են «կգրենեք»:

Մակայն մեկը, որ բարեբարն էր մարդկանց
(Որ համարյա ծերուկ Սելենն էր կարծես),
Եվ վկա էր անմարտությանը կրակի,
Տոգնած ջրից եւ աղմուկից նա հոգնած,
Մի կողմ թողած մարդասիրտյան մեր անբան,
Առաջինը գիկին հիշեց թանկագին,
Եվ մինչ մրուր թասն ըմպելով, վերջապես
ԸՃՄարտության դեմքը տեսավ հարակին:

ԻՐԻԿԱՆՍԻՆ ԳՐԱՅԻՆ ԿՐԻՍՏՈՍԻ ԲԱՆԱՍՏՐԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՆԴԱՆՈՒՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԿ

Իրիկնահաց

Լեռան ուրբի փակ կիրճ է վիհավոր,
Լեռան բարձունքը՝ ճերմակ ձիավոր...

Իմ ճանապարհը - վայրի մի կաման,
Խորհրդավոր պես առջևս ընկած,
Փախչում է ինձնից
Եվ իմ երևից, հոգևած շունս պես,
Նույնով գալիս:
Նոգևած օրվա հեղի նստել եմ հոգևած
Ու միտք եմ անում:
- Թե չես դառնալու ուրբերս՝ թեևեր,
Վա՛ր նայեմ, թե՛ վեր...

Լեռան ուրբի փակ կիրճ է վիհավոր,
Լեռան բարձունքը՝ փախչող ձիավոր...

Արագիլները

Դուք ինձ չե՛ք ասի, որքացած բներ,
Ինչ էին խոսում իրար սկանջի
Արագիլները չվերաց առաջ:
- Տառապում էին:

Դու ինձ չե՛ն ասի, սարդեր ու արեւ,
Ինչ էին խոսում իրար սկանջի
Արագիլները չվերաց պահին:
- Տագնապում էին:

Դու ինձ չե՛ն ասի, անձնե՛տ հեռու,
Ինչ էին խոսում իրար սկանջի
Արագիլները չվերաց հեղու:
- Կարտուս էին:

Անրան եղեգներ անձնե՛տ հեռվի,
Ինչ էին խոսում արագիլները
Ձեզ «մենք բարով» ասելուց առաջ:
- Շարապում էին:

Բուք արտաշնչող լեռնագագաթներ,
Ինչ էին խոսում հոգևած ու մրսած
Արագիլները եր գալու պահին:
- Նավապում էին:

Չեն էլ իմացել

Յերեկով նրանք արդ եւ քաղհաներ,
Որ հասկի ուրբը փուշը չծակի:
Արդի ծաղիկներն արմաբից հանել,
Աղոթք են արել, որ արդը ծաղկի:
Մարներով սանրել արդը բովանդակ,
Մաքրել են նրանք փուռն ու փշերից...
Երբ փուն են եկել, փշերի փեղակ
Աստղեր են թափվել նրանց փեշերից, -
Գիշեր է եղել... Շշուկներ... հեղու
Քնով են արել հոգները վաղվա
Եվ կամաց-կամաց թնել են նրանք:
Չարթնել են ձեզին... Եվ միևնույն անգամ
Չեն էլ իմացել, որ արդեն ես կամ:
Չեն էլ իմացել... Բայց հազար անգամ
Շնորհակալ եմ ես այն գիշերից,
Որ չի ուղարկել հորս՝ ջրադաս,
Եվ չի բաշտել մորս փեշերից,
Չի առել նրան ու փարել հերանգ...
Ու ես ծնվել եմ այսպիսին, այսպես,
Անենամիակ եւ ամենաեւ

Ես ի՞նչ ասեմ, անպառ

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ թո ջրադասը չջրարեւս,
Որ թո խելոք խելքով դու խրատես
Այս ժամանակ կոչված փեսայանդին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ դու նրա առջև չկորանաս,
Մութ մեղքերիդ համար չարդարանաս,
Խիղիղով պարասիսանես նրա խանդին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ ես թո փչակում բույն չդնի:
Ոչ մի ձեռք ու ձեռքում թույն չդնի
Եվ չսպառնա երբեք թո արգանդին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ չնայի դարը թամբիդ վրա, -
Այլ դու ինքդ բռնես սանձը նրա,
Այլ դու ինքդ թռնես նրա թամբին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ գլուխդ պահես մովերի մեջ,
Ու ուրբերդ պահես ձորերի մեջ,
Եվ թիկունքդ պահես ձորալանջին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ սաղարթդ պահես արեւի մեջ



Եվ արմաղդ պահես դարերի մեջ,
Եվ սովերդ փռես դարավանդին:

Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին,
Որ թո շնչից չքվեն հողմերը չոր,
Որ խորշակը չանցնի սրբիդ միջով
Եվ չսպառնա երբեք թո ավանդին,

Եվ չսպառնա երբեք հոգուդ կանջին...
Ես ի՞նչ ասեմ, անպառ, թո սկանջին:

Նավապում եմ քեզ

Նավապում եմ քեզ, հայոց հանձար,
Քեզ համար դեռ փոներ կգան,
Նարեկացիներ կգան աշխարհ,
Մայրա՝ Նովաներ կգան:

Նրանց թոխքը մենք չունեցանք,
Երևի հնար էլ չկար...
Բայց մի համարիդ մեկը ու հանցանք,
Մի կոչիդ թոյլ ու փկար:

Մենք հազար մագե կամուրջ անցանք,
Տագնապով անցանք եւ ստով...
Եվ մենք ինքներս կամուրջ դարձանք,
Որ անցնես մեր վրայով...

Նավապում եմ քեզ, հայոց հանձար,
Քեզ համար դեռ փոներ կգան...
Դեռ Վարդապետներ կգան աշխարհ,
Միամանթոներ կգան:

Քարը

Քարը՝ երամ, քարը՝ նստիք,
Քարը՝ հուր:
Քարը՝ հուրադ, քարը՝ հովիվ,
Քարը՝ հող:

Քարը՝ օջախ, քարը՝ կրակ,
Քարը՝ բոց:
Քարը՝ խորհուրդ, քարը՝ խրատ,
Քարը՝ փորձ:

Քարը՝ սեղան, քարը՝ սփռոց,
Քարը՝ բարձ:
Քարը՝ ուրագ, քարը՝ սղոց,
Քարը՝ բահար:

Քարը՝ արգելք, քարը՝ պարիժ,
Քարը՝ վերք:
Քարը՝ պարվար, քարը՝ պարիվ,
Քարը՝ եր:

Քարը՝ գայլույթ, քարը՝ գրահ,
Քարը՝ զենք:

Քարը՝ զորեղ, քարը՝ զինվոր,
Քարը՝ մենք:

Քարը՝ ընկեր, քարը՝ որդի,
Քարը՝ թոռ:
Քարը՝ հասարակ, քարը՝ բարձիկ,
Քարը՝ խոր...

Քարը՝ մամուռ, քարը՝ վայրի,
Քարը՝ բիրտ:
Քարը՝ խոնարհ, քարը՝ բարի,
Քարը՝ կիրթ:
Քարը՝ կշեռք, քարը՝ գավաթ,
Քարը՝ դուր:
Քարը՝ խորան, քարը՝ հավար,
Քարը՝ կուրք:

Քարը՝ կամար, գմբեթ ու թիվ,
Քարը՝ դուր:
Քարը՝ խաչքար, քարը՝ արծիվ,
Քարը՝ նոտ:

Քարը՝ թոխք, քարը՝ մարյան,
Քարը՝ կոչ:
Քարը՝ ոգի, քարը՝ ուրան,
Քարը՝ ոճ:

Քարը՝ անցյալ եւ ապագան,
Քարը՝ երթ...
Քարը՝ Գեղարդ, քարը՝ Գառնի,
Քարը՝ երգ:

Իր հոգից ջոկված

Իր հոգից ջոկված, մոլոր մի ամպ,
Ուրբերի վրա՝ մամուռ ու հող,
Իր գեղեցկության գինն ինձացող
Քարայծի հալարը երկնությունսը,
Մարից իջնում է գեղը՝ ջրի:

Կարում է ճամփան ժայռը բրի:
- Անկիրթ, անճոռնի, ծարավ է թող...
Եվ քարայծ ամպը ժայռի գլխից
Փախուկ թոխքով մտնում է տող,
Իմ տողի մեջ է մտնում փափուկ:

Քունս չի փանում

Քունս չի փանում... պաշարս կսպեմ,
Նոգեկրիս հաբեմ, որ հեղու չգան
Եվ միևնույն գալս անունս չդան,
Ճանապարհ ընկնեմ... մի կրկին անգամ
Շնչեմ Գյազբեկիս մութն անուշահոտ,
Քայլերով նրա հասակը չսպեմ,
Միևնույն անքերով բռնեմ, շոշափեմ
Աղանալոյսի շողերը շաղորդ
Եվ շողերի հեղ, բարձունքի վրա,
Շոշափեմ շաղորդ թոխքը հավթի
Եվ քնաթաթախ ծիվծիվը նրա:
Եվ այդ բոլորը, կորցնելու վախով,
Առնեմ, փուն բերեմ ամպի մախաղով:

Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են

Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են -
Իմ ակունքներն ու խաղրկներներն են -
Ժամանակներն են իմ պարսևություն:
Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են,
Նավիտենությունս առաքյալներն են -
Մարգարեներն են հավիտենություն:

Մարը սարերից անպ է գողանում

Մարը սարերից անպ է գողանում,
Ու երբ հագնում է շրջագգեպն անպի,
Շնկները ծածկել չի կարողանում:
Եվ անպում է սարը սարերից,
Եվ հասակն ի վարը քրտինք է թափում
Իր շրջագգեպի խոնավ ծայրերից:

Մայրս

Դու իմ միակն էիր, ինչպես Նայասարանս,
Տանս ճրագն էիր եւ ծովն էիր փանս:
Քոնը՝ իմն էր, իմը՝ բունն էր հավիտյանս,
Դու իմ միակն էիր, ինչպես Նայասարանս:
Իմ փերությունն էիր եւ իմ երկիրն էիր,
Լրումն ու լիրն էիր, ճակատագիրն էիր
Եվ իմ միակն էիր, ինչպես Նայասարանս:
Իմ կյանքի գինն էիր, իմ ծիր Կաթինն էիր
Եվ իմ բաժինն էիր, եւ իմ բագինն էիր,
Դու հասունված էիր շնչես, Էությունս...
Դու իմ միակն էիր, ինչպես Նայասարանս:

Մարտի 1-ին Գերդասարյանը



Բանաստեղծը կնոջ՝ Մարիա Ջակոբյանի, որդիների՝ Արայիկի եւ Նարիկի հետ

Էրյուդ Ջամո Սահյանի մեծ քրոջ՝ 91-ամյա Ջասմիկ մայրիկի եւ նրա ընտանիքի մասին



ՆՈՒՍՆԱ ԲԱԲԱՆՅԱՆ

Ամեն անգամ նույն զարմանալի զգացումն է համակում ինձ. հենց մտնում եմ Սիսիանի շրջան, նրա ամեն քար ու թուփ հիշեցնում են Ջամո Սահյանին:

Փորձում եմ բանաստեղծի աչքերով նայել ձգվող լեռնաշղթաներին, ծառերին ու նրանց վերջին տերեւներին, իրենց գույներով հորիզոնին խառնված մարգագետիններին, աչ ու ծախ փռված թփերին, փախչող բլուրներին ու սարերին...

Ամեն ինչում ասես զգում ես Սահյանի շունչը, նրա սերը վարակում է քեզ, պարզ հասկանում ես, թե ինչ է զգացել նա՝ իր ողջ կյանքում այս գեղանկար-ճանապարհներով անցնելիս...

...Իսկ աշնանային քամու մեջ կարմիր-վառվող պտուղներով դեռ ծանրաբեռ մասնակցում ուղղակի տխուր-ուրախ, անանց կարոտով ու ցավով բարեւում ես եւ հայացքով մինչեւ վերջ ուղեկցում նրա հեռացող պատկերը, ինչպես կբարեւերի ու հայացքով կհետեւերի Սահյանին...

Նախքան Լոր հասնելը Դարբասն է՝ Սիսիանի շրջանի հեքիաթային գյուղերից մեկը: Չայկական գյուղին բնորոշ՝ հարթություններով, վերուվար ձորափեշերով, սարավանդերով, իրենց բնականությամբ ու գեղեցկությամբ անմրցելի տներ ու աշնանաբաղ, արդեն ձմեռող այգիներ՝ տեղ-տեղ տոնածառի պես գույնզգույն խնձորներով ամբողջովին զարդարված, բայց արդեն անտերեւ ծառեր...

Ջամո Սահյանի մեծ քույրը՝ Ջասմիկ մայրիկը, 16 տարեկանում Լորից հարս է

ելել Դարբաս՝ իրենց գյուղից 10-15 րոպեի ճանապարհ, ամուսնացել աշխատատեղ ու բարի, մի շատ օրինավոր եւ օրինապահ մարդու՝ Բուրթելի հետ, եւ հյուրասեր օջախում ծնվել են նրանց զավակները:

16-ամյա գեղեցկուհին՝ երիտասարդ մանկաբարձուհին, զալով Բուրթելի բազմանդամ օջախ հարսնության, արդեն գիտեր, թե ինչպիսի դժվարություն եւ հոգս է առնում իր դեռատի ուսերին. Բուրթելի առաջին կնոջ մահից հետո որք էին մնացել նրա հինգ զավակները՝ դուստրը եւ չորս տղան:

Դա 1939 թվականն էր: Լոր եւ Դարբաս գյուղերի բնակիչները երկար ժամանակ ցնցված էին այդ արտառոց իրադարձությունից: Ջասմիկի հայր Սահյան ուղիղ տասը տարի խռով է մնացել աղջկանից, չի կարողացել ներել աղջկան՝ իրենից 15 տարով մեծ, արդեն հինգ որբատեր Բուրթելի հետ կյանքը կապելու համար: Բայց արդեն ոչինչ հնարավոր չէր փոխել. Ջասմիկի եւ Բուրթելի սերը հարթանակել է, եւ այսօր էլ նրանց անմահ ու մեծ սիրո մասին գյուղում առասպելներ են պատմում...

Տասնյոթ տարեկանում ծնվել է Ջասմիկի առաջնեկը՝ Յուրանը, այնուհետ՝ Գեղամը եւ՝ երեք դուստրը: Արդեն 25 տարեկանում Ջասմիկը սկսել է խնամել իր եւ Բուրթելի տասը երեխային՝ առանց խտրության ու խորթության...

Այսօր բոլորն էլ տնավորված-ընտանիքավորված, ապրում են Դարբասում, հարեւան գյուղերում, Սիսիանում եւ Երեւանում: Իսկ Ջասմիկ մայրիկն իր վաստակած ծերությունն է վայելում կրտսեր որդու՝ գյուղատնտես-մեխանիզատոր Գեղամի ու նրա ընտանիքի ջերմ հոգածությամբ ու գուրգուրանքով շրջապատված: Ամուսնուն 25 տարի առաջ է կորցրել: Կորցրել է նաեւ իր տասը երեխայից երկուսին՝ երիտասարդ, իր հարազատ աղջկան եւ մեկ էլ՝ Բուրթելի որդիներից մեկին: Երկուսի համար էլ հավասար սրտից արյուն է կաթացել, եւ մինչեւ հիմա վերջը դեռ բաց է, չի՝ սպիացել...

Յի՛ն, գյուղական տունը՝ իր գրավչությամբ ու մարդկային սիրով, անմիջապես աչք ու սիրտ է շղուծում: Գյուղի ճանապարհից



Ջասմիկ մայրիկը ծոռնիկի՝ Գեղամի հետ, 26.02.2014թ.

աչ թեքվող սարավանդի նեղլիկ կածանը միանգամից տանում է ուղիղ Ջասմիկ մայրիկի տան դիմահայաց, աշնան արեւով ողողված նախասրահ-բակը: Որքան է Ջամո Սահյանն այս կածանով բարձրացել քրոջ տուն, - ակամա մտորում եւ գորովանքով նայում եմ ոտքերիս տակ չոր խշրտող քարերին ու հողին, ճանապարհի եզրերին բուսած եղինջին ու մերկացած, մազ ու փեշ քաշող մարդաբոյ թփերի գալարուն ճյուղերին...

...Դեռ տան մուտքից՝ մեծ գերդաստանի կարգ ու կանոնի եւ օրինապահության ազնիվ շուքը բարության ալիքներով մեզ ընդառաջ է գալիս. փայտե, ներկ տեղ-տեղ թափած եւ արդար վաստակից ազնվորեն ճաքճած դռան կողքին հերթով կանգնած էին տան բոլոր անդամները՝ մեծից՝ փոքր: Իմանալով հյուրերի մասին, մեզ դիմավորելու էր դուրս եկել «մի պարզ գերդաստան»՝ Ջասմիկ մայրիկի գերդաս-

տանը: Տան ավազը՝ 91-ամյա Ջասմիկ մայրիկը՝ տիպիկ սահյանական դատող-բանող աչքերով ու դիմագծերով, կանգնել էր տան գլխավորի՝ Գեղամ որդու թեւի տակ: Պարզ երեսուն էր. տան առաջնությունն արդեն նրան էր հանձնել, բայց ինքը թիկունքն ամուր պահում էր...

Այնուհետ՝ Գեղամի կինը՝ Անահիտը, Շամբից մորը տեսակցության եկած դուստրը՝ Անուշը, Գեղամի որդի Արթուրը, նրա կինը եւ ամենավերջում՝ ծոռնիկը՝ հնգամյա Գեղամիկը՝ սեուկ, պլստան աչքունքով, ընդգծված զսպոթյամբ ու միանգամայն հարգանքի արժանի լրջությամբ...

Գրկում եմ Ջասմիկ մայրիկին, համբուրում. արդեն շատ բան գիտեմ նրա մասին եւ շատ-շատ բաներ էլ հետո իմացա...

Գեղամի եւ Ջասմիկ մայրիկի առաջնորդությամբ մտանք հյուրասենյակ: Իսկը մեր ուզածով էր՝ ընդարձակ, հին կահույք ու աթոռներ եւ պատի կողքին՝ ամեն ինչ տեղ տեղին, հաստ թիթեղով ձեռքի աշխատանք-վառարան: Փայտերն արդեն խնամքով շարված էին վառարանի շուրթին, մնում էր Ջասմիկ մայրիկի կարգադրությունը... Սկզբի պահերին Ջասմիկ մայրիկը դեռ լռում էր, չգիտեր ինչ ասեր, ո՞ր մեկը եւ որտեղից՝ սկսեր: Բայց նախ եւ առաջ նա պետք է իր համար բացահայտեր մեր ով, որտեղից լինելը: Ջավանաբար մտածեց, որ Երեւանի լրագրողներ ենք՝ իր հող ու ջրին խորթ, իր լեզվին ու կենցաղին օտար եւ արժանապատվորեն, ինձ թվաց, մի քիչ էլ խռոված՝ գնում էր, ուսումնասիրում՝ ի՞նչ պտուղ ենք...

Բայց երբ միանգամից ես սկսեցի իր հարազատ Լորի ու Դարբասի, Գորիսի բարբառներով ուրախ խոսել, հալում-հարցուն անել՝ իր առողջությունից, եղանակից ու բերքից, վառարանից, ցրտից, հարսից-տղուց եւ ամենակարեւորը՝ Սահյա-

նից... Տեսնել էր պետք՝ ինչպե՞ս հանկարծակի Ջասմիկ մայրիկը վերածնվեց, գույնն ու շունչը տեղը եկան, միտքն ակնթարթի մեջ պարզվեց եւ, առանց չափազանցության, դարձավ նույն 16-ամյան, երբ առաջին անգամ Դարբաս հարս էր եկել...

Անկեղծությունը դուրս հորդաց, հարազատ լեզվով խոսող, իր հողի ու ջրի պես պարզ, սովորական մարդու էր հանդիպել, որը հեջ միտք չունի նրանից ջանքեր ու բարձր նոտաներ պահանջելու: Այս անգամ ինքը գրկեց ինձ, մազերս ու երեսս պաշպեց եւ ձեռքերս ավերի մեջ առած՝ պինդ պահում էր: Ասելու բան ուներ Ջասմիկ մայրիկը. նախ եւ առաջ:

Եվ սկսեց խոսել՝ համարյա Գորիսի բարբառով, նույնիսկ մի պահ մտածեցի՝ Սահյանի արմատները հո Գորիսից չե՞ն...

Ի դեպ, ընդմիջելով, ասեմ, որ Լորի, Դարբասի եւ Գորիսի բարբառները շատ մոտիկ եւ նման են իրար, եւ ես դա հենց սկզբից իմացա, երբ ուրախ զարմանքով բացահայտեցի, թե ինչ հիանալի էին բոլորը հասկանում իմ գորիսյան

Երանցելի բարբառը եւ ես էլ իրենցը...

Ակավեց մեր տաք ու մտերիմ գրույցը: Հուշեր եւ պատմություններ պատմեց Յասմիկ մայրիկը՝ լրիվ երիտասարդացած ու պայծառացած, ես մոռանում էի մի վայրկյան առաջ նրա ասածը՝ նա հիշում էր, մտքի թելը հարցով կտրում՝ նա նորից դառնում-տուտը բռնում էր...

Երկու-երեք ժամից մեքենա եկավ. ես Լոր էի մեկնում: Յասմիկ մայրիկի՝ վերադարձնելու պայմանով ինձ տված մատուց-գրքերով ու իր հուշերով ծանրաբեռ: Մուտքի մոտ, ցավ տեսած մոր անվրեպ զգայարանով, Յասմիկ մայրիկը գրկել էր ինձ եւ բաց չէր թողնում:

Ուզում էի կատակել.
- Յասմիկ մամա, ճի՞շտ է, որ Սահյանը խռովկան էր:

Անմիջապես զգացի՝ ինքը խռովեց եւ ունքերը կիտելով ասաց.

- Համոն խռովկան չէր, նեղացկոտ էր, բայց՝ տեղին, մուռտառ բանն արյունը չէր ընդունում:

Շտապ համաձայնեցի, համբուրեցի Յասմիկ մայրիկի թորշում-գունատ այտը, ամուր գրկեցի եւ ամբողջովին սպիտակած գլուխը պահեցի կրծքիս՝ շոյելով այդ մեծ մոր ծյունի պես ճերմակ մազերը:

Մայրս էր ասես: Մեր բոլորի մայրը: «Կգաս, սպասելու եմ», - լսեցի հետեւիցս նրա ձայնը եւ անբացատրելի հուզված, մի մեծ կտոր սիրտ թողնելով այնտեղ, կածանով ցած իջա...

Յասմիկ մայրիկի հուշապատումները Համո Սահյանի մասին

Սահյանը բրոնխիտ առթմայով համարյա սկսել է տառապել քառասուն-հիսունից հետո: Մի անգամ, երբ արդեն յոթանասուն էր, քրոջ հետ գրուցելիս, դժգոհությամբ ասաց. «Ես իմ հիվանդությունը մորակալ պապս՝ լեռնաշենցի Լալոնց Լալան է ինձ նվիրել (Լալազարյան), ինքն էլ դրանից մեռավ, ես էլ եմ դրանից մեռնելու...»:

Հետո կատակել է. «Այ մարդ, ասա մի լավ բան չունե՞իր կտակելու թոռներին...»

Տաղանդ Լորն է տվել, հերս էլ գրում էր (Սերոն մի օր տարավ, որ իբր տպի՝ էլ չբերեց...), հիվանդությունս՝ Լեռնաշենցի...

Լորն ինձ անմահություն է տվել... եւ այսբանից հետո լեռնաշենցիներն ուզում են հակառակը պնդել... Ավելին, իմ սիրելի Լորազետն էլ կռվախնձոր են սարքել, ինչ է թե՛ Լեռնաշենցի է հասնում Լոր... Ասում են դա մեր «Իչենի» գետն է...»:



Համո Սահյանի մայրը շատ վաղ է մահացել՝ տասներկուամյա մեծ աղջկա՝ Յասմիկի ծննդից թողնելով երեք ամսական տղային՝ Հայկին:

Սահյանն այդ ժամանակ քսանմեկ տարեկան էր, Բաքվում էր սովորում: Ամռանը գալով Լոր, ինքն էլ փոքրիկով զբաղվել, փոխել-վազել փոքրիկի տակաշորերը, գրկել, օրորել եւ կերակրել:

Տիկին Յասմիկը պատմում է, որ Համոն այդ ժամանակ ասում էր. «Գոնե մի լավ բան արած լինեմ մամայի համար... Մորս համար ոչինչ չհասցրի անել...»:

Իսկ երբ փոքրիկն ամիսներ անց մահացել է, Սահյանը փոքրիկին գրկած հասցրել է մինչեւ գերեզմանոց՝ մի վայրկյան չդադարելով լաց լինել... Իր ձեռքով դրել է գերեզմանափոսի մեջ, հետո գրկել քրոջը՝ Յասմիկին ու ասել. «Մաման ավելի լավ կպահի, Յասմիկ, մենք չկարողացանք մայր լինել Հայկի համար...»:

Իսկ երբ տանն աղքատիկ սեղանի շուրջ նստել են, Սահյանը լաց լինելով խնդրել է 12-ամյա մեծ քրոջը՝ Յասմիկին, մայր լինել իրենից փոքր չորս քույրերին, իրեն ու եղբորը՝ Համիլետին...

Եվ ինքը կսկծալով՝ նորից մեկնել Բաքու...

(Հետագայում Յասմիկին բոլոր քույրերը, նաեւ եղբայրները՝ Համոն եւ Համիլետը, մամա են կոչել... Համո Սահյանի քույրերից չորսը ողջ են եւ շարունակում են Յասմիկի տատին մայր կոչել, այդպես էլ գրելով իրենց նամակներում «Սիրելի մամա Հաս-

միկ...»):

1920-ական թվականներն էին, ծնողներս գնացել էին սար՝ խոտհոծի: Երեխեքս տանն էինք մնացել: Ընկանք մեծ եղբորս՝ Համոյի հետեւից եւ գնացինք դաշտ՝ սինձ ուտելու: Մեր տան ճամփին նոր թխվող վաճառի բոլոր էր տարածվել: Կանգնել-չէինք կարողանում շարժվել: Հացի հոտը արթեցրել էր բոլորիս: Նայում ենք՝ թոնրատան ծուխը երկինք էր ելել: Հանկարծ նոր թխած լավաշի դարսը թեւին զցած՝ մի կին դուրս եկավ, պառավ հացթուխն էր: Տեսնելով տվախար փոքրիկներիս կանգնած՝ իր կողմը նայելիս, երեւի մեզ խղճալով, երկու լավաշ տվեց: Սոված էինք, բայց Համոն չթողեց, որ ուտենք, ասաց՝ մենք սինձ կուտենք, պահենք մեր հոր ու մոր համար: Չկերանք, պահեցինք մինչեւ հայրս ու մայրս եկան: Լավաշը Համոն ծոցից հանեց, տվեց իրենց:

Ասին՝ դուք կերե՞լ էք, ասինք՝ չէ: Մայրս ու հայրս լաց եղան:

Համոն այս պատմությունն ամեն անգամ պատմելիս՝ լաց էր լինում, մի օր էլ, արդեն յոթանասուն էր, ասաց՝ Յասմիկ, եմ երկու լավաշն արեց, որ ես բանաստեղծ դարձա...



Եղբայրս շատ էր սիրում պապիս, տատիս: Մեր գերդաստանում ընդունված էր ավագությունը: Տան գլխավորին բոլորս էինք սիրում ու ենթարկվում: Մեր տանը հայրս՝ պապիցս հետո, Աստված էր, նրա ամեն մի խոսքը՝ ճշմարտություն է սրբություն: 1991 թվականն էր: Համոն եկել էր Լոր, բայց մինչեւ Լոր հասնելը միշտ Դարբասում կանգնում էր, գալիս իմ տուն, ժամերով նստում, մեզ հետ զրուցում... Ամեն անգամ Դարբասից Երեւան գնալիս՝ իր ընկերներին լաց լինելով խնդրում էի, որ Համոյին լավ մայեմ, որ ես հեռու եմ, ձեռնոտս չի հասնում... Այնքան էի լացում ու խնդրում, որ ընկերներն էլ չէին դիմանում,



Համո Սահյանը հոր՝ Սահակ Գրիգորյանի հետ (1959թ.)

աչքները սրում էին... Իսկ Համոն ձեռքը դեպի սիրտն էր տանում, ասում՝ վատացավ սիրտս, Յասմիկ, հերիք է, ուզում ես հիմա ապրե՞մ, թե՛ մեռնեմ...

Համոս արդեն հիվանդ էր, միշտ փաթաթված, հազում էր, անընդհատ ծխում...

Վերջին անգամ, որ Լորից գալուց՝ ճամփեցի, ասաց՝ Յասմիկ, կարող էլ չկարողանամ Լոր գալ, մեր հոր դուռը փակ չթողես, մեկ-մեկ գնա դուռը բաց արա, մեր հոր Սահակի ու խնամքի/հաշի պապի/ականջը ձեռքս լինելու, ձեռն տուր, կարոտ չթողես...

Ուտերիս, կոնքերիս զարկեցի, լացս դրի, ասի՝ Համո, հաշվի՝ ինձ արդեն թաղեցիր, խնամքս ձեռքս տուր, քվեքիդ գլուխը մի կտրիր...

Համոս երեսը թաքցրեց վզի շալի մեջ, դուրս եկավ՝ ես էլ մինչեւ մեքենան շարժվելը՝ ծնկներիս տալով՝ հետեւից ընկած ...

...Համոյից հետո հաճախ եմ գնացել Լոր, բացել եմ մեր հոր տան դուռը եւ ամեն անգամ լաց լինելով՝ դուրս եկել: Բայց ամեն գնալուց հետո սիրտս հանգստանում է, թեթևանում, ասես Համոյի օրհնանքն են



Եղբայրը՝ Համիլետը



Բույրը՝ Ելենան



Բույրը՝ Հայկունը



Բույրը՝ Պայծառը



Բույրը՝ Սեդան

ստանում...

Ասում եմ, Տեր Աստված, հոգիս առ էլի, սիրտս մղկտում է, էլ չեմ կարողանում դիմանալ: Քսան տարի է արդեն առանց Համո գնում-գալիս եմ, էլ մեծ եմ, ես էլ չեմ կարողանում... Հիմա էլ սարքել եմ, շինել, ցանկապատել, արդեն հորս ու խնամքս հոտն ու շունչն էլ ա վերացել էր տնից... Թանգարան են սարքել հորս տունը, էլ համ ու հոտ չկա...

Համոն ասում էր, Յասմիկ, ես ամաչում եմ, որ հորիցս հինգ տարի ավել եմ ապրել, ինքը 73-ում մեռավ, ես արդեն 79 եմ... Բա ես ի՞նչ ասեմ, Համո, տես թեգանից ինչքան ավել ապրեցի՝ 12 տարի: Ասում էր՝ Յասմիկ, դու պիտի երկար ապրես. համ մեր քույրերին ես պահել, համ էլ՝ մեր հորը, ում բուրդը երկար է լինելու...

Ավել չեմ ուզում, գոնե մինչեւ Համոյիս 100-ամյակն էլ ապրեմ...

Համոյի վերջին խնդրանքն էլ կատարեմ, ասում էր՝ հարյուրամյակիս, Յասմիկ, կգաս գլխիս վերեւ կանգնես, մեր տան շունչը զգամ...



Համոյի հիվանդությունը 92-ի դեկտեմբերին վերջնական սրվել էր, տեղաշար էր ընկել: Ծանր, վատ տարիներ էին, չէի կարողանում գնալ, տեսնել եղբորս: Զանգահարեցի, ասաց՝ Յասմիկ, թե կարում ես, ինձ ազատի Սահմադից, ինձ լավ բռնացրել է տեղաշարում, ամեն օր գալիս, շնչիս նստում է եւ սկսում իր ոտանավորները կարդալ:

Սահմադը մեր հորեղբոր որդիներից մեկն էր եւ անպայման ուզում էր ինքն էլ բանաստեղծ դառնալ, ոչ ավել, ոչ պակաս, Համոյի պես:

Վեր կացա, գնացի Երեւան: Համոն պատկած էր: Տեսա՝ Սահմադն էնտեղ չէր: Հարցրի, Համոն ուրախ ասաց՝ ուղարկել եմ Լորվա շրեշի կուտապ բերելու, բայց ասել եմ, տես, շրեշը գարնանն է դուրս գալիս...

Մինչեւ մենք խոսում էինք դեսից-դենից, երկու ժամ չանցած, Սահմադը եկավ՝ ձեռքին շրեշի երկու տաք կուտապ: Համոն հարցրեց՝ որտեղից է գտել: Սա թե՛ շուկայում մի կին կար, տեսա կուտապ է ծանձՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՁ 96

Իսախանյանի գերդաստանը



Լորաձոր

Էսրյուղ Յամո Սահյանի մեծ քրոջ՝ 91-ամյա Յասմիկ մայրիկի եւ նրա ընտանիքի մասին

ՍԿԻՉԸԸ՝ ԷՏ 95

խում, մոտեցա՛ լորեցի էր, ասեց՝ շրեշի լավ կուտապ է, չե՛ս ուզում... Փող էլ չվերցրեց, Յամո ապի, որ իմացավ քեզ համար եմ բերելու:

Յամոն գլխին խփեց՝ վայ քո տունը շինվի, հենց գնացել-լորեցու՞ ես ռաստ եկել... Էն կկվի ձեռնի պես... 2՝ է, սա ինձ վրա շատ թանկ է մտնելու, ավելի լավ է, ինչ պարտք ու պահանջ ունես, ասա՛ տամ, հոգիս էլ առ, գնա...

Ես մեր «բանաստեղծ» բարեկամն էլ լուրջ ընդունեց Յամոյի ասածը, միանգամից վրա տվեց.

- Յամո ապի, ճանապարհին մի գլուխ-գործոց եմ գրել, էդ էլ կարդամ, նոր կուտապը կեր, սիրտս դիմաճանա, որ սրտուզելիքդ բերել եմ...

Յամոն խռոված՝ երեսը դեպի պատն արեց, ինձ էլ ասաց՝ Յասմիկ, Սահմադին հետդ կտանես Լոր, թող էնտեղ բանաստեղծ դառնա...

Սահմադն էլ թե՛ Յամո ապի, ես ձեռնով ի՞նչ կա Լորում, թող գարունը գա, մայիսին կգնամ, որ ծաղիկները տեսնեմ...

Յամոն էլ չկարաց ծիծաղը պահել, շուտ եկավ, նայեց Սահմադին.

- Այ մարդ, մինչեւ գարուն ես կարող է մեռնեմ, եթե, իհարկե, ավելի շուտ ինձ չսպանես...

Ինձ էլ ասաց՝ Յասմիկ, իմ չարքաշ բախտն ինձ հետ է, պոծում չունես:



Այդ օրերին Դարբասի կոլխոզի նախագահն է գալիս: Արարատում Յամոյի



Յամո Սահյանը երկրորդ կնոջ՝ Սվետլանա Խաչատրյանի հետ

սիրած խնջվողն է պատահում, գնում եւ բերում է: Յամոն համարյա ոչինչ չէր ուտում, բայց որ ասաց՝ Լորի խնջվող է, Յամոն ձեռքը մեկնեց, փունջը վերցրեց եւ հոտ քաշեց: Յետո նայեց-նայեց ու ասաց.

- Տար կորցրու, սա Լորի խնջվող չի, սա Արարատի անհամ-անհոտ խնջվողն է:

Նախագահը հետո խոստովանեց, որ կյանքում մի անգամ ուզեց խաբել Սահյանին, էն էլ բռնվեց:

Ողջ օրը Յամոն նեղացավ, հաց չդրեց բերանը: Յետո, երբ քոռուփոշման՝ նախագահը գնաց, Յամոն ինձ ասաց.

- Յասմիկ, ճիշտն ասած, խնջվողի մասին չէի մտածել, բայց որ աչքս տեսավ էն սպիտակ գլուխն ու նուրբ տերեւները, սիրտս Լորի խնջվող ուզեց...

Լաց եղա. մեծ ախպերս երեխաս էր դառել: Ասացի՛ Յամո, Յասմիկի ջուլտ աչքերը քեզ համար քոռանան, պատվականը դու ես, բույսն ի՞նչ պատվական, բույս ա էլի...

Նեղացավ՝ երպիսի բան էլ չասես, Յասմիկ, մեր սարի խնջվողը մեռակ պատվական չի, ազնվական է, գեղեցիկ եւ մեզ հավատարիմ... Չլա հիշիր մեր պապերին,

ինչքան են կերել ու չի վերջացել, չի նեղացել, նորից բուսել է...

Նորից լաց եղա: Ասացի՛ աչքերս քոռանան, Յամո, ես վաղը Լոր եմ գնալու, գետնի տակից էլ լինի՛ պոկելու եմ, բերեմ...

Սիսիանի ծնեռն այդ տարի շատ խիստ էր, սառույցը չքաշեց մինչեւ ապրիլ...



Յամոն ծանր էր: Արդեն զանգերին չէր պատասխանում: Իմացա, որ դաղձի ծաղիկ է ուզել, ասել է՝ մեռակ մեր դաղձի ծաղիկը շունչս կբացի...

Էդ տեսակ դաղձը՝ իր սիրուն, բուրավետ ծաղիկներով, Շամբի լանջերին է աճում: Ոտքով վազելով, շունչս կտրելով, հասա Շամբ, աղջիկս էնտեղ էր ապրում: Միասին ընկանք սարերը, դաղձի ծաղիկներ հավաքեցինք:

Սիրտս անհանգիստ-շտապում էր, քիչ էր մնում կոկորդիս դուրս թռչեր: Աղջկաս՝ Անուշին ասացի՛ Անուշ, Յամոյիս որ մի բան պատահի, իմացիր, մերդ մեռնելու է... Էհ, մարդուս ճակատը շատ պինդ է, ամեն ցավի դիմանում է:

Տեսա հետելիցս Սիսիանի նախկին քաղաքապետի մեքենան Շամբ է եկել: Սիրտս ահ ընկավ, լացուկոծս դրեցի: Քաղաքապետը հանգստացրեց, ասաց՝ Յասմիկ մորքուր, Յամոն ողջ է, բայց մենք էլ ենք ուզում գնալ, տեսնել մեր վարպետին: Ինձ խաբեցին: Ճանապարհին ոչ մեկը չէր խոսում, ես մեռած-չթաղած էի: Իմս արդեն ինձ էր տվել...

Երբ հասանք, ինձ արդեն ձեռքերի վրա բարձրացրին հարկերը: Ինձ կորցրել էի, բայց Յամոյի դաղձի ծաղիկները պինդ բռնած պահում էի...

Յամոյիս դաղձի ծաղիկները շարել էի դեմքի շուրջը, շաղ տվել կրծքին:

Յամոն էլ չէր շնչում, բայց ես էլ, մյուս քույրերս էլ տեսանք, որ փակ կոպերի տակից արցունքը եկել, հասել էր դաղձի ծաղիկին...

Յամոս զգացել էր, որ իր դաղձի ծաղիկները քույրը բերել է... Նրանց հետ էլ հողը մտավ...

Մարինե վանքում

Բանաստեղծություններ
Մարիա Զակոբյանի
համանուն գրքից

Ծնվել է 1921թ. դեկտեմբերի 19-ին, Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Գեորգիեւսկ քաղաքում: Նրա մշեցի ծնողներն այնտեղ են գաղթել 1915-ին: 1930թ. ընտանիքով տեղափոխվել են Բաքու: 1938թ. ավարտել է Բաքվի N39 հայկական դպրոցը, իսկ 1942-ին՝ Ադրբեջանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: Երեւանում վերաբնակվելուց հետո (1951թ.) աշխատել է «Առողջապահություն», «Պիոներ» ամսագրերում: 1970-81թթ. եղել է «Գրական թերթի» պոեզիայի բաժնի վարիչ: 1958-82թթ. հրատարակել է բանաստեղծությունների վեց ժողովածու («Անանուն ծաղիկներ», «Լույսերի շշուկ», «Անձանոթ երազ», «Աշնան ծառուղի», «Ոսկե տերեւաթափ», «Մանուշակ»):

Համո Սահյանի հետ ամուսնացել է 1944 թվականին: Նույն հարկի տակ ապրել են մինչև 1973թ.: Ունեցել են երկու որդի՝ Նաիրի (1946թ.) և Արա (1954-2003թթ.): Բաժանվել են 1979 թվականին:

Մահացել է 2002թ. նոյեմբերի 19-ին Երեւանում:

2004թ. լույս է տեսել Մարիա Զակոբյանի վերջին ժողովածուն՝ «Մարինե վանքում» խորագրով:

Մարինե վանքում

Այս գիշեր մենակ նստել եմ անթուն,
Ու այնտեղ եմ ես, Մարինե վանքում,
Մարինե վանքը Մշո հողում է,
Մշեցու հողին վրաս դողում է,
Մենակ է, փխուր, ձայնի կարոտ է,
Խորանն անձուխ է, պարզ՝ արևոտ է:
Շուրջը անայի քար ու քուս է,
Նայար իր անցած փառքի վրա է,
Մե է, կանաչ է, քար է, մամուռ է:
Աջբերի՜ արցունք, սրտիս մրմուռ է:
Մորթապարկերն էլ ինձ պես արթուն է,
Մեք բախարի համար լուռ աղոթում է:
Մարինե վանքում ինչի բոլոր չկա,
Դողացող ձեռքի խաչհամբույր չկա,
Էլ մեռուն չկա, մանուկ չեն կնքում,
Էլ Աստված չկա Մարինե վանքում:
1968

Վերջալույսի կրակներ

Օրը խոնավ, ամպամած,
Երկինքը մութ, մայրը՝ թաց,
Դու երազի թևերով
Նայրևվեցիր իմ դիմաց:

Վաղուց արդեն չգիտեմ,
Որտե՞ղ ես, ո՞ր աշխարհում,
Եվ ինչո՞ւ ես, ես ինչպե՞ս,
Էությունս պաշարում:

Օրը խոնավ, ամպամած,
Երկինքը մութ, մայրը՝ թաց,
Միրոս ինքը իր համար
Քնքանում է թո դիմաց...
1984

Բանաստեղծ էր տերս,
Բանաստեղծ էր սերս,
Ես՝ բանաստեղծ էի...

Ջրնգուն ծիծաղ էր,
Արտասուքի շաղ էր,
Անկեղծ-անկեղծ էի...

Տարիներից այն ջինջ,
Չի մնացել ոչինչ,
Միայն երգեր ցայի...

Բանաստեղծ էր տերս,
Բանաստեղծ էր սերս,
Ես՝ բանաստեղծ էի...



Համո Սահյանը կնոջ՝ Մարիա Զակոբյանի հետ, 1955թ.

1993

Իմ ու թո միջև
Բարակ մի պար էր,
Փոքրիկ մի դուռ էր
Նայելապարված,
Որը միշտ փակ էր:
Ինչ կար մեր միջև -
Երազ ու տենչ էր,
Երգերի հոտվք,
Երգերի թոփք,
Երգերի վեճ էր:
Քո խուսքը ձկուն՝
Միտքը բողբոջող,
Կամօրից հարմար էր,
Իմը՝ մշեցու
Բարկացկոտ, անկեղծ,
Ազնիվ բարբառ էր...
Իմ ու թո միջև
Բարակ մի պար էր,
Փոքրիկ մի դուռ էր
Նայելապարված,
Որը միշտ փակ էր...
1985

Ինձ ասելու ոչինչ չունե՞ս,
Գուցե էլ չենք հանդիպելու,
Տեսնում ես, թե մարդիկ ինչպես,
Նաճախ դաժան բախարիս հյու
Նեռանում են այս աշխարհից
Առանց վերջին խուսքն ասելու...

Դու հիշելու ոչինչ չունե՞ս,
Ոչինչ չունե՞ս հարցնելու,
Քանի դեռ կամ, քանի դեռ թե՛զ
Նւար ունե՞մ հանդիպելու,
Վերապրելու հույզեր ունե՞մ,
Գանգաղ ունե՞մ վերապրելու...

Դու գոչարու ոչինչ չունե՞ս...
1982

Յոթանասուն տարուդ՝
յոթանասուն համբույր,
Յոթանասուն շաղոտ
ժաղկաթերթեր ու բույր,
Յոթանասուն գարնան երման
գեղեր վարար,
Յոթանասուն արև,
յոթանասուն ամառ,

Յոթանասուն ծաղից պոկված
աշնան տերեւ,
Յոթանասուն խոնարհ
սիրակարոտ բարեւ,

Յոթանասուն ձմռան
հողմադրիկ ու բուք,
Աստվածային գինու
անմահական բուրմունք,

Թող արքենա հողիդ ողջ
աշխարհին ի տես,
Որ դեռ սիրելի գիտես,
որ դեռ սիրելի գիտես...

Մի անձանորթի

Չէի կարող ես թե՛զ գրել,
Ու այդպես էլ չգրեցի,
Չէի կարող դու ինձ սիրել,
Թեկուզ ինձնից սեր խնդրեցիր:

Դու մնացիր հեռու հեռում,
Ես մնացի մեն ու մենակ,
Անձանորթ իմ, էլ չես գրում,
Միայն երկու, երկու նամակ:

Տարիները կդրոյվեն,
Կոտորակներ օրերն այս թանկ,
Բայց մենք իրար ոչ կգրենք,
Ոչ էլ իրար կնոտանանք...
1986

Ես ինչ-որ անրես մի կամեման մեջ եմ
Անձանունակ իմ դուռը բախողից,
Երգի չգրվող ու փանջող տողից,
Անհայտ թշնամուց ու բարեկամից,
Մեկ կամեցողից, հարյուր չկամից,
Ինձ հայրնի, անհայտ բոլոր տուներից,
Նոր մանրէներից, նոր արմուններից,
Մութ ու միզամած աստղաբույրներից,
Երկրաշարժերից, հեղեղից, հողմից,
Դու էլ մի կողմից...
1986

Դրախարում էլ չէի ուզի,
Որ լինեիր դու իմ կողքին,
Կուզենայի արվել լրիվ
Անէացող իմ գնորթին...

Կուզենայի հավվել, հավվել,
Զգալ, զգալ, որ էլ չկամ,
Կուզենայի էլ չլինել,
Էլ չծնվել ոչ մի անգամ:

Դրախարում էլ չէի ուզի,
Որ լինեիր դու իմ կողքին,
Որ դրախար չնամանվեր
Կյանք կոչեցալ այս
դժոխքին...
1986

Անցած ծիծաղիս վրա ծիծաղում
Ու անցած լացիս համար եմ լալիս,
Մի անցած լույս է վերելից մաղվում,
Մի անցած ձյուն է փաթիլվում, գալիս,
Մի անցած գարուն ծաղկում է նորից,
Միրոս ծիծաղ է գարթներից անցած,
Չեթ-ձեթի արված վազում եմ սարից,
Ծիծաղում, ընկնում, գործում եմ ցած:

Ու վեր ենք թռչում իրար կողքում,
Փնտրում ենք իրար կորուստի լացով,
Նայար ենք մենք մեր օրերով անցած,
Նայար ենք վաղիս մեր ունեցածով:
Ես կանչում եմ թե՛զ ձայնով նվաղում,
Ու թո փոխարեն հուշերս եմ գալիս...
Անցած ծիծաղիս վրա ծիծաղում
Ու անցած լացիս համար եմ լալիս:
1961

Բանաստեղծը գաղտնիք չունի,
Ինչ կա-չկա՝ երգի մեջ է,
Եվ թռչելու թևեր ունի,
Եվ թռչունի նման խեղճ է:

Մեկ շրշյունից մի շշուկի
Անպի մասին երգ է գրում,
Մեկ սիրում է փառապագին
Ու գերի է դառնում սիրույն:

Մեկ փանջվում է ինքն իր համար,
Դեռ չիտումված իր իսկ երգից,
Մեկ կորչում է... Մարդիկ կրան
Ներ են բերում փիեզերից:

Բանաստեղծը գաղտնիք չունի,
Ինչ կա-չկա երգի մեջ է,
Մեկ թռչելու թևեր ունի,
Մեկ թռչունի նման խեղճ է:
1963

Ես էլ իմ կյանքը այսպես ասրեցի,
Մեկը ինձ սիրեց, ես չսիրեցի,
Մեկին սիրեցի, ես ինձ չսիրեցի,
Մեկն ինձ սրտագին երգեր նվիրեց,
Երգերս մեկին ես նվիրեցի...
Ես էլ իմ կյանքը այսպես ասրեցի...
1968

Դատարկություն

Կյանքը հազար բանով լցվում
Ու դարարկ է մնում էլի,
Գարուններով գուզվում, բացվում
Ու դարարկ է մնում էլի:

Նազար մարդ է աշխարհ գալիս,
Նազար մարդ է գնում անհետ,
Միրոս հազար սիրով լցվում,
Ու դարարկ է մնում էլի:



Ոչ երջանիկ ծերություն
Չի լինում կրակում -
Որ փառապան էս վշտից
Գիշերում անթուն:

Ոչ երջանիկ ծերություն
Չի լինում կրակում,
Երջանկությունն ուրիշ է,
Ուրիշ փարիքում:

Օրհնված եզերք

Համո Սահյանը եւ Սիսիանը

«Ճակարկ համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը: Եվ եւ շնորհակալ եմ ճակարկարից, որ այդ ժողովրդի զավակն եմ եւ նրա երազաշար ապրումների թարգման բանաստեղծը»:
Համո Սահյան



ՆՆՆՆՆՆ ՍՍՍՍՍՍ

Առաջին անգամ Համո Սահյանին հանդիպել եմ Սիսիանում 1971 թվականին, երբ աշխատում էի «Որոտան» շրջանային թերթում: Նա այստեղ էր եկել հրաշալի մի մարդու՝ իր համագյուղացի, կուսընկերուհի առաջին քարտուղար Կիմ Չոլիանի հրավերով:

Ապրում էր հենց նրա կողքին՝ նույն շենքի մեկ սենյականոց բնակարաններից մեկում: Մի քանի շաբաթ այստեղ մնալուց հետո նա հասցրել էր բավականին նոր բանաստեղծություններ հանձնել թղթին եւ տվել իր համաձայնությունը դրանք շրջանային թերթում տպագրելու համար: Առավոտյան գնացի բանաստեղծությունների ետեւից: Դուռը երկար թակելուց հետո բացեց եւ ներս հրավիրեց: Դեռ քնաթափախ էր: Ասաց, որ գիշերն է աշխատել եւ լուսադեմին է հասցրել աչքը կացնել: Գրել էր եւ թղթերը նետել ուր որ պատահի: Սկսեց հավաքել դրանք: Ես ես օգնեցի նրան: Հաջորդ օրը նոր բանաստեղծությունների մի էջ լույս տեսավ շրջանային թերթում, որոնց մեջ էր նաեւ այդ օրերին ողբերգաբար զոհված Պարույր Սեւակին նվիրված բանաստեղծությունը:

Դրանից հետո առավել հաճախակի դարձան նրա այցելությունները Սիսիան: Չեմ հիշում որտե՞ւ տարի, որ նա հայրենիք չգալը: Մայրաքաղաքային կյանքից հոգնելուց հետո նա ժամանակին գրել է. «Գնամ մարդկանց մոտ իմ բնաշխարհի, որոնք դեռ հողում արմատներ ունեն, գնամ նրանց մոտ, խառնվեմ նրանց... Այնքան խառնվեմ, որ ինձանից էլ մարդահոտ առնեն: Դառնամ գոհ սրտով, անվրդով մեռնեմ»: Մի կողմից նրան այստեղ էր բերում հայրենիքի կարոտը, մյուս կողմից էլ՝ հենց նրա բնորոշմամբ՝ լցվելու եւ դատարկվելու տրամադրող մթնոլորտը:

Սիսիանը նրա բանաստեղծական երեւակայության համար անսպառ աղբյուր էր: Հանդիպումներից մեկի ժամանակ նա ուղղակիորեն մեջ, որ իր ստեղծագործության ակունքը հենց Սյունիքն է, աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր դիտակետը: Իսկ 1974 թվականին, երբ այստեղ մշտնապես էր նրա ծննդյան 60-ամյակը՝ իր ելույթում նա սիսիանցիներին բնութագրելով որպես առուձախից, խաբեությունից, կեղծիքից ու ամեն տեսակ ախտ ու վարակից զերծ մարդիկ, շնորհակալություն հայտնեց նրանց, որ հենց այդ շնորհներն են իրեն հնարավորություն տվել իրենց փոխարեն այդ մասին խոսել աշխարհների, ազգերի, սերունդների հետ: Հենց նույն հավաքի ժամանակ էր, երբ Սերո Խան-զադյանը բնութագրելով Սահյանի պոեզիան, մշեց, որ եթե Ջանգեզուրում տարին երաշտ լինի, Սիսիանը կկարողանա կերակրել ողջ լեռնաշխարհը, իսկ եթե հայր պոեզիայի երկնակամարում 100 տարի

երաշտ լինի, Համոյի պոեզիան կլցնի այդ բացը: Այստեղ մեծ հանդիսավորությամբ մշակեց նաեւ նրա ծննդյան 70-ամյակը: Բոլոր ելույթներն էլ հիշարժան էին: Իսկ Վահագն Դավթյանինը՝ առավել հակիրճ ու տիպական: «Համո Սահյանի տողերը հաճախ այնքան են սեղմ, զուսպ, անզարդ, զերծ ավելորդություններից, որ թվում է՝ քարի վրա գրելու համար են ստեղծված», - մշեց նա:

Հանդիպման երեկոյից հետո «Որոտան» ռեստորանում մեծ ճաշկերույթ էր կազմակերպվել: Մինչ թամադան շարունակում էր կենացները, Վարպետը կնոջ եւ Կիմ Չոլիանի հետ (նա արդեն ընտրվել էր Արտաշատի կուսընկերուհի առաջին քարտուղար) սրահից կամացուկ դուրս եկավ: Ինքս նույնպես հետեւեցի նրան: Կողքի սենյակում նստել էր բազմոցին ու ծանր շնչում էր: Շուտաօգնություն եկավ: Սրսկեցին, հաբեր տվեցին:

Նրան առաջարկեցին տուն գնալ ու հանգիստ պառկել:

- Չեմ կարող, կիսանք էլ՝ սեղան պի տի նստեմ, նստածների տրամադրությունը փչացնել չեմ ուզում, - ասաց նա ու քիչ հետ սրահ վերադարձավ:

Հաջորդ օրը Վարպետը եղավ Լորում, հանդիպեց իր համագյուղացիների հետ: Վերջում Շամբի այգում առատ սեղան էր բացվել: Թամադան Հրանտ Մաթեոսյանն էր:



Սիսիան, 40 աղբյուր հրապարակ

Սկսած վաղ շրջանի իր բանաստեղծությունների ժողովածուներից վերջացրած մինչեւ «Ինձ բացակա չդնեք» վերջին ժողովածուն, բացարձակ արժեքների նրա ընկալումների համար հիմք են հանդիսացել նաեւ մեր բնաշխարհն ու նրա մարդիկ: Պատահական չէ, որ բանաստեղծ Վահագն Դավթյանը մշտն է, թե Սահյանը եկավ եւ թունամյանի Լոռու, Իսահակյանի Շիրակի հարեւանությամբ մեր պոեզիայի մեջ տեղադրեց իր Սիսիանյան աշխարհը, որը սոսկ աշխարհագրական տարածք չէ, այլ՝ աշխարհի ընդհանրացված խորհրդանիշ ու կերպար:

Շատ էր սիրում իր հայրենիքը, հպարտանում էր նրանով: 1989 թվականի սեպտեմբերին, երբ նրան Սիսիանից Երեւան էինք ճանապարհում, մշեց. «Հայաստանի հենց ես հատվածում պետք է ծնվեի: Նույնիսկ Տաթևում էլ չէի ուզի ծնված լինել, թեւ Տաթևը անունով ավելի ճանաչված է: Աշխարհի ապավենն էս է»: 1989 թվականի ապրիլին փորձեցինք նրա 75-ամյակը մշել Սիսիանում: «Չէ, համաձայն չեմ: Համարապետությունը սօզի մեջ է»: Ի նկատի ուներ երկրաշարժը: Ասացի, որ շրջանային թերթում էջ է պատրաստվում:

- Բոլոր թերթերին մերժել եմ: Սերժել

եմ նաեւ «խորհրդային Հայաստանին», բայց շրջանային թերթին մի բան կտամ, - ասաց ու ինձ մեկնեց ձեռագիր մի բանաստեղծություն:

- Ոչ մի տեղ չեմ տվել եւ չեմ տպելու, - ասաց նա: Այդ փոքրիկ բանաստեղծությունը եզրափակել էր հետեւյալ տողերով.

*Լուսին վրա՝ փուն ու այգի,
Մարտի վրա՝ զահ ու նենա,
Ուր էլ մնա, ինչ էլ անի,
Նամո Սահյանն իր Լորինն է:*

Լորի հանդեպ մի ուրիշ սեր ուներ: Նա երբեք այդ մասին չէր բարձրաձայնում: Պապոնց տան նկատմամբ իր ունեցած զգացումները նա իր բանաստեղծական երեւակայությամբ էր արտահայտում: Հայրական տան հետքը չկրելու համար կուսընկերուհի առաջին քարտուղար Կիմ Չոլիանի հետ զրուցելուց հետո նա անգամ նախաձեռնեց պապոնց տան վերակառուցումը, որը մնաց անավարտ: Բարեբախտաբար այն արդեն վերակառուցվել է վեր է անվել տուն-թանգարանի: Ժամանակին, երբ տուն-թանգարանի մասին խոսք էր բացվում, նա միշտ հեզմանքով էր ընդունում եւ կատակով պատասխանում: 1986 թվականի օգոստոսի 28-ին՝ նոր ուսումնական տարվա նախօրյակին, կուսընկերուհի միտերի դախիճում հանդիպում կազմակերպվեց դպրոցների տնօրենների եւ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների հետ: Վերջում հարցեր եղան: Գետաթաղի դպրոցի տնօրեն Գուրգեն Առուստամյանը հարցրեց, թե արդյո՞ք Վարպետը մտադիր չէ տուն-թանգարան հիմնել: Նա քննադատեց տեղի պատասխանը.

- Լավ, ենթադրեմք, թե հիմնեցի, հետո մեջք ինչ էք դնելու: Եթե շատ էք ուզում, Լորում մի կիսակառուց ունեմ, երբ որ

բացում եմ, նայում եմ ու թվում է, թե՛ նույն տեղում եմ:

Բայց մեզ մոտ, եթե ասենք, մի քանի ժամ մեքենայում քնեմ ու աչքս բացեմ եւ աչքս ընկնի մի քարի, կիմանամ, թե որտեղ եմ գտնվում: Այսքան հարազատ է ու ճանաչելի»:

Բայց հետաքրքիր էր նրա՝ իր երեւակայությունը թղթին հանձնելու կերպը: Այդքան լինելով նրա կողքին, երբեք չեմ տեսել գրիչը ձեռքին՝ բանաստեղծություններ գրելիս: Աշխարհից ստացած ընկալումները համակարգչային ճշգրտությամբ պահում էր իր բանաստեղծական երեւակայության մեջ եւ հիմնականում առարկայացնում գիշերները, հյուրանոցի շրջապատի մեջ, երբ ինքն իր հետ էր, երբ աշխարհը խոր քնի մեջ էր: Մեղավորությունները պնդում են, որ մեղուն նեկատրո մեղրի է վերածում գիշերները:

Ըստ էության մեղվի այդ հրաշագործ բնական բնագործ իր արյան մեջ կրում էր նաեւ բնության այդքան ներածած, բնության այդքան ծուլված բանաստեղծը: Նա հաճախ էր կրկնում, որ բանաստեղծությունը ոտանավոր չէ, որ անգիր սերտեւ: Այն պետք է դնես բարձր տակ եւ կարդաս այն ժամանակ, երբ դրա կարիքը զգում ես: Ամեն անգամ կարդալիս մի նոր բան ես գտնում նրա մեջ: Նա գալիս էր Սիսիան, եւ Սիսիան էր փոխադրվում մի ողջ գրական-գեղարվեստական, մշակութային աշխարհ: Նրան տեսության եկած գրողներն ու արվեստագետները՝ Վահագն Դավթյանը, Սերո Խանզադյանը, Հրանտ Մաթեոսյանը, Սոս Սարգսյանը, Տիգրան Մանուկյանը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կարապետյանը, Վահրամ Հաճյանը, Ռազմիկ Դավթյանը, Ռուբեն Հովսեփյանը, Ֆելիքս Մելոյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Ջիվան Գասպարյանը եւ շատ ուրիշներ իրենց հանդիպում-կատարումներով ամբողջապես լցնում էին Սիսիանի հոգեւոր աշխարհի պարտ:

Իր պոեզիայի պես ինքնատիպ էր նաեւ նրա մարդկային խառնվածքը: Իր մեջ կրում էր մարդ արարածի ամենաթանկ արժեքները: Բնությունը նրա մեջ մարմնավորել էր մարդ արարածի կատարելատիպը, կամ հենց իր բնորոշմամբ՝ «Կատարյալ մարդու, մարգարեի, Աստուծո հավակնորդը» լինելու շնորհը: Նա իր ժողովրդի խառնվածքի խտացված արտահայտությունն էր: Նրան հատուկ էին հայրենասիրությունը, նախապետական բարքերի ու խոսքի նկատմամբ հարգը, լուսկայությունը, համեստությունը, բարությունը, քչով բավարարվածությունը, ընկերասիրությունը, հումորի նուրբ զգացումը:

1986 թվականին, երբ տպագրության էինք պատրաստել «Սիսիան» տեղեկատու-ուղեցույցը, մեր խնդրանքով շրջանի եւ նրա մարդկանց մասին խոսք էին ասել նաեւ Վահագն Դավթյանը, Հրանտ Մաթեոսյանը, Սոս Սարգսյանը եւ մեր հայրենակից ակադեմիկոս Գրիգոր Դարիբյանը: Խնդրեցինք, որ մի բան էլ Վարպետը գրի՝ գրքում գետեղելու համար: Հաջորդ առավոտյան ինձ հանձնեց երկու ձեռագիր՝ վերնագրված այն «Շնորհակալ եմ ճակատագրից»: Նա իր հակիրճ խոսքի մեջ տվել էր սիսիանցիների խառնվածքի ճշմարիտ գնահատականը՝ իր ասելիքը եզրափակելով հետեւյալ տողերով. «Սիսիանի, սիրելի սիսիանցիներ, ինչքան բան ունի այս խառնիխուռն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու: Չէր չկորցրած, ձեր պահպանածը նախապետականություն չէ, ծիսական խեղճություն չէ, հետամնացություն չէ, այլ՝ կատարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գալու ամենուր եւ ամեն օր, քանի կյանքը կա:

Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը: Եվ եւ շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի զավակն եմ եւ նրա երազաշար ապրումների թարգման բանաստեղծը»:

Համոն այսօր էլ կա, մեր կողքին է, կա, քանի որ կան նրա երգած Լորածորը, Գյազբեկն ու Սալվարդ սարը, Որոտանն ու ձորերի մեջ միտքված ձորերը, սարերին թամբած սարերը, մեր ողջ բնությունը, նրա մարդիկ, նրա անզուգական պոեզիան:



Հավելյալ իրականություն

Հատված Շչորս Դավթյանի «Համո Սահյան. բանաստեղծի հավատամքը» մեծագրությունից

Լորը հարուստ պատմական անցյալ ունեցող գյուղ է: Գտնվելով Սիսիանի երեք ենթագոտիններից մեկի՝ Լորածորի կենտրոնում, Լորը հեռավոր անցյալում հսկայական տնտեսական ու քաղաքական ազդեցություն է ունեցել շրջապատի բնակավայրերի վրա եւ ավելի քան երկու հազար տարի դիմացել ժամանակների դա ժան փորձություններին:

Լոր գյուղի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է 839 թվականին: Ստ.Օրբելյան պատմիչը իր նշանավոր «Պատմութիւն տանն Սիսական» գրքում հրապարակել է Սյունյաց եպիսկոպոս (թեմակալ առաջնորդ) Տեր-Դավթի կազմած «Հավիտենական կտակը», որտեղից իմանում ենք, որ Տաթևի վանքի կալվածքները ընդլայնելու խնդրանքով առաջնորդը դիմել է Սյունյաց Փիլիպպե 1-ին զահեդեց իշխանին եւ նրանից գնել Տաթևին հարող Արծիվ գյուղը՝ ամբողջ տարածքով: Միաժամանակ Սյունյաց տեր Փիլիպպեն կալվածքներ է նվիրել վանքին, այդ թվում են Տաթև գյուղը: Այդ կտակ-փաստաթուղթը, որը Փիլիպպեից եւ Տեր-Դավթից բացի ստորագրել են հոգեւոր ու աշխարհիկ մի շարք տերեր, որոշել է նաեւ Տաթևի վանքի տիրույթների սահմանները, որոնց արեւմտյան սահմանը հասնում է մինչեւ Լոր գյուղի անունը կրող Լորածորի սկիզբը:

Տաթևի շրջակա սահմանները որոշող հաջորդ վավերագիրը կազմվել է 906թ., երբ ավարտվել է Տաթևի վանքին համալիրի մայր՝ Պողոս-Պետրոս տաճարի շինարարությունը: Այդ առիթով Սյունյաց հոգեւոր աթոռը նոր գյուղեր եւ կալվածքներ է ստացել: Փաստաթղթի տակ, մի խումբ հոգեւոր եւ աշխարհիկ տերերի հետ, ստորագրել են ոչ միայն Սյունյաց տեր Փիլիպպեի հաջորդ Աշոտը եւ նրա որդիները, այլ նաեւ Հայոց թագավոր Սմբատ Բագրատունին, որ եկել էր տաճարի նավակատիքին: Այստեղ նույնպես Տաթևի արեւմտյան սահմանը համարվում է Լորածորի սկիզբը:

Այս փաստաթղթերը, սակայն, Լորի վաղեմությունն ապացուցող գրավոր աղբյուրներն են միայն: 1950-ական թվականներին ականավոր պատմաբան-հնագետ Մորուս Հասարայանը Լորում պեղումներ կատարելիս հայտնաբերել է հեթանոս ծեսով թաղված երեխայի դամբարան: Այդ փոքրիկի (հավանաբար իշխանական ընտանիքի զավակ) բերանում դրել էին մետաղադրամ, որը կտրվել է Պարսից Շապուհ արքայի օրոք (383-389թթ.):

Սա ապացուցում է, որ դեռես հայոց թագավորության շրջանում Լորը գոյություն է ունեցել, գուցե եւ որոշիչ դեր կատարել ամբողջ ենթագավառում: Չէ որ նրա անունով էր կոչվում շուրջ 15 գյուղ ներառող այդ գետահովիտը:

Լորը ենթագավառում իր գերակշիռ դիրքը (Ավերծ-Դարբասի հետ) պահպանել է նաեւ միջնադարում: Ստ.Օրբելյանի «Պատմութիւն» կցված՝ Սյունիքի 12 գավառների 677 գյուղերի ցուցակի համաձայն, վերոհիշյալ երկու գյուղերի շուրջը համախմբված էին Մրուց, Մարդակայք, Տատան, Մազազնի, Լծեն, Որոտն, Ույնի, Երենք, Մոզույք, Մշկածոր, Սապատածոր գյուղերը: Ուշ միջնադարում այստեղ կազմավորվել են մինչեւ օրս գոյատևող Շենաթաղ եւ Գետաթաղ գյուղերը:

Չետագա դարերում Լորի բարձրացումը կապվում է Սյունիքում Օրբելյանների իշխանության հաստատման եւ հզորացման հետ: Ըստ որում, եթե իշխանության անցնելուց հետո Օրբելյանները Սյունիքի ենթագավառներում կառավարիչներ կամ կուսակալներ էին նշանակում իրենց իշխանական տան ներկայացուցիչներին, ապա Լորում նրանք դաշն կնքեցին տեղի Որոտշահ անվանվող իշխանագուն տոհմի հետ: Այդ մասին պատմությունը պահպանել է երկու ծանրակշիռ վկայություն:

Առաջինը Լոր գյուղում 1271թ. կառուցված է մինչեւ օրս անվթար պահպանված խաչարձան-մատուռն է: Տեղացիները այն անվանում են Սպիտակ կամ Լորիկի խաչ:

Լորի Ծառու Ս.Յովհաննես եկեղեցին

Մինչդեռ այն կառուցել է հենց տոհմական կողմը՝ ենթագավառի իշխան Որոտշահը՝ որպես դամբարան-մատուռ իր ծնողների գերեզմանի վրա: Սպիտակ կրաքարից կերտված այդ ինքնատիպ հուշարձանի մեջ ազուցված են երկու քանդակագործ խաչքարեր, որոնց վրա իջնող կամարի տակ փորագրված է. «Ես Որոտշահ, Գրիգոր ու Լորիկ կանկնեցաք զխաչս հար ին Հայրապետի եւ մուր (մայր -Շ.Դ.-) իմ. ով կարոյաք յիչեցեք ի Քի: Ի ԹՎ.ՉԻ»:

Սյուն գրավոր վկայությունը պահպանվում է Տաթևի վանքի Պողոս-Պետրոս տաճարի հարավային սյան վրա՝ փորագրված 1274թ.: Այդ ընդարձակ արձանագրությունը վավերացնում է Սյունիքի Որոտան ենթագավառի կուսակալ Տարայիճ Օրբելյանի կողմից Տաթևի վանքին նոր կալվածքներ եւ գյուղեր նվիրելու կամ վերահաստատելու փաստը: Որպես այդ խոշոր եկեղեցաշեն առաքելության վկա, արձանագրության մեջ նշվում է նաեւ Լորիկ իշխանի թոռ Որոտշահի անունը:

Լոր գյուղի տնտեսական ու մշակութային վերելքը շարունակվում է նաեւ հեռագա տասնամյակներում: 1345թ. լորեցի Լահապետի որդիներ Սարգիսը եւ Ամիր Հասանը գյուղավերելու կառուցում են Ս.Աստվածածնի անունով մի մատուռ-եկեղեցի, որին իրենց պապենական հողերն են նվիրում ինչպես կառուցողները, այնպես էլ նրանց Դավիթ եւ Սիրիան եղբայրները: Այդ սրբատեղի գյուղացիներն անվանում են Սարգիսի խաչեր՝ կառուցողներից գլխավորի անունով:

Այնուհետեւ, Սյունիքի շատ գյուղերի նման, Լորը նույնպես ենթարկվում է թաթար-մոնղոլական արշավանքների ավերածություններին, սակայն, դիմանալով, 17-րդ դարի կեսերին անգամ ունենում է վերելքի մի քանի տասնամյակներ: 1666թ. Գողթան զավառի գլխավոր քաղաք Ազուլիսի բնակիչ մահտեսի Պետրոսի որդի Խոջա Պողոսը, ի իշխատակ իր որդիների, կառուցում է Լորի Ս. Գեորգ թաղակապ եկեղեցին, այդ մասին համապատասխան արձանագրություն թողնելով եկեղեցու դռան բարավորի վրա: Իսկ 1686թ. գյուղամերձ՝ ծառի պաշտամունքը խորհրդանշող սրբավայրում կառուցվում է Ծառու Ս. Յովհաննես եկեղեցին:

Պետք է ի նկատի ունենալ, որ Լորում եւ նրա շրջակայքում կառուցված կոթողները միայն պաշտամունքային նշանակություն չունենին: Երեսանի Մատենադարանում պահպանվում են 1600-ական թվականներին Լորում արտագրված մի շարք արժեքավոր ձեռագրեր: Գրանցից երկուսը վե-

րաբերում են 1618 թվականին, որոնցից մեկը ժամագիրք է՝ ծաղկված Հակոբ գրչի կողմից (ծեռ. 587), իսկ մյուսը ժողովածու է Անդրեաս գրչի կատարմամբ (ծեռ. 580): Այս Անդրեասը 1652թ. Տաթևում արտագրված մի Ավետարանի հիշատակարանում իրեն լորեցի է անվանում: Բավական ճիշտ ծաղկված մի Ավետարան էլ արտագրվել է Լորում 1659թ. Վրթանես գրչի կողմից (ծեռ. 10299): Ուշադրություն է գրավում հատկապես ժամանակի ականավոր փիլիսոփա, տրամաբան, քերական եւ հասարակական գործիչ Սիմեոն Ջուղայեցու «Գիրք տրամաբանութեան» աշխատությունը, որը Լորում արտագրել է գրիչ Աբրահամը 1660թ., այսինքն հեղինակի մահից երեք տարի հետո (ծեռ.3382):

Այս հանգամանքները մեզ հուշում են, որ Տաթևի Սեծ Անապատի գրչության դպրոցի ազդեցությունը կրում էին նաեւ նրա շրջապատի գյուղերը, այդ թվում ավելի շատ՝ Լորը: Չի կարելի կասկածել, որ հենց Լորի եւ հարեւան Գետաթաղ ու Դարբաս գյուղերի գրչության դպրոցների ազդեցությամբ էլ հիմք է դրվել այդ տարածքում դպրությանն ընդհանրապես: Հատկանշական է նաեւ, որ այդ տարիներին արտագրված ձեռագիր մատյանների հիշատակարաններից կարելի է անգնահատելի տվյալներ քաղել ժամանակի մի ամբողջ շարք գրիչների, մանրանկարիչների, կազմողների (թարագործ վարպետների), վարպետ-ճարտարապետների, ինչպես նաեւ կրոնական գործիչների, մեկենասների ու բարեգործների, իշխանագուն այրերի եւ ազնվաշնորհ տիկնանց մասին:

Ժողովրդագրական իմաստով նույնպես Լորը ունեցել է վերելքի եւ վայրէջքի ժամանակաշրջաններ: Որոտշահերի տիրապետության տարիներին Տաթևի վանքին տրվող հարկի չափով (12 բեռնաչափ) ենթադրում ենք, որ այն միջինից մեծ գյուղ է եղել: Այդպես նա մնում է մինչեւ 17-րդ դարի վերջը: Այնուհետեւ գյուղը սկսում է աստիճանաբար իյունվել եւ Տաթևի վանքի 1781թ. հարկացուցակում վերին ծորի (Լորածորի) յոթ գյուղերի մեջ 5500 դահեկան հարկաչափով գրավում է 3-րդ, իսկ Սիսիանի 37 հարկատու գյուղերի մեջ՝ 10-րդ տեղը:

Սակայն, ինչպես ամբողջ Սիսիանի, այնպես էլ Լորի ժողովրդագրական պատկերը ամբողջությամբ աղավաղվում է 1795թ. սկսված եւ մինչեւ 1830թ. տեսած պարսկական արշավանքների եւ ռուս-պարսկական պատերազմների հետեւանքով: Ու թեեւ 1813թ. Գյուլիստանի պայմանագրով Սիսիանը, Դարբասի խանության կազմում, անցնում է Ռուսաստանին, սակայն ռուսական երկրի մի քաղաքականության, ապաշնորհի դիվանագիտության եւ գրավված տարածքներում իշխանության մարմինների մուսուլմանամետ նկրտումների հետեւանքով, Սիսիանի գյուղերի մեծ մասը ամայանում ու անապատանում է, իսկ հետագայում էլ բնակեցվում հենց մուսուլմաններով: Խնդիրը այն էր, որ տեղական թուրք (կովկասյան թաթար) բեկեղից ոմանց ռուսական իշխանությունները գինվորական կոչումներ էին տալիս, իբրեւ թե նրանց համակրանքը շահելու եւ նվիրվածության աստիճանը որոշելու նպատակով, իսկ սրանք էլ չարաշահում էին իրենց դիրքը եւ տեղագին կերպով թուրքերով բնակեցնում ամայացած հայկական գյուղերը: Եվ երբ 1831թ. ռուսական իշխանությունները կատարեցին բնակչության, այսպես կոչված, «կամերալ» ցուցակագրում, ապա Սիսիանում (Խոյից ու Սալմաստից եկած գաղթականների հետ) մնացել էր ընդամենը 3207 հայ, իսկ Լորի բնակչությունը պակասել էր մոտ տասը անգամ: Այսինքն՝ գյուղում մնացել էր 50 հոգի:

Չետագա տարիներին, ունենալով ֆիզիկական գոյության երաշխիք, Սիսիանի հայ բնակչությունը սկսում է համամասնորեն աճել, եւ Լորի բնակչությունը 1886թ. հասնում է 384-ի, 1912թ.՝ 754-ի: Խորհրդային տարիներին Լորի բնակչության պատկերը այսպիսին էր.

| | |
|--------------------------------|-------------|
| 1922 - 606 | 1959 - 524 |
| 1931 - 538 | 1969 - 534 |
| 1941 - 580 | 1979 - 380 |
| 1951 - 531 | 1989 - 378: |
| 20-րդ դարասկզբից Լորի բնակչու- | |
| ՇՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՑ 100 | |

Օրհնված եզերք

Հավելյալ իրականություն

Հատված Շչորս Դավթյանի «Համո Սահյան. բանաստեղծի հավատամքը» մեմորիալից

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 99

Քանի որ ստվարացումը եւ կրթանշակութա-
յին ավանդների դեռեւս պահպանված
պատահիկները թելադրում են, որպես-
զի այստեղ բացվի ծխական դպրոց, թեւ
մինչ այդ գյուղը ժամանակ առ ժամանակ
ուսուցիչներ է ունեցել: Ազգագրագետ Եր-
վանդ Լալայանը 1898թ. հրատարակած
«Ազգագրական հանդեսում» Լորի մասին
գրում է. «Ժողովուրդը մտավորապես բա-
վական հառաջացած է: Թեւեւ ոչ մի ժամա-
նակ կանոնավոր ուսումնարան չէ ունեցել,
սակայն տղամարդկանց թվի երկու երրորդ
մասը գրագետ է: Նրանց մեջ կա մի հա-
մալսարանավարտ, իսկ 40 հոգի ավարտել
են միջնակարգ դպրոցներ: Նույնիսկ գյու-
ղի երկու քահանաներից մեկը ավարտել է
Գեւորգյան ճեմարանի դպրոցական մասը»
(էջ 163):

Հավանալի է, որ այս պարարտ հողի
վրա էլ պիտի սկսեր գործել եւ տարեցտա-
րի համբավ վաստակել 1905թ. հիմնված
դպրոցը, որի կառուցման եւ մյուս ծախսե-
րը հոգում էր Բաքվում բնակվող լորեցիներ
հայրենակցական միությունը՝ Գասպար
Տեր-Մարգարյանի նախագահությամբ:

Եվ, իրոք, Լորի դպրոցի 1905-1920թթ.
պատմությունը մեծ հետաքրքրություն
է առաջացնում ոչ միայն այն պատճա-
ռով, որ այստեղ ուսանելու էին գալիս
Սիսիանի շատ գյուղերից, այլ նաեւ այն
իմաստով, որ Լոր ուսուցչության էր գա-
լիս ժամանակի կրթված ու ազատամիտ
երիտասարդության ընտրանին: Գետաբու-
քի է, որ տասնհինգամյա այդ ժամանակ-
կարմաբացում Լորում ուսուցիչ են եղել
քաղաքական տարբեր կողմնորոշում ու-
նեցող մարդիկ, որոնք ռուսական հեղա-
փոխությունների եւ ժամանակի քաղաքա-
կան ազդեցությունները կրել են տարբեր
տեսանկյուններից: 1908-1909 ուսումնա-
կան տարում ուսուցիչ է եղել բանաստեղծ
Գառնիկ Քալաշյանը: Էջմիածնցի այդ
տաղանդավոր երիտասարդը ընդգծված
դաշնակցական կողմնորոշում ուներ:
Նրան հաջորդած Արամ վարժապետը
ընդհանրապես քաղաքականությամբ չէր
հետաքրքրվում: Փորձված մանկավարժ,
ճեմարանավարտ Հովհաննես Ավչյանը,
որ ծնվել էր Սիսիանի Ախլաթյան գյու-
ղում, աշխատելով մինչեւ 1914թ., ձգտում
էր ամեն ինչում հավասարակշռություն
պահպանել, 1915-1916 ուսումնական տա-
րում Լոր ուսուցիչ եկած Ակսել Բակունցը
ինքնատիպ կեցվածք ուներ եւ ընդվզող
բնավորություն: Իսկ 1919-20թթ. ուսու-
ցիչ աշխատած դարաքիլիսեցի (Սիսիան)
Պատվական Դազարյանը անմնացորդ բու-
շեիկ էր ու կրթուս հեղափոխական: Ահա
թե ինչու նրանցից յուրաքանչյուրն էլ իր
կեցվածքին համապատասխան բախվեց
ճակատագրի խաղերին:

Լորի դպրոցի եւ Ակսել Բակունցի ու-
սուցչության պատմությունը Համո Սահյա-
նի տպավորությունների եւ գյուղի մարդ-
կանց հիշողությունների մեջ մնացել է
որպես սրբազորված առասպել: Ու թեւ
Լոր գյուղի եւ նրա փոքրիկ դպրոցի պատ-
մությունը, թվում է, ուղղակի կապ չունի
Համո Սահյանի կենսագրության հետ, սա-
կայն իրականում դրանք հոգեկան-իմացա-
կան հսկայական կուտակումներ են, որոնք
սինթեզի տպավորություն են թողել բանա-
ստեղծի աշխարհաճանաչման վրա, մասնա-



Լոր գյուղի դպրոցի հիմնադիր Գասպար Տեր-Մարգարյանը եւ իր կինը՝ ծագումով
լորեցի Շուշանիկ Տեր-Մարգարյանը (լուսանկարները փրամադրել է Կապանի
երկրագիտական թանգարանը)

վանդ որ դրանք գալիս են ամենաստույգ,
ամենամանր ու ամենավստահելի աղբյու-
րից՝ մանկությունից, այն էլ բնության մեջ
թաթախված գեղջկական գունակոլորի-
տային մանկությունից, որը սպունգի նման
ներծծում է աշխարհը բնորոշող ամեն մի
նորություն:

Համո Սահյանը հետագայում գրում
էր. «Ավանես վարժապետ, Գառնիկ վար-
ժապետ, Ալեքսանդր վարժապետ: Երեք
ուսուցիչ էր ունեցել մեր դպրոցը: Երեքն էլ
գյուղում թողել են բարի համբավ, բարի հի-
շատակ ու ամնոռաց հուշեր:

Ալեքսանդր վարժապետը ուրիշ էր: Նա
Էջմիածնից եկած քահել սուրբ էր, աշխար-
հի տակն էլ գիտեր, գլուխն էլ, - ասում էր
Վանեսանց Կյուրքի ապերը, երբ նստում
էր մեյքանի սալ քարին եւ հիշում անցած
գնացած օրերը:

- Ալեքսանդր վարժապետը, - շարունա-
կում էր նա, - լուսնի պես շողաց մեր գյուղե-
րի վրա ու մայր մտավ: Բայց որտեղ էլ որ
լինի, մի օր արեւի պես կբարձրանա սարից
եւ լույս կտա այս մթին ձորին...»:

Այդպես Ակսել Բակունցը Լորածորի
մարդկանց համար ընդմիջում մնացել էր որ-
պես իրենց ցավերը հասկացող, անելանելի
վիճակից մարդկանց դուրս բերող պետա-
կան գործիչ էր իրենց կողքին ապրող գյու-
ղացիների ու բնության գեղարվեստական
պատկերները վերարտադրող արվեստա-
գետ: Մեծ գրողի հենց այդ առաքելության
քննարկական ընդհանրացումներից է ծնվել
Հ.Սահյանի բանաստեղծություններից մե-
կը, որ գրվել է Ա.Բակունցի 1955-ի երկրորդ
հայտնության օրերին.

*Լագսգրել է ինձ թո՛ւ Կալեղունց Բաղին,
Խոնարի աղջիկն ինձ գեղել է մանկուց,
Կրկնում է դեռ սպիտակ թո՛ւ ձին
Իմ հուշերի մեջ, ով Ակսել Բակունց:
Արձագանքն էիր դու մեր ձորերի՛
Անպատեւերն ի վեր փոված սարերին...
Եվ շատա՛յն հեպ այս մեծ օրերի
Միրիափի կանչն եւ փանուն դարերին:*

Միրիափի կանչը դարերին տանող գրո-
ղը մինչեւ վերջ էլ մնաց Քարափների երգը
դարերին տանող բանաստեղծ Համո Սա-
հյանի պաշտամունքը եւ նրան Սյունյաց
աշխարհում մշտապես ուղեկցող հուսա-
աստղը:

Լորի կրթանշակութային պատմության

մեր վերոհիշյալ բնութագրությունը հնա-
րավոր կլինի ամբողջացնել, եթե կարողա-
նանք բնութագրել նաեւ Լորածորը որպես
բնության առեղծված: Մեր համոզմամբ
հենց պատմությունն ու բնությունն են
ծեւավորել Համո Սահյանի աշխարհայաց-
քը, իսկ հետագայում էլ մշտապես մնացել
որպես նրա ներշնչանքի ու աշխարհա-
ճանաչման չցամաքող ակունքներ: Ըստ
որում, այս պարագայում եւ ընդհանրա-
պես Համո Սահյանի ստեղծագործության
մեջ բնությունը չի ներկայանում որպես
հրաշալիք կամ գեղագիտական արժեք,

քին կառուցվածքով բազիլիկ, զանգա-
կատնով այդ կառույցը ներքին այնպիսի
հորինվածք ունի (դեպի թեւերը ձգված խա-
չածեւ ավանդատներով), որ թշուրմ է մար-
դու երեւակայության ոլորտից:

Ինչպես նշեցինք, Լորի պատմաճար-
տարապետական հուշարձաններից է նաեւ
Ծառու Ա.Հովհաննես ուխտատեղին: Այդ
սրբավայրը ի սկզբանե եղել է սրբազան
ծառի եւ ջրի պաշտամունքը խորհրդանշող
մեծ համբավ ունեցող հեթանոսական մե-
հյան: Քրիստոնեության ընդունումից հետո
այդ տարածքում ձեւավորվել է Մարդա-
կայր (կամ Մարդակայր) փոքրիկ գյուղը
(Ստ.Օրբեյանի ցուցակում 6 հարկաչա-
փով), որտեղ էլ, հենց ուղիղ մեհյանի վրա,
17-րդ դարում կառուցել են Ա.Հովհաննես
եկեղեցին՝ պահպանելով, սակայն ԾԱ-
ՌՈՒ հեթանոսական նշանակությունն
ու անունը: Պահպանելով ավանդույթը,
աղբյուրի մոտ ծերացած ուռենու կողքին
տնկել են նորը, որը ապրել է մոտ 300 տա-
րի: Այժմ էլ, այդ լքված եկեղեցու բակում
երեսում են մահացած սուրբ ծառի հողի
մեջ հավիղ արմատների հետքերը:

Պետք է նկատել, որ Ծառու Ա.Հովհան-
նեսը ծառի պաշտամունքը խորհրդան-
շող միակ սրբավայրը չէ Լորածորում: Լո-
րից մի քանի կիլոմետր հյուսիս-արեւելք
գտնվում է Լծենի հնամենի Անապատը,
որի Ա.Ստեփանոս եկեղեցին 1347թ. կա-
ռուցվել է երկու իրար փաթաթված վիթ-
խարի եղեմիների բնի շուրջը: Եվ եթե
միջնադարյան այդ շինությունը համարյա
ամբողջովին թաղվել է հողի տակ, ապա
հեթանոսական պաշտամունքի այդ սուրբ
ծառերը իրենց մերկացած արմատներով
ու բզկտված սաղարթներով ապրում են
մինչեւ օրս:

Արեւի պաշտամունքն է խորհրդան-
շուն լորամերձ Դարաղյա կոչվող լեռան
գագաթին պահպանված սրբավայրը: Որ-
քան էլ զարմանալի լինի, այդտեղ ուխտ
էին գալիս ոչ միայն հայերը, այլ նաեւ մահ-
մեղակամները: Շրջակա գյուղերի բնա-
կիչները մինչեւ վերջին տարիները բարձ-
րամուտ էին այդ լեռնագագաթը, գիշերում
այնտեղ, որպեսզի առավոտյան դիտեն
արեւածագը: Ըստ որում, հիմնականում
այդտեղ էին գնում հուճիսի 22-ին, ինչպես
նաեւ զարմանալի եւ աշնանային գիշե-
րահավասարի օրերին: Ազգագրագետ
Երվանդ Լալայանը անցյալ դարավերջին
ուսումնասիրելով Սյունիքի բնակիչների
տվյալությունները, ընտանեկան բարքերը,
հնություններն ու սրբավայրերը, պաշտա-
մունքային առանձնահատկությունները,
իր հրատարակած «Ազգագրական հան-
դեսներում» բազմաթիվ օրինակներ է բե-
րում, որոնք բազմապիսի վերաբերում
են ոչ միայն հեթանոսական պաշտամուն-
քի բեւեռացումներին, այլ նաեւ վայրի մի
շարք կենդանիների ու թռչունների, հսկա
քարաժայռերի, քարայրների, աղբյուրնե-
րի, դաշտերի ու անտառների երկրպագու-
թյանը:

Եվ եթե այս ամենի ավելացնենք Լո-
րածորի բազմաթիվ բնապատկերը՝ դեպի
Տաթևի մենաստանը տանող, կակաչներից
հրդեհված լեռնապարկ, բազմերանգ ծա-
ղիկների թողը գլխին պարզվել սարով, հա-
տակը չերեւացող Տատնա ձորով եւ արծ-
վաղեն Որինի քարով, ժայռածեղերից
գլխիվայր կախված անտառներով ու ծո-
րալանջերին մեղվի փեթակների մնացվող
տնակներով, կույրեմանք նախաշխարհյան
քառսից ծնված մի փոքրիկ Հայաստան
աշխարհ:

Ահա հենց այդ հրաշք աշխարհում, «ուր
գլխիվայր են ծառերն աճում, եւ ջրվեժները
այեփրփուր դեպի երկինք են շառաչում»,
որտեղ «երկնքի մեջ արտ է բուսնում ու
երկինք է բուսնում հողից», 1914թ. ապրի-
լի 14-ին, Խաչիպապի հին օդայում լույս
աշխարհի պիտի գար այն հրաշամանկը,
որ հետո աշխարհին հայտնի պիտի դառ-
նար բանաստեղծ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ անունով:

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՄԱՍՎԵՆ ԱՆԵՐՍԱՆՆԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ
ՊԱՏԱՏԻՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Փոստային՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 08 28 02:

Էլ փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերա-
դարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել:

Կյուրքերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից
ուց ավելի):

«ԳՂՎԱԶԳ - ՇԱՆՈՒԹՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմ-
բագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց
երկիր» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թեքրո տպագրվում է «Տիգրան Մեծ»
իրատեսակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 26 տպագրական մամուլ:
Տպագրմանը՝ 2000, գինը՝ 500 դրամ:
Ստորագրված է տպագրության 31.03.2014թ.:

...Եվ Լորն ապրում է

Ձանգեզուրի գարնիկ բարձունքներին, որտեղ բարձրից կարելի է տեսնել արեգակի ամենօրյա ծնունդը եւ կարմիր հողեվարի, աշխասանֆային եռուզեռով, հոգսերի բեռան սակ կֆած ադրում է Լոր գյուղը, որ առավել հայտնի դարձավ որդես մեծ ֆնարերգու Նամո Սահյանի ծննդավայր:

Ճանապարհների ժամապահ ծառերն ուղեկցում են մեզ դեպի այն գյուղը, որտեղ կծիկ-կծիկ սարեր, պարանպարան կիրճեր, շարանշարան ժայռեր, քարափ ու քերծ են, որոնք ակամայից ապացուցում են, որ մարդն իսկապես հողից է ծնունդ առել: Գյուղի մուտքն ազդարարում է խաչարձանմատուռը, որին տեղացիները Սպիտակ կամ Լորիկի խաչ են անվանում (1271թ.), որը կառուցել է Լորիկ իշխանը որպես իր հոր ու մոր մահարձան:

Գյուղի «մեյդանում»՝ Սուրբ Գեորգ եկեղեցու (կառուցվել է 1666թ.) պատի տակ, եւ, ինչպես Սահյանն է ասում, գերանի վրա հասակի, խելքի եւ պատվի կարգով նստել են պարզունակ, պարթե ծերերը, որ հողից բուսած, հողոտ, հողաբույր աստվածներ են, որոնք շալոթեն շալ են տալիս օրհնանքի խոսքեր, քննարկում աշխարհի անցուդարձն ու ձեռքը ճակատին դրած՝ անցնողդարձողին անխոս ճամփա դնում:

Լոր գյուղի վարչական տարածքը 3300 հա է, որից գյուղատնտեսական նշանակության՝ 2700 հա, վարելահող՝ 120հա, այգիներ՝ 30հա, որից մնացել է միայն 10հա, տնամերձ՝ 20հա: Ներկայումս գյուղում բնակվում է 420 մարդ, եւ ինչպես գյուղապետ Դավիթ Առուստամյանն է նշում. «Եթե

համեմատենք այլ գյուղերի հետ, ապա արտագաղթը չի սպառնում Լորին, գյուղում երեխաներն են վազվզում, դեռես լսելի է նորածնի ծիչը»:

Խոսելով գյուղի հիմնախնդիրների մասին՝ գյուղապետը նշեց, որ 73 տարածքում երեւի թե բոլոր գյուղական համայնքների խնդիրներն էլ նմանատիպ են՝ ճանապարհի անմխիթար վիճակ, քաղաքից կտրվածություն, գյուղմթերքն իրացնելու դժվարություն, գյուղտեխնիկայի պակաս կամ շատ դեպքերում իսպառ բացակայություն: Բայց այս ամենով հանդերձ՝ բավականաչափ աշխատանքներ են տարվում եւ տեղական, եւ միջազգային կառույցների միջոցով համայնքային խնդիրները լուծելու ուղղությամբ: Խորհրդային տարիներին գյուղում գործող հասարակական բաղնիքի շենքի հիմքի վրա «Ալցիա սովի դեմ» կազմակերպության միջոցներով ստեղծվել է կաթի հավաքման կետ, որտեղ տեղադրվել են սարքավորումներ եւ հատուկ սառնարաններ, եւ տարածաշրջանի գյուղերից անցած տարվա ամռանն օրական մինչեւ 2 տոննա կաթ (1լիտրը՝ 120դրամ) է մթերել Գորիսի «Էլուա» ՓԲ ընկերությունը՝ գյուղացիներին վճարելով կանխիկ դրամով: Ինչպես Սյունիքի շատ գյուղական համայնքներում, այստեղ նույնպես գյուղացիները սնամթերման խնդիր ունեն: Շամբի



Սուրբ Գեորգ եկեղեցի

Լորի հին դպրոցի շենքը, որպէղ դասավանդել է Ակսել Բակունցը, որպէղ կրթություն է ստացել Յամո Սահյանը



պահածոների գործարանը նախորդ տարի 50-60 տոննա խմոր է մթերել, եւ այդ առումով գյուղացին իրացման խնդիր չի ունեցել:

Գյուղում խմելու ջրի խնդիր կա, որը, սակայն, պետական միջոցներով շուտով կլուծվի: 2013թ. համայնքային բյուջեով մասնակիորեն վերանորոգել են գյուղապետարանի շենքը, խմելու, ոռոգման ջրերի հետ կապված որոշակի աշխատանքներ են կատարվել, ներհամայնքային ճանապարհներում փոսալցում են իրականացրել, գյուղի փողոցների լուսավորության հարցն է լուծվել: Պետք է նշել, որ համայնքային բյուջեն այդքան մեծ հնարավորություններ չի տալիս, եւ դրանով հիմնականում լուծվում են համայնքային նշանակության ոչ շատ ծախսատար խնդիրներ:

Գյուղի հիմնահարցերից է նաեւ բնակիչներին վառելիքով ապահովելը, եւ սա այն դեպքում, երբ Իրան-Յայաստան գազատարն անցնում է գյուղի տարածքով: Թերեւս պետք է նշել, որ բնական գազ ունենալու հավանականություն էլ գրեթե չկա: Ուրախալի է այն փաստը, որ գյուղում նոր տուն է կառուցվում, ինչը վկայում է այն մասին, որ գյուղը դեռես հետաքրքրում է մարդկանց, մյուս կողմից էլ ժամանակավոր աշխատանքով է ապահովում մարդկանց՝ ինչ-որ տեղ կանխելով արտագաղթը:

Գյուղապետարանը համագործակցում է տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, հատկապես մեծ է «Վորլդ վիժն-Յայաստան» զարգացման եւ բարեգործական միջազգային կազմակերպության ներդրումը գյուղում, մասնավորապես խոշոր ֆերմերներին տրամադրել են կթի ագրեգատներ, գույք, տրակտոր: 10 տարուց ավելի է՝ համագործակցում են «Ամբոր» ամերիկյան կազմակերպության հետ, որն ամեն տարի դպրոցին տրամադրում է գրեմական պիտույքներ, սանիտարահիգիենիկ պարագաներ, բուժկենտրոնակոմիտեներ՝ ԷՋ 102



Լոր

Օրորվում է Լորագետը
ու զևում,
Որորվում է Լորագետը
ու զևում:
Երբ փեսունում է, որ ափերին
ես չկամ,
Մորորվում է Լորագետը
ու զևում:

Լորում չես ապրում,
Ապրում եմ Լորում,
Լորը լիքն է միշտ
Իմ հոր ու մորով:
Աշխարհում ինձ մի
Լոր է հիշելու,
Բայց մեռնելու եմ,
Նոր է հիշելու:

Ամեն մեկը իր օրն ունի,
Դարը որ կա, բոլորինն է:
Նազը՝ օրվան, երգը՝ դարին,
Այս էլ իմ խորհուրդ-խորհինն է...
Դաշտում հազար կանչ
ու թրթռ,
Դաշտում հազար թև
ու թիթեռ,
Հազար թուփ ու թուն՝
կա դաշտում,
Բայց մի ձու՞նք կա,
որ Լորինն է:
Լուսնի վրա տուն ու այգի,
Մարտի վրա գահ ու նենա,
Որ էլ մնա, ինչ էլ անի,
Նա՞ն Սահյանն իր Լորինն է:

...Եվ Լորն ապրում է

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 101

տին՝ դեղորայք: 2013 թվականից սկսել են համագործակցել «Ռազմավարական զարգացման գործակալություն» 34-ի հետ, որի կերարտադրության ծրագրի շրջանակներում 34-ի կողմից տրամադրված սերմով 10հա ցանքս են արել՝ բարձր կերամիավոր ստանալու համար: «Միջազգային ծրագրերի հետ համագործակցելու շատ նախագծեր ունենք, որոնց արդյունքում ամեն տարի գյուղում զարգացման նախադրյալներ կստեղծենք, մեկ քայլ առաջ կանցնենք: Մենք պետք է ամեն հնարավորն ու անհնարինն անենք, որ գյուղը չծերանա», – հավելեց գյուղապետը:

2013թ. «Լավագույն համայնք՝ զենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության «Գյուղական համայնքի ավագանու զենդերային կազմը, ավագանու կազմում կանանց եւ տղամարդկանց ներկայացվածությունը 2008 եւ 2012 թվականներին» անվանակարգում երրորդ տեղ է զբաղեցրել Լոր գյուղը (գյուղն ունի ավագանու երեք կին անդամ)՝ 33 վարչապետի կողմից արժանանալով պատվոգրի, որը, գյուղապետի կարծիքով, ավելի պարտավորեցնող եւ ոգեւորող նշանակություն ունի:

Լորը հայտնի է նաեւ իր սրբատեղիներով, որոնք այսօր պահպանման խնդիր ունեն: Հատկապես նշանավոր է Ծառու Սուրբ Զովհաննես եկեղեցին, որ գտնվում է Լոր գյուղից Շենաթաղ տանող ճանապարհի աջակողմյան հատվածում, ըստ Մ.Հասրաթյանի, եղել է Ծղուկ-Սիսիանի, անգամ Ջանգեղուրի գավառի նշա-



Լորիկ Իշխանի խաչը

Նավոր ուխտավայրերից մեկը՝ որպես սրբազան ծառի եւ ջրի հեթանոսական պաշտամունքի վայր, որ հետո կապել են Քրիստոսին մկրտող Ս.Յովհաննես Ակրտչի անվան հետ՝ դարձյալ ջրի պաշտամունքի իմաստով: 1686թ. վերանորոգված Սուրբ Յովհաննես եկեղեցին մինչեւ վերջերս անմխիթար տեսք ուներ, որը, սակայն, գյուղապետի համառ աշխատանքի շնորհիվ այսօր փրկվել է: Ամբողջովին ջրածածկ ու հողածածկ այդ կառույցը երեւի թե պատմության գիրկն անցներ եւ ավերակ դառնար, եթե գյուղապետի եւ մի քանի բարերարների բարեխիղճ աշխատանքը չլիներ: 2013թ. մարտից կատարվել են ջրահեռացման եւ հողահեռացման, տանիքի, պատերի վերականգնման աշխատանքներ, ավելացվել է գմբեթ, իսկ հետագայում նախատեսվում է բեմ ավելացնել, ներսի պատերի ամրացման աշխատանքներն ավարտին հասցնել: Ջարմանակին այն է, որ գյուղապետի կատարած աշխատանքները փորձում են որակել որպես եկեղեցու հիմքերը խարխուլու մտայնություն՝ պատճառաբանելով, որ առանց հիմնավոր փաստաթղթերի եւ այդտեղ կատարվել վերանորոգման աշխատանքներ: Մինչդեռ. «Մոռանում են, որ փաստաթղթեր հավաքելը, վերականգնողական աշխատանքների համար հովանավոր գտնելը բավականին երկար ժամանակ են պահանջում, որի արդյունքում հաստատ այս կառույցը կոչնչանար՝ վերածվելով ավերակների», – նշում է գյուղապետը: Ինչեւէ, գյուղապետի կատարած աշխատանքը միայն ու միայն արժանի է մեծարանքի: Սուրբ Սարգիս եկեղեցու մերձակայքում նույնպես պետք է կատարվեն հողահեռացման աշխատանքներ, որոնք մոտ ապագայի խնդիր են:



Լոր

Այն դպրոցը, որտեղ 1915-16 ուստարում աշխատել է Ակսել Բակունցը, ճիշտ է, անմխիթար վիճակում է, բայց դրա վերակառուցման համար անհրաժեշտ են միջոցներ, որը, սակայն, համայնքային բյուջեն չունի: Նույնիսկ կարծիք է հնչել այն Բակունցի տուն-թանգարան դարձնելու վերաբերյալ, սակայն, մեր կարծիքով, շենքը պարզապես պետք է ամրացվի, որպեսզի չփլուզվի:

Լորի միջնակարգ դպրոցում, որ բարեկարգ ու շատ դպրոցների համար օրինակելի տեսք ունի, սովորում է 63 աշակերտ, աշխատանքային գործունեություն ծավալում՝ 17 մանկավարժ: 12 աշակերտ Շենթաթաղից այստեղ է հաճախում ավագ դասարաններ: Դեռեւս ամեն տարի առաջին դասարան ընդունվում է 5-6 աշակերտ, բայց տարեցտարի այն նվազելու է: ՆՈՒՀ է հաճախում 14 երեխա Լոր եւ Շենթաթաղ գյուղական համայնքներից: 2008 թվականին սկսել են դպրոցի վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվել են 2010թ.: Ամբողջովին բարեկարգված ու ակնհայտորեն դպրոցն ապրում է աշխատանքային եռուզեռով՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ, իրականացնելով շատ ու շատ ծրագրեր: Մասնավորապես ակտիվորեն համագործակցում են «Վորլդ Վիժն» կազմակերպության հետ, որը պարբերաբար դպրոցին տրամադրում է գույք: ԿԲ-ի ֆինանսավորմամբ այս ուսումնական տարում աշակերտները դասագրքերի վարձավճար չեն տվել, ամբողջովին լրացվել է գրքերի պակասը: Դպրոցական գույքի համալրումը կատարել են նաեւ ՀՀ սոց. ներդրումների հիմնադրամի միջոցներով: Դպրոցը ներառված է նաեւ ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական «Տաք սնունդ» նախագծում, որն ամբողջովին սնվելու հնարավորություն է տալիս տարրական դասարանների աշակերտներին: «Դպրոցն առանցքային, լուրջ խնդիրներ գրեթե չունի, բայց, ինչպես շատ գյուղական համայնքներում, այստեղ էլ խնդիրն աշակերտների թվի պակասն է՝ պայմանավորված գյուղում երիտասարդ ընտանիքների թվի նվազմամբ: Ինչեւէ, չենք հուսահատվում, քանզի եթե դպրոցի զանգը հնչում է, ուրեմն ամեն ինչ բնականոն հունով է ընթանում», – մասնավորապես նշեց դպրոցի տնօրեն Լիանա Գրիգորյանը: Ինչպես արդեն նշեցինք, Լորն առավել հայտնի դարձավ որպես Յամո Սահյանի ծննդավայր: Տունը, որտեղ բանաստեղծը



ԴՎԱԻԹ ԱՌՈՒՏԱՍՄՅԱՆ
Լորի գյուղապետ



ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն

բնակվել է մինչեւ 13 տարեկան, եւ որտեղ մի ժամանակ «բեղն ու կոթորակն իրար բերանից պատահ էին խլում», վերանորոգվել եւ որպես Յամո Սահյանի տուն-թանգարան վերաբացվելու է 2014թ. ապրիլի 14-ին՝ Յամո Սահյանի 100-ամյակի օրը: «Երբ 2011թ. ՀՀ նախագահն այցելեց Շամբ,

չինարարական կազմակերպության կողմից, անհայտ բարերարի կողմից նույնպես ներդրում է կատարվել», – նշեց գյուղապետը: Տուն-թանգարանը, սահյանական լինելուց բացի, նաեւ կարտացույց գյուղական միջավայրը՝ դառնալով հնի ու նորի յուրօրինակ համադրություն: Տունը 1972-73թթ. վերակառուցվել էր, եւ աշխատանքները կատարվել են նախկին հիմքի վրա, ուստի դրանով է պայմանավորված կառույցի ժամանակակից շունչը: Թանգարանի տնօրեն Բնջուշ Հարությունյանի հավաստմամբ՝ դեռ աշխատանքներն ամբողջովին ավարտված չեն, բայց տուն-թանգարանը բավականին այցելուներ է ունեցել, ովքեր սահյանական շնչով են լցրել շրջակայքը:

Սահյանի ծննդյան օրվանից մեկ դար հետո կարող ենք մեծ բանաստեղծին ասել. «Գյուղն ապրում է ոչ միայն թո երգերում. հայրենահամ պտուղներն են թափվում ձեր խնձորենիներից, ավերակի հոտ չի գալիս գյուղից, եւ որ անվերջ, անշարժ իրենց երթում համագյուղացիները թեզ բացակա չեն դնում»:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Լորի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը

ԿԳԱՄ

Եթե միևնույն անգամ

Լսած լինես, թե ես այս աշխարհում չկամ,
Միեւնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ,
Ուր էլ լինեմ, կգամ:

Եթե միևնույն անգամ ես կուրացած լինեմ,
Եթե միևնույն անգամ լույսի մարած լինի,
Վերջին հույսի քամին առած-տարած լինի,
Առանց լույսի կգամ, ես այս անգամ կգամ
Մենության մեջ լացող երգիչ վրա:

Եթե միևնույն անգամ

Քո հավարտի հանդեպ դու մեղք արած լինես
Եվ համարած լինես, որ աշխարհում չկամ,
Եթե միևնույն անգամ հողս մաղած լինես,
Եթե միևնույն անգամ մորթով թաղած լինես
Եթե միևնույն անգամ ինձ վրարած լինես
Վերհուշերի վերջին խոնավ քարանձավից,
Միեւնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ,
Եվ կճասս հանկարծ տարօրինակ ցավից...
Կգամ, գլուխ-գլխի ու ձեռք-ձեռքի կրանք,
Լաց կլինենք մեռած մեղքի վրա:

Եթե միևնույն անգամ հազար սարի երես

Նազար կապով կապված, խաչով խաչված լինեմ,
Տքնած-տանջված լինեմ, միեւնույն է, կգամ:
Ինչ էլ լինի, կգամ, չկանչես էլ, կգամ,
Եվ կբերես ես քեզ ուրախություն մի մեծ
Անակնկալ դարձիս իրողությամբ -
Քո տան ու թո հոգու տարողությամբ,
Երագների, կյանքի տեղողությամբ:
Կգամ ես կդառնամ գրած բախրի ժպիտ
Եվ հավարտի ժպիտ՝ տառապանքից մաշված,
Արտասուքից խաշված դեմքի վրա:

Եթե միևնույն անգամ մեջքս ծալված լինի,

Եթե միևնույն անգամ ոտքս վառված լինի,
Եվ ճակարիս հազար հողմի հարված լինի,
Միեւնույն է, կգամ, ուր էլ լինեմ, կգամ:
Գեղնի տակից կգամ,
Մի հեռավոր, անհայտ մոլորակից կգամ:
Կգամ ու թափ կրամ
Նարդագողի փոշին շեմքի վրա:



Գյազբեկ, Կապույտ Երանաշուն (Առանձնապես՝ Կապույտ Գյազբեկի համալիր)